


Ք. Պ Ո Ձ Ն Ա Ն Ս Կ Ա

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ



ՍՍՏՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱ
Արևելագիտության ինստիտուտ

Ք. ՊՈԶՆԱՆՍԿԱ

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՈՒՐ-ՔԻԱՆ

A $\frac{II}{72583}$



Ռուսերենից քարգմանեց ՀԱԿՈՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝ Ռ. Պ. ԿՈՆՂԱԿՉՅԱՆ

Պոպեանսկա Ք.

Պ 757 Հին և նոր թուրքիան / Ռուս. թարգմ. Հ. Մարտիրոսյան. — Եր.: Հայաստան, 1985. — 212 էջ:

Սովետական ընթերցողի ուշադրությանը ներկայացվող լեհ հայտնի ժուռնալիստուհու գիրքը հետաքրքրական ակնարկների ժողովածու է թուրքիայի, նրա պատմական անցյալի, ժամանակակից քաղաքական, տնտեսական դրության, մշակույթի գործիչների մասին: Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Պ $\frac{0506000000}{701 (01) 85}$ 71—85 ԳՄԴ 66. 3 (5 Թու) + 63. 3 (5 Թու)

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ես մեծ հաճույքով սովետական ընթերցողին եմ հանձնում իմ գիրքը՝ քաջ գիտենալով, թե փնչափսի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Միությանում Թուրքիայի նկատմամբ, և հուսով եմ, որ իմ գիրքը կօգնի բավարարելու այդ հետաքրքրությունը:

Ինձ բախտ է վիճակվել Թուրքիայում լինել նրա պատմության համար նշանակալից մի ժամանակաշրջանում՝ 1961-ից մինչև 1967 թվականը, այսինքն՝ պետական հեղաշրջումից անմիջապես հետո, երբ երկրում հնարավորություններ ստեղծվեցին հասարակական նոր պրոցեսների համար: Իմ պատմությունը Թուրքիայի մասին ես, ըստ էության, սահմանափակում եմ այդ տարիներով:

Սակայն, խոսելով այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում այսօրվա Թուրքիան, չի կարելի մոռանալ անցյալը, որի հետքերը հանդիպում են բառացիորեն ամեն մի քայլափոխի: Պատմական իրադարձություններով անշափ հարուստ այդ երկրում շերտ-շերտ նստվածքներ են տվել տարբեր քաղաքակրթություններ, մինչև որ XI դարի վերջին այնտեղ եկան թուրքերը և ստեղծեցին վիթխարի կայսրություն: Թուրք ժողովրդի պայքարի շնորհիվ, որ գլխավորեց Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը, կայսրության փլատակների վրա բարձրացավ նոր Թուրքիան: Եվ երբ գտնվում ես Թուրքիայում, ապա նկատում ես, որ Աթաթյուրքի ունիտարները իրականացվել են կյանքի շատ բնագավառներում: Եվ ամեն մի բնագավառում էլ կարելի է նկատել քեմալիստական ոգուց ծնունդ առած նորի պայքարը կյանքի հին, քարացած նորմաների դեմ:

Դրա հետ մեկտեղ, պատմելով Թուրքիայի մասին, ես կցանկանայի ներկայացնել թուրքական բնանկարի գեղեցկությունը, արվեստի ստեղծագործությունների շքեղությունը, ողջ երկրով մեկ առատորեն ցրված հին հուշարձանների հարստությունը: Ցավոք, այդ ամենի մասին ես ստիպված եմ լինելու պատմել կցկտուր...

Թուրքիայի պատմությունը և թուրքերի պատմությունը մինևույն բանը չեն: Շատ քաղաքակրթություններ արդեն իրենց հետքը թողել էին անատոլիական հողի վրա՝ մինչև որ XI դարի վերջին այնտեղ եկան թուրքական առաջին քոչվոր ցեղերը: Այսօրվա Թուրքիան հարուստ պատմություն ունեցող երկիր է, որպիսիք քիչ կան մեր մոլորակի վրա:

ՍԵԼՁՈՐԿՆԵՐԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿՈՆԻԱՆ

Մի քանի ժամում մեքենայով մենք կտրում-անցնում ենք Կենտրոնական Անատոլիայի միօրինակ հարթ հողերը: Սքանչելի, ուղիղ և սեղանի նման հարթ Անկարա—Կոնիա ասֆալտապատ խճուղին այնքան լայն է, որ այնտեղ կարող էին վայրէջք կատարել փոքրիկ ինքնաթիռները (դա բացատրվում է ստրատեգիական նկատառումներով): Խճուղու երկու կողմերում, որքան աչքդ կկտրի, համատարած հարթավայրեր են: Ճանապարհի երկայնքով տնկված են միայն հեռագրասյուների: Չորս կողմը և ոչ մի ծառ... Ճիշտ է, արդարացի լինելու համար ես պետք է ասեմ, որ հեռու հորիզոնում երևում են ինչ-որ խղճուկ ծառեր: Միօրինակ բնանկարից հոգնած ճանապարհորդը հայացքը սեռում է հրաբխային բլուրների: Ժամանակ առ ժամանակ ճանապարհի երկու կողմերում հայտնվում են խղճուկ գլուղակներ կավաշեն հյուղակներով և տեղ-տեղ անշուր հարթությունում՝ հասարակ ջրհորներ կռունկներով:

Սեւշուկների նախկին մայրաքաղաք Կոնիան մի իսկական կանաչ օազիս է անատոլիական անապատում: Գուցե, հենց այդ պատճառով էլ այստեղ՝ ծովից հեռու, ինչ-որ մի ժամանակ առաջացավ այդ քաղաքը: Առաջ այն կոչվում էր Իկոնիոս: Ինչպես պատմում է հին հունական առասպելը (իսկ այդպիսի առասպելներ այնքան շատ են ծնվել անատոլիական երկրում), իր ծագումով և անվանումով նա պարտական է Զևսի ու Դանալայի որդի Պերսեյին, որը հաղթել էր Մեդուզային: Կոնիա ժամանելով, նա Մեդուզայի գլուխը կախել էր սրածողին: Այստեղից էլ նրա Իկոնիոս անունը, այսինքն՝ քաղաք սրբապատկերով (Իկոնա): Ինչպես հաստատում են հնագետները, քաղաքը իր

ծաղկման առաջին ժամանակաշրջանն ապրել է դեռևս մեր թվա-
կանությունից երկու հազար տարի առաջ: Իկոնիումի վրայով է
անցել Քսենոֆոնը, իսկ Ալեքսանդր Մեծը այն նվաճել է պար-
սիկներին: Այնուհետև Իկոնիումը եղել է հռոմեական զաղութ:
Քաղաքը որոշ նշանակություն պահպանել էր նաև բյուզանդա-
կան դարաշրջանում, շնայած մեծ ավերածություններ է կրել
արարների հաճախակի արշավանքներից:

Հերթական մուսուլման եկվորներին՝ սելջուկ թուրքերին,
Կոնիան պարտական է իր կարճատև վեհությամբ. 1116 թվակա-
նին այն նվաճեց սելջուկյան սուլթաններից մեկը՝ Կըլըշ Արս-
լան I-ը և այնտեղ հիմնեց իր մայրաքաղաքը: Իր պետությունը
նա անվանեց Ռում (Ռոմա, կամ Հոռոմ անունից):

Ի դեպ ասած, «Ռում» բառը այդ ժամանակներից ի վեր զգա-
լի փոփոխություններ է կրել: Ասիական տափաստաններից եկած
սելջուկների համար Հոռոմը կայսրության, գերիշխանության, տի-
րապետության հոմանիշ էր և այդ պատճառով նրանք իրենց
պետությունը այդպես էլ անվանեցին: Բայց այդ նույն բառը
եղել է նաև Արևելահռոմեական կայսրության, այսինքն՝ Բյու-
զանդիայի անունը: «Ռում» հասկացության մեջ թուրքերն այն
ժամանակ մտցնում էին այն ամենը, ինչ վերաբերում էր Բյու-
զանդիային, իսկ ապա՝ այն ամենը, ինչ կապված էր Հունաս-
տանի հետ: Այսպիսով, օսմանների ըմբռնմամբ ուղղափառ ծա-
գում ունեցող բրիտանությունը, որը անջատվել էր Հոռոմից,
եղել է հռոմեական: Ներկայումս «Ռում» բառը թուրքերեն լեզ-
վում նշանակում է մի հույն, որը ապրում է Հունաստանի սահ-
մաններից դուրս, այսինքն՝ Թուրքիայում կամ Կիպրոսում...

Կոնիան ամենից ավելի մեծ փառքի հասավ սելջուկյան մեծ
սուլթան Ալանտոգինի (1219—1236) կառավարման տարիներին:
Բայց այն ժամանակ Ալանտոգինից ավելի մեծ հռչակ էր վայե-
լում «մտքի սուլթան» Բահահետոգին-վելեղը, որն իր որդի Ջելա-
լետոգին Ռումիի հետ բնակություն հաստատեց Կոնիայում: Հե-
տագայում այդ Ջելալետոգինը հռչակվեց Մելլյանա անունով՝
որպես պարող դերվիշների միաբանության հիմնադիր: Իսլամա-
կան միաստիցիզմի այդ ականավոր ներկայացուցիչը ներկայումս
էլ համարվում է իր ժամանակի մեծագույն բանաստեղծներից
ու փիլիսոփաներից մեկը:

Գալով Լեոնային Թուրքեստանից (այժմյան Աֆղստանից), նա Կոնիայում հիմնեց մի միստիկական միաբանություն, որը գոյություն ունեցավ մինչև մեր օրերը: Ճիշտ է, 1926 թվականին Աթաթյուրքը ցրեց դերվիշական բոլոր թեքքենեքը, բայց 1950 թվականից սկսած, երբ իշխանության գլուխ անցավ Մենդերեսի կառավարությունը, ամեն տարի դեկտեմբեր ամսին (Մելլանայի մահվան ամսին) նորից սկսեցին հրապարակային հանդիսություններ կազմակերպել նրա հետևորդների՝ «պարող» դերվիշների մասնակցությամբ:

Այդ էկզոտիկ, հրապուրիչ հանդիսություններին հավաքվում են բազմաթիվ հանդիսատեսներ, և ամենից առաջ օտարերկրացի զբոսաշրջիկներ: Իրենց՝ «մուլեիների», այսինքն՝ միաբանության անդամների պատկերացմամբ, իրենց ծիսական պարերը բոլորովին արվեստ չեն, այլ լոկ հավատի մի ակտ, էքստազի մի վիճակ, երբ հոգին միանում է աստծո հետ:

Հանդիսությունն սկսվում է կեսժամյա մի «նախաբանով»: Սև ակնոցով կույր երգիչը կոկորդային ձայնով սկսում է երգել մի ոգեշունչ երգ: Դերվիշները, ոտքները տակներին խաշածակած, անշարժ նստած են հատակին և լսում են նրան: Նրանք իրենց հագին ունեն ֆեսերի նման, բայց ավելի բարձր, կոնաձև մուգ դարչնագույն թասակներ (Մելլանայի սիմվոլիկայով դրանք նշանակում են տապանաքարեր), մուգ գույնի թիկնոցներ, որոնք խորհրդանշում են շիրիմներ, և լայն սպիտակ շրջազգեստներ՝ «ջալուններ»: Ինչպես ինձ բացատրեցին, այդպիսի զգեստը պետք է նշանակի մեռածների հարություն և հավիտենական կյանք աստծո մեջ: Մի ինչ-որ պահ բոլորը միասին մեկ մարդու նման ճակատները խփում են հատակին: Ապա տեղներից վեր են թըռչում և սահուն քայլերով սկսում են շարժվել առաջ: Նրանց առջևից գնում է «առաջնորդը»՝ կանաչ թիկնոցով և կանաչ թասակով: «Պարողները» կանգնում են երես առ երես, զլուխ տալիս ու շարունակում քայլել: Ապա շարք են կանգնում և հանում թիկնոցները: Սրնգի միալար հնչյունների ու թմբուկի զարկերի ուղեկցությամբ սպիտակ շրջազգեստներով և կոնաձև թասակներով դերվիշների ուղիղ ֆիգուրները սկսում են պտտվել՝ սկզբում դանդաղ, ապա ավելի արագ ու արագ, իսկ նրանց շուրջը ծածանվում են զանգակաձև սպիտակ շրջազգեստները: Էքստազի արտահայտությունը դեմքերին հույի նման պտտվելով իրենց առանցքի շուրջը, նրանք պահպանում են բացարձակ հավասար

րակշռութիւն: Բայց դրա փոխարեն պատվում է նրանց նայող-
ների գլուխը: Հանկարծ, ավելի ճիշտ այն պահին, երբ նրանց
մարմինը այլևս նրանց չի ենթարկվում, նրանցից մի քանիսը
կտրուկ կանգ են առնում՝ կարծես քարանում են ու կանգնած
մնում արձանի պես, մինչև որ անշարժանան նաև մյուսները:

Երածշտուօրը լոտւմ է, շրջագզեստների փեշերն ընկնում
են ծաղիկների թերթերի նման: Վերահաս րոպեական դադարի
պահին լսվում է, թե ինչպես մեկը Ղուրանից մի քանի տուն է
կարդում: Եվ ապա նորից սկսվում են պտուտակայն շարժումները:
Գերվիշները պատվում են իրենց շուրջը և միաժամանակ հատա-
կին գծված շրջագծերով, որը պետք է նշանակի մոլորակների ու
աստղերի պտույտը իրենց առանցքի և արևի շուրջը... Ինչ-որ մի
պահ այն «պարողները» նորից են քարանում կրծքերին խաշա-
ձևած ձևերերով և գլուխ են տալիս «առաջնորդին»: Նրանց դեմ-
քերից քրտինք է ծորում: Սկսվում է աղոթքը և խանդավառ եր-
գեցողութիւնը: Մինչև ուղնուծուծն են թափանցում դերվիշներին
«սելյամ ալեյքում» գոչումները և որպես արձագանք «ալեյքում
սելյամ» պատասխանը:

Ներկայացումը վերջանում է: Կախարդված հանդիսատեսները,
որոնք նստած էին դահլիճի պատերի տակ, սկսում են լուռ ցըր-
վել: Երևում է, որ ներկաների մեծ մասը (բառացութիւնով օտար-
երկրացի գրոսաշրջիկների) դերվիշների հետ միասին վերապրել
են կրոնական էքստազի վիճակը, շնայած դահլիճի մուտքի մոտ
տիրող ուրախ տոնավաճառի մթնոլորտին՝ հուշանվերներ վա-
ճառողների բացականչութիւններն ամենեւին շեն նպաստում
կենտրոնանալուն: Բայց, պարզվում է, որ դա ևս նպաստում է
Ջելալետդին Ռումիի փիլիսոփայութիւնը, որի համար մահը,
որպես միացում աստծու հետ, եղել է գերագույն երանութիւն: Եվ
նա իր հետևորդներին կտակել է ուրախանալ իր մահվան օրը:

Մեկանայի հետևորդները, որի հոգևոր ազդեցութիւնը տա-
րածվում է Թուրքիայի սահմաններից դուրս, Սիրիայի և Իրաքի
վրա, զգալի չափով հեռացել են ավանդական իսլամից: Ասենք
իրեն՝ Մեկանային էլ խորթ շեն եղել պարսկական առասպել-
ներից քաղած պանթեիզմը, Պլատոնի փիլիսոփայութիւնը և
նույնիսկ քրիստոնէսութիւնը:

XIII դարի փիլիսոփայի վեհութիւն կնիքը նկատվում է նաև
ժամանակակից Կոնիայի վրա:

Խանութները լեփ-լեցուն են հուշանվերներով, որոնց վրա պատկերված են Մեկլյանան և պարող դերվիշները: Բայց գլխավորը նրա դամբարանն է, որը վեր է խոյանում քաղաքի վրա: Այդ հնագույն վանքի ներսում կան XIII դարի սելջուկյան արվեստի իսկական գանձեր: Արդեն վանքի արևի լույսով ողողված իջևանատունը, որտեղ կարկաշում է շատրվանը և քչքում են աղավինները, հագեցված է մի առանձնահատուկ անվրդովությամբ և մտասուզությամբ: Չորս կողմը դերվիշների լուսավոր խցերն են, իսկ կենտրոնում՝ մզկիթը, որտեղ այժմ կազմակերպված է թանգարան: Մզկիթին հարում է Մեկլյանայի ու նրա մերձավորների դամբարանը, որի կոնաձև ութանկյունանի գմբեթը, որ բնորոշ է սելջուկյան դարաշրջանի համար, շարված է բաց կանաչավուն ջնարակված սալիկներով՝ ոսկեզօծ նկարներով:

Նման դամբարաններ կարելի է տեսնել ուրիշ տեղերում ևս, որտեղ իրենց հետքն են թողել թուրքական ցեղերը: Բացառված չէ, որ առաջին սելջուկները փորձել են քարի մեջ պատկերել այն վրանի կոնաձև տեսքը, որում ապրել են իրենց քոչվոր նախնիները:

Ապշեցնում և հիացնում է նախկին մզկիթի ոսկու և ջնարակի առատությունը, իրենց գույներով, հարստությամբ ու նրբագեղությամբ հեթիաթային դարդաքանդակները: Մեկլյանայի ու նրա վաթսուս մերձավորների գերեզմանները ծածկված են սքանչելի կանաչ-երկնագույն մետաքսով ու թավիշով. ծածկոցների վրա ուրիշ թելերով ասեղնագործված են արևելյան զարդանկարներ և մի քանի տուն Ղուրանից: Դեռ կենդանության ժամանակ փառքի հասածների գերեզմանների գլխավերևում դրված են բարձր շամաներ: Ուշադրություն է գրավում Մեկլյանայի հոր գերեզմանը. նրա դագաղը ոչ թե պառկած է, այլ կանգնած, քանի որ, ինչպես առասպելն է պատմում, «մտքի սուլթանը» մեռնելու ժամին վեր է կենում անկողնուց և ընդառաջ գնում Մուհամմեդին, որը ցած էր իջել նրա հետ տեսակցություն ունենալու համար... Եվ այդ ամենը ողողված է գունավոր վիտրամներից թափանցող լույսով: Մզկիթներում՝ ապակեպատ ցուցափեղկերում, հավաքված է հարուստ զարդանկարներ ունեցող ձեռագիր Ղուրանների մեծ հավաքածու. ամենահին Ղուրանը ունի գրեթե հազար տարվա պատմություն: Դրանցից մի քանիսը լուցկու տուփի շափ են: Ակամա մտածում ևս, թե նկարչին ինչպես է հաջողվել մտադաթի այդքան փոքրիկ թերթերի վրա զետեղել սուրբ գրքի արա-

բերեն զարդագիրքը, և դեռ տեղ էլ գտնել գրքի լուսանցքներում բազմագույն զարդանկարների համար: Հավանաբար, այդ աշխատանքը կարող էր կատարված լինել միայն խոշորացույցի օգնությամբ: Այստեղ են հավաքված նաև պաշտամունքի այլ առարկաներ՝ հազվագույտ փոքրիկ գորգեր աղոթքի համար (դրանցից մի քանիսն ունեն յոթ հարյուր տարվա հնություն), իրենց գեղեցկությամբ զարմանալի արծաթե դրվագված մոմակալներ, վարպետորեն պատրաստված փայտե զրակալներ Ղուրանի համար, դերվիշների հին զգեստներ: Եվ այդ ամենը մեզ հետ միասին ուշադրությունը ու ակնածանքով դիտում են բազմաթիվ մարդիկ, որոնց մեջ առանձնապես շատ կան կանայք ու ծերեր: Բայց կան նաև երիտասարդներ: Ինչպես երևում է, պարող դերվիշների միաբանության միստիկական սիմվոլիկան իր ներգործությունն է ունենում նաև այսօր...

Սելջուկյան շրջանի շենքերի մեծ մասը պահպանվել է մինչև մեր օրերը: Դժբախտաբար, ոչինչ չի մնացել Ալանտդինի երբեմնի սրանշելի պալատից. վերջինս XIII դարում իր իշխանության տակ միավորել էր Փոքր Ասիայի զգալի մասը, և շինարարական գործում ունեցած հաջողությունների համար նրան անվանում են Սելջուկյան Հուսեյնիանոս: Ճիշտ է, Ալանտդինի կանաչապատ քլրի դագաթին կանգուն է մնացել նրա խսկ կառուցած և մինչև այժմ՝ գրեթե անփոփոխ մնացած մզկիթը:

Առանց դմբեթի այդ մզկիթը իրենից ներկայացնում է սելջուկյան հին ճարտարապետության կլասիկ օբինակ: Ամբողջովին քարից կերտված և ձևով անհամաչափ այդ մզկիթը հիշեցնում է օմայանների արաբական մզկիթները Կորդովայում և Կահիրեի մի քանի մզկիթները: Նրա սրածայր կամարները հենված են հունական գեղեցիկ խոյակներ ունեցող քառասունհինգուսուներեքի վրա: Սակայն, պետք չէ զարմանալ դրա վրա. չէ որ Կոնստանդին Իկոնիսումն է: Աղոթքի անթիվ բազմագույն փոքրիկ գորգերից քարե հատակը իրենից ներկայացնում է խաչաբաղկատ մի պատկեր: Այդ մզկիթում զգում ես մի ցուրտ շունչ և վանական մենակեցություն, բայց միաժամանակ նաև խորհրդավոր վեհություն:

Մենք թուրքիկ կերպով դիտում ենք Ինչև մինարե (Շքեղ մինարե) հին մեղրեսեի շենքը, որը նույնպես վերաբերում է XIII դարին: Այժմ այդ մինարեից, որը, ի դեպ, այնքան էլ հույակապ չի թվում, մնացել է միայն մեկ երրորդը. մնացած մասը փուլ է

եկել կայծակից՝ 1901 թվականին: Պահպանվել է իր նրբագեղությամբ սքանչելի «ժանյականման» շքամուտքը՝ սելջուկյան արվեստի ամենագեղեցիկ ստեղծագործություններից մեկը: Իսկ ընդհանուր առմամբ, այսօրվա Կոնիան այնքան էլ հետաքրքիր շատ բան չունի:

Կենտրոնական մասից բացի, ամբողջ մնացած քաղաքը, որը քիչ թե շատ մաքուր է ու կանոնավոր՝ թուրքական մյուս քաղաքների համեմատությամբ, ավելի շուտ հիշեցնում է մի մեծ գյուղ: Այստեղ, ինչպես նաև Անատոլիայի մյուս վայրերում, փողոցներում կարելի է տեսնել նախշերով զարդարված սալեր...

Սելջուկյան այն հայտնի ասացվածքը, թե՛ «ողջ աշխարհը ման արի, բայց ամենից առաջ Կոնիան տե՛ս», մեծ վերապահությամբ միայն կարելի է կիրառել ներկայիս քաղաքի նկատմամբ: Ընդհակառակը, երբ հեռանում ես քաղաքից, հիշողությանդ մեջ մնում են միայն Իկոնիայի պարիսպների ավերակները, իսկ Իկոնիան նույնիսկ իր տարածքով երկու անգամ ավելի մեծ էր, քան ներկայիս Կոնիան...

ՕՍՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈՒՐՍԱՆ

Իմ առաջին ուղևորությունը երկրում դեպի Բուրսա էր, և ես այդ ժամանակ կարողացա սեփական աչքերով տեսնել ու համոզվել, որ անատոլիական լանդշաֆտը լի է խիստ հակադրությունների: Ետևում մնացին մոալլ, լերկ, նվաղագույն, բուսականությունից անգամ զուրկ լեռնալանջերը: Չորս կողմը փոված է արոտավայրերի հյուսիս կանաչը, իսկ ճանապարհի երկայնքով ձգվում են ծաղկափթիթ մրգատու ծառերն ու բրգաձև բարդինները, որոնք հեռվից թվում են որպես բարակ ծաղկաբույլեր: Որքան ավելի ենք մոտենում Բուրսային, այնքան ավելի փարթամ է դառնում կանաչը, և դժվար է հավատալ, որ մեր առջև նույն Անատոլիան է: Այստեղ արգավանդ դեղնահողի ամեն մի կտորը հերկված է, ծառատնկված, ցանված: Բուրսան մի մեծ այգի է, կամ, ավելի ճիշտ, մրգատու այգի, որն իր պտուղներն է մատակարարում ամբողջ Թուրքիային: Այդ բանը բացատրվում է շատ պարզ՝ խոնավության առատությամբ. Բուրսայի շրջակայքում գետնի տակից բխում են մոտ շորս հարյուր աղբյուրներ ու աղբրակներ. ահա թե որտեղից է այդ փարթամ բուսականու-

Յլուներ, որը կախարդում է անշուր, գորշ, քարքարոտ Կենտրոնական Անատոլիայից եկող ճանապարհորդին:

Լանդշաֆտը շեշտակիորեն փոխվում է, հենց որ մոտենում ես «Բուրսայի վիլայեթ» բառերով վահանակին: Հեռվում, նկարչի պատկերած ֆոնի նման բարձրացել է գորշ-կապույտ մուգ Ուլուդաղ լեռնային դանդաժը: Հին Բյութանիայի այդ Օլիմպոսի գագաթը միշտ պատած է ձյունով: Իսկ ճանապարհին ավելի մոտ աճում են սոսիներ ու բարդիներ, իսկ ավելի հաճախ՝ մուգ կանաչ նոճիներ: Այդ «գերեզմանային» ծառերը մեզ հիշեցնում են, որ մոտենում ենք Բուրսային՝ օսմանյան առաջին սուլթանների պանթեոնին, մի քաղաքի, որն այսօր էլ ապրում է վեց դար առաջ իր հասած կարճատև փառքի հիշատակով: Բուրսան մեզ դիմավորում է ճանապարհի երկայնքով շարված դեղձի ու նշի ծաղկած ծառերի սպիտակ-վարդագույն փրփուրով:

Բուրսան ընկած է Նիլուֆեր գետի բերքառատ հովտի կենտրոնում: 240 հազար բնակիչ ունեցող քաղաքը հաճելի տպավորություն է թողնում իր մաքրության և կարգ ու կանոնի, ինչպես նաև նրա բնակիչների սիրալիրության ու հյուրասիրության շնորհիվ: Բարյացակամ ժպտացող մարդկանց ես այստեղ հանդիպեցի ավելի շատ, քան Թուրքիայի ուրիշ որևէ վայրում:

Քաղաքի որ մասում էլ որ լինեք, ամեն մի նեղ փողոցից անգամ երևում է վեհասքանչ Ուլուդաղը: Բուրսան ունի յուրահատուկ միկրոկլիմա: Անկարայի բարձր լեռնային նոսր օդից հետո մարդ այստեղ հեշտությանը է շնչում: Եվ եղանակն էլ կարծես առանձնահատուկ է, «ոչ թուրքական»: Բուրսան հիշեցնում է Ֆրանսիական Գրովանսի կամ Իտալիայի փոքրիկ քաղաքները:

Սակայն, իրականում Բուրսան ամենախսկական թուրքական քաղաք է, բացառությամբ, դուցե, Կոնիայի: Նա պատմության մեջ մտել է ամենից առաջ որպես օսմանյան առաջին սուլթանների մայրաքաղաք և այդ ժամանակներից պահպանել է գեղեցիկ հուշարձաններ: Այստեղ չկա տարբեր մշակույթների այնպիսի միահյուսում, ինչպես, ասենք, Ստամբուլում, Իզմիրում կամ Անկարայում: Երևի, հենց միասնությունն ու ներդաշնակությունն են, որ Բուրսան դարձնում են մի իսկական մարգարիտ՝ թուրքական մյուս բոլոր քաղաքների մեջ:

Բուրսան գոյություն է ունեցել շատ վաղուց, երբ առաջին օսմաններն անգամ դեռ ոտք չէին դրել անատոլիական հողը: Քաղաքը հիմնադրվել է մեր դարաշրջանից առաջ III դարի վերջին

Բյուժանիայի թագավոր Պրուսոս I-ի կողմից՝ հունական աշխարհի ամենաբարձր օլիմպոսներից մեկի ստորոտին: Բուրսան եղել է Հռոմի դեմ Միհրդատի մղած պայքարի ասպարեղ, իսկ մեր դարաշրջանից առաջ 74 թվականին ամբողջ նահանգի հետ միասին մտել է Հռոմեական կայսրության կազմի մեջ: Պլինիոս Կրտսերը իր նամակներում այդ քաղաքը անվանում է «Պրուսիաս ադ Օլիմպում»: Բյուզանդական կայսրության ժամանակներում քաղաքը հաճախ ձեռքից ձեռք էր անցնում. նրա վրա հարձակվել են պարսիկներն ու արաբները, մինչև նրա պարիսպներն էին հասել սելջուկները, իսկ հետո արևմուտքից եկան խաչակիրները: Քաղաքում ամենից ավելի երկար մնացել են բյուզանդացիները: Այն ժամանակ յոթանասուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող Նիկեան (այժմ Իզմիկ) նույնիսկ եղել է բյուզանդական մի վաղանցիկ պետության մայրաքաղաքը, հենց այն ժամանակ, երբ խաչակիրները շորրորդ արշավանքում գրավեցին Կոստանդնուպոլիսը:

Ինչպես Բուրսայում, այնպես էլ Իզմիկում այդ ժամանակներից ոչ մի հուշարձան չի մնացել: Եվ հիմա դժվար է պատկերացնել, որ դա հենց այն Նիկեան է, որտեղ IV դարում Կոստանտին կայսրը սարքում էր շքեղ խրախճանքներ, որոնք նկարագրված են քրոնիկոններում. որ հենց այստեղ էր, ուր ծիրանի հազած կայսրը նստում էր ոսկե գահին, որպեսզի զլխավորի հերետիկոս Արիոսին դատապարտելու համար Նիկեա ժամանած 350 եպիսկոպոսների ժողովը:

Բյուզանդացիները ոչ մեծ ընդմիջումներով այս երկրում իշխել են մինչև 1326 թվականը, երբ թուրքական սուլթանների դինաստիայի հիմնադիր Օսմանը, կոտրելով պաշարված Բուրսայի դիմադրությունը, այն դարձրեց իր մայրաքաղաքը: Հենց այդ ժամանակ էլ սկսվեց այդ քաղաքի ամենամեծ փառքի ժամանակաշրջանը, և թեպետ այն երկար շտեկեց, բայց բավական եղավ, որ Բուրսան այսօր էլ շարունակի ապրել նրա փայլով: Օսմանի ժառանգները, և առաջին հերթին նրա որդի Օրխանը, դեռ քառասուն տարի շարունակ ընդարձակում ու շենացնում էին մայրաքաղաքը:

Բուրսայից օսմանյան սուլթանները արշավանքներ էին կազմակերպում դեպի Բյուզանդիա: Սակայն շուտով քաղաքը մայրաքաղաքի իր նշանակությունը դիշեց Ադրիանապոլսին (այժմ Էդիրնե), որը օսմաններին հնարավորություն տվեց արևմուտքից

շրջապատելու Կոստանդնուպոլիսը: Գաղարեւոյ վարչական մայրաքաղաք լինելուց, Բուրսան մնաց որպէս օսմանների հոգեւոր կենտրոն. այստեղ էր տեղի ունենում սուլթանների թագադրութիւնը, այստեղ էլ թաղում էին նրանց: Ի դեպ, 1414 թվականին Բուրսա ժամանեց լեհական առաջին դիվանագիտական միսիան, որը, ճիշտն ասած, առհասարակ եվրոպական առաջին դիվանագիտական միսիան էր դեպի Թուրքիա:

1453 թվականին Կոստանդնուպոլսի գրավումով ավարտւում է Բուրսայի փառքի պատմութիւնը, թեև օսմանյան կառավարողները, ինչ-որ ժամանակ դեռ շարունակում էին այնտեղ դամբարաններ կառուցել իրենց համար:

Օսմանյան առաջին սուլթանների շենքերը քաղաքում, որոնցով կարելի է դատել դարաշրջանի ճարտարապետութիւնը և արվեստի վեհ գեղեցկութիւնը մասին, պահպանվել են մինչև մեր օրերը:

Դրանցից ամենից ավելի նշանավորներն են Եշիլ ջամին (Կանաչ մզկիթը) և Եշիլ թյուրքեն (Կանաչ դամբարանը): Այդ պատճառով չէ արդոք, որ Բուրսան կոչում են Կանաչ Բուրսա: Եշիլ ջամին, որի շինարարութիւնն սկսվել է Մեհմեդ I սուլթանի օրով (1413—1421) և ավարտվել 1424 թվականին, մեծ համբավ է վայելում այն բանով, որ իր մեջ ձևի վեհութիւնը զուգակցում է գունավոր հարմարակու հետ, որով մզկիթը շարված է ներսի կողմից, փսկ դամբարանը՝ դրսից: Սալիկների գույնը ոչ բաց կապույտ է, ոչ էլ բաց կանաչ, այլ այն, ինչ անվանում են «ծովային ալիք»: Ապշում ես, որ այդքան տարիներ «ծովային ալիքը» ոչ գունաթափվել է, ոչ էլ խամրել: Ութանկյուն դամբարանը վերջանում է սրածայր գմբեթով, որը արևի տակ փայլում է կանաչ և բաց կապույտ գույների բոլոր երանգներով: Ինչպես և Ուլուդաղը, այս դամբարանը կազմում է Բուրսայի բնակարար անբաժանելի մասը՝ այն երևում է քաղաքի բոլոր մասերից: Դամբարանի ներսում են գտնվում սուլթան Մեհմեդ I-ի և նրա բոլոր հարազատների գերեզմանները:

Այն ժամանակի սքանչելի կիրառական արվեստը ավելի քիչ շահով, քան այդ արվում էր ավելի ուշ շրջանի մզկիթների ու դամբարանների կառուցներում, որպէս զարդանախշերի մոտիվներ օգտագործում էր Ղուրանի սրբազան ասացվածքները, բայց ավելի շատ նկարիչի երևակայութիւնը ներշնչմամբ ֆանտաստիկ պատկերներ՝ վերացական գալարագծեր, ոճավորված ծաղիկներ,

հեքիաթային կենդանիներ... Արվեստի որոշ պատմաբաններ այդ բանի մեջ տեսնում են հնդկական մուսուլմանական արվեստի, ուրիշները՝ արաբական և պարսկական արվեստի ազդեցությունը:

Հետաքրքրական է, որ այն մարդը, որի ոսկի ձեռքերը կյանքի են կռել կալի գունավոր սալիկների վրա պատկերված այդ ամբողջ հեքիաթային աշխարհը, հանգչում է հենց այստեղ՝ դամբարանի պատերից մեկի տակ: Նրա անունը նույնպես Մեհմեդ էր, բայց նա ոչ թե սուլթան էր, այլ պարզապես Մուկեֆին Մեհմեդ, որն այդ անունը վաստակել էր աշխատանքի նկատմամբ ունեցած բուռն կրքի համար:

Ես պետք է խոստովանեմ, որ ինձ վրա անհամեմատ ավելի մեծ տպավորություն գործեց Բուրսայի մյուս սրբությունը՝ Ուլու ջամին (Մեծ մզկիթը), որը գտնվում է քաղաքի կենտրոնական, առևտրական մասում: Արտաքինից նա զարմացնում է ոչ այնքան իր գեղեցկությամբ, որքան շափերով, բայց ինչպիսի հուպակապ տեսարան է բացվում աչքերիդ առջև, երբ մզկիթ ես մըտնում: Այստեղ տիրում է արևելյան ինչ-որ մի անխռով միտերիայի մթնոլորտ: Դա Թուրքիայում միակ մզկիթն է, որի կենտրոնում շատրվան է ցայտում: Նրա ապակեպատ գմբեթի միջով ներս է թափանցում արևը, և նրա ճառագայթների տակ վարպետորեն շինված գույնզգույն ապակիները խաղում են ծիածանի բոլոր գույներով և ավելի պարզորոշ են դառնում արաբներեն սև զարդագրերը սպիտակ պատերին: Իսկ մզկիթի մեջտեղում գույնզգույն գորգիկների վրա աղոթքի մեջ խորասուզված մարդիկ ծնկաշոք կռացել են փայտե գրակալներին դրված Աուրանների վրա: Աղոթողներից մեկը սկսում է սրտածմլիկ ծեսերը, և հիանալի ակուստիկան նրա ձայնը տարածում է ամբողջ մզկիթով: Մյուսները երեսները դեպի Մեքքա (դեպի միհրաբ՝ դեպի բեմ) դարձրած, շշնջում են Մարգարեի սուրբ խոսքերը: Երբ անցնում ես այդ մարդկանց կողքից, ոչ ոք քեզ վրա ուշադրություն չի դարձնում: Սուրբ գրքի վրա կոստած ծերունիների աչքերի ներքին մտահայեցության արտահայտությունը հենց իսկական Արևելքն է: Նման մտահայեցությանը նպաստում է մզկիթում տիրող առանձնահատուկ մթնոլորտը՝ շատրվանի անլուծի կարկաչունը, արևի լույսը և Աուրանի բանատողերի կանոնավոր զարդագրերը սպիտակ պատերին:

Իսկ Ուլու ջամիի պատերից դուրս բոլորովին այլ աշխարհ է: Ծածկած մեծ ու երբեմնի աշմկոտ շուկան՝ իրենց ապրանքը գո-

վաբանող վաճառողների բնորոշ բացականչութուններով: Զբոսաշրջիկների համար մանր-մունր զարդարանքների կողքին ցուցադրված են աղղալի ն ղգեստներ և գործվածքներ, տեղական արտադրութան լայնորեն հայտնի խավավոր սրբիչներ: Մի քանի վաճառողներ ցուցադրել են տարբեր շափսերի դանակներ՝ դրանք ևս Բուրսայի պարծանքն են:


Աղմկոտ շուկայում ման գալը շատ շուտ հոգնեցնում է: Ուզում ենք մի խաղաղ տեղ: Դեպի լեռը՝ հին քաղաքը տանող լուռ փողոցով բարձրանում ենք մինչև Մուրադիե թաղամասը՝ օսմանական առաջին սուլթանների պանթեոնը: Այստեղի դամբարաններում հանգչում են իրենք՝ սուլթանները, նրանց կանայք ու զավակները: Թաղամասը իր անունն ստացել է Կոստանդնուպոլսի նվաճող Ֆաթիհի հոր՝ սուլթան Մուրադ II-ի դամբարանից: Ահա թե ինչ է գրված սուլթան Մուրադ II-ի գերեզմանին. «Արարների ու պարսիկների սուլթանը, Ալլահի սուվերը երկրի վրա, սուլթանը և սուլթան Մուրադի որդին, Մուհամմեդի որդին, Բայազիդ խանի որդին,— թող Ալլահը երկար պահի նրա իշխանությունը,— հրամայեց կառուցել այս վեհ կառուցվածքը»: Մուրադի դամբարանը կանոնավոր ձև ունի՝ առանց որևէ զարդարանքների: Դամբարանի ուղիղ դիմացը ցայտում է բնական շատրվանը, իսկ դրանից այն կողմ դեպի երկինք է խոյացել վիթխարի սոսիս, որի բնի տրամագիծը հասնում է տասնհինգ մետրի: Այդ սոսիս այժմ մոտ հինգ հարյուր տարեկան է. այն տընկել են սուլթանի թաղման ժամանակ: Անձրևի ժամանակ գմբեթի անցքից կաթիլները թափվում են հողի բարակ շերտով ծածկված դագաղի վրա: Այդ է եղել Մուրադի վերջին կամքը: Քանի որ, ինչպես հաստատում է իսլամը, անձրևի ջուրը Ալլահի օրհնությունն է: Դրան չի կարելի չհամաձայնել. անձրևի ջուրը աստծո օրհնությունն է շոք ու անջուր Փոքր Ասիայի համար: Իսկ շոքս հարյուր աղունքներից հորդող ջուրը Բուրսայի օրհնությունն է և հարստությունը:

Սուլթան Մուրադի հասարակ դամբարանի համեմատությամբ առանձնապես շքեղ է երևում Մեհմեդ II-ի որդի՝ սուլթան Զեմի դամբարանը. այստեղ կան և գույնզգույն ապակիներով լուսամուտներ, և երկնագույն մայրիկայով պատած պատեր՝ ոսկեզօծ զարդանկարներով: Այդ գերեզմանից ոչ հեռու հանգչում է սուլթան Սուլեյման Սքանչելիի հարազատ որդին՝ դժբախտ

A 72583 II

Մուսաւաֆան, որին նենգորեն սպանեցին հոր աշքերի առջև... Իբր տեսակի մեջ միակ այս պանթեոնում, ոչ մեծ տարածութեան վրա խիտ կերպով կուտակվել են օսմանյան առաջին սուլթանների ու նրանց մերձավորների մոտ քսան գերեզմաններ: Պանթեոնը թաղված է ճյուղատարած սոսիների, դեպի երկինք սլացող նոճիների և ծաղկող նուննիների ու նարնջենիների կանաչի մեջ... Խշխշում են տերևները, կարկաշում՝ շատրվանները: Այստեղ ձեզ համակում է արտասովոր հանգստի ու անխռով մտորմունքի տրամադրութուն: Հավանաբար, նման անդորրը օսմանյան տիրակալների հավիտենական հանգստյան վայրում պետք է որպես վարձահատուցում ծառայեր կենդանութեան ժամանակ նրանց կատարած արշուճալի գործերի համար, երբ եղբոր կամ որդու սպանութունը ամենասովորական բանն էր: Հետաքրքրական է, որ ոչ այլ ոք, քան Սուլեյմանի ու Ռոկոտլանայի որդի սուլթան Սելիմն էր, որն իր գահի համար պարտական էր շարանենգորեն սպանված իր եղբորը, հրամայել էր, որ այդ այգի-գերեզմանատունը «նմանվի դրախտի»: Այդպես է գրված Մուրադիեի մուտքի մոտ:

Այսօրվա Բուրսան մի հնագույն թանկարժեք քար է, որը կարծրացնել է իր վեհութեան մեջ: Սակայն ավելի խելամտորեն դարգանալու դեպքում քաղաքն այսօր էլ կարող էր արժանի լինել իր վաղեմի փառքին. դրա համար նա ունի ավելի շատ տրվյալներ, քան որևէ այլ քաղաք, և ամենից առաջ՝ արգավանդ հող և անսպառ խոնավութուն: Բուրսան իր շրջակայքով աչքի է ընկնում երկրագործութեան բարձր կուլտուրայով և մրգերի վերամշակման արդյունաբերութեան խոշորագույն կենտրոն է, ինչպես նաև մետաքսի, իսկ վերջին ժամանակներից էլ՝ բրդի արդյունաբերութեան կենտրոն: Բուրսայի սքանչելի դիրքը, փարթամ բուսականութունը և կլիմայական զերազանց պայմանները նրան հնարավորութուն են տալիս դառնալու նաև մի հրապուրիչ վայր զրոսաշրջիկների համար: Արդեն այժմ Ուլուդաղի գագաթին կառուցված երկու հարմարավետ հյուրանոցներ ընդունում են ձմեռային սպորտի սիրահարներին: Քաղաքի ներսում զրոսաշրջիկների համար կառուցված հյուրանոցում խոզովակներով հոսում է երկաթ պարունակող ջուր՝ Ցելսիուսի 38 աստիճան տաքութեամբ: Դեռևս Բյուզանդական կայսրութեան ժամանակներում հաշտնի էին Բուրսայի բազմաթիվ հանքային աղբյուրների բուժական արժեքավոր հատկութունները: Թվում է, հենց այստեղ



էր ամեն տարի «չրերը» գալիս թեողորա կայսրուհին իր շորս-հազարանոց շքախմբով. պահպանվել են «հին բաղնիքի» ավերակները, որտեղ նա լողանում էր: Դրանից ոչ հեռու գտնվող XVI դարի «նոր բաղնիքում» հոսում է յոթանասուն աստիճանանոց բնական ծծմբային ջուր: Այն ժամանակից, այսինքն՝ XVI դարից, ծծմբի այդ աղբյուրների օգտագործման մեջ ոչինչ չի փոխվել: Բաղնիքի կանանց բաժնում (տղամարդկանց բաժին ես չտեսա) պատերից կախված են թուրքական, հին փորագրանկարներ հիշեցնող պատկերներ, որտեղ պատկերված են կանայք՝ երեխաների հետ: Բաղնիքում հավաքվում են, որպեսզի ժամանակ անցկացնեն՝ մեկ-երկու ժամ նստեն շոգեսենյակում, լողանան ընդհանուր ավազանում, բայմբասեն: Այստեղ կենտրոնացած է մի յուրատեսակ հասարակական կյանք: Եվ այս տեսակետից նույնպես գրեթե ոչինչ չի փոխվել օսմանյան ժամանակներից: «Թրքուհիները միմյանց հրավիրում են բաղնիք, ինչպես մեզ մոտ (Լեհաստանում:— Ք. Պ.) հրավիրում են թեյի, զբոսանքի կամ ձիազբոսանքի, և այնտեղ անցկացնում են մի քանի ժամ, հյուրասիրում միմյանց, խմում, ուտում, նարդիլե կամ ծխամորճ ծխում, պճնվում են, զուգվում ճիշտ այնպես, ինչպես հարեմում»,— իր հուշերում այսպես է նկարագրել բժիշկ Վլադիսլավ Յարլոնովսկին, որը 1837 թվականի հունվարյան ապստամբության ճնշումից հետո ապաստան էր գտել Թուրքիայում և աշխատել էր հենց Բուրսայում:

ՍՏԱՄԲՈՒԼԸ «ԴՈՒ»-ՈՎ Ե ԽՈՍՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Իմ առաջին հանդիպումը Թուրքիայի հետ միայն հաստատեց իմ պատկերացումը նրա մասին որպես էկզոտիկ երկրի: Երեկոյան Ստամբուլը, եթե նրան նայես վայրէջքի գնացող ինքնաթիռի լուսամուտից, հազարավոր լույսերով փայլիլող մի քաղաք է արեւլյան հեքիաթից... Այդ տպավորությունն է՛լ ավելի ուժեղացավ, երբ մենք մոտեցանք քաղաքի բերդերի պարիսպներին: Այդ կիսավերակ ատամնավոր պարիսպները, որոնք երեկոները շատ գեղեցիկ լուսավորվում են լուսարձակներով, հիշում են V դարի հռոմեական տիրապետության ժամանակները, Բյուզանդական կայսրության ծաղկումն ու անկումը: Եվ թեպետ քաղաքը փոխել է թե՛ իր տիրակալներին, և թե՛ իր անունը, նա արդեն հարյուրավոր տարիներ սրանից առաջ իր անջնջելի կնիքն

է դրել մարդկութեան ամբողջ պատմութեան վրա: «Պատինա իստորի» («Պատմութեան գանձարան») բառերը ամենից ավելի շատ հինց սազում են Ստամբուլին, և դա առանձնապէս աչքի է զարնում, երբ քաղաքին ծանոթանում են երեկոյան և երբ խաւարն ու գեղեցիկ լուսային էֆեկտները իրենցով թաքցնում են Ստամբուլի բերդերի պարիսպներին հարող թաղամասերի ողջ-թշվառութիւնն ու աղքատութիւնը:

Հազիվ էի ես հաջորդ առավոտ դուրս եկել Ստամբուլի փողոցները, և արեւլյան կախարդանքի իմ տպավորութիւնը ցրվեց: Իմ աչքերի առաջ ես տեսա անկանոն ու քառսային ձևով կիտված վաղեմի հարմարավետ շէնքեր ու ժամանակակից պալատներ, որոնք վկայում են միայն վատ ճաշակի մասին, և մեղուների պարս հիշեցնող աշխույժ ու խայտաբղետ, աղմկարար բազմութիւն: Քաղաքի արտաքին տեսքի մեջ եղած այդ հակադիր պատկերները կարծես աննկատելիորեն միաձուլվում են մի տարասեռ, բայց այնուամենայնիվ մի ներդաշնակ ամբողջութեան մեջ: Երկու և կես միլիոն բնակիչ ունեցող Ստամբուլը՝ աշխարհում միակ քաղաքն է, որն ընկած է երկու մայր ցամաքների վրա. սրանք միմյանցից բաժանված են Բոսֆորի սառը և պղտոր ջրերով: Մոտ երեսուն կիլոմետր երկարութիւն ունեցող ստրատեգիական տեսակետից կարևոր նեղուցն այդ մասում քաղաքի ասիական մասը բաժանում է եվրոպականից: Բոսֆորը ավելի շուտ նման է մի լայն ու ջրառատ գետի. ամենանեղ տեղում նրա լայնութիւնը հասնում է ընդամենը հինգ հարյուր հիսուն մետրի: Բայց միայն դրանով չի որոշվում յուրատեսակ քաղաքի աշխարհագրական դիրքը: Քաղաքի եվրոպական ափին ընկած մասը Ոսկեղջյուր ծովածոցով բաժանված է հին Ստամբուլից, որը, Հոսմի նման, բարձրացել է յոթ բլուրների վրա. այստեղ կան բազմաթիվ մզկիթներ, բյուզանդական ու օսմանյան ճարտարապետութեան սքանչելի հուշարձաններ, և Ղալաթայի ու Պերայի կեղծ արդիական, անպաճույճ գործարար թաղամասեր, որոնք այժմ կոչվում են Բեյօղլու: Ոսկեղջյուրից այն կողմ սառը Բոսֆորը խառնվում է Մարմարա ծովի տաք ջրերին, որի ավազատ լողափերը նույնպէս կազմում են Ստամբուլի ւնբաժան մասը:

Ինչո՞ւմ է Ստամբուլի անկրկնելի գեղեցկությունը: Կժվար է ասել: Արդյոք նրա գեղատեսիլ ծուռամուռ փողոցները, որոնք մերթ շնչտակիրեն բարձրանում են վեր, մերթ իջնում ցած: Իսկ գուցե հին պարիսպների, փարթամ կանաչի և երեք կողմից քաղաքը ողողող ջրի ներդաշնակությունը: Ստամբուլի պատմությունը մինչև հիմա էլ դեռ կենդանի է խուրքական հին փայտաշեն տներում՝ փողոցների վրա կախված իրենց պատշգամբներով: Այդ պատմությունն ապրում է գեպի վեր սլացող մինարետների ու բյուզանդական շենքեր հիշեցնող անթիվ-անհամար մզկիթների գմբեթաձև կամարների մեջ, որոնցով օսմանյան սուլթանները դարդարել են մայրաքաղաքը: Մինչև այսօր էլ դեռ ապրում է նաև Ստամբուլի բյուզանդական անցյալը: Եթե ուզում ես քաղաքի տեղագրությամբ իմանալ Բյուզանդիայի պատմությունը, ապա պետք է գնաս քաղաքի այն մասը, որը կարծես եռանկյան նման ընկած է բերդի պարիսպների, Ոսկեղջյուրի և Մարմարա ծովի միջև:

Արդեն մեր դարաշրջանից առաջ VII դարում դորիական Մեզարա քաղաքից ելած կիսառասպելական Բիզասը այստեղ հիմնել էր Բյուզանդիոն քաղաք-ամրոցը, որտեղ բնակություն էին հաստատել հույն զաղութարանկները: Սակայն Բյուզանդիայի իսկական պատմությունը սկսվել է 330 թվականին, երբ Հռոմեական Կոստանտին Մեծ կայսրը Բոսֆորի հունական գաղութի դեմ տարած հաղթանակից հետո ընդարձակեց ամրոցը և այն հայտարարեց իր մայրաքաղաքը, որը և հալթոզի պատվին կոչվեց Կոստանդնուպոլիս: Մի քանի տասնամյակ հետո տեղի ունեցավ Հռոմեական կայսրության վերջին բաժանումը արևմուտյան և արևելյան թագավորության (վերջինս՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով), իսկ այն բանից հետո, երբ 476 թվականին բուն Հռոմը նվաճեցին գերմանական բարբարոսները, Կոստանդնուպոլիսը դարձավ կայսրության միակ մայրաքաղաքը: Այս քաղաքը, ինչպես մի ժամանակ Աթենքը, իսկ ապա նաև Հռոմը, սկսեց կատարել ամբողջ Միջերկրածովյան շրջանի քաղաքական ու հոգևոր կենտրոնի դեր:

Այսպիսով, Բյուզանդական կայսրությունը, որը հռոմեական էր իր անվանումով և հունական՝ իր էությամբ, բայց մնացել էր արևելյան մշակույթի ազդեցության տակ, գոյություն ունեցավ ավելի քան հազար տարի: Այն ժամանակաշրջանում, երբ հետամնաց Եվրոպան ապրում էր միջնադարյան դարաշրջ-

ջանը, այստեղ՝ «Նոր Հոռոմում», այսինքն՝ բյուզանդական Կոստանդնուպոլսում, ծաղկում էին արվեստն ու մշակույթը: Ժամանակակիցների վիպյություններով, Կոստանդնուպոլիսը եղել է ամենահարուստ քաղաքը աշխարհում: Արտակարգ ուժեղ է եղել Բյուզանդիայի հոգևոր, կրոնական կյանքի, ինչպես նաև ղեկարվեստական մշակույթի ազդեցությունը հարևան երկրների վրա: Արևելյան Եվրոպայի համար Բյուզանդիան եղել է քաղաքակրթության նույնպիսի մի կենտրոն, ինչպես իր ժամանակ Հոռոմը և լատինական քաղաքակրթությունը Արևմտյան Եվրոպայի համար: Այսպիսով, «Նոր Հոռոմ» անվանումը պատմականորեն արդարացված դուրս եկավ, թեև հենց նրա հիմնադրման պահից հունարենը եղել է Բյուզանդիայի եկեղեցական լեզուն, իսկ VIII դարից սկսած դարձավ նաև պաշտոնական պետական լեզու լատիներենի փոխարեն:

Կայսրը իրեն համարում էր աստծո փոխանորդը երկրի վրա, և ինքը, այլ ոչ թե հեռավոր Հոռոմում նստած պապն էր լուծում կրոնական վեճերը Քրիստոսի երկակի կամ եզակի բնության մասին: Երբ երկրի վրայի այդ «պատվածային մարմնավորման» բռնատիրությունը անտանելի էր դառնում նրա հպատակների համար, ապա նրանից աղափուխու սիակ միջոցը մնում էր սպանությունը անկյունից: Եթե շեմ սխալվում, բյուզանդական 107 կայսրերից 65-ը կամ սպանվել են, և կամ «պարզապես» խեղձվել կամ տապալվել: Իրենց պալատական խարդավանքների համար տիրակալները լայնորեն օգտվում էին ներքինիների ծառայություններից, որը հետադառնում կրկնվեց Օսմանյան դոան արքունիքում, ճիշտ է, մի քիչ այլ ձևով...

Մինչ այդ արվեստը ծաղկում էր ապրում:

Բյուզանդական արվեստի անկրկնելի կատարելության գաղտնիքն այն էր, որ միասնական ներդաշնակ ամբողջության մեջ միացել էին հունա-հոռոմեական և արևելյան, զլխավորապես, ղեկորատիվ տարրերը: Բյուզանդական արվեստը աչքի է ընկնում գույների հարստությամբ և վառ երանգներով, մարմարի, ոսկեջրի ու թանկագին քարերի լայն օգտագործմամբ: Զգտելով էֆեկտի, արտաքին փայլի, բյուզանդական կայսրերը շէին հրամարվում իրենց պալատները սյուներով, խոյակներով, հարթաքանդակներով զարդարելուց: Կոստանդնուպոլիսը արվեստի ծաղկում ապրեց VI դարում՝ Հուստինիանոսի ու Թեոդորայի (սրա հայրը ծագումով Քրակիայից էր և վարժեցրած արջի հետ տե-

դից-տեղ էր շրջում)՝ կայսրուհի և կայսրուհւոյան կառավարչակից զարձած, այդ գեղեցիկ ու խելոք փողոցային աղջկա կառավարման տարիներին: Սրանց կառավարման ժամանակ էլ կառուցվեց Կոստանդնուպոլսի սքանչելի սրբութիւնը՝ Աստվածային իմաստութեան տաճարը (սուրբ Սոֆիայի տաճարը, այնուհետև՝ Այսո Սոֆիան): Հոռոմեական իրավունքի հիման վրա մշակվեց Հուստինիանոսի օրենսգիրքը, որը հետագայում որպէս հիմք ընդունվեց Բյուզանդիային ենթակա սլավոնական նահանգներին մեծ մասի կողմից կացիոն սիստեմների համար:

Բյուզանդական արվեստի ծաղկման ժամանակաշրջանին հաջորդեց պատկերամարտութեան (սլատկերների հակառակորդների) շարժման ժամանակաշրջանը՝ Գրեթե մեկ և կես դար շարունակվեց պատկերները ավերողների տիրապետութեանը: Եկեղեցիներում մարդկանց պատկերները նկարելու արգելքը տեկց ընդհուպ մինչև 843 թվականը: Եվ վերջապէս տասնչակ տարիներէ ճնշումից հետո բյուզանդական արվեստը նորից վերածնունդ է ապրում, բարձր գեղարվեստական պատկերները նորից իրենց տեղերն են գտնում եկեղեցիներում և պալատներում՝ ամբողջ կայսրութեան մեջ, որն ամենամեծ բարգաւաճման տարիներին ձգվում էր Տրապիզոնից (ներկայիս Տրապիզոնից) մինչև Դալմացիա և Հարավային Սեբաստիայից մինչև Դամասկոս և իր ազդեցութեան էր թողնում Հարավարևելյան Եվրոպայի սլավոնների ու Մերձալոր արևելքի քրիստոնեական աղանդների վրա:

Եվ դարձյալ, այս անգամ արդեն կրոնական հողի վրա, հակամարտութեան ծագեց արևելյան և արևմտյան Հոռոմի միջև: Վատիկանը ոչ մի կերպ չէր կարող հաշտվել արևելյան քրիստոնեութեան կենտրոնի այդքան լայն տարածված ազդեցութեան հետ: Արևմտյան և արևելյան քրիստոնեութեան միջև աճող թըշնամութիւնը, որի արտահայտութեանը հանդիսացավ 1054 թվականի սխիզմը¹, միաժամանակ նաև Բյուզանդիայի անկման սկիզբն էր: Դրանից հետո արևմտյան քրիստոնյաների աչքում բյուզանդացիները դարձան ուշագրութեան ոչ արժանի հերձվածողներ միայն: Բյուզանդիան թուրքերի կողմից նվաճվելուց դեռ շատ առաջ այն կողոպտում էին լատինական ասպետների հորդանները: 1204 թվականին, շորթորդ խաչակրաց արշավանքի ժա-

¹ Ս խ ի զ — եկեղեցական պառակտում:

մանակ, Բյուզանդիայի պատմական պարիսպներին մոտեցան խաշակիրները և ավելի դաժան դատաստան տեսան Կոստանդնուպոլսի հետ, քան Մուհամմեդի թուրք հեռերդները երեք դար հետո: Գազազած խաշակիրները արյունալի կոտորած կազմակերպեցին քաղաքում, պղծեցին սուրբ Սոֆիան, այնտեղ բռնաբարելով բյուզանդացի կանանց, թալանում էին այն ամենը, ինչ ձեռքնեին էր ընկնում, «կենդանի» ջահեր շինում հույն կրոնաւորներին: Չորրորդ խաշակրաց արշավանքի «հերոսները» ավերեցին ձիարշավարանը, դրամ ձուլեցին նրա բրոնզե արձաններից և ոչնչացրին բոլոր գեղարվեստական արժեքները, բացի էրիպոսի ձիերից, որոնք այժմ զարդարում են Վենետիկը:

Կայսրութեան նվաճված հողերում հիմնվեցին փոքր իշխանություններ լատինացի խաշակիրների զլխավորութեամբ: Բյուզանդիան իր իշխանութիւնը պահպանեց միայն Կոստանդնուպոլսից դեպի արևելք ընկած տերիտորիաների վրա, գլխավորապես Նիկեայում և Տրապիզոնում:

Շուտով, սակայն, Բյուզանդիային սկսեց սպառնալ մի նոր վտանգ, այս անգամ օսմանյան թուրքերի կողմից:

Բյուզանդական բոլոր տիրութիւնները ընկել էին նրանց ձեռքը, և միայն Կոստանդնուպոլիսն ու նրա մերձակա հողերը գեռես դիմադրում էին թուրքերի գերակշիռ ուժերին: Քաղաքի դուրսից անհուսալի էր: Բայց, երբ բյուզանդական վերջին կայսր Կոստանտին IX-ը հուսահատված օգնութիւն խնդրեց պապից, Կոստանդնուպոլսում բռնկեց ապստամբութիւն, քանի որ ժողովուրդը լավ էր հիշում լատինացիների 50 տարվա կառավարման շրջանը: Այդ ապստամբութիւնը դաժանորեն ճնշվեց, շնչյած այն բանին, որ բյուզանդական հոգեորականութիւնը պաշտպանեց ժողովրդի կողքը. «Ավելի լավ է կիսալուսինը, քան կարգի-նալի ծիրանին, ավելի լավ է թուրքական շալման, քան լատինացիների խույրը»: Վենետիկցիների և ջենովացիների աննշան օգնութիւնը շփոթեց Կոստանդնուպոլսի վիճակը: 1453 թվականի մայիսի 29-ին, հիսունհինգօրյա պաշարումից հետո, Բյուզանդիան ընկավ, որպեսզի այլևս երբևէ չբարձրանա: Որոշ գիտնականներ այդ ամսաթիվը համարում են նոր պատմութեան սկիզբը:

Բյուզանդիայի անկումը ամենևին չէր նշանակում Կոստանդնուպոլսի փառքի վերջը. սկսվում է բյուզանդական արվեստի յուրացման դարաշրջանը: Կոստանդնուպոլիսը վերստին փայլեց

Ստամբուլ անուանով որպես հզոր Օսմանյան դուռն մայրաքաղաք: Քաղաքի նոր անունը թուրքերը բխեցնում են «իսլամ բուլու» («իսլամ դավանող») բառերից, բայց ավելի շուտ այն ծագում է հունարեն «իզ տին բուլին» (բառացի՝ «քաղաքում») արտահայտությունից:

Ստամբուլը սկսեց արևելյան կերպարանք ստանալ. այնտեղ բնակեցրին բնիկ թուրքերին՝ Կենտրոնական Անատոլիայի գաղութաբնակներին: Բայց քաղաքի նախկին բնակիչները ևս, հույները, իտալացիները, ֆրանսիացիները, շարունակում էին ապրել այնտեղ, պահպանելով իրենց հավատն ու սովորությունները և համապատասխան տուրք վճարելով՝ իրենց նկատմամբ նոր իշխանության լոյալ վերաբերմունքի համար:

Ավանդությունն ասում է, որ սուլթան Մեհմեդ II նվաճողը, գրավելով քաղաքը, ամենից առաջ գնաց դեպի սուրբ Սոֆիայի սքանչելի տաճարը, որը մնացել էր որպես քրիստոնեության խորհրդանիշ: Սարսափը պատեց բոլոր նրանց, ովքեր գտնվում էին տաճարում. չէ՞ որ մուսուլմանական այս տիրակալը կարող էր պղծել քրիստոնեական սրբությունը, ինչպես այդ բանը մի ժամանակ արեցին խաչակիրները: Բայց Մեհմեդ II-ը ավելի մեծահոգի գտնվեց. նա զսպեց իր ենիչերիներին, որոնք փորձում էին ոչնչացնել թանկարժեք խճանկարները և ավերել մարմարյա աստիճանները: Նա իրեն դրսևորեց նաև որպես ավելի իմաստուն քաղաքագետ, հայտարարելով հունական եկեղեցու պաշտպանության մասին և, Կոստանդնուպոլիսը նվաճելուց հետո շատ շանցած, նշանակելով, ինչպես այդ անում էին նաև բյուզանդական կայսրերը, հույն պատրիարք, որը մինչև այժմ էլ իր նստավայրն ունի Ստամբուլի Ֆենեք թաղամասում: Նա ճանաչեց նաև Ղալաթայի թաղամասում ապրող շինովացիների արտոնությունները:

Մեհմեդ II-ը չավերեց սուրբ Սոֆիան, բայց վերածեց մզկիթի: Մզկիթի պատերին գրտեցին ասուլթներ Դուրանից, իսկ բյուզանդական որմնանկարներն ու խճանկարները պատեցին կրի բարակ շերտով, որը հեռացվեց միայն 1935 թվականին, երբ Աթաթյուրքի կարգադրությամբ մզկիթը վերածվեց թանգարանի, որը բաց էր աշխարհի բոլոր մարդկանց համար:

Ես ընդհանուր կանոնից բացառություն չէի կազմում և ուստի, հենց որ եկա Ստամբուլ, անմիջապես ուղղվեցի դեպի Այա Սոֆիա: Հիշում եմ, առաջին զգացումը, որ ինձ համակեց, խոր

հուսախաբուցիւնն էր: Ինչպե՞ս: Հենց այս է աշխարհի այն հրաշալիքը, որի մասին ես այնքան շատ լսել ու կարդացել եմ և որը կարծես իրենով մարմնավորում է Ստամբուլը: Այս վիթխարի, անճունի, հաստափոր կեղտոտ, դեղին գույնի շենքը, որը աչքի չի ընկնում ոչ թեթևությամբ, ոչ գրավչությամբ և որն իր բազմաթիվ կցաշենքերով ավելի շուտ հիշեցնում է ամբոց, քան բազիլիկա:

Բայց բավական է ոտքդ ներս դնես թանգարանի շեմից՝ ու հայտնվես ներսում, և հուսախաբուցյան զգացումը տեղը զիջում է զարմանքին, հիացմունքին՝ վիթխարածավալ շափերից, վեհոթից ու ներդաշնակութունից: Գծվար է հավատալ, որ նրա ոչ այնքան կանոնավոր արտաքին կեղևը իր մեջ թաքցնում է իր շափերով անպարփակ մի վիթխարի ներքնամաս՝ դեպի երկինք սլացող գմբեթով: Նախքան Հոռմի սուրբ Պետրոսի տաճարի կառուցումը, սուրբ Սոֆիան ամենամեծ եկեղեցին էր աշխարհում: Այնքան հաճախ չի պատահում նման աններդաշնակութուն անհրապույր արտաքին ձևի և ներքին մասի շնաշխարհիկ գեղեցկության միջև: Այդ տաճարի ներսում մարդն իրեն զգում է որպես մի ավազ, փոշի: Եվ այնուհանդերձ ամեն ինչի մեջ երևում է գծերի զարմանալի թեթևություն և համամասնությունների պահպանում: Կարելի է միայն սքանչանալ այն ժամանակվա զարգացած ճարտարապետական արվեստով. զբմբխով 54 մետր բարձրության վրա բացված իր միայն մեկ լուսամուտով, որից լուսավորվում է ամբողջ եկեղեցին, հենված է ընդամենը չորս սյունների վրա: Ձեզ ապշեցնում է Այա Սոֆիայի ոչ միայն ճարտարապետական արվեստը, այլև հեքիաթային կահավորությունը. մարմարյա զարմանալի սալիկները բարակ ու լուսավոր երակներով, խոչակների ժանեկանման գեղեցիկ զարդաքանդակները, իսկ զլիսավորը՝ խճանկարների շլացուցիչ ոսկին և վառ ներկերը:

Առաջին բազիլիկան, որը նույնպես կոչվում էր սուրբ Սոֆիա, բայց իր շափերով զգալիորեն ավելի փոքր էր, կառուցել էր դեռ Կոստանտին կայսրը 347 թվականին: Այդ բազիլիկան երկու անգամ հրդեհվել է՝ 415 և 532 թվականներին: Հուստինիանոս կայսրը իր հզորության ծաղկման շրջանում նախկին բազիլիկայի տեղում կառուցել էր մի սքանչելի տաճար և, երբ այն կայտորատ է եղել, ասում են բացականշեղ է. «Օ՛, Սողոմոն, ես հազթեցի քեզ»: Իրեն՝ կայսրին, մենք խճանկարի մեջ հավերժացած տեսնում ենք տաճարի մուտքի մոտ:

Այդ սքանչելի կառուցվածքի բնույթը ավելի լավ հասկանալու համար հարկավոր է պատկերացնել նալի կենտրոնում պատկերված նրա ստեղծողին՝ հղոր ու հեշտասեր բռնակալ Հուստինիանոսին իր գեղեցիկ ու անառակ կնոջ՝ Թեոդորայի հետ, բարձրագույն հոգևոր ու պետական իշխանավորներով շրջապատված Փառահեղ զգեստներ հագած՝ նրանք ոսկյա ու արծաթյա մոմակալներին ու աշտանակների հարյուրավոր մոմերի լույսի տակ լսում են երաժիշտների նվագը մանդոլինաների, կիթառների ու կիմբալների վրա, և գեղեցիկ հագնված կանանց, երեսանների ու ներքինիների բազմաձայն երգչախմբի երգը: Հուստինիանոսի կառավարման տարիներին եկեղեցին ուներ առնվազն հազար ծառայող, շհաշված բազմաթիվ տերտերներին ու եպիսկոպոսներին, որոնք ժամերգութուն էին կատարում տաճարում հավաքված հարստութունների շլացուցիչ շքեղության մեջ. թվում է, թե միայն մետաքսի վարագույրները զարդարված են հինգ միլիոն մարգարիտներով: Նախկին վեհութունից այնքան էլ շատ բան չի մնացել՝ խճանկարների ու որմնանկարների մի մասը, մըզկիթը զարդարող սյուները: Դրսի կողմից, գմբեթի կողքից դեպի երկինք են խոյացել շորս մինարներ: Տաճարի պատերին, ներկայումս արդեն վերականգնված որմնանկարների ու խճանկարների կողքին կախված են ութ վիթխարի մութ սալեր, որոնց վրա ոսկյա տառերով հավերժացված են Ալլահի, Մուհամմեդի և վեց խալիֆների անունները: Թուրքերը, իմ կարծիքով, ճիշտ են արել, որ մզկիթը վերածելով թանգարանի, այդ կլոր սալերը պահպանել են (որքան կարողացել են) անձևումսելի. դա կարծես մի ակնառու խորհրդանշան է այն բանի, որ Բյուզանդիայի մշակութային ժառանգությունը հաղորդվել է օսմանյան նվաճողներին:

Այա Սոֆիան գեղարվեստական ընդօրինակման նմուշ է եղել օսմանյան վարպետների համար, որոնք Ստամբուլը զարդարել են հարյուրավոր մզկիթներով, դրանով իսկ նրան հաղորդելով մուսուլմանական քաղաքի կոլորիտ: Սակայն իսլամի այդ սերբություններից շատերի գմբեթները՝ հանճարեղ ճարտարապետ Սինանի ձևերի այդ աշխատանքը, ավելի շուտ հիշեցնում էին Այա Սոֆիայի կլոր կամարը, քան սելջուկյան մզկիթների ուղիղ կամարները, որոնք կարելի է տեսնել, օրինակ, Կոնիայում: Ստամբուլի ամենագեղեցիկ մզկիթները, որոնք վկաներն են այն բանի, որ հինգ հարյուր տարի շարունակ թուրքերը գտնվել են

այդ քաղաքում, իրենց վրա կրում են նաև պարտված, բայց ար-
վեստի մեջ պատկերված Բյուզանդիայի տպավորիչ հետքերը:

Հին Ստամբուլում՝ քաղաքի ամենից ավելի կոլորիտային մա-
սում, դեռևս կարելի է գտնել Այա Սոֆիայից բացի ուրիշ, զուտ
բյուզանդական հուշարձաններ: Այնտեղ կա, օրինակ, մի փոք-
րիկ և արտաբուստ ոչ մի բանով աչքի չընկնող մզկիթ, որը կո-
րել է քաղաքային պարիսպներից ու Աղբիանապոլսի դարպաս-
ներից ոչ հեռու ծուռումուռ փողոցներում: Այն վերաբերում է
V դարին. սկզբում նա կոչվում էր Քորոսի Փրկչի եկեղեցի, այ-
նուհետև՝ Կահրիե ջամի, իսկ հիմա թանգարան է, որը համե-
մատաբար վերջերս է միայն մատչելի դարձել ընդհանուրի դիտ-
ման համար: Դժբախտաբար, այս հուշարձանի նախասկզբնական
խճանկարները, որոնք ոչ պակաս, իսկ գուցեև ավելի գեղեցիկ
էին, քան Այա Սոֆիայի խճանկարները, մեծ մասամբ ոչնչացված
են: Իսկ պահպանված խճանկարներում շկա ոչ էկզոտիկութուն,
ոչ փքունություն, որոնք բնորոշ են եղել կրոնական արվեստի
հուշարձանների մեծ մասի համար: Իսկական գլուխգործոց է
սուրբ Պողոսի խճանկարային պատկերը. նրա դեմքը ոգեշունչ է,
իսկ զգեստի ետնաքղանցքները ստեղծում են եռաչափություն
տպավորություն: Զարմանալի գեղեցիկ են նաև որմնանկարները,
որոնք սրբերին պատկերել են բյուզանդական արվեստի համար
բնորոշ՝ հասարակ հույների երկարավուն դեմքերով: Բուրբից
ավելի շատ հիշողությունս մեջ տպավորվել է սզացող Աստվա-
ծամոր որմնանկարը՝ նուրբ և մտասույզ դեմքով: Դժբախտաբար,
այդ որմնանկարների վերարտադրությունները չեն վաճառվում,
իսկ լուսանկարել չի թույլատրվում, քանի որ դրանք թանգարանի
սեփականությունն են: Այդ ժամանակ ես քանիբորորդ անգամ
համոզվեցի, որ թուրքերը առանձնապես շեն էլ ձգտում պրո-
պագանդել իրենց սքանչելի հուշարձանները:

Բյուզանդական աղդեցությունը նկատվում է նաև այն շեն-
քերի վրա, որոնց հեղինակները եղել են օսմանյան վարպետ-
ները: Այնպես, ինչպես Ղուստինիանոսն էր իր պատվի գործը
համարում «հաղթել Սողոմոնին», օսմանյան սուլթանները՝ ևս
իրենց համար պատվի գործ էին համարում «գերազանցել Ղուս-
տինիանոսին»: Այդ բանը մյուսներից ավելի շատ հաջողվեց
անել ամենազորեղ սուլթան Սուլեյման Սքանչելիին (1520—
1566), որը Կոստանդնուպոլսի գրավումից հարյուր տարի հետո

իր կայսրությունը հասցրեց հղորության ամենարարձր աստի-
ճանի:

Սուլեյմանի մտահղացումների ու ցանկությունների կատա-
րողը եղավ հանճարեղ ճարտարապետ Սինանը: Ինչպես Օսման-
յան կայսրության ուրիշ շատ ականավոր մարդիկ, նա ևս թուրք
չէր: Եվ այնպես, ինչպես օսմանյան զենքի փառքը նվաճել են
ոչ թե իրենք՝ թուրքերը, այլ գլխավորապես քրիստոնյաների որ-
դիները՝ ենիշերիները, այդպես էլ Օսմանյան կայսրության այս
խոշորագույն ճարտարապետը ծագումով եղել է ալբանացի*,
ենիշերիական զորքերի ինժեներ, և մեծ համբավ էր ստացել որ-
պես կամուրջներ կառուցող: Սուլեյման Սքանչելին, ըստ արժան-
վույն զնահատելով նրա տաղանդը, նրան հանձնարարեց կա-
ռուցել պալատներ և մզկիթներ՝ ի փառս Ալլահի, միաժամա-
նակ և իրեն: Իր երկարատև կյանքի ընթացքում (նա մահացել է
89 տարեկանում) Սինանը կառուցել է ավելի քան երեք հարյուր
շենք, այդ թվում՝ 131 մզկիթ, 19 դամբարան, 62 մեդրեսե, 33
պալատ և այլն:

Սակայն Սինանին մեծ փառք բերեց ոչ այնքան նրա զար-
մանալի աշխատասիրությունը, որքան ճարտարապետի նրա ար-
տաստվոր տաղանդը, որը գնալով զարգանում էր նորանոր շեն-
քեր կառուցելու հետ զուգընթաց: Նրա յուրաքանչյուր նոր մզկիթ՝
նախնդից ավելի սքանչելի էր ու ավելի կատարյալ: Նա ճար-
տարապետության մեջ գործադրել է նաև ռազմական ինժեների
իր տաղանդը: Նրա բոլոր շենքերը մտահղացված են մաթեմա-
տիկական ճշտությամբ, անսխալ են իրենց համամասնություն-
ներով, օժտված ազնիվ գծերով: Ինձ թվում է, որ ամենակա-
տարյալ ստեղծագործությունը էդիրնե քաղաքում կառուցած Սե-
լիմիե մզկիթն է, որն այդպես է անվանվել սուլթանի որդի ու
ժառանգ Սելիմի պատվին: Այն աչքի է ընկնում ձևի անզուգական
ներդաշնակությամբ ու հստակությամբ: Մինչև հիմա էլ առեղծ-
ված է մնում նրա շորս մինարեների գաղտնիքը. երբ մզկիթին
նայում ես հեռվից, տեսնում ես միայն երկու մինարե, բայց որ-
քան ավելի շատ ես մոտենում նրան, մինարեները քո աչքերի
առջև երկատվում են և հանկարծ պարզվում է, որ զրանք
շորսն են:

* Հեղինակի այս կարծիքը սխալ է՝ Սինանը ազգությամբ եղել է հայ-
Ման. քարգմ.:

Սինանի ամենահայտնի կառուցումը, որով նա զարդարել է Ստամբուլը, Սուլեյմանիե մզկիթն է, որը այդպես անվանվել է Սուլեյման Սքանչելիի պատվին: Մզկիթի կողքին՝ պարտեզում, կա երկու դամբարան՝ Սուլեյմանինը և նրա սիրելի կնոջ՝ Ռոկ-սուլանայինը: Իսկ մի քիչ այն կողմ այդ սքանչելիքը ստեղծողին՝ ճարտարապետ Սինանի համեստ գերեզմանն է:

Ռոկսուլանան... այդ շարաքաստիկ կինը, Սուլեյմանի մեծ սերը, կարևոր դեր է կատարել կայսրության պատմության մեջ: Նա եղել է, թերև, միակ կինը, որը նշանակալի ազդեցություն է գործել պետության քաղաքականության վրա: Պողոտից գերի-վերցված այդ գեղեցիկ սլավոնուհին եղել է ոչ այն է ուս, ոչ այն է ուկրաինուհի, իսկ զուցե եղել է լեհուհի, ինչպես պնդում է Տ. Գաշտովտը: Լինելով սուլթանի հարեմի հարճը, մանկական տարիներից սովորած լինելով դուր գալու արվեստը, նա իր քրնք-շուկյամբ ու գեղեցկությանը գերել էր տիրակալի սիրտը: Սակայն փառասեր Ռոկսուլանայի համար քիչ էր սուլթանի առաջին հարճի դերը. նա ցանկանում էր դառնալ սուլթանական արքունիքի պաշտոնապես ճանաչված տիրուհին, կայսրության իշխանակիցը: Բայց զրա համար նրա հարազատ որդի Սելիմը պետք է դառնար գահաժառանգ. օսմանյան պետության մեջ առաջին տիրուհու դերը կատարում էր ոչ թե սուլթանի կինը (զրանք կարող էին լինել մի քանիսը, և հաճախ փոփոխվում էին), այլ սուլթանի մայրը՝ «վալիդե-սուլթանը»: Ուստի Ռոկսուլանայի սլանանների իրականացմանը խանգարում էր ոչ այնքան սուլթանի կին Գյուլբահարը, որքան նրա որդի Մուստաֆան՝ ենիշերինների և մեծ վեզիր Իբրահիմի սիրելին:

Ռոկսուլանան պետք է իր ամբողջ իշխանությունը զործադրեր սուլթանի նկատմամբ, որպեսզի համոզեր նրան՝ ազատվելու այն մարդկանցից, որոնք խանգարում էին իրեն: Ոչ առանց նրա սաղորանքի, սուլթանական արքունիքում կատարվեց անհամար արյունահեղ ողբերգություններից մեկը, որոնցով այնքան հարուստ է Օսմանյան դոան պատմությունը: Սուլթանը նախ մահվան գիրկն ուղարկեց իր սիրեցյալ մեծ վեզիր Իբրահիմին, թեև երդվել էր նրան, որ քանի ապրում է ինքը, ապրելու է նաև նա՝ Իբրահիմը: Ինչպես պատմում են, նա հրամայեց Իբրահիմին սպանել քնած ժամանակ, քանի որ քնած ժամանակ, մի հոգևոր անձի խոսքերով, մարդու հոգին թողնում է նրա մարմինը և քնած մարդը, այդպիսով, չի կարող համարվել ողջ... Իբրահի-

մից հետո սուլթանը սպանել տվեց իր սիրելի անդրանիկ որդուն՝ Մուստաֆային: Ռազմական արշավանքներից մեկի ժամանակ նա նրան կանչեց իր վրանը և վարագույրի ետևից անձամբ դիտում էր, թե դահիճները ինչպես արագ ու աննկատելի կերպով շրջապատեցին բոլորովին միամիտ պատանուն և խեղդեցին նետի աղեղալարով. թագավորական ընտանիքի անդամներին կարելի էր սպանել միայն անարյուն եղանակով:

Այսպես գեղեցկուհի Ռոկոսլանան գրավեց պետութայն առաջին տիրուհու տեղը: Հարճից նա դարձավ սուլթանուհի, բայց ճակատագրի բերումով այդպես էլ «վալիդե-սուլթան» չդարձավ, քանի որ մահացավ ամուսնուց ավելի շուտ: Բայց նրա երազանքը իրականացավ. Սուլեյմանի մահից հետո գահը գրավեց նրա որդի Սելիմ II-ը, որը պատմութայն մեջ հայտնի է «հարբեցող սուլթան», «աղնիվ» մականվամբ և որի կառավարման շրջանը իրենով նշանավորում է Օսմանյան կայսրութայն անկման սկիզբը:

Սուլեյման Սքանչելիից հետո թուրքական և ոչ մի սուլթան նրա փառքին չհասավ: Նրանք նրան դերազանցեցին մի այլ բանով՝ կոպտութամբ, դաժանութամբ կամ անառակութամբ, ոճրագործութուններով, և հատկապես եղբայրասպանութամբ, եթե հարկ էր լինում անձամբ նստել գահին և կամ այնտեղ նստեցնել իր սիրելի ժառանգին:

«Միայետը հարգում և հանդուրժում է եղբայրասպանութունը, եթե խոսքը գահի մասին է»,— կարդացել եմ ես մի ժամանակագրութայն մեջ, իսկ ավելի ճիշտ՝ սուլթան Մեհմեդ II-ի ժամանակակից, դերվիշ Ահմեդի՝ Օսմանյան կայսրութայն պատմութայն վերաբերյալ ավանդապատումների ժողովածուում: «Թշնամուն հարկավոր է սպանել,— գրել է նա մի այլ տեղ,— իսկ ապա՝ վերացնել... Ամեն ոք պետք է անխնա կերպով օգտագործի այն հանգամանքները, որ ճակատագիրը պարգևել է նրան»:

Բերված խոսքերը ոչ այլ ինչ են, քան իսլամի քարոզած ֆատալիզմի և պատմութայն մեջ անհատի ակտիվ դերի համոզվածութայն հետ ներդաշնակ զուգակցում մեկ միասնական ամբողջութայն մեջ: Եվ, որպես դրա հետևանք, այն համոզմունքը, որ ճակատագիրը միայն պայմանավորում է հանգամանքները, իսկ դրանց օգտագործումը՝ դա արդեն անհատի գործն է:

Բոլոր սուլթանները Մուլեյման Սքանչլիից հետո հենց այդպես էլ զործել են Գրանք պնալով ավելի ու ավելի շատ էին փափկակեցության սովորում իրենց հարեմների պերճության մեջ և ավելի ու ավելի քիչ հետաքրքրվում պետական գործերով, դրանք բարդելով մեծ վեղիրներ ի կամ ալլ ֆավորիտների ուսերին... Տեղի էր ունենում աստիճանական այլասերում:

Սելիմի որդի Մուրադ III-ը, որն ուներ քառասունից ավելի հարճեր և բազմաթիվ զավակներ, ընկնալոր էր: Մուրադի որդի Մեհմեդ III-ը, նույն աղեղալարի օգնությամբ գրավելով սուլթանական գահը, սպանեց իր 19 եղբայրներին և հրամայեց Բոսֆորի ջրերում խեղդել իր հոր հղի հարճերին, որպեսզի սրանք ախոյաններ չծնեն իր համար: Ինչպես վկայում է նրա ժամանակակից սըր Ջոն Սանդերսոնը, Մեհմեդ III-ը ուներ 81 զավակ: Նրա ավագ որդի և գահաժառանգ Ահմեդ I-ը, որը սուլթան էր դարձել տասնհինգ և մահացել երեսուն տարեկանում, իրեթե, պահում էր մի հարեմ, որտեղ կային մոտ հազար հարճ՝ գլխավորապես եվրոպացի կանայք: Ինչպես գրում է Իկրալ Շահը, թագավորած քսան սուլթաններից տասը մահացել են առեղծվածացին մահով, չորսին սպանել են, իսկ հինգին նախ գահընկեց են առել և ապա սպանել: Իսկ ինչ վերաբերում է գահաժառանգներին, ապա նրանց պարզապես ուղարկում էին քանու:

Ստամբուլում կա մի վայր, որտեղ կարծես խտացված ձևով կարելի է պատկերացնել գաժանության ու բոնության ամենօրյա գործերը: Դա Յոթ աշտարականոց ամրոցն է (Սդի կուլեն), որտեղ անհետ կորել են բազմաթիվ սուլթաններ ու նրանց մերձավորներ: Այս ամրոցում ձեռք ցույց կտան այն խցիկը, որտեղ մեռել է Օսման II-ը: Այստեղ մահապատժի էին ենթարկում օսմանական ազնվականներին և օտարերկրյա տերությունների ղեսպաններին. դրա մասին են պերճախոս կերպով վկայում պատերին քերժված արձանագրությունները լատիներեն, հունարեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով: Բակում գտնվող արտաքուստ սովորական ջրհորը մի ժամանակ կոչվում էր արյունալի, որովհետև այնտեղ էին նետում կտրված գլուխները: Խցիկներից մեկում պահպանվել է մի կլոր անցք հատակին: Ինչպես պատմում են, այդտեղ նույնպես նետում էին ուսից կտրված գլուխներ:

Յոթ աշտարականոց ամրոցը Ստամբուլի միակ վայրը չէ, որը

Հայտնի է արյունալի գործերով: Կարծում եմ, Ստամբուլ այցելած մարդկանցից ոչ մեկը չի հրաժարվում լինել սուլթանական վադեմի Թոփթափը պալատում, որը եղև է օսմանյան սուլթանների նստավայրը մինչև անցյալ դարի կեսերը, մինչև որ կառուցվեց էլ ավելի շքեղ Դոլմաբահչե պալատը Բոսֆորում: Տարբեր ժամանակներում կառուցված շենքերի այս համալիրը կարծես սուլթանական մի փոքրիկ քաղաք է քարե դարպասների ետևում: Պալատի հենց այդ դարպասներից՝ «գոնից» էլ ծագել է «Բարձրագույն դուռ» տերմինը, որը նշանակում էր սուլթանական Թուրքիայի կառավարությունը:

Մի ժամանակ պալատի բակում կանգնած էին ենիչերիների դորանոցները, որոնց կամքի հետ պարտավոր էին հաշվի նրստել անգամ սուլթանները (ենիչերիների ձեռքով սպանվել են Թուրքական առնվազն վեց սուլթաններ): Այստեղ կարելի է տեսնել մի հատուկ շատրվան, որտեղ գլխավոր դահիճը սովորություն ուներ լվալ ձեռքերը՝ իր «պաշտոնական պարտականությունները» կատարելուց հետո: Մի քիչ այն կողմ բանտի խցիկներն են, որտեղից զոհերին տանում էին մահապատժի. դրանից հետո առավել երևելի մարդկանց գլուխները հազցնում էին ձրկար ձողերին և ցուցադրում պալատի պատերի վրա, որպեսզի ամբողջ դիտի:

Շատ տարիներ են անցել այն ժամանակներից, բայց քարե գորշ բակը մնացել է անփոփոխ ձևով: Պահպանվել են խոհանոցների վիթխարի շենքերը, որտեղ կերակուր էր պատրաստվում մի քանի հազար մարդու համար, զրահների ու զինվորական հանդերձանքի, սուլթանների պատգարակների ու կառքերի հիանալի հավաքածուն. այստեղ էլ կառուցված են պալատի տաղավարները: Դրանցից մեկը մանրակերտի մեջ վերարտադրում է Բաղդադի պալատը, որ կառուցել է Մուրադ IV-ը 1638 թվականին՝ ի պատիվ Բաղդադի նվաճման: Բայց ինձ վրա ամենամեծ տպավորությունը գործեց սուլթանների գանձարանը, որտեղ հավաքված են անթիվ-անհամար հարստություններ: Մի փոքր անց դու սկսում ես թագը զարդարող շտեմնված մեծություն այդ բոլոր գոհարներին, զմրուխտներին ու մյուս թանկարժեք քարերին նայել որպես հասարակ, անարժեք ապակու կտորների: Այստեղ ցուցադրված սուլթանական դահերից մեկը ամբողջովին պատրաստված է ոսկուց և զարդարված քանդինդ հազար գոհարներով:

Հարեմ... Սուլթանական արքունիքի ամենախորհրդավոր ու ամենից ավելի ուժեղ պահպանվող մասը... Հարեմի կողքին են գտնվում սուլթանի մոր՝ զեպի Բոսֆոր ու Մարմարա ծով նայող առանձնասենյակները՝ Հյուրասենյակը, ճաշասենյակը, նընջարանը և աղոթարանը: Այս համեստ սենյակներում էր ապրում օսմանյան պետության ամենահզոր կինը. նա էր կառավարում հարեմը, իր որդիներին մոտ էր խցկում իր սիրեցյալներին և դրանով հաճախ ազդեցություն ունենում պետական գործերի ընթացքի վրա:

Բայց եթե այստեղ ողջ-ողջ զնդանված գեղեցիկ կանանցից որևէ մեկը, որոնց կարելի էր գնել կամ նվաճել զենքի ուժով, երազեր սուլթանի կնոջ տեղի մասին, նա պետք է ընկներ սուլթանի մահիճը: Բավական էր, որ տիրակալը իր բարեհաճ ուշադրությունը դարձներ այդ հարձերից որևէ մեկի վրա, նրան անմիջապես փոխադրում էին հատուկ առանձնասենյակ: Եվ այդ ժամանակ նա վշտի ու մենակություն մեջ սկսում էր սպասել, թե առաջին քայլին երբ կհաջորդի երկրորդը և ինքը կարժանանա էլ ավելի բարձր պատվի՝ մտնելու սուլթանի ննջարանը: Եթե նրա քախտը բերի և սկսի կանոնավոր կերպով այցելել սուլթանի ննջարանը, ապա նա կզառնա հարձ և իր տրամադրություն տակ կստանա հարեմի կին, ապրանքներից մեկին, որը կսկսի նրան ծառայել ու շողորրոթել ճիշտ այնպես, ինչպես դեռ վերջերս միայն ինքն էր անում այդ:

Ինչպե՞ս էր հաջողվում կարգ ու կանոն պահպանել ամբողջ աշխարհից ու տղամարդկանցից մեկուսացված երիտասարդ գեղեցիկ կանանց այդ բազմություն մեջ: Չէ որ նրանք շատ-շատ էին. երբեմն հարեմում տառապում էին մի քանի հարյուր, իսկ երբեմն էլ՝ մի քանի հազար կանայք:

Այդ գործում մայր սուլթանի զլխավոր օգնականն էր սև ներքինիների պետը՝ շտեմնված հարուստ ու ազդեցիկ մի մարդ: Նա իրավունք ուներ իր մոտ ծառայության վերցնել ներքինիներին ու գերիններին: Ֆիզիկական խեղությունը այդ մարդկանց դարձնում էր դաժան ու խորամանկ. նրանք ամբողջ հարեմը պահում էին սարսափի մեջ, և Բոսֆորի ջրերում խեղդված բազմաթիվ գերի կանայք եղել են այդ ամենազորեղ մարդու զոհերը: Դրա համար բավական էր, որ նա սուլթանի կամ վեզիրներից որևէ մեկի ականջին շնչար, թե իբր այս կամ այն ստրկուհին

փորձել է, օրինակ, սիրահարական մի երկտող ուղարկել պալատի պատերից դուրս:

Սակայն, հարատուժյունը՝ հարատուժյուն, և ազդեցութիւնը՝ ազդեցութիւն, իսկ ներքինիների դրութիւնը աննախանձելի էր: Նրանք ֆիզիկապես խեղանդամ էին դարձված, բայց մնացած բաներում մնում էին որպէս նորմալ մարդիկ... Մոնտեսքյոն իր «Պարսկական նամականիում» բերում է մի ներքինիի խոսքերը. «Ես հեծում եմ՝ հոգանքի ու տագնապների մեջ անցկացրած իմ հիսուն տարիների ծանր բեռի տակ ճնշված, և շեմ կարող ասել, թե իմ այս երկարատև կյանքի ընթացքում ինձ վիճակվել է ունենալ գեթ մեկ լուսավոր օր և գեթ մի ակնթարթ հանգիստ կյանք»:

Եվ այնուամենայնիվ, սուլթանի հարեմի կամ նրա բարձր իշխանավորների հարեմների դժբախտ գերիների վիճակը արժանի է մեծ կարեկցութեան: Նշանավոր Փակ շուկայում պահպանվել են մի քանի կիսավեր տնակներ, որտեղ դեռ անցյալ դարի վերջին տեղի էր ունենում ստրուկների, գլխավորապես ստրուկահիւնների առևտուրը, ըստ որում ամենից ավելի թանկ գնահատվում էին շիկահէր սլավոնուհիներն ու շերքեղուհիները:

Այժմ Ստամբուլի շուկայում կանանց շեն վաճառում, բայց լիառատ կերպով վաճառում են կանացի զարդեր: Այս շուկայի պատմութիւնն ունի գրեթե նույնքան տարի, որքան և հենց իր՝ Ստամբուլի պատմութիւնը. այն կառուցվել է 1461 թվականին, այսինքն՝ Կոստանդնուպոլսի գրավումից մի քանի տարի հետո: Այս ժամանակամիջոցում շուկան մի քանի անգամ ավերվել է հրդեհներից, իսկ 1894 թվականին քանդվել երկրաշարժից: Սակայն քարե կամարը մնացել է անվնաս, և տուժել են միայն փոքրիկ կրպակները:

Ներկայումս այդ կամարի տակ, 30 հազար քառակուսի մետր տարածութեան վրա, ձգվում են միանգամայն ժամանակակից խանութների ու կրպակների ամբողջ նեղ փողոցներ, որոնք, ինչպէս ասում են, մտտ երեք հազար տարվա պատմութիւնն ունեն: Անմիջապէս ուշադրութիւն են գրավում ոսկերչական իրերի ցուցափեղկերը: Բայց բավական է շուկայի գլխավոր զարկերակից դուրս գալ և ընկնել Վոզքերի շարքերի լաբիրինթոսը (իսկ դրանց թիվը, ինչպէս պատմում են, հասնում է հարյուրի), ապա կարելի է անվերջ պտույտներ գործել շուկայում և նրա ելքը շտանել: Բայց դրա փոխարեն կարելի է գտնել բազմաթիվ փոքրիկ խա-

Նութներ, որտեղ վաճառվում են տնայնագործական առարկաներ պղնձից ու արծաթից, կերամիկայից, ոսկեղօծ թելերով ասեղնագործված աղզային զգեստներ, թուրքական հայտնի գորգեր:

Երբ շրջում ես փակ շոկայի ոսկերչական խանութները, հասկանում ես, թե որքան հարուստ է Ստամբուլը: Իսկ շուկայից ոչ շատ հեռու, քաղաքի ծուռումուռ փողոցներում դուք տեսնում եք աղքատություն ու թշվառություն: Կարկատած շոքերով մարդիկ (Սերես, ես այստեղ առաջին անգամ իրոք հասկացա, թե ինչ է նշանակում «կարկատանը կարկատանի վրա» արտահայտությունը), մուրացկան երեխաներ... Թոփքափը պալատի մուտքի մոտ կարելի է դիտել այսպիսի մի պատկեր. ուշ երեկոյան ուղիղ աստիճանների վրա և ծառերի միջև պառկում են քնելու ցնցոտիներ հազած անտուն գյուղացիները, իրենց տակ՝ գետնին փռվել լրագրի թղթի մի կտոր: Այդ դժբախտ մարդիկ գյուղերից թափվում են Ստամբուլ՝ գոնե որևէ աշխատանք ու հաց ճարելու հույսով: Բայց հենց աշխատանքն ու հացի կտորն է, որ այնքան դժվար է ճարել թուրքական ամենամեծ քաղաքում, որտեղ, արդյունաբերական պալատի տվյալներով, կենտրոնացած է երկրի բանվորների մոտ կեսը:

Տուփերից, թիթիղյա ամաններից, ֆաներայից ու ստվարաթղթից մի գիշերվա ընթացքում այդ դժբախտները սարքում են քղորմելի խրճիթներ, այսպես կոչված «գեջեկոնդոններ» (բառացի՝ «մեկ գիշերում կառուցված»)։ Թուրքիայում, ինչպես և Իտալիայում գործող սովորույթի համաձայն, չի կարելի քանդել այն տունը, որի վրա գիշերվա ընթացքում կառուցված է կտուր: Այդպիսի տնակները Ստամբուլում գրավում են ամբողջ թաղամասեր, և դրանցում ապաստան է գտել մոտ կես միլիոն մարդ: Որոշ տեղերում «գեջեկոնդոնները» կանգնած են հարուստ գերեզմանների կողքին, որոնց վրա կան սպիտակ մարմարից պատրաստված հարուստ տապանաքարեր: Ստամբուլի հարուստների դամբարանները ամբողջ կացարաններ են՝ հաճախ էլեկտրականությամբ ու կողքին եղած ջրավաղաններով: Այդպիսի դամբարանների գինը կես միլիոնից մինչև մեկ միլիոն թուրքական լիրա է: «Եթե հավաքենք Ստամբուլի գերեզմանների ամբողջ մարմարը, ապա դա կրավականացնի Ստամբուլի նման ևս հինգ քաղաքների կարիքները», — դրել է հայտնի թուրք գրող Յաշար

Քեմալը իր մեծ աղմուկ հանած ռեպորտաժում, որ նա վերնագրել է՝ «Աղքատների տներն ու հարուստների դամբարանները»: Այդտեղ էլ նա բերում է «գեշեկոնդուի» մի բնակչի խոսքերը, որը խմելու ջուր բերելու համար իր տնակից գնում է մի կիլոմետր հեռու. «Մեռած հարուստները հարչուր անգամ ավելի լավ են ապրում, քան մենք՝ ողջերս»:

Ստամբուլի՝ իրենց տարածությամբ ու հարստությամբ երկու ամենամեծ գերեզմանատները գտնվում են Ուկյուզարում և էյուք շամի մզկիթին կից՝ Ոսկեղջյուրում:

Ինչպես պատմում է ավանդությունը, մարգարեի զինակից ու գործակից էյուք Անսարբին սպանվել է 670 թվականին արաբների կողմից Կոստանդնուպոլսի առաջին պաշարման ժամանակ: Մեհմեդ II-ի բանակից մի մուլա երազում տեսնում է նրա թաղման վայրը հենց այն ժամանակ, երբ Կոստանդնուպոլիսը շրջապատած թուրքերը արդեն պատրաստ էին նահանջելու: Այդ տեսիլքից ոգեշնչված, նրանք գրոհով գրավեցին քաղաքը: Իբրև երախտագիտություն Մեհմեդ II-ը հրամայեց այդ տեղում սպիտակ մարմարից կառուցել մի մզկիթ, իսկ կողքին դամբարան՝ էյուքի մասունքների համար և զարդարել երկնագույն մաշուկե կաշով: Այդ վայրը երկար ժամանակ սրբազան էր համարվում մուսուլմանների համար: Քրիստոնյաներին թույլ չէին տալիս անգամ բնակվել մզկիթի մոտակայքում: Հիմա այդ արգելքը հանված է, և բոլորն էլ իրավունք ունեն մտնել այն իջևանատունը, որտեղ սոսինների մեջ կանգնած է մզկիթը, որի կտուրին հարմարավետ բներ են հչուսել աղավիններն ու արագիլները: Ի տարբերություն մյուս տաճարների, էյուք շամին գտնվում է քաղաքի աղմուկից հեռու: Իջևանատան ետևի կողմում տեղավորված են փոքրիկ խանութներ ու կրպակներ, բակում կանգնած են ծառերից կապած ավանակները: Ամեն ինչից զգացվում է, որ մուսուլմանները ձգտել են այստեղ՝ Մարգարեի զինակցի հավիտենական հանգստավայրի կողքին, թաղված լինելու պատվին: Այդ մասին են վկայում բազմաթիվ սպիտակ տապանքարերը՝ դարդարված արաբական հյուսագրերով: Տղամարդկանց տապանքարերը իրենց ձևով հիշեցնում են շալմա կամ ֆես (նայած հանգուցյալի հասարակական դիրքին), իսկ կանանց գերեզմանների վրա՝ ծաղիկ: Այս գերեզմանատանը տիրում է հանգստության ու անդորրի, այլ ոչ թե վշտի մթնոլորտը, և այդ պատճառով էլ, հավանաբար, այնտեղի բնակիչների սիրված վայրն է զրո-

սանքների ու զբոսախնջույթների համար: Շատ գեղատեսիլ են նաև փոքրիկ գերեզմանատները, որոնք կորել են ծառերի, փակ պատշգամբներով տիպիկ թուրքական փայտաշեն տների արանքներում՝ հին Ստամբուլի թաղամասերում:

Էյուրի հսկայական գերեզմանատունը տանում է դեպի մի բլուր, որի կատարին կանգնած է մի փոքրիկ փայտաշեն տնակ՝ սրճարան, Պիեր Լոտի մեծահռչակ անունով: Ինչպես պատմում են, Լոտին հենց այստեղ էր ժամերով նստում, զմայլվելով Ռսկելջյուրի գեղեցկությամբ, որ նա այնքան վառ կերպով նկարագրել է հետագայում: Ծիշտ է, նրա ժամանակ Ռսկելջյուրը, անպայման, եղել է ամելի գեղեցիկ, քան հիմա: Նրա ափերին կառուցված արդյունաբերական ձեռնարկությունները ընդամիշտ մարել են այդ ծովածոցի ջրերի ոսկեփայլը:

Ստամբուլի մզկիթներով և պատմական մյուս հուշարձաններով կարելի է պատկերացում կազմել քաղաքի պատմության մասին: Գրանց թվում առանձնահատուկ տեղ է զբաղում սուլթան Ահմեդի սպիտակ քարե մզկիթը՝ այսպես կոչված, Երկնագույն մզկիթը: Այն կանգնած է Այա Սոֆիայի դիմաց և աչք է շոյում իր ներդաշնակությամբ, կուռ կառուցվածքով, թևթևություններով, կարծես մարտահրավեր նետելով վիթխարածալվ Այա Սոֆիային: Երկնագույն մզկիթը կառուցվել է XVII դարի սկզբին և մեծ Սինանի աշակերտի՝ ճարտարապետ Մեհմեդի, ամենագեղեցիկ ստեղծագործությունն է. վերջինս, կառուցելով այդ մզկիթը, ապացուցեց, որ արժանի է իր ուսուցչին: Մզկիթի ընդարձակ ներքնամասը զարմանալիորեն գեղեցիկ է արևոտ օրերին, երբ լույսը, թափանցելով գույնզգույն ապակիներ ունեցող լուսամուտներից, արտացոլվում է բազմագույն, զլխավորապես երկնագույն հախճապակե սալիկներին, որոնցով շարված են պատերը, և էլ ամելի են ընդգծում խայտաբղետ գորգերի շքեղությունը հսկայական դատարկ սրահում: «Հազար ու մի գիշերների» հեքիաթների տպավորությունը հատկապես ուժեղանում է կեսօրյա աղոթքի ժամանակ, երբ աղոթողները սկսում են միաժամանակ ստորացած (բառիս իսկական իմաստով) երկրպագություններ հղել ալլահին, ապա կարծես հրամանով, վեր են կենում և նորից իջնում ծնկի:

Երկնագույն մզկիթն ունի մեկ ուրիշ առանձնահատկություն ևս, որի շնորհիվ համարվում է Ստամբուլի ամենագեղեցիկ մզկիթը: Նա ունի վեց մինարե, այլ ոչ թե չորս: Ինչպես պատ-

մում է ավանդությունը, սուլթանը ճարտարապետին հանձնարարել էր կառուցել ոսկե (ալթըն) մինարեններ, բայց ճարտարապետը սխալ էր հասկացել ու կառուցել էր վեց (ալթը) մինարե... Հայտնի չէ, իրոք այդպես եղել է, թե ոչ, բայց միայն Մեքքայի իմամը սուլթան Ահմեդի այդպիսի ցանկությունը համարել էր շտեանված հանդգնություն, քանի որ միայն յուրաքանչյուր մուսուլմանի սրտին ամենաթանկագին միակ Քաաբա տաճարը Մեքքայում ուներ վեց մինարե ունենալու իրավունք: Բանը վերջացավ նրանով, որ սուլթանը հրամայեց իր սեփական միջոցներով Քաաբայի մզկիթի կողքին կառուցել յոթերորդ մինարեն՝ որպես «բարոյական փոխհատուցում»: Այդ ժամանակից սկսած հենց այստեղ՝ Երկնագույն մզկիթում էին աղոթում սուլթանն ու նրա արքունիքը մուսուլմանական մեծ տոներին: Իսկ Երկնագույն մզկիթի առջև, Աթ մեյդանը հրապարակում, որտեղ մի ժամանակ ձիարշավարանն էր, ընթանում էր Բյուզանդիայի, իսկ ապա նաև Բարձրագույն դռան «Հասարակական կյանքը»: Այստեղ էին ի կատար ածվում հրապարակային մահապատիժները և տոնվում մեծ հաղթանակները... Հենց Աթ մեյդանը հրապարակում 1826 թվականին հայտարարեցին ենիշերիական զորաբանակը ցրելու մասին:

Այս հնագույն հրապարակում ավելի շատ, քան ուրիշ որևէ տեղում, զգացվում է մեծ քաղաքի զարկերակի տրոփյունը, որտեղ անցյալի շերտանաստվածքները, սերտորեն միահյուսվելով արդիականության հետ, միավորվել են մեկ ներդաշնակ ամբողջության մեջ: Պատմությունն այստեղ ցանկապատված չէ, թանգարաններում փակված չէ. այն իրեն զգացնել է տալիս ամեն քաղաքի: Այստեղ տարբեր դարաշրջաններ ամենաանսպասելի կերպով միահյուսվում են միմյանց հետ: Հրապարակից ոչ հեռու լավ սյահայանվել են հոտմեական գլանատտակոնները: Թոփքափը սլալառի կողքին հնագիտական թանգարանն է, որտեղ հունահոտմեական մշակույթի հուշարձանների մեջ աչքի է ընկնում հին ժամանակների մեծագույն զորավարներից մեկի՝ Ալեքսանդր Մակեդոնացու սպիտակ մարմարե սարկոֆագը, որը զարդարված է Ալեքսանդրի կյանքի տեսարանները վերարտադրող հարթաքանդակով:

Իսկ Ոսկեկղզուրի մյուս կողմում կարծես բոլորովին այլ քաղաք է. սա ավելի արդիական է՝ առանց պատմական հետաքրքիր հուշարձանների, զուրկ հին Ստամբուլի վեհությունից: Բայց այս-

տեղ էլ հորդում է կյանքը. անդադար կանչում են նավերի շշակները, բղավում են փողոցային մանր առևտրականները, որոնք հին և նոր քաղաքը իրար միացնող զլխավոր ճանապարհի՝ Ղալաթայի կամրջի տակ նավակներում նստած առաջարկում են իրենց աշխատանքի պտուղները՝ ոմանք ձուկ, մյուսները՝ դեղձ: Կամրջի ստորին հարկում կան բազմաթիվ խանութներ ու սրճարաններ, որոնցում, թուրքական սովորության համաձայն, հավաքվում են զլխավորապես տղամարդիկ: Լաստանավերը բերում են մարդկանց Ստամբուլի արվարձաններից, Բոսֆորի մյուս կողմից, այսինքն՝ Ասիայում ընկած տարբեր քաղաքներից ու բնակավայրերից: Այս ամենն էլ հենց արևելյան տեսք են տալիս Ստամբուլին...

Գոլմաբահչեի հակաչական պալատը արևելյան ձևով պերճաշուք է, բայց զուրկ է ներգաշնակությունից ու վեհ գծերից, որը բնորոշ է հին քաղաքի շինություններին: XIX դարի երկրորդ կեսից այս պալատը եղել է սուլթանների նստավայրը: Գոլմաբահչեի պալատը, այդ հակաչական շենքը, իր նրբարվեստ զարդարանքներով հիշեցնում է տորթ՝ պատրաստված մի շատ հմուտ հուրչակագործի կողմից, որը, սակայն, չի հասկացել, որ այդքան բազմաթիվ ու բազմապիսի զարդարանքների կուտակումը ոչ այնքան գեղեցկություն է, որքան վատ ճաշակի նշան է: Երբ նայում ես պալատին, ապա մտածում ես, որ դրա համար չեն խնայել ո՛չ բազմազուն մարմարը, ո՛չ էլ ծիրանաքարը: Անշուփ մեծ են պալատի դահլիճները. գահադահլիճում, օրինակ, բյուրեղապակյա ջահերը կշռում են շորս և կես տոննա: Այդպիսի արեվելյան շքեղության ֆոնի վրա միանգամայն համեստ տեսք ունի այն սենյակը, որտեղ ժամացույցը կանգ է առել 9.05 րոպեին: Այդ սենյակում 1938 թվականի նոյեմբերի 10-ին մահացավ Ա.թյուրքը:

Կոլորիտից ամենից ավելի շատ զուրկ է քաղաքի այն մասը, որը համարվում է առավել ժամանակակից: Ստամբուլի կենտրոնը՝ Բեյօզլուն (նախկին Պերան), իրենից ներկայացնում է անճաշակ ու կեղծ ժամանակակից շենքերի՝ բնակելի տների ու խանութների մի կուտակում, որոնք հայալինում են մայրաքաղաքային պերճաշուքության. կատաղած սլանում են ավտոմոբիլները՝ նման երթևեկության համար անհարմար նեղ և ծուռամուռ փողոցներով, որոնք հատում են քաղաքի կենտրոնական առևտրական զարկերակը՝ Իստիքլյալ շողդեսին: («Անկախության

պաշտան»): Աչքի է զարկում կոսմոպոլիտական նորահարստության ու վատ ճաշակի և հին Ստամբուլի շենքերի պատմական գեղեցկությունն ու վեհության միջև եղած զարմանալի հակադրությունը: Իհարկե, քաղաքի այս մասում ևս կան շենքեր, որոնք ուշադրություն են գրավում եթե ոչ գեղեցկությամբ, ապա իրենց շահերով. օրինակ, Ստամբուլի օպերայի թերավարտ շենքը կամ ամերիկյան «Հիլտոն» հյուրանոցի շենքը, որի շքեղությունը թուրքական աղքատության ֆոնի վրա վրդովմունքից բացի ուրիշ զգացում չի առաջացնում:

Բեյօղլուլեց ոչ հեռու, նեղլիկ փողոցների լարիրինթոսում, կանգնած է մի աննկատելի տնակ, որն առանձնապես թանկ է ամեն մի լեհի սրտին և որը պատկանում է լեհական մշակույթի գանձարանին, թեև, դժբախտաբար, դեռևս լեհական կառավարության սեփականությունը չէ: Այդ տանը վախճանվել է լեհ մեծ բանաստեղծ Միցկևիչը: Ավելի ճիշտ, այն տունը, որտեղ մահացել է բանաստեղծը, այրվել է 1870 թվականին, բայց արդեն 80-ական թվականներին դրա տեղը կառուցվել է ճիշտ նույնպիսի մի տուն՝ այդ ժամանակ Ստամբուլում ապրող լեհ Ռատինսկու ջանքերի շնորհիվ: 1955 թվականի դեկտեմբերին, բանաստեղծի մահվան հարյուրամյա տարեդարձին, այստեղ բացվեց Միցկևիչի համեստ թանգարանը, ավելի ճիշտ, նույնիսկ ոչ թե թանգարան, այլ բանաստեղծից հետո մնացած իրերի մշտական ցուցահանդես, որը կաղմակերպված է Կրակովի թանգարանի տնօրենի տեղակալ Զդիսլավ Ժիգուլսկու նախագծով: Նկուղում դերված է այն դամբարանի ճիշտ պատճենը, որտեղ մոտ մեկ ամիս մնացել էին մեծ բանաստեղծի մատուցները, ինչպես նաև նրա երամահու դիմակը: Առաջին հարկում և կիսավերահարկում ցուցադրված են Միցկևիչի այն դիմանկարների ու կիսանդրիների վերարտադրությունները, որոնք կատարված են այնպիսի վարպետների ձեռքով, ինչպիսիք են Ռոդակովսկին և Դելակրուան, Դալիզ դ'Անժեն և Դունիկովսկին... Հենց այստեղ էլ գրված են «Պան Թագեուշի» և «Զյադիի» բնագրի ֆաքսիմիլները, «Պան Թագեուշի» հրատարակությունները տարբեր լեզուներով և բանաստեղծի ուրիշ շատ հիշարժան իրեր, զրանց թվում նաև նրա «մոսկալ բարեկամներ» Պուշկինի և Ռիլեկի դիմանկարները: Այս ամենը սիրով դիտեղծված է մի քանի համեստ սենյակներում և տեղծում է միստիկական բարեպաշտության մի յուրահատուկ մթնոլորտ, որը այցելուներին հնարավորություն է

տալիս ապրել խորհրդածության բնաստեղծի մեծ գործի մասին:

Այդ նույն բանի մասին են վկայում նաև լեհերի, ասենք ոչ միայն լեհերի, այլ և՛ թուրքերի, և՛ ֆրանսիացիների, և՛ իտալացիների պերճախոս կարծիքները տպավորութունների գրքում... Յավոք սրտի, գրեթե բոլոր այցելուներն էլ ընդգծում են, որ պատահաբար են ընկել այս տունը: Այս յուրահատուկ թանգարանի գոյության մասին ոչինչ չի ասված Ստամբուլի մասին և ոչ մի ուղեցույցում: Մինչդեռ բոլոր ուղեցույցներում պատվավոր տեղում նշված է Պիեռ կոտիի սրճարանը, մի բնաստեղծի, որի գրական տաղանդը ոչ մի կերպ չի կարելի համեմատել Միցկևիչի հանճարի հետ...

Բեյօղլու թաղամասը մինչև ուղն ու ծուծը կոսմոպոլիտական է: Այստեղ ապրում է հիմնականում ոչ թուրք արդյունաբերական ու առևտրական բուրժուազիան, ինչպես նաև մանր բուրժուազիան և արհեստավորները: Եթե ուզում ես որևէ բան գնել Բեյօղլուում, բոլորովին էլ պարտադիր չէ, որ իմանաս թուրքերեն (ի տարբերութուն Անկարայի). դրա համար բավական է իմանալ ֆրանսերեն, հունարեն կամ իսպաներեն և կամ խոսել սեֆարդիական հրեաների լեզվով, որոնք ինկվիզիցիայի կողմից Իսպանիայից արտաքսվելուց հետո ապաստան են գտել օսմանական պիտությունում: Կարելի է խոսել նաև իտալերեն, գերմաներեն, հայերեն, բայց ամենից ավելի հաճախ այստեղ, այնուամենայնիվ, լսվում է անգլիերեն խոսքը: Ստամբուլցի տիպիկ լեանտացի առևտրականը ամեն օր խոսում է անվազն շորս լեզուներով և, իմ կարծիքով, ամենից ավելի վատ գիտե հենց թուրքերենը: Այդպիսի առևտրականը ապրում է թուրքերի կողքին, ինչպես ապրել են նրա նախնիները, բայց հաճախ թուրքերին վերևից է նայում...

Ամբողջ բաղամարչյան պատմությունը իր կնիքն է դրել Ստամբուլի կոսմոպոլիտիզմի վրա, մի քաղաքի, որն ապրել է իր փառքը և չի կարող հաշտվել այն բանի հետ, որ իրենից խլել են առաջնակարգ դիրքը: Թերևս, չկա ստամբուլցի որևէ բնակիչ, այդ թվում և թուրք, որը խոսակցության ժամանակ այս կամ այն կերպ չնկատի, որ Անկարան «պակաս կուլտուրական է»: Ըստ որում ձեր զրոյցակիցը անպայման կհիշատակի, որ հենց Ստամբուլում է ստեղծվել թուրքական առաջին համալսարանը, որ Ստամբուլը մինչև հիմա էլ դեռ մնում է որպես երկրի քաղա-

քական, հոգևոր ու տնտեսական կյանքի կենտրոն: Այս ամենը, անկասկած, այդպես է. հենց Ստամբուլում էր, այլ ոչ թե ուրիշ որևէ քաղաքում, որ 1960 թվականի ապրիլին սկսվեցին ուսանողական հուզումները, որոնք վերջի վերջո հանգեցրին Մենդերեսի ռեժիմի տապալման: Ստամբուլը երկրի մշակութային կյանքի կենտրոնատեղին է. այստեղ են գործում թուրքական լավագույն թատրոնները: Բայց Ստամբուլը նաև ամենամեծ արդյունաբերական կենտրոնն է. այստեղ ամենից ավելի ակտիվորեն է տրոփում առևտրական կյանքի զարկերակը: Ստամբուլը արանսպորտային կարևոր հանգույց է. նրա վրայով է անցնում եվրոպան Մերձավոր արևելքի հետ միացնող երկաթուղագիծը: Մի խոսքով, Ստամբուլը Թուրքիայի ամենամեծ քաղաքն է ու ամենակարևոր կենտրոնը: Այս ամենը ճիշտ է: Բայց Անկարան կառավարության նստավայրն է, այնտեղ է գտնվում մեջլիսը, և Անկարայում են ընդունվում այն որոշումները, որոնք փոխում են երկրի դեմքը:

Ստամբուլը արդեն մայրաքաղաք չէ, բայց նրա վաղեմի հրապուրանքը մնացել է: Այդ հրապուրանքը կարելի է տեսնել ոչ թե զլխավոր Իստիքլյալ ջազդեսիում՝ նրա խառնաշփոթ եռուզեռի մեջ, այլ հին Ստամբուլում, որտեղ հին օսմանական մշակույթի մթնոլորտը բյուզանդականի հետ զուգակցված դիմակայում է արդիականության գրոհին: Այդ մշակույթների միահյուսումը ապրում է նեղլիկ փողոցներում, դրանց վրա կախված հին տների պատշգամբներում: Հին Ստամբուլի հատկանիշներն են փողոցների առևտրականներն ու փողոցային դրագիրները, որոնք գրիչը փոխարինել են գրամեքենայով, ինչպես այդ պահանջում է XX դարը: Գրանք Ստամբուլի տղամարդիկ են, որ ժամերով նստում են փոքրիկ սրճարաններում, ծուլորեն կում-կում խմելով սուրճը և ծծելով նարգիլեն... Հին Ստամբուլը ապրում է Այա Սոֆիայի կամարների տակ, Երկնագույն մզկիթի կախարդական գեղեցկության մեջ, էյուր ջամիի կտուրի աղամլինների մեջ, Սուլեյմանիեի դմբեթի տակ... Հին Ստամբուլը մնում է Բոսֆորի սքանչելի ափին, նույնիսկ չավերված ասֆալտե խճուղու վրա, որի երկայնքով շարվել են դեռևս պահպանված փայտաշեն առանձնատները... Այս ամենի մեջ զգացվում է Ստամբուլի անկրկնելի մթնոլորտը, մի քաղաքի, որտեղ բազում սերունդների գործերը, բազում ժողովուրդների հանճարն ու մշակույթը միահյուսվել են մեկ անբաժանելի ամբողջության մեջ:

Հին Ստամբուլը «դու»-ով է խոսում պատմութեան հետ, և նրա ֆոնի վրա նոր քաղաքը, որպես մի նորբախտագլուտ, բաժական դժգուհի տեսք ունի: Ինչպես երևում է, պատմութեանը այստեղ կատարել է իր առաքելութունը, եթե առաջին տեղը զիջել է Անկարային՝ այդ ժամանակակից քաղաքին, որն Աթաթուրքի կամքով կառուցվել է անատոլիական ջրազուրկ սարահարթում:

ԱՆԿԱՐԱՆ ԱԹԱԹՅՈՐԲԻ ՔԱՂԱՔՆ Է

Այսօրվա Անկարան մի քաղաք է, որ ստեղծել է Աթաթուրքը: Երբ 1920 թվականի ապրիլին նա Անկարայում գումարեց Ազգային մեծ ժողով, որը մարտահրավեր նետեց սուլթանական կառավարության կապիտուլյանտական քաղաքականությանը և դրեց Թուրքիայի ազգային վերածննդի հիմքերը, Անկարան մի երկրորդական գաղափարական քաղաք էր՝ քսան հազարից մի քիչ ավելի բնակչությամբ: Այժմ այն ավելի քան մեկ միլիոնանոց քաղաք է¹:

Անկարան ընկած է ճահճուտ, մալարիայի բուն հանդիսացող հողի վրա՝ արևի ճառագայթներից խանձված անատոլիական սարահարթի հենց կենտրոնում, լեռների միջև ընկած փոսորակում: Այդ աննշան փոքրիկ քաղաքը մայրաքաղաք դարձնելու համար անհրաժեշտ էր լուծել առնվազն երեք պրոբլեմ՝ շորացնել ճահճները, ապագա քաղաքը ապահովել խմելու ջրով և կանաչապատել մերկ տափաստանը: Թվում էր, թե ազբատ ու պատերազմից քայքայված երկրի համար դա ուժից վեր մի խընդիր էր: Սակայն Մուստաֆա Քեմալը, որի աչքի ընկնող ուժեղ անհատականությունը որոշեց երկրի դարգացումը շատ տարիների համար, կարողացավ հաղթահարել այդ դժվարությունները, և հին բնակավայրի կողքին բարձրացավ ժամանակակից քաղաքը:

Ակամա հարց է ծագում. ինչո՞ւ Աթաթուրքը հենց Անկարան ընտրեց որպես նոր Թուրքիայի մայրաքաղաք: Կարելի է հասկանալ նրա ցանկությունը՝ կոսմոպոլիտական Ստամբուլից խլել մայրաքաղաք կոչվելու պատիվը և այն փոխադրել Անատոլիայի խորքը: Բայց Անատոլիայում կային նաև ուրիշ քաղաքներ,

¹ 1970 թվականին Անկարայում ապրում էր 1 209 000 մարդ:

որոնք անհամեմատ ավելի հարմար էին այդ դերի համար: Օրինակ, օսմանների առաջին մայրաքաղաքը՝ սրանշելի Բուրսան: Կամ սելջուկների առաջին մայրաքաղաք Կոնիան, որը նույնպես գտնվում է Անատոլիայի կենտրոնում, բայց ընկած է ոչ թե լերկ ժայռերի մեջ, այլ արգավանդ հովտում: Անկասկած, այդ հարցի լուծման վրա ազդել է քաղաքական գործոնը. հենց Անկարայից էր, որ 1920 թվականին հնչեց ազատագրական պայքարի կոչը: Բայց ոչ միայն այդ: Այստեղ, Անկարայի շրջակայքում էին գրտնվել շորս հաղաք տարվա պատմություն ունեցող մեծ քաղաքակրթության՝ խեթերի պետության հետքերը, որոնց մասին այնքան սիրում էր խոսել Աթաթյուրքը: Փորձելով ստեղծել տպավորություն թուրք ժողովրդի հավերժական գոյության մասին (թեպետ թուրքերը Փոքր Ասիայում երևացել են միայն XI դարի վերջին), ազգի առաջնորդը քանիցս հայտարարել է, որ թուրքերը խեթերի անմիջական ժառանգներն են: Կարելի է ենթադրել, որ, ըստ երևույթին, պատահական չէ, որ թուրքական երկու խոշորագույն բանկերը կոչվում են էթիբանկ (խեթական բանկ) և Սումերբանկ (Շումերական բանկ):

Բայց ինչպիսին էլ որ լինեն դրա պատճառները, անվիճելի է մի բան. Աթաթյուրքի որոշումը կենսագործվեց: Այսօրվա Անկարան իսկական մայրաքաղաքային քաղաք է:

Ես Անկարա ընկա Ստամբուլից հետո: Բոսֆորի «արևելյան գոհարով» կախարդված, հիշում եմ, ես խոր զարմանքի բուռններ ապրեցի, երբ տեսա Անկարան՝ այդ ժամանակակից եվրոպական քաղաքը լայն ու մաքուր փողոցներով՝ Ասիական Թուրքիայի կենտրոնում: Բայց, ներողություն եմ խնդրում, ոչ թե ասիական. եթե դուք չեք ցանկանում անբարյացակամ վերաբերմունք առաջացնել ձեր նկատմամբ, թուրքի մոտ երբեք մի արտասանեք «ասիական» բառը: Հիշեցեք. Անկարան գտնվում է ոչ թե Ասիայում, այլ Անատոլիայում... Այդպիսի, կարծես, մանրուքի մեջ, ինչպես և ուրիշ շատ բաներում, որպես հայելու մեջ արտացոլվում է «Նվրոպային պատկանելու» մի յուրահատուկ մտայնություն, որով տառապում է թուրքերի մեծ մասը, հատկապես ամենաբարձր ոլորտներից:

Իր արտաքին տեսքով Անկարան, անկասկած, շատ ավելի պակաս «արևելյան» է, քան Ստամբուլը, և շատ բաներում զուրկ

է «արևելյան» կոլորիտի նշաններից, որոնք ամեն քայլափոխում զգացվում են Ստամբուլում: Այս քաղաքը, որը կառուցվել է ալատրիացի ճարտարապետ Յանսոնի նախագծով՝ մերկ հողի վրա, բոլորովին դուրկ է ավանդույթներից:

Սակայն, այս ամենը ճիշտ է նոր Անկարայի նկատմամբ: Թուրքական մայրաքաղաքի մասին լրիվ պատկերացում կազմելու համար հարկավոր է հիշել, որ կա երկու Անկարա՝ նորը, որի շինարարությունը սկսվել է ընդամենը մոտ քառասուն տարի սրանից առաջ, և հինը, որի պատմությունը գնում է դարերի խորքը, երբ Ստամբուլը անգամ նշված չէր ոչ մի քարտեզի վրա: Ամենայն հավանականությամբ, քաղաքը հիմնել են փոյուզացիները մեր դարաշրջանից առաջ I-ին հազարամյակի վերջին և նրանց էլ պարտական է իր անվանումով: Մեր թվականությունից առաջ III դարի վերջին այստեղ ներխուժեցին գալլական ցեղերը՝ արևմուտքից դեպի արևելք գաղթի հաղվագյուտ դեպքերից մեկը: Այդ արշավանքի հետքերը մինչև հիմա էլ պահպանվել են. օրինակ, Անկարայի մոտակայքի գյուղերում կարելի է հաճախ հանդիպել շիկահեր ու կապուտաչյա թուրքերի: Տեկոսագերի գալլական ցեղը քաղաքում կառուցեց ամրոց և այն դարձրեց իր մայրաքաղաքը: Երբ Անկարան ընկավ հռոմեացիների ձեռքը, դարձավ Գալաթիա նահանգի մայրաքաղաքը և ուներ ավելի քան երկու հարյուր հազար բնակիչ: Այդ ժամանակներից մայրաքաղաքում մնացել են հասարակական բաղնիքները, Հուստինիանոսի սյունը, բայց դարաշրջանի գլխավոր հուշարձանը Օգոստոսի տաճարն է, որի պատերին հիմա էլ կարելի է կարդալ հունարեն և լատիներեն գրված հատվածներ հայտնի «Կտակից», որը փառաբանում է կայսրի տիրազորությունները: Անկարայի հարաբերական ծաղկումը, շնայած նրա կրած բազմաթիվ ցնցումներին, շարունակվեց ընդհուպ մինչև մեր թվականությունից VII դարը:

Ավելի ուշ քաղաքը ձեռքից ձեռք էր անցնում, դառնում էր նորանոր նվաճողների ավար: 1101 թվականին խաչակիրների առաջնորդ Ռայմունդ Տուլուզցին նվաճեց Անկարան և կտակեց բյուզանդացիներին: Սակայն, որոշ ժամանակ անց, XII դարում, Անկարան ընկավ թուրքերի՝ նախ սելջուկների, իսկ ապա օսմանների, անբաժան տիրապետության տակ: Նրանց տիրապետությունը կարճ ժամանակով միայն ընդհատվել է Միջին Ասիայի

մոնղոլ նվաճող, ահեղ Լենկ Թեմուրի՝ Փոքր Ասիա կատարած ներխուժումով:

1402 թվականին Անկարայի մոտ օսմանյան սուլթան Բայազիդ I-ի հետ տեղի ունեցած մեծ (այն ժամանակվա չափերով)՝ ճակատամարտին մասնակցեցին 300 հազար ռազմիկներ, իսկ Անկարայի մոտ եղած անտառներում (այժմ դրանց հետքն էլ չի մնացել) Լենկ Թեմուրը թաքցրել էր իր փղերին: Լենկ Թեմուրը այդ ճակատամարտում հաղթանակ տարավ, Բայազիդին բանտարկեց ամբողջում, այդպիսով, կես դար ևս շարունակելով Կոստանդնուպոլսի կյանքը՝ որպես մայրաքաղաքի:

Անկարայի նշանակությունը զնայով թուլանում էր: XIX դարի կեսերին քաղաքը, որն այն ժամանակ կոչվում էր Անգորա, նահանգական մի փոքրիկ քաղաք էր Ստամբուլից դեպի Պարսկաստան տանող ճանապարհին, և հայտնի էր միայն իր անգորական այծերով (ի դեպ, այս ցեղը Թուրքիայում այժմ գրեթե չքացել է) և անգորական սպիտակ փափկամազ կատուններով, որոնց մի աչքը կապույտ է, մյուսը կանաչ (դրանց ևս կարելի է տեսնել միայն Անկարայի կենդանաբանական այգում):

Հին Անկարան պահպանվել է մինչև մեր օրերը իր գրեթե վաղնջական ձևով: Ինչպես և անցած ժամանակներում, բերդին հարող նեղ ու զառիթափ փողոցների լաբիրինթոսը կազմում է մի ներփակ ամբողջություն: Նրա պատմական անցյալի մասին է վկայում, ի միջի այլոց, քաղաքային պարիսպների շինարարական նյութը՝ քարե մեծ սալերը հունարեն և լատիներեն արձանագրություններով: Բայց բրոնզափառի շերտը նստել է ոչ միայն քաղաքի պարիսպների վրա: Հին Անկարայի փողոցներում և հրապարակներում հոսում է նույն կյանքը, ինչ որ հարյուրավոր տարիներ առաջ. նրա բնակիչների համար ժամանակը կանգնել է տեղում... Անկարայի բերդի ներսում տիրում է իսկական միջնադարը: Մարդկանց հանգիստը խանգարող միակ փոխադրամիջոցը փայտաշեն սալն է: Սակայն, հաճախ կարելի է տեսնել նաև ավանակներ. դրանցից մի քանիսը ծանր բռններ են կրում, մյուսներին բազմել են կարկատված շորեր հագած տղամարդիկ և կամ գույնզգույն շալվարներ հագած գեղջկուհիներ: Ինչպես և հին բիրլիական ժամանակներում, կանայք ջուր վերցնելու համար գալիս են ջրհորի մոտ և, սափորները լցնելով կենարար ջրով, անհայտանում են փոքրիկ բակերում, որոնք հետաքրքրասեր անցորդների աներես հայացքներից անջատված են

կաՎաշեն պատով: Նման որևէ բակ ներթափանցելու իմ բազմակի փորձերը միանգամից հաջողություն չունեցան: Թուրքերը հպարտ ժողովուրդ են և օտար մարդկանց առջև դժկամությամբ են ցույց տալիս իրենց աղքատությունը: Բայց մի անգամ ինձ, այնուամենայնիվ, թողեցին մտնել այդպիսի տնակներից մեկի ներսը. տունը շինված էր կավից և հին տախտակներից: Եթե իմանաք անգամ, թե ինչպիսի հասարակ պայմաններում են ապրում այստեղ մարդիկ, ապա ձեզ կզարմացնի մաքրությունը բակում և այն սենյակներում, որտեղ հաճախ մի քանի քիլիմներից¹ բացի ուրիշ ոչինչ չկա: Ի դեպ, Թուրքիայում, ամենաաղքատ տներում անգամ, որպես կանոն, դարմանալիորեն մաքուր է: Գուցե դա տուն մտնելուց առաջ ոտնամանները հանելու «տխրությունից» է, որ սրբությունը պահպանում են ինչպես տնեցիները, այնպես էլ հյուրերը:

Հին Անկարան հմայեց ինձ առաջին իսկ րոպեին, և ես ամեն մի հարմար դեպքում գնում էի բերդը կամ բարձրանում Լենկ Թեմուրի բլուրը, որն ամբողջապես պատած է «գեղեկոնդուներով»: Ամպրոպներն ու հորդառատ անձրևները, որոնք այստեղ առանձնապես հաճախակի են ուշ գարնանը, սրբում տանում են այդ փոքրիկ շենքերը և հազարավոր մարդկանց զրկում օթիվանից...

Երբ զրոսնում ես այնտեղի նեղլիկ փողոցներով, կարծես մոռանում ես, որ մայրաքաղաքը բառացիորեն քո թիկունքում է: Հին Անկարայի բնակիչները իրենց արտաքին տեսքով շատ նման են անատոլիական ցանկացած գյուղի գյուղացիներին: Ցնցոտիներ հագած ուրախ երեխաները հենց որ օտար մարդ են տեսնում, անմիջապես թողնում են իրենց խաղերը և շրջապատում են նրան, սպասելով որևէ փեշքեշի, բայց հրաժեշտ են տալիս անպայման «գուդ-բայ»-ով, քանի որ նրանց համար ամեն մի օտար մարդ ամերիկացի է:

Այդպիսին է հին Անկարան, որը նոր Անկարային հարազուտ է միայն ընդհանուր անունով: Քաղաքի երկու մասերը ընդամենը միայն ցոյակցում են, առանց որևէ կնիք թողնելու մեկը մյուսի վրա: Եվրոպական արդիականությունը կողք կողքի ապրում է տիպիկ տափաստանային, այլ ոչ թե լեանտական արևելականության հետ, ինչպես Ստամբուլում: Եվ սա նույնպես Անկարան տարբերում է Ստամբուլից, որն աճել է դարաշրջանների

¹ Քիլիմ՝ գորգ, կարպետ:

ու քաղաքակրթությունների պատմական շերտանստվածքների վրա: Ժամանակ առ ժամանակ միայն Անկարայի լայն փողոցներում կարելի է տեսնել «այնտեղից եկած մարդկանց»՝ լայն շալվարներ հագած կանանց, մրգեր վաճառող գյուղացիների կամ ոտաբորիկ երեխաների:

Դեպի ապագան նայող ժամանակակից քաղաք ստեղծելու համար հարկավոր էր հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ: Եվ ամենից առաջ հարկավոր է ճանապարհներ կառուցել: Անկարան Ստամբուլի հետ միացված էր միայն մի հին խճուղիով, որն անցնում էր լեռների միջև ընկած ուղրապատույտ ուղիով: Նոր քաղաքի կառուցման համար հատկացված ամբողջ տերիտորիայում հարկավոր էր շորացնել մալարիայի բուն հանդիսացող ճահճները: Եվ վերջապես, ապագա մայրաքաղաքը ապահովել խմելու ջրով. դրա համար Անկարայից հյուսիս լեռների միջև ընկած մի փոքրիկ գոգահովտում կառուցեցին մի ամբարտակ արհեստական լճում, որտեղ հավաքվում էին հեղեղաջրերը: Միաժամանակ լճի լեռնային շրջակայքը ծառապատեցին, շինեցին զբոսայգի, որն այժմ դարձել է քաղաքի բնակիչների հանգստի սիրած վայրը:

20-ական թվականներին Անկարան մի վիթխարի շինարարական հրապարակ էր: 1927 թվականին Աթաթյուրբը հաստատեց քաղաքի կառուցապատման գլխավոր պլանը, որը սկզբնապես նախատեսված էր 350 հազար բնակչի համար: Եվ ինչպես սնկերը անձրևից հետո սկսեցին բարձրանալ այդ հիմնականում շինովնիկական քաղաքի թաղամասերը. կառուցվում էին մինիստրությունների և ուսումնական հաստատությունների շենքերը: Սակայն հարմարավետ պլանավորված լուսավոր տներում ապրելը ուժերից վեր էր անգամ բարձր վարձատրվող թուրք պաշտոնյաների համար, որոնք, կարելի է ասել, իսկական արիստոկրատներ են աղքատիկ ապրող բանվորների համեմատությամբ: Այդ գեղեցիկ տներում ապրում են գլխավորապես ամերիկացիները, որոնք լեփ-լեցուն են Անկարայում, քանի որ այստեղ են տեղավորված ՍԵՆՏՕ-ի* շտաբ-կայանը, Թուրքիայի ցույց տրվող ամերիկյան օդնության կենտրոնը, «ղաշնակից զորքերի» գլխավոր շտաբը: Այդ տներում ապրում են ամերիկյան դեսպանատան աշխատողները, որի անձնակազմը հարյուր հոգուց ավելի է:

* ՍԵՆՏՕ-ն վազուց է Լեթերկվիլ լուծարքի (ժանոթ. թարգմ.):

Անկարայում ամերիկացիներն ամեն ինչից ունեն իրենց սեփականը. սպաշական ակումբ (պրեզիդենտական պալատի կողքին), կինոթատրոն, խանութների մի ամբողջ ցանց (ի դեպ, ամերիկյան ապրանքները միշտ կարելի է գնել «սեշուկայում»), ավտոբուսներ, որոնցով երեխաներին տանում են դպրոց և ծառայողներին՝ աշխատանքի վայրը: Այս ամենը, բնականաբար, տեղական բնակիչների մեջ համակրանք չեն ստաջացնում ամերիկացիների նկատմամբ: 1966 թվականին Անկարայում կառուցվեց երկու բարձրահարկ շենք, որոնք երկվորյակների պես նման են իրար. մեկում բացեցին թանկարժեք խանութներ, ակումբ և ռեստորաններ, մյուսում տեղավորվեց մի շքեղ հյուրանոց: Եթե դատենք այդ երկու հաստատությունների գներից, ապա դրանք ևս նախատեսված են ամերիկացիների համար:

Ամերիկացիները Անկարան անվանում են «Յավաշինգտոն» (թուրքերեն «յավաշ» բառից, որ նշանակում է «զանգաղ», «առանց շտապելու»): Եվ սա բավական դիպուկ անուն է, հատկապես եթե նկատի ունենանք, որ Անկարան Մտամբուլից նույնքան հեռու է, որքան և Վաշինգտոնը Նյու Յորքից: Իհարկե, շտապողականությունը թուրքերի բնավորության գիծը չէ, սակայն նոր Անկարայի շինարարության տեմպերը ամենեւին չեն համընկնում այս երկրի ամեն մի գործի սովորաբար զանգաղ լուծման հետ:

Անկարան միասնական դեմք չունի, բայց դրա փոխարեն նա կառուցվել է թափով: Քաղաքը վեր է բարձրացել մերկ տեղում, բայց նա ամբողջապես նայում է դեպի ապագան, և դա վկայում է միայն այն մասին, որ, երբ թուրքերի ջանքերը ուղղված են սեփական պահանջմունքների բավարարմանը, նրանք կարող են աշխատել արագ ու լավ: Այսօրվա Անկարան կարծես «դեպի վեր աճող» քաղաք է: Պաշտոնական հիմնարկությունների, հատկապես մեջլիսի շենքերը անշափ մեծ են, փողոցներն զգալիորեն ավելի լայն են ու ալիլի մաքուր, քան թուրքական մնացած բոլոր քաղաքներում: Մեծ բավականություն է արևոտ օրերին զբոսնել լայնարձակ բուլվարներով, քանի որ շնչում ես լեռնային օդը: Մայրաքաղաքի զլխավոր մայրուղին՝ յոթ կիլոմետր երկարություն ունեցող Աթաթյուրքի բուլվարը, անցնում է ամբողջ քաղաքի միջով՝ Չանկայա բլրից, որտեղ գտնվում է պրեզիդենտի պալատը և դեսպանությունների մեծ մասը, մինչև այն խճուղին, որը մոռաց ու լերկ ժայռերի միջով տանում է դեպի նոր բարե-

կարգ օդանավակայանը. սա էլ իր հերթին ջրի երկու կաթիլի պես նման է Ստամբուլի օդանավակայանին:

Եթե Անկարային նայինք թռչունի թռիչքի բարձրությունից, ապա նա մեզ կհերկայանա որպես քաղաքային քաղաքակրթության մի փոքրիկ կղզյակ՝ կորած ասիական տափաստանային սարահարթում: Նա շրջապատված չէ քաղաքի արվարձաններով, ինչպես, օրինակ, Ստամբուլը. քաղաքի շենքերից անմիջապես այն կողմ սկսվում են ժայռոտ բլուրներ: Բացառություն է կազմում միայն հայտնի օրինակելի ֆերման, որ հիմնել է Աթաթյուրքը: Նրա պտղաբերությունը, կանաչի առատությունը կարծես մարտահրաշխիք են նետում Անկարան շրջապատած վայրի ու մտայլ ժայռերին: Քաղաքի ներսում կանաչով կարելի է հիանալ երիտասարդական զրոսպոլ՝ նրա արտասովոր լճակով և մի քանի ղենպանատներին կից այգիներով: Անկասկած, ամենից ավելի ընդարձակ զրոսպոլին պատկանում է լեհական ղենպանատանը, որտեղ կանգնած է երեքհարյուրամյա մի կաղնի՝ Անկարայի ամենահին ծառը:

Նոր Անկարան կարող է ծառայել որպես նրա ստեղծողի՝ Քեմալ Աթաթյուրքի սեփական արժանապատվության զգացումի ակնառու ցուցադրում, ինչպես և նրա վիթխարի դամբարանը՝ նրա հավիտենական հանգստավայրը: «Թուրքերի հոր» վերջին կամքի համաձայն, նրա աճյունը տեղափոխվեց մայրաքաղաք: Սկզբում, ավելի հարմար տեղ չլինելու պատճառով աճյունը գրտնվում էր աղգագրական թանգարանում: Հետագայում քաղաքի վրա իշխող բլրին կառուցվեց դամբարան թուրք ճարտարապետ էմիր Օնատի նախագծով: Իր ձևով անպաճույճ դամբարանը կառուցված է ղեղին քարից և ոչ մի բանով չի հիշեցնում մուսուլմանական սուլթանների հարուստ զարդարված դամբարանները: Ումանք Աթաթյուրքի դամբարանը համեմատում են Պարթևոսի հետ: Լայն ու երկար ծառուղին, որը մուտքի մոտ կարծես պահպանում են նեոխեթական գրանիտե ալյուծները, այցելուի վրա գործում է մոնումենտալության տպավորություն: Իսկ Քեմալի բուն դամբարանը քառանկյունի մի ընդարձակ տաճար է՝ կառուցված նեոկլասիկական ոճով: Ասում են, որ պրեզիդենտի դագաղը կշռում է 40 տոննա. այն պատրաստված է սև երակներ ունեցող կարմիր մարմարի մի կտորից: Դամբարանի ուղիղ ու կանոնավոր գծերը կարծես նույնպես ընդգծում են «թուրքերի հոր» մեծությունը:

Աթաթյուրքի պաշտամունքը Թուրքիայում տիրում է ամենուրեք: Գա մի յուրատեսակ տարու է, որի դեմ հազիվ թե որևէ մեկը համարձակվի հանդես գալ. լուծում են նույնիսկ նրանք, ովքեր չեն ընդունում նրա ծրագրի որոշ կետերը, օրինակ՝ լաիցիզմը¹: Այդ պաշտամունքի զրոսեորումներից մեկն է «Թուրքերի հոր» անթիվ-անհամար հուշարձանները ոչ միայն Անկարայում, այլև ամբողջ երկրում: Իրեն հարգող ամեն մի վայր ունի «Իր» Աթաթյուրքը, դե, Իհարկե, պաշտոնական ամեն մի հիմնարկության, սրճարանի կամ խանութի պատերից անփոփոխ կերպով ձեզ է նայում Քեմալի բնորոշ դեմքը՝ խորաթափանց աչքերի խոժոռ հայացքով:

Ո՞րն է թուրք ազգային բուրժուազիայի ղեկավար Աթաթյուրքի աչքի ընկնող դերը: Ինչո՞ւ են նրան անվանում նոր Թուրքիայի «հայր»:

Այդ բանը ալիլի լավ հասկանալու համար հարկավոր է պատկերացնել այն ժամանակը, երբ նա պատմական ասպարեզ իջավ:

1918 թվականն էր: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրության կործանումը թվում էր անխուսափելի: Սուլթանական բանակի միակ զենեքալը, որը ոչ միայն պարտություններ չգիտեր, այլև հաղթանակներ էր տանում, ոման Մուստաֆա Քեմալն էր՝ սալոնիկցի մի մանր պաշտոնյայի որդին: Այդ նա էր, որ 1915 թվականին Գալիպոլիի մոտից ետ շարտեց անգլիական էքսպեդիցիոն կորպուսը, որը և օսմանյան բանակի միակ հաղթական զործողությունն էր: Գալիպոլիի օպերացիայի հաջող իրականացումը մի կողմից համբավ բերեց Քեմալին և ապահովեց առաջխաղացումը ծառայության մեջ, իսկ մյուս կողմից առաջ բերեց սուլթանական մյուս զենեքալների բավական նախանձոտ վերաբերմունքը նրա նկատմամբ: Այդ հաղթանակից հետո նրան որպես տեսուչ ուղարկում են արևելյան հեռավոր նահանգները՝ օսմանյան զորքերի մնացորդների զորացրմանը վերահսկելու: 1919 թվականի մայիսի 19-ին գալով Սամսուն, Քեմալը, հակառակ սուլթանի հրամանի, հենվելով այն ժամանակ տարերայնորեն ծա-

¹ Հասարակության աշխարհիկ կառուցվածք:

գած ժողովրդի պարտիզանական շարժման վրա, սկսեց կազմակերպել դեմագոգուձեղան անաջին խմբերը: Նա Սվլասուս Հավաքում է այն հայրենասերներին, որոնք սուլթանական ժանդարմների բթի տակ լեռնային կածաններով գալիս են այնտեղ: Իսկ սուլթանը իր անգլիացի տերերի պահանջով մեծ գումար է նշանակում անհնազանդ սպայի գլխի համար: Սակայն 1920 թվականին կնքված Սևրի հաշտութան պայմանագիրը, որն օրինականացրեց Օսմանյան կայսրութան կործանումն ու բաժանումը, ցնցեց ամբողջ երկիրը: Այդ պայմանագրի պայմանները զգալորեն ավելի ծանր էին, քան դաշնակիցների կողմից պարտութուն կրած Գեղամահային պարտադրված պայմանները: Եթե Սևրի պայմանագիրը կենսագործվեր, Թուրքիան կդառնար մի փոքրիկ պետություն՝ սահմանափակված Ստամբուլով ու նրա շրջակայքով և Անատոլիայի մի մասով և ամբողջապես կախված կլիներ դաշնակիցներից, որոնց անցնելու էին Օսմանյան կայսրության առավել հարուստ նահանգները: Կիլիկիան և Կենտրոնական Անատոլիայի մի մասը անցնում էին Ֆրանսիային, Հարավային Անատոլիան՝ Իտալիային, իսկ Արևմտյան Անատոլիան Իզմիրի հետ՝ Հունաստանին: Իսկ երկրի արևելյան մասը անցնում էր հայերին և քրդերին: Սակայն այն պահին, երբ դաշնակիցներին հաջողվել էր իրենց պայմանները պարտադրել սուլթան Մեհմեդ VI Վահիտտուդինի հնազանդ կառավարությանը, Անատոլիայի ընդարձակ տարածություններում գուրս եկան նոր բանակի և նոր ազգային պետության ծիլերը: Քեմալի խրոխտ ձայնը, որը պայքարի կոչ էր անում հանուն Թուրքիայի անկախության, հասավ մինչև ամենալայն զանգվածները...

Թուրքիա... Թուրքեր... Նոր, մինչ այդ անհայտ մի հասկացություն: «Թուրք» բառով հարուստ օսմանցիները արհամարհանքով անվանում էին Անատոլիայի գյուղացիներին: Իսկ իրենց նրանք անվանում էին օսմաններ: «Թուրքը» նրանց հասկացողությամբ նշանակում էր նաև «անտաշ», «գոհճիկ» մարդ: Աթաթուրքը առաջինը «թուրք» բառին վերադարձրեց նրա արժանապատվությունը: Երկրում ծագեց ժողովրդական աշխարհագրորի նման մի բան, որին մասնակցում էին անգամ կանայք, որոնք մինչ այդ ոչինչ չէին տեսել «հարեմլիքից», այսինքն՝ տան կանացի կեսից այն կողմ:

Այդ ազատագրական պատերազմում, որտեղ լուծվելու էր թուրքական պետության «լինելու կամ չլինելու» հարցը, Քեմալի

մամբ, որտեղ խոսում են թուրքական լեզուներով... Քեմալը գիտեր, որ ազատագրական պատերազմում թուրքիայի միակ դաշնակիցը Սովետական Ռուսաստանն էր, որի օգնությունը մեծապես նպաստեց հաղթանակի հասնելու գործին: Եվ հակառակ պանթյուրքիստների խելացնոր գաղափարների, Քեմալը 1921 թվականին Ռուսաստանի հետ կնքեց բարեկամության և եղբայրության պայմանագիր, որն էլ ավելի ամրապնդեց թուրքիայի անկախությունը. սովետական կառավարությունը թուրքիային ազատեց ամեն տեսակ դրամական ու այլ պարտավորություններից, որոնք նա ստանձնել էր ցարական Ռուսաստանի հետ կնքած պայմանագրերով: Գրանից մի քանի ամիս հետո թուրքիան բարեկամական պայմանագրեր կնքեց նաև Անդրկովկասյան սովետական հանրապետությունների հետ:

Աթաթյուրքը դեն շարտեց ամեն տեսակ վտանգավոր էքսպանսիոնիստական պլանները և ձեռնամուխ եղավ նոր պետության ստեղծմանը գերազանցապես թուրքերով բնակեցված հողերում: Նրա առջև ծառայեցավ մի ամենալուրջ խնդիր՝ նոր բովանդակություն հաղորդել ստեղծվող պետությանը՝ դեռևս միջնադարի պայմաններում ապրող անատոլիացի թուրքին փոխադրել XX դար և իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան թուրքիան դարձնելու ժամանակակից պետություն: Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր փոխել պետության քաղաքական կառուցվածքը:

1923 թվականի հոկտեմբերի 29-ին թուրքիան հռչակվեց հանրապետություն: Նրա առաջին պրեզիդենտը դարձավ Սուտաֆա Քեմալը, իսկ պրեմիեր մինիստրը՝ Իսմեթ փաշան: Թվով երեսուներեքերորդ, վերջին սուլթան Մեհմեդ VI-ը անգլիական հաժանավով թողեց թուրքիան: Սուլթանը այլևս չկար, բայց դեռ մնում էր խալիֆայությունը, այսինքն՝ հոգևոր ղեկավարությունը բոլոր մուսուլմանների նկատմամբ: Մինչ այդ խալիֆի (մոտավորապես՝ մուսուլմանական պապի) ֆունկցիաները կատարում էր ինքը՝ սուլթանը, իսկ նրա տապալումից հետո՝ սուլթանական քննադատության անդամ Արդուլ Մեջիդը: Սկսած այն պահից, երբ տապալվեց սուլթանը, խալիֆայությունը դարձավ ֆեոդալական հակահանրապետական ռեակցիայի միակ հենարանն ու պատվարը: Եվ այդ ժամանակ Քեմալը վճռեց դիմել լուրջ քայլի՝ նրա նախաձեռնությամբ թուրքիայի Ազգային մեծ ժողովը 1924 թվականի մարտի 3-ին ընդունեց օրենք խալիֆայությունը վերացնելու:

աղքատ հազնված և վատ զինված, հիմնականում գյուղացիական բանակը կարողացավ հաղթել դաշնակիցների մինչև այդ անպարտելի բանակներին: Ըստ որում ոչ միայն ֆրանսիական և իտալական բանակներին, որոնք օկուպացրել էին Հարավային Քուրքիայի զգալի մասը, ոչ միայն անգլիացիների բանակին, որը կանգնած էր Ստամբուլի մոտ և կարևոր դիրքեր էր գրավում քաղաքում, այլև հունական բանակին, որն Անտանտի ուսերին նստած դեսանտ էր ամի հանել կիսով չափ հունական Չմյուռնիա քաղաքում և Ֆափանցել էր մինչև Անատոլիայի խորքերը: Քեմալը, անձամբ լինելով թուրքական զորքերի հրամանատարը, հուլյններին ջախջախեց Սաքարյա գետի մոտ (1921 թվականի օգոստոս-սեպտեմբեր) և դրա համար Ազգային մեծ ժողովը նրան շնորհեց Ղազի, այսինքն՝ հաղթող տիտղոսը: Թուրքական զորքերը ծանր մարտերից հետո ազատագրեցին ու հրդեհեցին Չմյուռնիան: Հաղթանակը պսակվեց 1923 թվականի Լոզանի պայմանագրով, որը հմուտ քաղաքագետ ու Քեմալի ամենամոտ զինակից Իսմեթ փաշայի հաղթանակը հանդիսացավ: Սերի պայմանագրով անդամատված Թուրքիան դրանից հետո ձեռք բերեց անհրաժեշտ պայմաններ որպես անկախ պետություն գոյատևելու համար. նա դադարեց կիսագաղութ լինելուց, քանի որ արդեն վերացել էր կապիտուլյացիաների սիստեմը՝ և միջազգային ֆինանսական վերահսկողությունը:

Թուրքիայի կազմում մնացին Փոքր Ասիան և Եվրոպայի մի մասը: Հարկավոր է պատշաճը հատուցել Քեմալի խելոք քաղաքականությանը. Ղազին, որն իր ուղղմական հաջողությունների շնորհիվ դարձել էր ժողովրդի կուռքը, տերիտորիալ էքսպանսիայի պլաններ էէր հետապնդում: Մեկ անգամ ընդմիջտ նա թաղեց ամեն տեսակ պատրանքներ այնպիսի «կայսրության մասին, որտեղ արևը մայր չի մտնում», մի ժամանակ օսմանյան տիրապետություններ եղած արաբական տերիտորիաների նկատմամբ տիրապետության մասին... Նա վճռականորեն մերժեց նաև երիտասարդ թուրքերի պանթյուրքիստական գաղափարախոսության կողմնակիցների տեսությունը, որոնց կարծիքով Թուրքիան պետք է հավակնություն ունենա բոլոր այն տերիտորիաների նկատ-

1 Կապիտուլյացիաներ— հատուկ տեսակի անիրավահավասար պայմանագրեր, որոնք արտոնյալ ռեժիմ են սահմանում օտարերկրացիների համար:

որ «խալամը համարվում է Թուրքիայի պետական կրոնը»: Այդ ժամանակից ի վեր Թուրքիան միակ աշխարհիկ հանրապետությունն է մուսուլմանական պետությունների մեջ:

Պետական սիստեմի փոփոխություններին համապատասխան փոփոխություններ տեղի ունեցան նաև իրավական սիստեմում: 1926 թվականին Թուրքիան ընդունեց նոր, շվեյցարականի օրինակով մշակված քաղաքացիական օրենսգրքը, որը վերացնում էր բազմակնությունը: Քաղաքացիական օրենսգրքին հաջորդեց իտալականի վրա հիմնված քրեական նոր օրենսգրքը և առևտրական օրենսգրքը, որի համար որպես օրինակ էր ծառայել գերմանականը, ինչպես նաև հաստատվեցին քաղաքացիական ու քրեական պրոցեսուրաների նոր սկզբունքներ: Ժամանակակից այդ ամբողջ իրավական սիստեմը ուղի էր հարթում Թուրքիայի բուրժուական զարգացման համար: Երկու տարում Քեմալը այդ բնագավառում արեց անհամեմատ ավելի շատ բան, քան բոլոր օսմանյան ուժերումստորները մեկ հարյուրամյակում: Բնական է, որ բոլոր այդ նորամուծությունները պետք է ունեցին առաջացնեին ընդդիմադիր կրոնական տարրերի կողմից: Սակայն Քեմալը նահանջեց: Ընդհակառակը, նրա հաջորդ քայլը եղավ գերվիշների միաբանությունների թեքքեների վերացումը: Թուշում էին նրա նախկին մերձավոր զինակիցների գլուխները, բայց Քեմալը, գործելով բռնապետի մեթոդներով և հենվելով բանակի և իր իսկ ստեղծած միակ ժողովրդահանրապետական կուսակցության վրա, մի շարք ուժերներ կիրառեց նաև կենցաղի բնագավառում, մասնավորապես մտցրեց եվրոպական գլխարկներ ու եվրոպական հագուստի գործածությունը:

Չեսը, որ թուրքերը կրում էին մոտ հարյուր տարի շարունակ, Աթաթյուրքի համար «մոլեռանդության, տգիտության, ինչպես նաև առաջադիմության ու քաղաքակրթության նկատմամբ ատելության խորհրդանիշ» էր. նա պատերազմ հայտարարեց զրան: Իսկ ուղղահավատների հասկացողությամբ Ֆեսը մուսուլմանական ուղղահավատության խորհրդանիշ էր: Չեսը՝ չյուսիսաֆրիկյան ծագում ունեցող այդ գլխարկը, չալմայի փոխարեն մտցրել էր սուլթան Մահմուդ II-ը 1828 թվականին: Այն ժամանակ նրան ևս այդ բանը դժվարությամբ հաջողվեց, քանի որ Ֆեսի դեմ հանդես էր գալիս շեյխուլիսլամը այն պատճառաբանությամբ, որ դա իբր արգելված է Ղուրանով: Եվ ահա, մոտ հարյուր տարի հետո, Քեմալը Ֆեսը հանեց թուրքի գլխից, չնայած

այն բանին, որ հիմա էլ շեյխուլիսլամը դեմ էր դուրս գալիս գլխարկին: Սակայն Քեմալի երկաթե կամքը հաղթեց, և 1925 թվականին հատուկ օրենքով մտցվեց եվրոպական գլխարկը: Ինչպես Աթաթյուրքի մասին իր հուշերում գրում է թուրք հայանի ժուռնալիստներից և Քեմալի զինակիցներից մեկը՝ Ֆալիհ Ռեֆքը Աթաթյը, թուրքերը, ֆեսը հանելով, գերադասեցին կրել կոտեչոկ՝ նրա կլոր ձևի շնորհիվ: Իսկ մեջլիսի ղեպուտատներից մեկը առաջարկեց անգամ կոտեչոկների վրա ասեղնագործել գերբ՝ կիսալուսին աստղով: Սակայն շատ շուտով Քեմալի անառարկելի հեղինակութունը հաղթեց և գործածության մեջ մտան եվրոպական նորմալ գլխարկները: Երկրի հարավում միայն հիմա էլ երբևէն կարելի է հանդիպել շալմալի, իսկ ֆես կարելի է գնել միայն խանութներում, որտեղ հուշանվերներ են վաճառվում գրասալքջիկների համար:

Ինչ վերաբերում է կանացի զգեստին, ապա այստեղ Քեմալը պակաս խստաբարո գտնվեց: Նա կտրականապես հանդես էր գալիս շարսաֆների դեմ, որով միջին և բարձր խավերի թրքուհիները փակում էին իրենց դեմքը օտար տղամարդկանց առջև, բայց նա օրենքով շարգելեց դրանք կրել: Ինչպես երևում է, նրա անառարկելի հեղինակութունն անգամ բավական չէր համոզելու տղամարդկանց, որ թույլ տան իրենց կանանց բացելու երեսները: Ծիշտ է, բացառված չէ, որ այդ հարցում իրենց դերը կատարեցին նաև Քեմալի անձնական հայացքները, որ նա յուրացրել էր իր հարազատ տանը: Ինչպես վկայում է նույն Ֆալիհ Ռեֆքը Աթաթյը, Քեմալը կանանց նկատմամբ եղել է շատ խանդոտ, իսկական «արևելցի» տղամարդ: Նա, օրինակ, գտնում էր, որ կանայք չպետք է լաբով պատեն եղունգները և չէր հանդուրժում այն միտքը, որ թրքուհին կարող է ամուսնանալ օտարերկրացու հետ: Սակայն, այստեղ ևս նրա բանականութունը հաղթեց զգացմունքներին: Քեմալը հասկանում էր, որ կանանց ազատագրումը և վերաբերմունքը նրա՝ որպես հասարակության իրավահավասար անդամի նկատմամբ, երկրի զարգացման և արդիականացման անհրաժեշտ պայմանն են: Նա շարսաֆը ուժով չվերացրեց, բայց արեց անհամեմատ ավելի էական բան. նա տղամարդկանց հետ հավասար իրավունքներ տվեց կանանց ոչ միայն քնտանեկան հարաբերութունների ոլորտում: 1930 թվա-

կանին թրքուհին ստացալ երկրի պառլամենտում նախ ընտրելու, իսկ ապա նաև ընտրվելու իրավունք:

Երկրի եվրոպականացման ճանապարհին Աթաթյուրքի կարեվոր քայլը եղավ այն, որ նա վերացրեց մուսուլմանական հիշրայի օրացույցը (որի հիմքում որպես թվարկության սկիզբ է ընդունված Մուհամմեդի փախուստը Մեքքայից Մեդինա) և մրցորեց եվրոպական գրիգորյան օրացույցը: Դրա հետ միաժամանակ մտցվում էր նաև ժամանակի միջազգային սխեմա՝ մինչ այդ աղջամուղջի սկիզբը համարվում էր նաև նոր օրվա սկիզբը: Յուրաքանչյուր մուսուլմանի համար սրբազան ուրբաթ օրվա փոխարեն պարտադիր հանգստի օր ընդունվեց կիրակին: Այդ ունեֆորմներից հետո մնում էր շղթայի միայն մեկ օղակ, որը Թուրքիային դեռ կապած էր պահել Արևելքին. արաբական գիրը: Քեմալը վճռեց կտրել այդ օղակը ևս: Այդ ուղու վրա առաջին քայլը եղավ այն, որ նա մտցրեց թվերի միջազգային սխեմա՝ իսկ այնուհետև հերթը եկավ արաբական այբուբենը լատինականով փոխարինելուն: Ինչպես նախկինում՝ ֆեսերի դեմ մղած պայքարում, այնպես էլ հիմա՝ 1928 թվականին, Քեմալը կամպայանիան սկսեց իրեն հատուկ եռանդով ու դինամիզմով, գործի՝ դնելով սեփական ազդեցութունն ու հեղինակութունը: Հիմա էլ դեռ կարելի է լսել ականատեսների պատմածներն այն մասին, թե ինչպես «թուրքերի հայրը», զրատախտակով ու կավիճով զինված, շրջում էր Թուրքիայի նահանգներն ու ժողովրդին զովորեցնում նոր գիրը, և որ այն ժամանակ նրա օրինակին հեռանցին պրեմիեր մինիստրն ու մյուս բարձրաստիճան պետական գործիչները: Շուտով ամբողջ Թուրքիան վերածվեց մի մեծ դպրոցի՝ բառիս ուղղակի իմաստով: Ընդունվեց օրենք պարտադիր կերպով լատինական այբուբենը օգտագործելու և արաբական գիրը արգելելու մասին: Պետական բոլոր պաշտոնյաները պարտավոր էին ըննութուն հանձնել նոր գրից:

Հերթական ունեֆորմը, որն օգնեց կատարելագործել պետական ազմինիստրացիան, այն էր, որ մտցվեցին ազգանուններ: Մինչ այդ թուրքերն ունեին միայն անուն, որն անչափ դժվարացնում էր որևէ հաշվառում: Այժմ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր էր իր համար ընտրել ազգանուն՝ պահպանելով միայն մեկ պարտադիր պայման՝ որպեսզի մեկ վիլայիթի սահմաններում այդ ազգանունը երկու անգամ չկրկնվի: Որպես կանոն, մեկ ընտանիքի անդամները ընդունում էին մեկ ընդհանուր ազգանուն:

Իսմելի փաշան՝ հուլյններին հաղթողը Ինենյուլի մոտ, որպես ազգանուն իր համար վերցրեց այդ գյուղի անունը: Մուստաֆա Քեմալին Ազգային մեծ ժողովը շնորհեց Աթաթյուրը (Թուրքերի հայր) պատվավոր ազգանունը:

1923 թվականին Աթաթյուրը Ինենյուլի հետ միասին ազատագրական պայքարի ժամանակներից գոյություն ունեցած ազգային բուրժուազիայի հայրենասիրական կազմակերպությունների բազայի վրա ստեղծվեց ժողովրդահանրապետական կուսակցությունը, որը քսանյութ տարի շարունակ մնաց իշխանության գլուխ կանգնած: 1931 թվականին կուսակցության երրորդ համագումարը հաստատեց նոր ծրագիրը, որն ընդգրկում էր քեմալականության գաղափարախոսության քվինտ-էսենցիան արտահայտող վեց սկզբունքները՝ հանրապետականություն, նացիոնալիզմ (որը նրանք հասկանում են որպես հայրենասիրություն, մեր եվրոպական տերմինները այնքան էլ համարժեք չեն թուրքականների հետ), ժողովրդականություն, էտատիզմ, լաիցիզմ և ռեֆորմիզմ, կամ հեղափոխականություն (վերջին հասակացության իմաստը, որը նույնպես թարգմանվում է տարբեր կերպ, անարյուն ճանապարհով էական փոփոխություններ իրականացնելու ձգտումն է): Հիշյալ վեց սկզբունքները, կամ վեց նետերը, մասցվեցին 1937 թվականի նոր սահմանադրության մեջ, որի համար որպես օրինակ էին ծառայել եվրոպական լիբերալ սահմանադրությունները:

Նույն համագումարում Աթաթյուրը հռչակեց իր հայտնի «Երկրում խաղաղություն, աշխարհում խաղաղություն» լոզունգը, որն այժմ շատ սիրով ու հաճախակի կրկնում են որպես թուրքական պետության խաղաղասիրության արտահայտություն: Ի՞նչ էր նշանակում և ի՞նչ է նշանակում այդ լոզունգը երկրի ներքին կյանքի համար: Առասպել դասակարգային հաշտության մասին և անգամ դասակարգերի բուն գոյության ժխտում: Աթաթյուրի ռեֆորմատորականությունը նպատակ էր դրել արդիականացնել երկիրը, հասարակական կյանքի կիսաֆեոդալական նորմաներից անցնել բուրժուական նորմաների: Սակայն այդ ռեֆորմատորականությունը սահմանափակվում էր կենցաղային ու իրավական հարաբերությունների, լուսավորության ու մշակույթի ոլորտով և քստ էություն շոշափել էր գլխավորապես ազգային բուրժուազիային, բանակին և դրա հետ կապված նոր մտավորականություն ու բյուրոկրատիայի շրջաններին: Ամեն մի միտք հասա-

րակական այնպիսի ունեւորմանը, որոնք խախտեին գույ-
քային հարաբերությունները, խորթ էր Աթաթյուրքի համար, և
նա դաժանորեն հաշվեհարդար էր տեսնում նման հայացքների
կողմնակիցների հետ: Նա նույնիսկ վերացրեց հանրապետու-
թյան գոյության առաջին տարիներին ստեղծված անկախ արհ-
միությունները և դրանք վերածեց «դեղին միությունների», որոնք
ենթարկվում էին նրա ուստիկանական ապարատին: Աթաթյուրքը
փակեց կիսալեզալ կոմունիստական թերթերը, օրենքից դուրս
հայտարարեց կարճ ժամանակով գոյություն ունեցած կոմու-
նիստական կուսակցությունը և 1921 թվականին Տրապիզոնում
դաժան հաշվեհարդար տեսավ նրա ղեկավարների հետ: Քեմալը
ձեռք չտվեց գյուղական կուլակներին՝ աղաներին, որոնք անո-
ղոքաբար շահագործում էին շքավոր գյուղացիներին: Ճիշտ է,
նա փոքր-ինչ մեղմացրեց գյուղացիների դրությունը. վերացվեց
այն տուրքը, որն աղաները գանձում էին բերքի 75 տոկոսի շա-
փով, և փոխարինվեց դրամական հարկով: Կալվածատերերից
հողը ետ գնելու և դրանից հողազուրկ և սակավահող գյուղա-
ցիներին հողաբաժիններ հատկացնելու վերաբերյալ 1937 թվա-
կանի սահմանադրության մեջ մտցված ուղղումը ևս որոշ շափով
փոխեց նրանց դրությունը: Վարչական կարգով և բարձր վճարով
այն ժամանակ ետ գնվեց մոտ 130 հազար հեկտար հող, այ-
սինքն՝ մշակող հողերի մոտ կես տոկոսը: Ծահագործման ճիրան-
ներում տառապող և մարդու համար անտանելի պայմաններում
ապրող թուրք գյուղացու աղքատ գոյությունը չբարելավվեց ոչ
Աթաթյուրքի կենդանության ժամանակ, ոչ էլ նրա մահից հետո:

Իսկ բանվոր դասակարգը: 1936 թվականին Ազգային մեծ
ժողովը ընդունեց երկրի պատմության մեջ առաջին օրենքը աշ-
խատանքի մասին, որով մտցվում էր ութժամյա աշխատանքային
օր՝ շաբաթական մեկ հանգստյան օրով և թույլատրվում էր օրա-
կան երեք ժամ արտաժամյա աշխատանք տասնվեց տարեկա-
նից բարձր բանվորների համար: Այդ օրենքը սակայն դգալի
չափով մնաց թղթի վրա... Ծշտորեն պահպանվում էր օրենքի մի
հոդվածը միայն՝ գործադուլների արգելման մասին, որը մի ար-
գելք էր տնտեսական պահանջների համար բանվորների մղած
պայքարի ճանապարհին, որ լայնորեն ընդգրկել էր Բուրքիան
30-ական թվականներին:

Բայց դրա հետ մեկտեղ նման օրենքի ընդունումը աներկ-
բայորեն վկայում էր այն մասին, որ աճել էր բանվոր դասա-

կարգի դերը թուրքական նոր պետության մեջ, որը հենց այդ տարիներին ձևոնամուխ էր եղել ազգային արդյունաբերության զարգացմանը:

Չնայած ուժեղների դասակարգային սահմանափակությանը, Աթաթյուրքի շնորհիվ թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունները մեծ առաջընթաց բաշխ էին երկրի արդիականացման ու զարգացման համար մղված պայքարում: Ուղղակի զարմանում ես, երբ տեսնում ես, թե ինչքան շատ բան կարողացավ անել այդ մարդը իր կարճատև կյանքի ընթացքում. նա ուներ երկաթե կամք, բայց շատ վատ առողջություն: Ինչպես գրում է Ֆալիհ Ռեֆքը Աթաթյուր, Քեմալը պատանի տարիներից տառապում էր երիկամների հիվանդությամբ, որը առանձնապես զգալի դարձավ Սամսունում՝ 1919 թվականին, երբ նա ստիպված էր յուրաքանչյուր մի քանի ժամը մեկ տաք վաննաններ ընդունել: 1924 թվականին Աթաթյուրը ունեցավ սրտի առաջին նոպան: Երեք տարի անց, երբ պատերազմը վերջանալուց հետո նա առաջին անգամ Անկարայից եկավ Ստամբուլ, ինֆարկտ ստացավ: Սակայն, չնայած բժիշկների արգելքներին, նա շարունակում էր գիշերներն աշխատել ու խմել: Հիվանդ երիկամներին և հիվանդ սրտին ավելացավ լյարդի ծանր հիվանդությունը: 1938 թվականի մարտին առողջական վիճակը խիստ վատացավ: Սանր հիվանդ ու անաշխատունակ, նա ժամանակը անց էր կացնում կամ հատկապես նրա համար շինված զբոսանավի վրա՝ Բոսֆորում, կամ նախկին սուլթանական Դոլմաբահչե պալատում: Նա մտադիր էր 1938 թվականի հոկտեմբերի 29-ին զալ Անկարա՝ հանրապետության տասնհինգերորդ տարեդարձի տոնակատարությանը: Մարզադաշտում նույնիսկ նրա համար հատուկ վերելակ էին կառուցել տրիբունա բարձրանալու համար: Սակայն առողջական վիճակը նրան թույլ չտվեց Ստամբուլից մեկնել: Տոնի օրը երիտասարդությունը հավաքվել էր պալատի մոտ, որպեսզի շնորհավորի իր առաջնորդին: Հավաքելով վերջին ուժերը, Քեմալը մոտեցավ լուսամուտին և արցունքն աչքերին արտասանեց. «Այս տոնը և վաղվա օրը ձեզ է պատկանում: Մնացեք բարով»: Եռտուվ սկսվեց հոգեվարքը: 1938 թվականի նոյեմբերի 10-ին Աթաթյուրը վերջին անգամ բացեց աչքերը և հարցրեց,

Յե ժամը քանիտն է, բայց պատասխանը այլևս չլսեց... Երբ նա մահացավ, ընդամենը 56 տարեկան էր:

Այդ մեծ բարենորոգչի և թուրքական ազգային բուրժուազիայի շահերի արտահայտչի գործունեության կարճատև ժամանակաշրջանը տասնամյակների համար նշեց երկրի զարգացման ուղին: Նրա վառ անհատականությունը իր կնիքը դրեց հետագա ամբողջ քաղաքական կյանքի վրա: Այն ամենը, ինչ մենք առաջագիմական ենք անվանում Թուրքիայում, այսօր կոտարվում է քեմալականության գրեշի տակ:

Հարցը այլ քանի մասին է. նրա ռեֆորմները որքա՞ն խորն են փոփոխել հասարակության կյանքը: Այդ հարցին ճիշտ պատասխանելու համար հարկավոր է հիշել, թե Թուրքիայում որքան աննշան է կրթված մարդկանց միջնախավը և թե թուրքերի բնավորության մեջ որքան զարգացած է հնազանդությունը իշխանություններին: Օրինակի համար, Ֆես կրեիլը արգելող օրենքը, որը խախտելու համար պարտիժ էր սպառնում, կատարվում էր անվերապահորեն: Իսկ ուրիշ ի՞նչ: Որոշ ժամանակ ապրիլով այդ երկրում, դուք սկսում եք հասկանալ, թե որքան անկայուն է արգիականության շերտը ավանդույթների հզոր ծառի վրա: Չէ որ Աթաթյուրքի ռեֆորմները շոշափել են միայն հասարակության կրթված խավերին: Ըստ որում նրանց մեջ էլ դեռ շատ ուժեղ է ավանդույթների ազդեցությունը... Իսկ հասարակ մարդկանց շրջանում ռեֆորմները բոլորովին արմատներ չզցեցին: Անշեղորեն պահպանվում է «թուրքերի հոր» այն նորամուծությունը միայն, որի համաձայն պաշտոնյան պարտավոր է պետական հիմնարկում ընդունել մի քանի այցելուների միաժամանակ: Այդ բանում ես ինքս էլ համոզվեցի, երբ մի աննշան գործ կարգավորելու համար եկել էի մի նահանգական վարչություն: Նման եղանակը բավական դժվարացնում էր «բուռը դնելու» հնարավորությունը, բայց արմատախիլ անո՞ւմ էր արդյոք ավանդական «փեշքեշը»: Ես շատ եմ կասկածում դրանում: Եվ քանի որ սկսեցի խոսել այդ մասին, մի քանի խոսք էլ կցանկանայի ասել թուրքական բյուրոկրատիայի մասին: Այստեղ շատ է տարածված այսպիսի մի անեկդոտ. երբ թուրքին հարցրել են, թե ինչ կցանկանայի հետո վերցնել այն աշխարհը տանելու համար, նա պատասխանել է. «Վեց անձնագիր, վեց լուսանկար և տասական թուրքական լիրայի գերբային դրոշմանիշ»: Որպեսզի հասարակ բնակչին օգնեն հաղթահարելու բյուրոկրատական ամ-

բողջ քաշքշուկը, 1967 թվականից Անկարայում գոյություն ունի հեռախոսային հատուկ տեղեկատու բյուրո: Դուք հավաքում եք «08» համարը, և տասնչորս փորձված ծառայողներ պատասխանում են, թե ուր է հարկավոր դիմել այս կամ այն խնդրով, քանի որ զրոյմանիշ է հարկավոր փակցնել, եթե ուզում եք, որ ձեր խնդրանքը երբևէ քննության առնվի...

Նոր օրացույցի հետ անգամ բոլորը չէ, որ հաշվի են նրատում: Ժամանակի առ ժամանակ մամուլում և պաշտոնական հրատարակություններում հանդիպում են հիշքայի տարեթվեր: Հիշում եմ, օրինակ, ես թերթերից իմացա (դա 1962 թվականի վերջին էր), որ Անկարայի վերջերս միայն նշանակված նոր նահանգապետը ծնվել է 1330 թվականին: Իսկ ընտրությունների օրը աչքի անցկացնելով մայրաքաղաքի մի քանի ընտրական օկրուգների ընտրողների ցուցակները, ես հայտնաբերեցի, որ Անկարայի բավական շատ բնակիչներ (իսկ հին Անկարայում անխափր գրեթե բոլորը) ծնվել են... XIV դարի առաջին կեսին: Նույն բանը տեղի է ունենում նաև ազգանունների հետ: Թուրքիայի բոլոր բնակիչներն էլ ունեն ազգանուններ, բայց դրանք ղեռնաքաղաքացիության իրավունք չեն նվաճել և օգտագործվում են շատ հազվադեպ՝ որպես անվան մի հասարակ հավելում: Պաշտոնական անձինք անգամ հաճախ կոչվում են անուններով, որոնց ավելացնում են «բեյ» (պարոն) կամ «փաշա» (գեներալ), իսկ գեներալներ Թուրքիայում բավական շատ կան...

Ինչ կա որ, կարիք չկա զարմանալ դրա համար, եթե հիշենք, թե որքան կարճատև է հղել քաղաքացիական ռեֆորմների բռնապետական կենսագործման ժամանակաշրջանը՝ մուսուլմանական ավանդույթների դարավոր տիրապետության համեմատությամբ: Եվ որքան մակերեսային են եղել այդ ռեֆորմները. դրանք սահմանափակվել են հիմնականում կենցաղային ու կրոնական հարաբերությունների ոլորտով, առանց խախտելու գույքային և սոցիալական հարաբերությունները: Բայց չէ որ հենց կենցաղային ու կրոնական պահպանողականությունն է, որ հենվել ու մինչև հիմա էլ հենվում է հասարակական կյանքի պահպանողականության վրա:

Ընթերցողներին համար անսովոր այս բառակապակցությունը պարզապես «դեմոկրատ» (թուրքերեն՝ «դեմոկրատական») բառի աղավաղված ձևն է: Դեմոկրատ պարտիսի նշանակում է դեմոկրատական կուսակցություն, որը տասը տարի շարունակ, սկսած 1950 թվականից, կառավարում էր Թուրքիան և որն անչափ հեռացել էր լաիցիզմի և էտատիզմի սկզբունքներից:

Քանի որ անգրագետ թուրք գյուղացու համար «դեմոկրատ» բառը հնչում էր բավական վերացականորեն, նա իր հասկացողությունը վերափոխել է այն և արտասանում է որպես «դեմիրքըր աթ», որ նշանակում է «երկաթի սպիտակ ձի»: Նման հասկացողությունը նրան անհամեմատ ավելի մոտ էր, մանավանդ, որ ժողովրդական առակներում և անատոլիական առասպելներում հաճախ է խոսվում անսովոր սպիտակ ձիու մասին, որը ծնվելու ժամանակ ունեցել է մուգ երկաթի գույն:

Ինչպե՞ս պատահեց, որ «թուրքերի հոր» մահից տասներկու տարի հետո իշխանության գլուխ անցավ մի կուսակցություն, որը նահանջել էր նրա սկզբունքներից:

Մուստաֆա Քեմալից հետո նրա տեղը գրավեց Իսմեթ Ինենյուն՝ Աթաթյուրքի զինակիցն ու նրա օգնականը ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավարությունում: Այդ փորձառու քաղաքագետը, որը 1923 թվականին Լոզանում կարողացել էր այնքան շահաձևտ պայմաններ կորզել Թուրքիայի համար, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այնքան ճարպկորեն կարողացավ մաներել թուրքական քաղաքականությունը, որ երկիրը զերծ մնաց պատերազմից: Հիտլերյան պրոպագանդան այստեղ գործունեության լայն ասպարեզ ուներ: Թուրքիան հումք էր մատակարարում Գերմանիային և թուլլատրում էր, որ գերմանական նավերն անցնեն նեղուցներով, իսկ Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակման նախօրյակին նույնիսկ նրա հետ կնքեց պայմանագիր բարեկամության և չհարձակվելու մասին: Ստալինգրադի մոտ գերմանացիների կրած պարտությունից հետո պատերազմի ընթացքը փոխվեց, և Թուրքիան, ինչպես ասում են, «12-ից հինգ բուլե պակաս», 1945 թվականի փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային, որը նրան հնարավորություն տվեց հակահիտլերյան

կոալիցիայի պետությունների հետ հավասար տեղ գրավել Միավորված ազգերի կազմակերպությունում:

Իսկ ի՞նչ եղա՞վ պատերազմից հետո Չնայած արտաքին քաղաքականության բնագավառում Իսմիթ Ինենյուտի ունեցած հաջողություններին, նրա հեղինակությունը երկրի ներսում նկատելիորեն խարխուլվել էր: Նրա կառավարության նկատմամբ օպոզիցիայի մեջ էր ոչ թուրք բուրժուազիան, ինչպես նաև պատերազմիցի տարիներին ամրապնդված ազգային բուրժուազիայի նշանակալի մասը:

Սպեկուլյանտների ու շահագործողների դեմ ծավալված ժողովրդական լայն շարժման զարգացումը կասեցնելու և երկրի լարված իրադրությունը մեղմացնելու համար կառավարող շրջանները դիմեցին որոշ դիջումների՝ թուլատրեցին առաջադիմական մի քանի ժուռնալների հրատարակությունը և նահանջեցին միակուսակցական սխտեմից: 1946 թվականին ստեղծվեց ժողովրդահանրապետական կուսակցության նկատմամբ ընդդիմադիր դեմոկրատական կուսակցությունը՝ նախկին պրեմիեր մինիստր Զելալ Բայարի գլխավորությամբ, որը նույնպես ժամանակին եղել է Աթաթյուրքի դինակիցը: Այդ կուսակցությունը, որը սերտորեն կապված էր ազգային ֆինանսական շրջանների ու օտարերկրյա կապիտալի հետ, իր գրոշի տակ հավաքեց զբլխավորապես խոշոր բուրժուազիային, որը ձգտում էր տնտեսական լիբերալիզմի քաղաքականության, ինչպես նաև կալվածատերերի, մանր բուրժուազիայի և գյուղացիության հետամնաց, մոլեռանդորեն տրամադրված կրոնական տարրերին, որոնց համար ատելի էր Աթաթյուրքի հռչակած լաիցիզմի քաղաքականությունը:

1950 թվականին դեմոկրատական կուսակցությունը, նշանակալի հաղթանակ տանելով ընտրություններում, կազմեց կառավարության խոշոր կալվածատեր Ադնան Մենդերեսի գլխավորությամբ: Զելալ Բայարը ընտրվեց պրեզիդենտ, իսկ Ինենյուտը մնաց ամենախոշոր ընդդիմադիր կուսակցության՝ ժողովրդահանրապետական կուսակցության լիդեր, որը քսանյոթ տարի շարունակ՝ 1923-ից մինչև 1950 թվականը, կանգնած էր իշխանության գլուխ:

Մենդերեսի հաղթանակի գլխավոր պայմանը այն ծրագիրն էր, որը խոստանում էր սահմանափակել պետության միջամտությունը արտադրությանը և լայնորեն ներգրավել ազգային և

օտարերկրյա մասնաձևոր կապիտալը: Ի դեպ, նույն բանին էլի հանգում նաև Միացյալ Նահանգների ցանկությունները, որոնց սրտովը շէր էտատիզմի քաղաքականությունը:

Հաղթանակի մշուս, ոչ պակաս կարևոր պայմանը մասսաների կրոնական տրամադրությունների շարաշահումն էր: Գեմոկրատական կուսակցության՝ իշխանության գլուխ անցնելուց հետո այդ տրամադրություններն ուժեղացան: Անկարաչի գլխավոր մզկիթում հրապարակայնորեն երախտագիտություն էր հայտնվում Ալլահին թուրքիան «անասոված» կառավարություններից ազատագրելու համար: Եվ իրոք, երախտագիտություն հայտնեցու պատճառ կար. դեմոկրատական կուսակցությունը իշխանության գլուխ անցնելուց հետո նորից վերականգնվեց ուղղահայմատներին արարերեն աղոթքի կանչելու սովորույթը, որը ժայֆանակին արգելվել էր Աթաթյուրքի կողմից:

Մենդերեսը մեծ ֆոնդեր հատկացրեց նաև նոր մզկիթների շինարարության համար: Գեմոկրատական կուսակցության կառավարման տարիներին մեկ նոր դպրոցի դիմաց կառուցվում էր շորս նոր մզկիթ: Նա դգալիորեն ընդլայնեց նաև շինվորների կրոնական ուսուցումը և աստվածաբանության ֆակուլտետ ստեղծեց Անկարաչի համալսարանում:

Արտաքին քաղաքականության բնագավառում Մենդերեսի կառավարությունն էլ ավելի ամրապնդեց Թուրքիայի կողմնորոշումը դեպի արևմտյան իմպերիալիստական տերությունները: Գրավելով պրեզիդենտի պաշտոնը, Ջեյալ Բայարը հայտարարեց, որ «ամերիկացի ու անգլիացի բարեկամները զոհ կմնան Թուրքիայի քաղաքականության արդյունքներից»: Ամերիկացի էնդրյու թալլին հետազայում գրել է. «Ամերիկյան տեսակետից Մենդերեսի կառավարությունը հենց այն կառավարությունն էր, որ ցանկանում էր Վաշինգտոնը... Մենդերեսը ամերիկյան օգնությունն օգտագործեց այն բանի համար, որ Թուրքիան դառնա Արևմուտքի ամենաուժեղ բաղան... ՆԱՏՕ-ի մշուս երկրների համեատությունը թուրքական բանակը դարձավ ամենահզոր մարտական միավորը»:

Ավելի վատ էր նախընտրական խոստումների կատարման գործը:

Մենդերեսի կառավարման սկզբնական շրջանը բնութագրվում էր էկոնոմիկայի բնագավառի որոշ աշխուժացմամբ՝ շնորհիվ ամերիկյան օգնության ավելացման: Ստրատեգիական օրչեկտ-

ների ատեղծման, գլխավորապես ճանապարհների շինարարության համար հատկացվող քառասյին ու անպլան կապիտալ ներդրումները աշխատանք էին տալիս բազմահազար գործազուրկներին: Արդյունաբերական արտադրության ինդեքսը 1949 թվականի համեմատությամբ աճեց գրեթե երկու անգամ: Աճեց նաև բանվոր դասակարգը. 1949 թվականին պետական ձեռնարկություններում զբաղված էր 223,4 հազար բանվոր, իսկ 1958 թվականին՝ 673,3 հազար: Սակայն այդ ներդրումները ֆինանսական ուժով չէին բավարարում շուկային: Ֆինանսավորումը կատարվում էր թղթադրամ բաց թողնելու և արդյունաբերությունը, առևտուրն ու գյուղատնտեսությունը վարկավորելու միջոցով:

Թուրթուազիայի մի մասը որոշակի սպեկուլյատիվ օգուտ էր քաղում ինֆլյացիայից, ինչպես նաև կորեական պատերազմի հետ կապված կոնյունկտուրայից: Սակայն, որքան ավելի նկատելիորեն էին դրսևորվում նման անպլան և ինֆլյացիոն էկոնոմիկայի հետևանքները, թուրթուազիայի շրջանում սկսեց աճել դժգոհությունը: Շուտով թուրքական վալյուտան դարձավ առավել պակաս կաշուն վալյուտաներից մեկը: Ըստ որում, անպլանային ինդուստրացման կիրառումը չկանխեց լայն սպառման արդյունաբերական ապրանքների և տեխնիկական սարքավորումների հետադա ներմուծումը, որն, իր հերթին, ծնեց բացասական առևտրական հաշվեկշիռ և էլ ավելի ուժեղացրեց ինֆլյացիան:

Թուրքական էկոնոմիկայի արատավոր կառուցվածքը զգալի չափով արևմտյան, առաջին հերթին ամերիկյան «օգնության» բնույթի հետևանք էր: Այդ օգնությունը, որը բավական պատկառելի էր թվական տեսակետից (Մենդելսոնի կառավարման տասը տարիների ընթացքում Թուրքիան ստացավ ավելի քան երեք միլիարդ դոլար), որը հատկացված էր գլխավորապես ռազմական նպատակների համար (դրանց համար էր հատկացված նաև թուրքական բյուջեի 40 տոկոսը), ինչպես նաև ստրատեգիական բնույթի կարիքների ու թեթև արդյունաբերության զարգացման համար: Օգնության նման բաշխումը հետապնդում էր որոշակի նպատակ՝ Թուրքիան տնտեսական կախման մեջ պահել արևմտյան վարկատուներից, որպեսզի սրանք կարողանան առաջվա նման իրենց ապրանքները ներմուծել աշխտեղ: Ամերիկացիների մտահոգացմամբ, Թուրքիային հատկացվում էր ամերիկյան մոնոպոլիաների հումքային և գյուղատնտեսական կցորդի գերը:

Յուրքական բուրժուազիան դժգոհ էր ան բանից, որ մենդե-
րեսական քառասյին ինդուստրացումը, որը ծանր բնոյ նման ըն-
կել էր երկրի էկոնոմիկայի վրա, սահմանափակվում էր պլանա-
վորապես պետական սեկտորով: Մենդերեսը կառուցեց շաքարի
ու ցեմենտի գործարաններ, որոնք անվանում էին «Երևարական»,
որովհետև դրանք կառուցվել են ոչ թե երկրի տնտեսական պա-
հանջներից էլենելով, այլ սպազա ընտրողների ձայնից շահելու
համար:

Սակայն ամենից ավելի շատ դժգոհ էին բնակչության միջին
խավերը, և առաջին հերթին պետական պաշտոնյաները, որոնք
մշուաններից ավելի շատ իրենց վրա զգացին ինֆլյացիայի բոլոր
հետևանքները: Մենդերեսի կառավարումից, թեևս, գոհ էին, և
այն էլ որոշ ատանումներով, միայն գյուղացիները, որոնց այդ
ժամանակ գրեթե բոլորովին ազատեցին հարկերից. նրանք գոհ
էին հացահատիկի գների բարձրացումից և այն բանից, որ խրա-
խուսվում էր կրոնական ուսուցումը:

Յուրքական էկոնոմիկան գնում էր դեպի սնանկացում: Այն
չէր կարող դիմանալ կրկնակի լարվածության՝ ռադմական կա-
րիքների համար կատարվող ծախսերի մեծացմանը և մի բուռ
կապիտալիստների ու կալվածատերերի արագ հարստացմանը:
Երկրում շոնաժամային իրավիճակը կանխելու համար արևմտյան
տերութունները Յուրքիային տրամադրեցին լրացուցիչ վարկեր
(աչպես կոչված կաշունացնող փոխառութուններ երեք հար-
յուր հիսունինը միլիոն դոլար գումարով): Ինչ-որ մի շատ կարճ
ժամկետում այդ միջոցառումը կասեցրեց ինֆլյացիան և կաշու-
նացրեց Յուրքական վալյուտան: Արևմուտքի կողմից թեկադրված
այդ դեֆլյացիոն քաղաքականությունն էլ ավելի վատթարացրեց
աշխատավորական զանգվածների տանց այն էլ ծանր դրու-
թյունը: Գներն աճեցին, փակ աշխատավարձը մնաց նախկինը
(վիճակագրական տվյալներով, 1950—1959 թվականներին ապ-
րուստի մինիմումը աճեց չորս անգամ, իսկ աշխատավարձը, որն
առանց այն էլ բարձր չէր, տվելացավ միայն 20 տոկոսով):
Բացի դրանից, տնտեսական աղետալի վիճակը վատթարացրեց
նաև Յուրքական հիմնական հումքի՝ քրոմի համաշխարհային
գների անկումը: Շատ նկատելի կերպով իրեն զգացնել էր տա-
լիս նաև մենդերեսական բյուրոկրատիայի ծախվածութունը,
որը յուրացնում էր նշանակալի գումարներ հասարակական ֆոն-
դերից, ինչպես նաև էկոնոմիկան ղեկավարելու նրա անընդու-

նակությունը... Իսկ ինչպես հայտնի է, «ձուկը գլխից է հո-
տում»... Արտաքին գործերի մինիստրին (այն ժամանակ Ղոռույն
էր) անվանում էին, օրինակ, «պարոն տասը տոկոս», քանի որ
նա իր գրպանն էր դնում օտարերկրյա բուրբ վարկերի տասը
տոկոսը: Ծիշտ է, հետագայում նա դրա համար հատուցեց պա-
րանոցի պարանոյ... Դրա հետևանքով պետական զանձատունը
դատարկվել էր, իսկ բյուջեի դեֆիցիտը կազմում էր կես մի-
լիարդ թուրքական լիրա:

Հակամենդերեսական տրամադրություններն աճում էին ամ-
բողջ երկրում. դրանք առանձնապես իրենց ղզացնել տվեցին
1959 թվականի վերջին, երբ Միացյալ Նահանգները հայտարա-
րեցին, որ հրաժարվում են վարկ տալ Թուրքիային: Թուրքական
բուրժուազիան գնալով ավելի ու ավելի բացահայտորեն էր հան-
դես գալիս կառավարության դեմ, նրան մեղադրելով սահմա-
նափակ ազատության համար և պահանջելով կիրառել տնտե-
սական լիբերալիզմի քաղաքականություն: Աշխատավորական
դանգվածները նույնպես դժգոհ էին կառավարությունից՝ թան-
կության և տնտեսական կայունության բացակայության պատճա-
ռով: Իսկ մտավորականությունն ու առաջադիմական տարրերը
Մենդերեսին մեղադրում էին անակցիոն օրենսդրության և հատ-
կապես մամուլի նկատմամբ քեյրեսիվ քաղաքականության հա-
մար: Համընդհանուր հարգանք վայելող գիտնականներն ու ժուռ-
նալիստները ըննադատական արտահայտությունների համար
նեղակցին բանտերը: Օպորտիցիոն տրամադրությունները քաղաք-
ներում աճեցին ու շտեմնված շափերի հասան: Մենդերեսի ան-
ժիմը ընկավ փակուղու մեջ: Ամենակենսական քաղաքական ու
տնտեսական պրոբլեմները այդպես էլ մնացին չլուծված:

Դրան զուգահեռ աճում էր օպորտիցիալի սարազլուխ Իսմեթ
Ինենյուլի ու նրա կուսակցության ժողովրդականությունը՝ շնա-
յած կառավարող շրջանների կիրառած հալածանքների: Այս-
պես, օրինակ, 1953 թվականին օրենսդրական կարգով քնա-
զրավվեց ժողովրդահանրապետական կուսակցության ամբողջ
գույքը: Ինքը՝ Ինենյունը ևնթարկվեց բազմաթիվ հարձակումների:
Ինչպես հետագայում ցույց տվեց Յասսըղա կղզում տեղի ունե-
ցած դատավարությունը, նույնիսկ մահափորձ էր պատրաստվել
նրա դեմ: Սակայն, այդ դատամյալ քաղաքագետի հեղինակու-
թյունն այն ժամանակ բավականին բարձր էր, թերևս, անգամ
ավելի բարձր, քան երբ կանգնած էր իշխանության զլուխ: Ահա

ինչու բանակին տրված հրամանը՝ թույլ շտալ Ինենյուտի ելույթը Կայսերիի կուսակցական կոնֆերանսում, 1960 թվականի ապրիլին հանդեսընց բոլորովին այլ արդյունքի. տեսնելով, որ մարդկանց բաղմուխթունը շրջապատել է զորքերի կողմից կանգնեցրած գնացքը, որով ժամանել էր Ինենյուն, օվացիա սարքեց նրա պատվին, իսկ զորամասերը միացան բնակիչներին: Գրա համար իբրև պատիժ Մենդերեսը պաշտոնաթող արեց բարձրաստիճան սպաներին, այդ թվում և հանրապետության ապագա պրեզիդենտ բանակային գնեհրալ Գյուրսելին, որին երկու ամիս էր մնում կենսաթոշակի անցնելու: Հենց այդ ժամանակ էլ Մենդերեսը ստեղծեց օպոզիցիայի գործունեությունը հետաքննող իրեն հնազանդ մի հանձնաժողով՝ անսահմանափակ լիազորություններով: Սակայն այդ տխրահռչակ հանձնաժողովի գործունեությունը, ինչպես և բաղմաթիվ անօրինական ձերբակալությունները ամենուրեք առաջացրին դժգոհություն, որն առանձնապես ուժեղացավ մելչիսի միջադեպից հետո, երբ այդ հանձնաժողովի հասցեին արած քննադատական դիտողությունների համար դեմոկրատական կուսակցության ղեկուսատաների կողմից Ինենյուն կոպիտ կերպով դուրս արվեց դահլիճից:

Այդ միջադեպի հետևանքը եղան ուսանողական բուռն ելույթները: Ապրիլի 28-ին Ստամբուլի մոտ շորս հազար ուսանողներ ցույց կազմակերպեցին, պահանջելով, որ Մենդերեսը հրաժարական տա: Ուստիկանությունը, որին աջակցում էին զորական մի քանի միալորումներ, մտավ համալսարանի տերիտորիան և կրակ բացեց այնտեղ դառնող ուսանողների վրա: Սպանվեց մի քանի ուսանող: Գա, իր հերթին, բուռն ռեակցիա առաջացրեց սպաների ու զինվորների շրջանում, որոնք սկսեցին անցնել ռաանողների կողմը: Ինչպես հետագայում զբիլ է դեմոկրատական կուսակցությունից ընտրված նախկին սենատոր, Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Բաշգիլը, «շարժումը ընդգրկեց բանակը. դա Մենդերեսի ու նրա կառավարության վախճանն է»:

Ուսանողական հուզումները փոխադրվեցին Անկարա, որտեղ ձերբակալվեցին հարյուրավոր ուսանողներ: Ստամբուլում և Անկարայում մտքրեցին արտակարգ դրություն, և այդպիսով Մենդերեսը ինքը իշխանությունը հանձնեց բանակի ձեռքը: Հուզումներն առանձնապես ուժեղացան Ստամբուլում ՆԱՏՕ-ի նիստերի օրերին՝ 1960 թվականի մայիսի 1—3-ը:

Նման իրավիճակում պետական հեղաշրջումը, որ մայիսի 17-ի գիշերը կատարեց բարձրաստիճան սպաների գաղտնի կոմիտեն, որը հետագայում ստացավ Աղզալին միասնության կոմիտե (ԱՄԿ) անունը, անցավ բացառիկ կազմակերպված ու գրեթե անարյուն: Չորս ժամում ձեռքարկվեցին կառավարության անդամները՝ պրեզիդենտի հետ միասին: Կալ զինված հետակային միավորումները գրավեցին զլխավոր քաղաքները ամբողջ երկրում: Գեմոկրատական կուսակցությունից իշխանությունն անցավ 37 հոգուց բաղկացած Աղզալին միասնության կոմիտեի ձեռքը:

Մենդերեսի իշխանությունը Թուրքիայում շարունակվեց տասր տարի: Նրան տապալողների իշխանությունը՝ հինգ տարուց մի քիչ ավելի: Այն փաստը, որ այդ տարիներին ես գտնվում էի երկրում և հնարավորություն ունեի մտախիղից դիտելու իրադարձությունների դարգացումը, ինձ իրավունք է տալիս դրանք բնութագրելու որպես շիրականացված հույսերի տարիներ:

Ինչպես զինվորականների անմիջական իշխանության առաջին ժամանակաշրջանը, այնպես էլ բանակի օրհնությունը կուլիցիոն տարբեր կոմրինացիաներով ժողովրդահանրապետական կուսակցություն կառավարման հետագա տարիները ոչինչ չբերեցին ժողովրդին: Գեռ ավելին, այդ տարիներին չբացավ այն խանդավառությունը, որ առաջացրել էր պետական հեղաշրջումը, որի կազմակերպիչները աշխատում էին այն ներկայացնել իբրև մի հեղափոխություն, որ կատարել են դեպի Աթաթյուրքի պատգամները վճռական շրջադարձ կատարելու համար: Գների հետագա աճը և ինֆլյացիայի տենդենցը հարվածեցին թուրքի գրպանին: Չկատարվեց էկոնոմիկայի վարգացման տխրահույս հրահրված պլանը: Բայց, ամենագլխավորը, թերևս, այն էր, որ Ինենյուի կուսակցությունը չթեթևացրեց գյուղացու գրությունը, որն այդ երկրում կազմում է ազգի կորիզը: Ագրարային ռեֆորմի մասին խոսքերը դուրս եկան դատարկ շաղակրատություն: Սակայն, հետաքրքրական է նշել, որ 1965 թվականի ընտրություններից մի քանի ամիս առաջ, երբ Ինենյուի կուսակցությունը նորից հայտնվեց օպոզիցիայում, նա որոշ շրջադարձ կատարեց զեպի ձախ, իրեն հայտարարելով «կենտրոնից ձախ» կուսակցություն և առաջ քաշեց հասարակական ռեֆորմների ծրագիր: Սակայն, այդ կուսակցության կառավարման տարիները ժողովրդին սովորեցրել էին անվստահորեն վերաբերվել զեպի նա, առավել

և, որ ազդարային ռեֆորմի հարցը՝ առավել հրատապ այդ սրբորենը, այդպես էլ մնաց թղթի վրա: Այդ պատճառով էլ ժողովրդահանրապետական կուսակցությունը 1965 թվականի հոկտեմբերին պարտություն կրեց մեջլիսի և սենատի ընտրություններում, իսկ դեմոկրատական կուսակցության ժառանգորդը՝ արդարության կուսակցությունը, որի գլուխ կանգնած էր գրեթե բոլորին անժանոթ քառասունամյա Սուլեյման Գեմիրեյը, ստացավ երկու անգամ ավելի շատ ձայներ, քան ութսուներկու տարեկան Իսմեթ Ինենյուի կուսակցությունը, շնչած վերջինս դեռ կենդանության օրով պատված էր ազգային փառքի լուսապսակով:

Այսպես, պետական հեղաշրջումից հինգ և կես տարի հետո և շոք տարի անց այն բանից, երբ Մենդերեսին ու նրա երկու մինիստրներին կախաղան բարձրացրին հիմնական իրավական նորմերը խախտելու, տեղորի, կաշառակերության համար, նորից հաղթանակեցին մահապատժի ենթարկված պարագլխի գաղափարները: Նորից հաղթանակեց «դեմիր քըր աթը»՝ «երկաթե սպիտակ ձիւն», որն արդարության կուսակցությունը նույնպես իր համար ընտրեց իրրև խորհրդանշան, իսկ Անատոլիայի լայն զանգվածների աչքում դա այդպես էլ մնաց որպես ցրված դեմոկրատական կուսակցության խորհրդանշան: Մենդերեսի մահապատժը նրան տվեց միայն նահատակի լուսապսակ: Ժողովրդի մեջ պատմում էին, որ իբր մահապատժի ենթարկված պրեմիեր մինիստրը ուղ է և, պարփակվելով առասպելական սպիտակ ձիու մեջ, շրջում է ամբողջ Անատոլիայում: Այդ տարիներին Մենդերեսի ժողովրդականությունը ոչ միայն չընկավ, այլ, բնդհակառակը, աճեց: Անդրազետ թուրք գյուղացիների հիշողության մեջ նա մնացել է ոչ թե իրրև բռնակալ, այլ որպես բարերար, որն իրենց աղատել էր հարկերից և թույլատրել, ի տարբերություն Աթաթուրքի, աղոթքներն արտաւանել արաբերեն, և որն ամերիկյան փողերով գյուղերում կառուցում էր ջրհորներ ու ճանապարհներ, իսկ դա աշխատանք էր տալիս աղքատներին:

Այժմ «երկաթե սպիտակ ձիուն» է նստել արդարության կուսակցության լիզերը և զրա վրա նստած՝ արագ հասավ նպատակին: Մենդերեսյան խորհրդանշանի ժառանգորդության մեջ նրան օգնեց նույնիսկ ազգանունը՝ «դեմիր էլ» (թուրքերեն «երկաթե ձեռք»), բայց էլ ավելի շատ՝ նրա հրատարակած ծրա-

գիրը, որը լիակատար ազատություն էր տալիս մասնավոր նախաձեռնությունն ու օտարերկրյա կապիտալին, աշխատանք էր խոստանում գրեթե հինգ միլիոն գործազուրկների (հուլյանից «աղքատությունից զեպի բարեկեցություն» լողունգը) և կոչ էր անում պահպանել կրոնական անվանդույթները: Ընտրողների բացարձակ մեծամասնությունը (9 748 678-ից 4 921 235-ը) ընտրեց «սպիտակ ձին»՝ բառիս իսկական իմաստով, քվեաթերթիկների վրա կուսակցությունների անուններից հետո, որոնց մասին ընտրողների վախճան տրեքսը կյանքում ոչ մի անգամ չէին էլ լսել, նկարված էին խորհրդանշաններ (օրինակ, վեց նիտեր ժողովրդահանրապետական կուսակցության քվեաթերթիկների վրա): Ավաղ, դառը ճշմարտությունն այն է, որ ամենաաղքատ գյուղացիներն ու փոքրիկ բնակավայրերի բնակիչները քվեարկեցին այն կուսակցության օգտին, որը մյուսներից ավելի շատ էր պաշտպանում կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի շահերը:

Ուղղակի ասենք, իսկական բոլորին հայտնի դադարիք էր, թե որ ձիու վրա էին հույսները դրել այս ընտրություններում Միացյալ Նահանգները: Հիշում եմ, թե ինչպես ամբողջ առաջադիմական մամուլում հրապարակվեցին հողավածներ մասնագիտությամբ ինժեներ Սուլեյման Դեմիրելի կարիերայի մանրամասն նկարագրությամբ, որը, կրթություն ստանալով ԱՄՆ-ում, մեծ կարողություն գիպեց որպես ամերիկյան «Մորրիսոն» ֆիրմայի ներկայացուցիչ: Սուլեյման Մորրիսոնին, ինչպես ամենուրեք անվանում էին նրան, փորձում էին ներկայացնել որպես Քուրբիայում ամերիկյան շահերի ցուցորդ: Մամուլում երևացին նույնիսկ այն ժամանակվա փոխպրեզիդենտ Ջոնսոնի լուսանկարները, որը սեղմում է Դեմիրելի ձեռքը՝ Քուրբիա կատարած իր այցի ժամանակ: Դեռ երբեք Միացյալ Նահանգները այդքան անսքող կերպով չէին արտահայտել իրենց շահագրգռվածությունը ընտրությունների արդյունքների նկատմամբ և երբեք այդքան բացահայտորեն չէին հայտնել իրենց համակրանքը մի կողմի նկատմամբ: Իտալական «Մոնդո նուովե» ժուռնալի կարծիքով, որի հողվածք արտատպվեց նաև թուրքական մամուլում, «ընտրությունները Քուրբիայում Ջոնսոնի հատուկ ուշադրության առարկան են»: Այդ ընտրությունների արդյունքները ամենուրեք գնահատեցին որպես Սպիտակ տան մեծ հաղթանակը: Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ Դեմիրելին, ապա նրա մասին գրում էին

իրբև մի գործչի, որի վրա կարելի է հենվել և որը պետական նազը կտանի Վաշինգտոնի շահերին համապատասխանող ուղղությամբ:

Ավելորդ չի լինի հիշեցնել, որ արդարության կուսակցության հաղթանակի գործում ոչ պակաս կարևոր դեր կատարեց նաև փողը: «Աքիս» ժուռնալի վկայությամբ (ժուռնալը այդ ժամանակ խմբագրում էր Ինենյուի փեսա Մեթին Թոքերը), արդարության կուսակցության հատուկ ընտրական ֆոնդի օգտին ստացվել էր հինգ միլիոն թուրքական լիրայի մի պատկառելի գումար... Ուրիշ աղբյուրների համաձայն, «արդարների» ընտրական ֆոնդի բաշխման գործում միջնորդ էին... օտարերկրյա, գլխավորապես ամերիկյան նավթային ընկերությունների բենզինակայանները, որոնք ընտրությունների նախօրյակին վախեցել էին շահույթները սահմանափակելու համար ծավալված շարժումից: Այդ պատճառով չէ՞ր արդյոք, որ ընտրությունների նախօրյակին Անկարայի տաքսիների վարորդները մեքենաների անտենաներից կախել էին սպիտակ ձիով հուշագրոշներ... Իսկ ինչպես էին գործերը գյուղերում, հատկապես արևելյան վիլայեթներում, որտեղ աղաների տիրապետության տակ կա մինչև քառասուն գյուղ և որտեղ գյուղացիները լիակատար կախման մեջ են աղաներից (զննմաները կատարում են միայն նրա խանութից և իրենց վճեհերը լուծում նույն այդ աղայի փաստաբանի միջոցով): Նույն «Աքիսը» հաղորդում էր, թե ինչպես, գալով այդպիսի գյուղերից մեկը, «արդարը» «խալամի իր եղբայրներին» դիմեց այսպիսի մի ճառով: «Ձեզ սպառնում է կոմունիզմը, ձեզից կխլեն ձեր դաշտերն ու տները և ձեր տեղը կնստեցնեն ուս սպաներին: Եթե ուզում եք փրկել ձեզ և հայրենիքը, քվեարկեցեք արդարության կուսակցության օգտին»: Նման փաստարկները հասնում էին մինչև գյուղացու գիտակցությանը, որին վաղուց արդեն թունավորել են ատելությունը դեպի սոցիալիզմն ու Սովետական Միությունը: Եվ եթե նա հույս չէր դնում «սպիտակ ձիու» և կամ ավելի աջ աղգայնական շարժման կուսակցության վրա, ապա առհասարակ չէր քվեարկում: Այդ ընտրությունների նկատմամբ հետաքրքրության բացակայությունը արտահայտվեց դրանց մասնակցածների բավական ցածր տոկոսի մեջ՝ 71 տոկոս, 1961 թվականի ընտրությունների 81 տոկոսի համեմատությամբ:

Առանց որևէ կասկածի, արդարության կուսակցության հաղթանակը նշանակում էր շրջադարձ Թուրքիայի քաղաքական

կյանքում: Գեմիրեի կառավարման շրջանը ցույց տվեց, թե որ-
քան էին սխալվում նրանք, ովքեր պնդում էին, թե իբր երկ-
րորդ «երկաթե սպիտակ ձիու» կառավարումը կլինի առաջինի
գործունեության հասարակ կրկնությունը: Կային նույնիսկ մար-
դիկ, այդ թվում և նրա կուսակցության անդամներ, որոնք են-
թադրում էին, թե Մենդերեսի քաղաքական հետևորդները, որոնք
իշխանության գլուխ էին անցել ավելի քան հինգ տարի հետո,
երկիրը նորից կվերադարձնեն այն դրությունը, որում գտնվում
էր 1960 թվականին, ջնջելով անցած տարիներին արված ամեն
ինչը: Իրադրության նման ըմբռնումը ոչ միայն հասարակացում
էր, այլև քաղաքական ուտոպիա: Նման դեպքերում ինչպես չհի-
շենք Հերակլիտեսի այն իմաստուն խոսքերը, որ «Ձի կարելի
երկու անգամ անցնել միևնույն գետը...»:

1960 և 1965 թվականների միջև ընկած հինգ տարին մի կող-
մից իրոք շիրականացված հույսերի տարիներ էին, բայց մյուս
կողմից էլ այդ շրջանը բնութագրվում է մենդերեսյան ռեժիմի
ինքնիշխանության ու կաշառակերության դատապարտմամբ,
առաջադիմական հասարակական շարժումների ձևավորմամբ,
Թուրքիային ԱՄՆ-ի հետ կապող կապերի ակնհայտ թուլացմամբ:
Գեմիրեի ընկած ղգաստ քաղաքագետ էր և հիանալի կերպով
այդ բանը հաշվի էր առել: Իր քաղաքական ծրագիրը կենսագոր-
ծելիս նա նախօրոք ապահովել էր կրոնական տարրերի ու Մեն-
դերեսի կողմնակիցների աջակցությունը: Իշխանության գլուխ
անցնելուց հետո շատ շանցած նա լրիվ ներում շնորհեց դատա-
պարտված մենդերեսականներին՝ նրանց վերադարձնելով քա-
ղաքական իրավունքները (բացի ընտրական իրավունքից): Բայց
միաժամանակ նա անում էր հնարավոր ամեն բան, որպեսզի
իր անունը չկապվի Մենդերեսի անվան հետ:

Ընդամեն խոսքը ոչ միայն տակտիկայի մասին էր: Ինչպես
ցույց տվեց նրա կառավարման պրակտիկան, Գեմիրեի լամենելին
մտադիր չէր լինել Մենդերեսի մի նոր մարմնավորումը: Այդ բանը
պարզ դարձավ ընտրություններից անմիջապես հետո, երբ նա
մեղմորեն, բայց վճռականորեն սահմանադատվեց իրենց վարկա-
րեկած ու դատապարտված մենդերեսական գործիչներից: Միաժա-
մանակ նա իր կուսակցության մեջ ընդունեց իրեն նվիրված շատ
մարդկանց, շնայած կուսակցական ստորին օղակներում հեն-
վում էր դեմոկրատական կուսակցության հին ապարատի վրա:
Շատ շուտով կենտրոնական և վիլայեթային վարչություններում

ղեկավար դիրքերը գրավեցին նրա մարդիկ, որոնց օգնությամբ նա «երկաթե ձեռքով» իրականացնում էր իր քաղաքականությունը: Պարզվեց, որ պատկերացումը նրա մասին՝ որպես ամերիկյան շահերի պաշտպանի, խոր մոլորություն էր: Ամերիկացի պրոֆեսոր Շերին Գեմիրելի հետ ունեցած երկժամյա զրույցից հետո հայտարարեց. «Նա համոզվեցի, որ Գեմիրելը այս երկու տարում զգալիորեն ձայնացել է: Այդ բանը, սակայն, ինձ չզարմացրեց: Նման բաներ տեղի են ունենում բոլոր հետամնաց երկրներում: Բոլոր նրանք, ովքեր իշխանություն զուլխ են անցնում, անկախ իրենց հայացքներից, այս կամ այն կերպ շուտ են դալխս դեպի/ձախ: Դրանում մեղավոր են հանդամանքներն ու բաղմաթիվ պրոբլեմները»:

Փաստ է, որ Գեմիրելը հույսը դրել էր երկրի ինդուստրացման վրա, հենվելով ամենից առաջ մասնավոր կապիտալի, այլ ոչ թե պետական սեկտորի վրա: Հանդիս գալով ագրարային ռեֆորմի դեմ, նա արտահայտվեց գյուղատնտեսությունը վերակառուցելու, այսինքն՝ հողի մշակման ժամանակակից կապիտալիստական մեթոդներ մտցնելու օգտին (նկատենք, որ այդ բանը հնարավոր է միայն խոշոր տնտեսություններում):

Եվ վերջ է վերջո. նա որոշ արդյունքների հասավ էկոնոմիկայի բնագավառում: Դրան նպաստեցին և լավ բերքերը, օտարերկրյա կապիտալների նշանակալի առհոսքը, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում աշխատող թուրք բանվորներից եւ մասնազեմտներից ստացվող վալյուտային միջոցները: Գեմիրելի օրոք արդյունաբերության զարգացման տեմպերը նշանակալից էին և հիմնականում համապատասխանում էին հնգամյա պլանին: Մեծացավ աղքատի եկամուտը (տարեկան աճը անցնում էր միջին հաշվով վեց տոկոսից, իսկ պլանով նախատեսված էր չոթ տոկոս): Գեմիրելը կարողացավ այդ նվաճումները շատ ճարպկորեն օգտագործել պրոպագանդիստական նպատակներով. մեծ աղմուկով նա բաց էր անում արդյունաբերական օբյեկտները, որոնք պլանավորված կամ նույնիսկ մասամբ կառուցված էին նախկին ռեժիմի ժամանակ: Սակայն նրա նվաճումները ջկարողացան թուրքական էկոնոմիկան բուժել խրոնիկական արատներից, և առաջին հերթին ինֆլյացիայի տենդենցներից: Բավական է ասել, որ 1967 թվականի առաջին չոթ ամիսներում ապրուստի արժողության ինդեքսը աճեց տասներկու և վեց տոկոս-

սով: Աղետալի շահերով պակասեցին ոսկու և վալյուտայի պաշարները:

Նոր ընտրությունների նախօրյակին՝ 1969 թվականի հոկտեմբերին, Գեմիթիլը բախվեց ոչ միայն աճած տնտեսական դժվարությունների հետ: Բավական սրվել էր քաղաքական դրուձյունը, տեղի էր ունեցել ուժերի բեռացում, հաճախակի էին դարձել բացահայտ ընդհարումների դեպքերը առաջադիմական տարրերի և սեակցիոն տարրերի՝ կրոնական մոլեռանդների կամ զրնդապետ Քյուրքեշի Ֆաշիստական ջոկատների միջև: Օրինակ, 1969 թվականի հուլիսին սեհարյուրակային տարրերը փորձեցին ձախողել առաջադիմական Ոսուցիչների միության Կայսերիի կոնգրեսը. նրանք վիրավորեցին կոնգրեսի շատ մասնակիցներին, ավերեցին այն գրախանութը, որտեղ վաճառվում էին ձախ հրատարակություններ, ինչպես նաև Քուրքիայի բանվորական կուսակցության տեղական բաժանմունքը: Հակաամերիկյան կուլթիսները հաճախ վերջանում էին փողոցային ընդհարումներով: Իսկ Գեմիթիլը այդ ժամանակ խուսանավելով, կարողացավ որոշ չափով կայունացնել դրուձյունը երկրում: Նա նորանոր զինջումներ արեց ցրված դեմոկրատական կուսակցության նախկին ղեկավարների խմբի օգտին՝ նախկին պրեզիդենտ Բայարի գլխավորությամբ. այսպես, 1969 թվականի մայիսին մեջլիսը որոշում ընդունեց դեմոկրատական կուսակցության անդամների ընտրական իրավունքները վերականգնելու մասին, թեև դա հակասում էր սահմանադրությանը: Նման որոշումը լիովին պաշտպանեց նաև ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության պարագլուխ Ինենյուն, դտնելով, որ ժամանակն է լվերականգնել միասնությունը և վերջ դնել այդ և ձախ էքստրեմիստների բուռն ցույցերին»: Իրրև հաստատում սկսված «ադգային համաձայնություն», թուրքական ամբողջ մամուլում հրապարակվեց երկու զառամյալ ախոյանների՝ Ինենյուի և Բայարի լուսանկարը. նրանք կանգնած են կողք կողքի՝ Չանկայա բլրին, որտեղ գտնվում է հանրապետության պրեզիդենտի նստավայրը:

Գեմիթիլի՝ ոչ մի կասկած չհարուցող ձարակությունը բերեց իր պտուղները: 1969 թվականի հոկտեմբերին, ընտրություններում նրա կուսակցությունն ստացավ ձայների բացարձակ մեծամասնությունը (9 516 095-ից 4 229 712-ը): Դատելով մամուլի մեկնաբանություններից, այդ ընտրություններին մասնակցել է ընտրողների ընդամենը 64 տոկոսը՝ ամենացածր տոկոսը վեր-

չին 20 տարում: Շատ գյուղեր առհասարակ հրաժարվեցին մասնակցել ընտրություններին: Քվեատուփերից մեկում կուսակցության խորհրդանշանը կրող քվեաթերթիկի փոխարեն գտան մի գրություն երեք բառով. «Ճանապարհներ, ջուր, էլեկտրակառուցություն»: Թերթերը գրում էին, որ ընտրական կամպանիայի ժամանակ գյուղերից մեկի մուտքի մոտ կախված էր մի արանսպարանտ հետևյալ բառերով. «Մենք մեզ մոտ շենք թողնում քաղաքագետներին»:

Հեշտ չի լինի պատասխանել այն հարցին, թե նախորդ կառավարությունների գործունեությունը հաջորդած համընդհանուր հուսախաբուության իրադրության մեջ որքան երկարատև կլինի երկրորդ «երկաթի սպիտակ ձիու» հաղթանակը¹:

ՕՐԴՈՒ

«Օրդու» թուրքերեն նշանակում է «բանակ»: Թուրքիայի համար այս հասկացությունը բավական ծանրակշիռ է: Ներկայումս երկրի բանակը ամենից ավելի հզորն է ամբողջ Մերձավոր արևելքում և իր շարքերում ունի ավելի քան կես միլիոն մարդ:

¹ Դեմիրելի հաղթանակը երկարատև չեղավ: Բանակի ճնշման տակ 1971 թվականի մարտի 12-ին նա ստիպված եղավ թողնել իր պոստը: Նոր կառավարությունը գլխավորեց ժողովրդահանրապետական կուսակցության աջ թևի ներկայացուցիչ Նիհատ էրիմը: Նրա կառավարման շրջանը նշվել է նրանով, որ երկրում մտցվեց արտակարգ դրությունը և սուր ռեպրեսիաներ կիրառվեցին առաջադիմական տարրերի նկատմամբ: Բայց վերջինս էլ երկար չմնաց իշխանության ղեկի մոտ: 1972 թվականի մայիսին վստահության կուսակցության նախագահի տեղակալ Ֆերիտ Մելնը կազմեց մի կառավարություն, որը շարունակում էր վարել հակադեմոկրատական քաղաքականություն: 1972 թվականի նոյեմբերին ի նշան բողոքի՝ ընդդեմ 1961 թվականի սահմանադրության փոփոխման պատրաստված նախագծի, կառավարությունից դուրս եկան ժողովրդահանրապետական կուսակցության ներկայացուցիչները: Կառավարությունը, սակայն, մնաց իշխանության զլուխ կանգնած, քանի որ 1973 թվականի մարտին կայանալու էին պրեզիդենտական ընտրություններ: Երբ պրեզիդենտ ընտրվեց, 1973 թվականի մայիսին Ֆերիտ Մելնը հրաժարական տվեց և կազմվեց նոր կարինետ Նայիմ Թալուի գլխավորությամբ կառավարական ճնշմամբ, որը սկսվեց 1973 թվականին պառլամենտական ընտրություններից հետո, շարունակվեց մինչև 1974 թվականի հունվար ամիսը, երբ համաձայնություն ձեռք բերվեց ժողովրդահանրապետական կուսակցության և ազգային փրկության կուսակցության ներկայացուցիչներից երկուսակցական կառավարություն ստեղծելու մասին:

Ավելին, գերմանացի ռազմական մասնագետ Ֆոն Կիլմանսեգգի բնորոշմամբ, թուրքական բանակը, որը բաղկացած է 14 դիվիզիայից, 8 բրիգադից և 4 ուսումնական դիվիզիաներից, ամենահզոր ցամաքային բանակն է ամբողջ Եվրոպայում:

Թուրքական հանրապետությունը վերանայել է իր վերաբերմունքը շատ ինստիտուտների նկատմամբ, բայց բանակի վերաբերյալ այն մնացել է նախկինը: Չէ որ Օսմանյան կայսրությունում ևս հզորություն չափանիշը զորքն էր. նա նվաճում էր նորանոր տերիտորիաներ, գանձարանը համալրում նորանոր ավարներով, բանակի մեջ էր պետությունը գտնում իր ուժը: Ուստի զարմանալի ոչինչ չկա, որ այսօր էլ թուրքերը հարգանքով ու համակրանքով են վերաբերվում դեպի զինվորական համազգեստը, որ միշտ էլ բազմաթիվ անբան մարդիկ են հավաքվում պրեզիդենտի նստավայրի մոտ պահակախմբի փոխվելու ժամանակ, երբ գվարդիական ընտիր զորամասերը տոնական համազգեստով ձեռք-ձեռքի, համաքայլ, մեկ մարդու նման քայլում են հանդիսավոր երթով: Մինչև հիմա էլ ամեն մի քիչ թե շատ պաշտոնական տարեգարձ, շխտակում արդեն զինվորական շքերթների մասին, որպես կանոն, ենիշերիների քայլերգի հնչյունների տակ բացում են սուլթանական զորքերի տոնական համազգեստ հագած զորամասերը:

Ենիշերիներ... Երբ այսօր տեսնում ես նրանց շքերթների ժամանակ մետաքսե խայտաբղետ զգեստներով և սպիտակ չալմաները գլխներին կապած՝ փայտե հասարակ փողային երաժշտական գործիքներով թուրքական հին եղանակներ նվագելիս, նրանք հիշեցնում են օպերետի պերսոնաժների: Իսկ կար մի ժամանակ, երբ ենիշերիները խաղում էին ամենևին ոչ օպերետային դեր. նրանք եղել են Օսմանյան կայսրություն հզորության ամենակատաղի ու ամենաանողոր պաշտպանները: Իր տեսակի մեջ այդ յուրատեսակ զորամիավորումը ակսել է կազմավորվել XIV դարի սկզբներին: Ենիշերիական զորքերը հավաքագրվում էին ոչ թուրք, քրիստոնյա ազգությունների երեխաներից, որոնք սուլթանական արքունիքին կից դաստիարակվում էին իսլամի մոլեռանդ պաշտպանների կողմից: Յուրաքանչյուր երեք տարին մեկ քրիստոնեական նահանգները պարտավոր էին վճարել մի յուրատեսակ հարկ երեխաներով, որոնց թիվը երբեմն հասնում էր մինչև տասնյակ հազարի: Դրանցից ամենաընդունակներին մանկությունից պատրաստում էին սուլթանական արքունիքում ծառայե-

լու համար Կ, մեծանալով, նրանք կարիերա էին ստեղծում, իսկ երբեմն էլ գրավում մեծ վեզիրի պաշտոնը: Մնացածներին ուղարկում էին ենիչերիական զորաբաժին, որտեղ տիրում էր խիստ կարգապահության: Ենիչերիները սերտորեն կապված էին մուսուլմանական «բեկտաշի» ազանդի հետ. նրանք կազմում էին մի յուրատեսակ ասպետական միաբանություն, որը նրանց դատապարտում էր ամուրիության: Ենիչերիները դատախարակվում էին կրոնական մոլեռանդության ոգով, գյավուրների (ս.ն. հավատների) դեմ «սրբազան պատերազմի» կոչերի ոգով: Այդ ճանապարհով միայն Բալկանյան թերակղզու բրիտանյա ազդու-թյունների ներկայացուցիչները կարող էին ընկնել կայսրության պետական և ղինվորական ընտրանիների շարքը: Օսմանյան պետությունը, որը հայտնի էր ճնշված ժողովուրդների նկատմամբ գործադրած բռնություններ ու դաժանություններ, ևս այստեղ իր տրականություն չգիտեր այս բառի ժամանակակից իմաստով: Թուրքերեն կամ օսմաներեն լեզուն և մանկությունից պարտադրվող իսլամի դավանումը՝ ահա սրանք էին բարձր պաշտոններ ստանալու բանալին:

Հենց սկզբից ենիչերիները իրենց մոլեռանդություն, ղինվորական արտոնություն և կարգապահության շնորհիվ, բնականաբար, դարձել էին օսմանյան բանակի վճռական ուժը: Նրանց շնորհիվ օսմանները նվաճել են իրենց ամենամեծ հաղթանակները, զրանց թվում և Կոստանդնուպոլսի նվաճումը: Սակայն XVII և հատկապես XVIII դարում ենիչերիները, որոնց թվաքանակը հասնում էր մինչև հարյուր հազար մարդու, դարձել էին հատուկ կատա. նրանք առատորեն վարձատրվում էին և հաճախ էլ իրենց կամքն էին թելադրում հին սուլթանին տապալելու և գահին նոր սուլթան նստեցնելու ժամանակ: Ավելի ուշ, երբ նրանց թուլլատրվեց ամուսնանալ և զբաղվել արհեստավորություններ, սկսեց թուլանալ ենիչերիական զորաբաժնի կարգապահությունն ու սեզմական ուժը: Սկսվեց կաշառակերությունն ու անտարբերությունը պետական գործերի նկատմամբ: Աստիճանաբար ենիչերիները վերածվեցին ժողովրդական կաստայի, որը պատերազմական գործողությունների ժամանակ համարվում էր հեծելազորով. այս հեծելազորը կազմավորվում էր նահանգներում՝ սուլթանական վասալների կողմից և միշտ չէ, որ լույս էր սուլթանական իշխանության նկատմամբ: Ենիչերիական զորաբաժինը պահելու ծախսերը շարունակ աճում էին, իսկ ռազմական հաջողու-

Յլունները գնալով ավելի աննշան էին դառնում: 1826 թվականին սուլթան Մահմուդ II-ը ցրեց ենիշերիների զորաբաժինը: Նահրամայեց այդ քալին դիմադրողներին սպանել, իսկ նրանց զորանոցները հողին հավասարեցնել:

Այդ ժամանակից սկսած երկրում մտցված է զինակոշիկների հավաքում: Այսպես կոչված թանգիմաթի (1839—1856) ժամանակաշրջանում՝ կայսրութեան բոլոր քաղաքացիները պարտավոր էին անցնել զինվորական ծառայության՝ անկախ դավանանքից, իսկ հետո նրանք յոթ տարի համարվում էին պահեստում: Գործնականում, սակայն, ամեն ինչ այլ կերպ էր: Օսմանյան կայսրության բնակչության մեծամասնությունը XIX դարի կեսերից կաղմում էին մուսուլմանները, առաջին հերթին արաբները, բայց մեկ երրորդն էր միայն խոսում թուրքերեն: Ինչը կարող էր փոխարինել սրբազան պատերազմի ավանդական կոշիկ: Ինչպես կարելի էր բազմազգ կայսրության տարբեր խմբերը հավաքել միասնական բանակի մեջ: «Հայրենիք» հասկացությունը իր ազգային իմաստով գոյություն չունի, և ամենամեծ բանը, որի վրա կարելի էր հույս դնել, լույս է վերաբերմունքն էր դեպի պետությունը: Ստեղծվել էր այնպիսի մի պրակտիկա, որ ոչ մուսուլմանները մեծարում էին հատուկ հարկ զինվորական ծառայությունից ազատվելու համար:

XVIII դարի վերջից սկսեցին ստեղծվել հատուկ սպայական զորոցներ, որոնցում ամբողջ կայսրությունից եկող երիտասարդ մուսուլմանները ստանում էին ընդհանուր և մասնադիտական կրթություն: Այդ զորոցները, որոնք բարձրաստիճան սպաներ էին պատրաստում, կարճ ժամանակում դարձան քաղաքական նոր հոսանքների օջախներ:

Առաջին գաղտնի ընկերությունը, որը նպատակ էր դրել պայքարել սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնակալության դեմ, ստեղծվել էր 1889 թվականին զինվորական-բժշկական ուսումնարանի մի խումբ կուրսանտների կողմից: Ճիշտ է, սուլթանական գաղտնի ոստիկանությունը ջախջախեց այդ ընկերությունը, իսկ երիտասարդ կադետներին, որոնց զլխից չհասցողից հանել նվիրվածությունը առաջադիմական գաղափարներին, աքսորեց

1 թ ա ն զ ի մ ա թ — վերափոխումներ, ակֆորմներ:

լիբիական անապատները: Նրանցից շատերը վտարանդիության մեջ միացան «նոր օսմաններին» շարժմանը: Դարագլխին երիտասարդ սպաների դժգոհությունը զինվորական դպրոցներում նորից ուժեղացավ: Նրանք պարզորոշ կերպով տեսնում էին կայսրության աղքատությունը և նրա բանակի անկատարելությունը: 1906 թվականին մի խումբ սպաներ ու քաղաքացիական անձինք Սալոնիկում և Դամասկոսում ստեղծեցին գաղտնի ընկերություններ, որոնք միացան երիտասարդ թուրքերի շարժմանը եվրոպայում և հիմնեցին միություն և առաջադիմություն ընկերությունը: Երիտասարդ թուրքերը սուլթան Աբդուլ Համիդին ստիպեցին հայտարարել 1876 թվականի սահմանադրությունը վերականգնելու և մեջլիս հրավիրելու մասին, որի մեծամասնությունը պետք է կազմեն իրենք: 1908 թվականի քաղաքական հեղաշրջումը Թուրքիայում երկրի պատմության մեջ առաջին հեղաշրջումն էր, որում մեծ դեր կատարեցին զինվորականները: Ծիշտ է, նրանց կառավարման սկզբից տասը տարի հետո պարզ դարձավ, որ երիտասարդ թուրքերը ամենևին չարդարացրին այն հույսերը, որ նրանց վրա դրել էր ժողովուրդը... Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երիտասարդ թուրքերը Թուրքիա հրավիրեցին գերմանական զինվորական միսիա՝ գնեկրալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ թուրքական բանակը վերակազմելու համար: Այստեղ ավելորդ չի լինի հիշել, որ իր ժամանակին սուլթանները ևս դիմում էին գերմանացիներին, երբ անհրաժեշտ էր լինում արդիականացնել բանակը: Դեռևս Մահմուդ II-ը, որը ցրեց ենիչերիական զորաբաժինը, Թուրքիա էր հրավիրել Հելմութ ֆոն Մուլտեխին՝ պրուսական գլխավոր շտաբի ապագա ղեկավարին: XIX դարի վերջին գերմանացի գնեկրալ ֆոն դեր Շուլցը ծառայում էր որպես թուրքական զինվորական դպրոցների գլխավոր տեսուչ: Դրա մասին հարկավոր է հիշել նաև այն պատճառով, որ դրանցից ծնունդ առան պրոգերմանական տրամադրությունները թուրքական հասարակության մեջ, և առաջին հերթին ավագ սերնդի սպաների շրջանում, որոնք, բացի դրանից, նաև սովորել էին գերմանացիներին մոտ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ երիտասարդ թուրքերի կառավարությունը հանդես եկավ Գերմանիայի կողմում, գերմանական զինվորական միսիան Թուրքիայում էլ ավելի բազմամարդ դարձավ: Լիման ֆոն Սանդերսը

այն ժամանակ ղեկավար դիրք էր գրավում թուրքական բանակում: Երկու ամբողջ բանակ և մի շարք ավելի փոքր զորամիավորումներ հանձնվել էին գերմանացի զենեարաների անբաժան հրամանատարությունը, որոնց կողքին թուրքերը կատարում էին շտաբների պետերի ֆունկցիաներ: 1918 թվականի ղինադադարի ժամանակամիջոցին Թուրքիայում գերմանական ղինվորական միսիայի կազմում կար 646 սպա և 6686 շարքային անդամ:

Երիտասարդ թուրքերի կառավարման տասնամյա շրջանը (1908—1918) XX դարում կազբային ղինվորականներին քաղաքականության մեջ ներգրավելու առաջին օրինակն էր: Բայց հետաքրքրական է, որ, ի տարբերություն ենիչերիների, որոնք կանգնած էին ամենապահպանողական արտոնությունները պաշտպանելու դիրքերում, երիտասարդ թուրքերը արդիականացման ու առաջադիմության ջատագովներ էին: Նման երկրորդ օրինակը եղավ ազգային հեղափոխությունը Քեմալ Աթաթյուրքի գլխավորությամբ: Եվ վերջապես, երրորդ օրինակը՝ 1960 թվականի մայիսի 27-ի հեղաշրջումը:

Այդ հեղաշրջման բնույթը ճիշտ հասկանալու համար հարկավոր է պատկերացնել սպայական կորպուսի առանձնահատուկ, պատմականորեն պայմանավորված դերը Թուրքիայում: Իր կազմով նա ժողովրդական է և ավելի պակաս շահով ընտրված՝ Մերձավոր արևելքի մյուս երկրների համեմատությամբ, շխտսելով արդեն կատինական Ամերիկայի մասին: Թուրք սպաները լայն մասնակցություն են ունեցել 1918—1923 թվականների ազատագրական պատերազմին, ձեռք բերելով այնպիսի փորձ, որ շունի մերձավորարևելյան և ոչ մի բանակ: Մուստաֆա Քեմալը, բանակը համարելով գլխավոր հենարանը ռեֆորմների իրականացման գործում, սպայական դպրոցներն էր զորակոչում շունևոր երիտասարդներին, գլխավորապես գյուղացիների զավակներին, նրանց ապահովելով բնակարանով, սննդով ու դրամական նպաստով: Եվ ներկայումս, ի տարբերություն Մերձավոր արևելքի մյուս երկրների, սպաները Թուրքիայում ծագում են ժողովրդից, գլխավորապես միջին խավերից. նրանք մանկական հասակում ճաշակել են աղքատությունը և բանակում էլ կարողություն չեն դիզել: Նրանք նույնիսկ թուրքական մասշտաբներով բարձր ուժեղ չեն ստանում: Դա առաջին հերթին վերաբերում է

հետևակալին զորքերին, որոնք կազմում են թուրքական բանակի կորիզը: Ռազմատաղային և ռազմածովային ուժերի սպաներն ունեն ավելի բարձր դրույքներ, քանի որ նրանցից սլահանջվում է ավելի բարձր տրակավորում. հենց նրանք էլ հաճախ պատկանում են ունևոր ընտանիքներին և այնքան էլ սերտ կապված չեն ժողովրդի հետ:

Բանակի ծառայությունը և սպայի կոչում ձեռք բերելը թուրքիայում գրեթե միակ հնարավորությունն է հասարակական կյանքում հաջողության հասնելու համար և, բացի դրանից, դա ընդհանուր կրթություն ստանալու և ժամանակակից քաղաքակրթությանը հաղորդակից լինելու ուղին է: Անատոլիացի գյուղացու մինչև այսօր էլ հողը արորով վարող զավակների համար բանակ զորակոչվելը նշանակում է առաջին շփումը արտաքին աշխարհի հետ: Ինձ պատմել են, որ հաճախ նորակոչիկը չի կարող անգամ ասել իր սեփական ազգանունը. նրան հայտնի է միայն, որ ինքը Ահմեդ է՝ Մեմեդի որդին, և զորակոչային տեղամասում է միայն առաջին անգամ իմանում իր ազգանունը: Զինվորական ծառայության ժամկետը թուրքիայում այժմ մեկ և կես տարի է, բայց այդ կարճատև ժամկետն անգամ մեծ հնարավորություններ է տալիս նորակոչիկներին, որոնցից մոտ կեսը սովորաբար անգրագետ է լինում, իրենց ընդհանուր ֆակտդակը բարձրացնելու համար: Բանակը թուրքիայում մի իսկական դպրոց է ժողովրդի համար: Անգրագետ զինվորներին սկզբում ուղարկում են հատուկ ուսումնական կենտրոններ, որտեղ երկու ամիս շարունակ նրանց սովորեցնում են գրել ու կարդալ: Այնուհետև նրանց ուղարկում են ուսումնական դիվիզիա, որտեղ նրանք ռազմագիտական առարկաների հետ հավասար ստանում են տարրական հանրակրթական գիտելիքներ ու գործնական հմտություններ (նրանց սովորեցնում են շինարարական գործ, ոտոզման աշխատանքներ և այլն), ինչպես նաև տեխնիկական գիտելիքներ: Եթե Մահմուդ II-ի ռեֆորմները հնարավորություն ստեղծեցին, որ սպայական կորպուսը հաղորդակից դառնա արևմտյան գիտությունը, ապա ընդհանուր ուսուցման ներկայիս ծրագիրը շարքային զինվորներին հնարավորություն է տալիս ժանտիանալու ժամանակակից, ավելի ճիշտ՝ ամենաժամանակակից տեխնիկային, քանի որ ամերիկացիները միջոցներ չէին խնայում մերձավորակենդան ամենազոր բանակը տեխնիկապես հագեցնելու համար: Թուրքիայի ավելի քան կես միլիոնա-

նոց բանակը, ըստ էության, միակ մասսայական կազմակերպու-
թյունն է երկրում, իսկ սպաների թվաքանակը, ինչպես և սպա-
յական դպրոցների քանակը, հարաբերական է նրա ընդհանուր
թվաքանակին: Թուրքիան ՆԱՏՕ-ի մեջ մտնելուց հետո շատ
սպաներ լրացուցիչ ուսուցում են անցնում արտասահմանում,
գլխավորապես ԱՄՆ-ում, իսկ սպաների ինչ-որ մի մասն էլ
այնտեղ է մեկնում զինվորական հատուկ միսիաների կազմում:
Թուրք սպաների՝ Միացյալ Նահանգներում գտնվելու «կողմնա-
կի արդյունքը», որ ամերիկացիները անշուշտ չէին կարող կան-
խատեսել, հակամերիկյան և ռազիկալ տրամադրությունների
աճն էր երիտասարդ սպաների շրջանում. նրանք անձամբ հա-
մոզվեցին, թե ինչ անդունդ է ընկած իրենց և ՆԱՏՕ-ի մյուս
երկրների սպաների միջև. բայց ամենից առաջ նրանք որոշա-
կիորեն զգացին բարձր զարգացած կապիտալիստական երկր-
ների և իրենց երկրի կենսամակարդակի միջև եղած տարբերու-
թյունը և հասկացան, որ Թուրքիային, ըստ էության, հատկաց-
ված է ամերիկացի հարուստ քեռու կիսագաղութի դերը: Այս
երևույթի պարագոքան այն է, որ հենց Թուրքիայի մասնակցու-
թյունը ՆԱՏՕ-ին բազմաթիվ թուրք սպաների համար մեկնակետ
եղավ այդ դաշինքի մեջ Թուրքիայի անիրավահավասար դրու-
թյան մասին խորհելու համար:

Նրանք հասկացան նաև, որ այնպիսի մի պետություն համար,
ինչպիսին Թուրքիան է, տնտեսական որոշ առաջադիմությունը,
ինչպես նաև նվազագույն ինքնուրույնությունն և վաճումը անհնար
են առանց պլանավորման ու պետություն միջամտություն, թե-
կուզ այն չափերով, ինչպես այդ արվում է Եգիպտոսում կամ
Հնդկաստանում, առավել ևս, որ մի ժամանակ այդ էր սովորեց-
նում Աթաթյուրքը: Իսկ Մենդերեսը շեղվեց Քեմալի նշած ուղուց:
Թուրքերի ազգային հպարտությունը, իսկ այդ դիժը նրանց մեջ
զարգացած է, չէր կարող չվիրավորել նաև այն փաստը, որ ամե-
րիկացի զինվորականները Թուրքիայում իրենց պահում են ինչ-
պես իրենց կալվածքում և թուրքական դատարանների առջև
պատասխան չեն տալիս իրենց հանցագործությունների համար,
իսկ բարձրաստիճան թուրք սպաները իրավունք չունեն մտնելու
ամերիկյան բազաների տերիտորիան իրենց սեփական երկրում:

Այս ամենը միասին վերցրած զգաստամիտ թուրք սպա-
ներին դրդեց գործունեության՝ հանուն քեմալական ոգու ծնունդ-
հանդիսացող «սոցիալական արդարություն»: Այսպես, թուր-

քական բանակում ծագեց մի գաղտնի շարժում, որը, միանալով ուսանողական շարժման հետ, իր պտուղները տվեց 1960 թվականի մայիսին:

Իհարկե, սպաների շրջանում ծավալված շարժումը սաղմնավորման պահից ամենևին միատարր չի եղել: Երեսուցյոթ հոգուց բաղկացած խոնտայի (Ազգային միասնության կոմիտեի) կազմում, որը տապալեց Մենդեբսի ռեժիմը, սվեյի ռադիկալ հայացքներ ունեցող կրտսեր սպաների հետ միասին կային նաև բարձրաստիճան սպաներ՝ ընդհուպ մինչև գններալ (Ազգային միասնության կոմիտեի նախագահն էր գններալ Գյուրսելը՝ հանրապետության ապագա պրեզիդենտը): Այդ շարժման մեջ զբաղավոր դերը կատարեցին հենց բարձրաստիճան սպաները, որոնք պահպանողական մարդիկ էին և հակված չէին ռեֆորմների ու արտաքին քաղաքականության որևէ արմատական փոփոխության: Իր առաջին իսկ հայտարարություններից մեկում Ազգային միասնության կոմիտեն այդ պատճառով էլ հռչակեց իր հավատարմությունը այն պարտավորություններին, որ Թուրքիան վերցրել է իր վրա ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի նկատմամբ: Խոնտայի ներսում հայացքների տարբերությունները իրենց զգացնել տվեցին իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո: Մեկնաբանելով հեղաշրջումից հետո Թուրքիայում տիրող դրությունը, հայտնի թուրք հրապարակախոս Նադիր Նադին բերում էր խոնտայի անդամ բարձրաստիճան սպաներից մեկի խոսքերն այն մասին, որ եթե զինվորականները գիտեին հաստատ, թե ինչ են անելու մայիսի 27-ին, ապա, դժբախտաբար, շփոտեին, թե ի՞նչ են անելու հաջորդ օրը:

Կոմիտեի առաջին միջոցառումը եղավ մեջլիսի ցրումը, ղեմկրատական կուսակցության հայտարարումը օրենքից դուրս և նրա ղեկավարների ձերբակալումը, փնչպես նաև հանդիսավոր խոստումը՝ վերականգնել սահմանադրական ազատությունները, անցկացնել նոր ընտրություններ և երկրի կառավարումը հանձնել քաղաքացիական անձանց ձեռքը: Նոր իշխանությունը առաջին իսկ օրերից իր ուշադրությունը վնաստրոնացրեց զլխավորապես նախորդ կառավարող խմբի դեմ մղվող նպայքարի վրա և ոչ մի իրական քայլ ձեռնարկեց երկրի տնտեսական ծանր դրությունը բարելավելու համար, բացի, կարծեմ, այն բանից, որ Ազգային միասնության կոմիտեի սպաները իրենց ոսկե մատանիները հանձնեցին պետական գանձարանին... Ես անձամբ ճանաչում էի հե-

տագայում սենատոր դարձած մի քանի սպաների, որոնք իբրև սպացույց մայիսի 27-ի գաղափարների նկատմամբ իրենց ունեցած հավատարմության, ինձ ցույց էին տալիս թիթեղյա մատանիներ ձեռքներին:

Սեյֆերում պահվող հաշիվների նկատմամբ վերահսկողութ-
յան լայնորեն ռեկլամված գործողությունը մոռացվեց ճիշտ
այնպես, ինչպես մոռացվեցին պարտավորությունները՝ անել,
այսպես վողված, «հայտարարություններ գույքի մասին», որոնք
միևնույն է էական տնտեսական նշանակություն չէին ունենա:
Սակայն, բուրժուազիայի մի զգալի մասի շրջանում դա կասկածա-
մտություն մթնոլորտ էր ստեղծել նոր իշխանության նկատ-
մամբ, որն, իր հերթին, իր հետ բերեց տնտեսական ակտիվու-
թյան անկում և մասնավոր կապիտալ ներդրումների սառեցում:
Իսկ իր ժամանակ Մենդելևի կատարած թեկուզև քառասյին ու
անպլանային կապիտալ ներդրումների դադարեցումը հանգեց-
րեց գործազրկության աճի և տնտեսական դժվարությունների
հետագա խորացման: Դրա հետ մեկտեղ հասարակության այն
խավերը, որոնք սկզբիցևեթ որոշել էին իրենց անբարյացակամ
վերաբերմունքը դեպի նոր կառավարչաձևը, այն համարելով
«քաղաքի» հատուցումը «գյուղին» (իսկ գյուղացիները կազմում
են թուրքիայի բնակչության երեք քառորդը), վախենալով քե-
մալական լաիցիզմին վերադառնալուց, հողի նկատմամբ հնա-
րավոր հարկեր մտցնելուց և գյուղատնտեսական արտադրանքի
գների իջեցումից, սկսեցին պակասեցնել հացահատիկի վաճառքը
պետությունը: Դրան հաջորդած հացահատիկի ներմուծումը ար-
տասահմանից, առաջին հերթին ԱՄՆ-ից, էլ ավելի ծանրաբեռնեց
Թուրքիայի առանց այն էլ բացասական արտաքին առևտրական
հաշվեկշիռը և նրան էլ ավելի մեծ կախման մեջ դրեց Արևմուտ-
քի տնտեսական օգնությունից:

Տնտեսական դժվարություններն էլ ավելի խորացրին անհա-
մաձայնությունը Ազգային միասնության կոմիտեի անդամների
շրջանում: «Ուժեղ ձեռքի» կառավարման կողմնակից տասնչորս
երիտասարդ սպաներ (նրանց են վերագրում Մենդելևի օրով
ծառայած մի քանի հազար սպաների վտարումը բանակից, ինչ-
ծառայած մի քանի հազար սպաների վտարումը բանակից, ինչ-
պես նաև հարյուր քառասունյոթ գիտական աշխատողների
պես նաև հարյուր քառասունյոթ գիտական աշխատողների
վտարումը) հանվեցին խունտայի կազմից և արտասահման ծա-
վարության ուղարկվեցին խորհրդականների աստիճանով: Այդ
սպաների մեջ առավել աչքի ընկնող անձնավորությունը գնդա-

պետ Թյուրքեշն էր, որը հայտնի էր իր սոցիալական դեմագոգիայով և, բացի դրանից, ժայրահեղ նացիոնալիստական, պանթյուրքիստական և կիսաֆաշիստական ծրագրով:

Այն բանից հետո, երբ կոտորվեց «տասնչորսի» դիմադրութունը, սկսվեցին նախապատրաստական աշխատանքները վառավարումը քաղաքացիական անձանց ձեռքը հանձնելու համար: Հեղաշրջումից ուղիղ մեկ տարի հետո սահմանադիր ժողովը հաստատեց նոր սահմանադրության նախագիծը, որն ամենից ավելի առաջադիմականներից մեկն է Թուրքիայի պատմության մեջ: Հուլիսին այդ նախագիծը հաստատվեց համաժողովրդական հանրաքվեով, որի արդյունքները արդեն այն ժամանակ երևան հանեցին նոր իշխանության անկման նախադրյալները (սահմանադրության դեմ արտահայտվել էր քվեարկողների 38 տոկոսը): Նախագծի դեմ հանդես եկան զլխավորապես գյուղացիները, քանի որ նրանք ընդհանրապես չգիտեին, թե ինչի մասին է խոսքը. նրանց համար «հանրաքվե» անունով խորհրդավոր արարածը ինչ-որ մի գլավուրի նման բան էր, որը պետք է օգնե փրկվորականներին՝ փակելու մզկիթները:

Իրենց իշխանութունը ամրապնդելու համար զինվորական զեկավարները ամեն տեսակ վարչական միջոցներ չէին խնայում: Երկրում մտցվեց արտակարգ դրութուն, արգելվեց սահմանադրության հոդվածների և կոմիտեի գործունեության քննադատութունը, ինչպես նաև Ցասսըադայում կայացված դատավճիռների քննարկումը:

Ի դեպ, այդ դատավարութունը ևս ժողովրդականութուն չբերեց զինվորական խունտային: Նախկին կառավարող կուսակցության 592 անդամներ ձերբակալվեցին հեղաշրջումից անմիջապես հետո: Սակայն նրանց դատը սկսվեց միայն հոկտեմբերին և մինչ այդ նոր կարգի հակառակորդները ձերկրում կարողացել էին հասարակական կարծիք ստեղծել դատի կազմակերպիչների դեմ: Ցասսըադայի դատավարութունը բաց էր. այնտեղ ներկա էին բազմաթիվ տեղական ու արտասահմանյան ժուռնալիստներ, և այնտեղից ամեն օր ռադիոհաղորդումներ էին արվում: Մեղադրյալները մեղադրվում էին լուրջ հանցանքների մեջ՝ սահմանադրութունը խախտելու, ընտրութունների ժամանակ կատարած մեքենայութունների, կաշառակերության, քաղաքական հակառակորդների սպանության մեջ:

Դատաւարութիւնը, իմ կարծիքով, տարվեց բավական անշնորհք: Այսպէս, օրինակ, անգամ չհաջողվեց բավարար համոզիչ ձևով պարզել մենդերեսականների հանցանքների էութիւնը: Իսկ այդ հանցանքների մեջ կային այնպիսի ցնցող բաներ, ինչպէս ուսանողական ցույցերի մասնակիցների սպանութիւնը, որոնց ալլանդակված մարմինները հետագայում գտնվեցին... սառնարաններում, ինչպէս 1955 թվականի աշնանը Ստամբուլում հրահրված արշունալի ոճիրները հուլիների դեմ: Տարակուսանք էր առաջացնում այն հանգամանքը, որ դատը սկսվեց, այսպէս կոչված, շան գործը լսելով. նախկին սրբգիգնետ Ջելալ Բայարը մեղադրվում էր այն բանում, որ բավական թանկ գնով Իզմիրի կենդանաբանական այգուն ծախել էր մի շուն, որ նվեր էր ստացել աֆղանական թագավորից: Ըստ երևույթին, սկզբի էր ստացել ոչ առանց դիտաւարութեան էր ընտրվել այդ աննշան համար ոչ առանց դիտաւարութեան էր ընտրվել այդ աննշան դեպքը: Չէ որ անատոլիացի մութ գյուղացու համար նման մեղադրանքը անհամեմատ ավելի հասկանալի էր, քան վերացական մեղադրանքը «սահմանադրութիւնը խախտելու» մեջ: Սակայն, և «շան գործը», և իշխանութիւնների մյուս շարաշահումները քիչ էին հետաքրքրում լայն զանգվածներին, որոնք արդեն վաղուց էին վարժվել այն բանին, որ ամեն մի իշխանութիւն հենց նրա համար է իշխանութիւն, որպէսզի զբաղվի շարաշահումներով... Կարծում եմ, պատահական չէ, որ մեղադրական եզրակացութիւնը բառացիորեն հագեցված էր էմանագին սենսացիաներով, ինչպէս, օրինակ, հայտնի երգչուհի Այստան Այդանի երեսօյնի հետ տեղի սննեցած դեպքը (երեսօյնի հայրը Մենդերես էր), որը խորհրդավոր հանգամանքներում մահացել էր ծնվելուց անմիջապէս հետո: Կամ այն հինգ հարյուր դոլարի մասին գործը, որ Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Քորալթանին թուլատրել էին ծախսել հիվանդ կնոջ համար Գերմանիայում դեղորայք գնելու և որոնք նա ծախսել էր երիտասարդ դեղեցիկ բուժքրոջ վրա, որը սպասարկում էր տշ այնքան նրա կնոջը, որքան հենց իրեն: Մի խոսքով, հետաքրքրութիւնը շարժող նման քան հենց իրեն: Մի խոսքով, հետաքրքրութիւնը կային: Դատաքննման քննարկման ժամանակ ասում էր ծաղկում կաշառակիցութիւնը բացահայտել էր, թե ինչպէս էր ծաղկում կաշառակիցութիւնը. ոչ Մենդերեսը, ոչ նրա միւսները, տարբերութիւնը չէին դնում պետական դանձարանի և սեփական գրպանի միջև: Մենդերեսը, օրինակ, երկրի կառավարման տասը տարվա ընթացքում սեփական կարիքների, իր կնոջ, որդիների ու սիրուհի-

ների կարիքների, ինչպես նաև թղթախաղի պարտքերը վճարելու համար վատնել էր գրեթե քսանչորս միլիոն թուրքական լիրա: Բացի դրանից, նա իր անձնական կարողությունը լրացնում էր, զբաղվելով անլիգալ առևտրական գործարքներով: Իսկ Ֆինանսների մինիստրը իր կնոջ հողերը վաճառել էր առևտրական բանկին կես միլիոն թուրքական լիրայով:

Գրեթե մեկ տարի հետո, 1961 թվականի սեպտեմբերին, հրապարակվեց դատավճիռը. 133 մեղադրյալներ արդարացվեցին, 402-ը դատապարտվեցին բանտարկության՝ երկուսից մինչև տասներկու տարի ժամկետով, ձայների մեծամասնությամբ 11 հոգի՝ դատապարտվեցին մահվան, որն Աղզային միասնության կոմիտեն դրանցից յոթի համար անիմիջապես փոխարինեց ցմահ բանտարկությանը: Չորս մահվան դատավճիռներն ընդունվեցին միաձայն: Ինչ-որ տարօրինակ հաշվումներով Մենդերեսը մահվան էր դատապարտվել ութ անգամ՝ ութ տարբեր գործերի համար, իսկ պրեզիդենտ Բայարը՝ երեք անգամ, բայց վերջինիս համար, նկատի ունենալով նրա դառամյալ հասակը, մահապատիժը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ: Մահվան էին դատապարտվել նաև արտաքին գործերի մինիստր Զոռլուն և Ֆինանսների մինիստր Փոլաթբանը: Այդ դատավճիռների ի կատար ածումը հասարակայնությունն ընդունեց բացահայտ անհավանություններ, առավել ևս, որ այն հանգամանքները, որոնցում ի կատար ածվեց դատավճիռը նախկին պրեմիերի նկատմամբ, աչքի չէր ընկնում, մեղմ սասած, մարդասիրությամբ: Բանն այն է, որ թուրքական քրեական օրենսգրքը արգելում է կախաղան բարձրացնել մարդուն, եթե նա չի կարող անձամբ մոտենալ կախաղանին, իսկ Մենդերեսը, ինչպես պատմում էին, պատժի նախօրյակին ընդունել էր մեծ շափով քնաբեր դեղ, փորձելով ինքնասպանություն գործել: Նրան կախաղանի համար փրկելու նպատակով օգնության կանչեցին լավագույն բժիշկներին... Կախաղան բարձրացրին նաև Զոռլունին և Փոլաթբանին:

Գատավճռի հրապարակումը աղղանշան հանդիսացավ 1961 թվականի հոկտեմբերի ընտրական կամպանիա սկսելու համար: Մենդերեսի ու նրա երկու մինիստրների մահապատիժը նրանց համար հաստատեց միայն նահատակների լուսապսակը և շուտ եկավ ինչպես խուճապի, այնպես էլ ժողովրդահանրապետական կուսակցության դեմ, որը, ճիշտ է, հեղաշրջմանը մասնակցություն չէր ունեցել, բայց որպես գլխավոր ընդդիմադիր կուսակ-

ցություն, նույնացվում էր նրա հետ: Ընտրությունների արդյունքները արտացոլեցին դժգոհությունն ու հիասթափությունը նոր իշխանությունից: Ժողովրդահանրապետական կուսակցությունն ընտրություններում ստացավ ձայների 36,7 տոկոսը, այսինքն՝ ավելի քիչ, քան արդարության կուսակցությունն ու նոր Թուրքիայի կուսակցությունը միասին վերցրած, և ավելի քիչ, քան 1957 թվականի ընտրություններում, երբ նա ստացել էր ձայների 39 տոկոսը: Ճիշտ է, համամասնական ընտրությունների սխառեմի շնորհիվ նա պահպանեց հարաբերական մեծամասնությունը ազդային պալատում, բայց փոքրամասնություն էր կազմում սենատում: Թուրքիայի հանրապետության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց կոալիցիոն կառավարություն: Ժողովրդահանրապետական կուսակցության և արդարության կուսակցության կոալիցիոն Իննչյուրի գլխավորությամբ նույն զինվորականների ձեռքի գործն էր, որոնք բռնարովին մտադիր չէին իշխանությունը հանձնել նոր միայն մահապատժի ենթարկված Մենդերեսի ժառանգների ձեռքը և այդ պատճառով կոպիտ կերպով, գրեթե ատրճանակների փողի տակ, կուսակցական բոսերին ստիպեցին համաձայնության գալ:

Գրանից հետո զինվորականներն անցան սովերի տակ: Ազգային միասնության կոմիտեի ղեկավար Գյուրսելը դարձավ հանրապետության պրեզիդենտ, իսկ կոմիտեի քսանմեկ անդամները, սահմանադրության համաձայն, ցմահ սենատորներ: Քաղաքական պայքարը, սակայն, չհանդարտվեց, քանի որ նոր կարբինեռը ևս չկարողացավ լուծել և ոչ մի պրոբլեմ և չիրականացրեց ոչ մի բարեփոխում, որը կարողանար երկրի համար ապահովել քաղաքական կայունացում և դնել տնտեսական զարգացման հիմքերը: Լարվածությունն աճում էր: Թուրքիան այդ ժամանակ առաջին անգամ բախվեց միևնույն այդ շտեմանված դասակարգային մարտերի հետ: Եվ դարձյալ, որպես զգայուն սեյսկոլոգրաֆ, ստեղծված իրադրությանը արձագանքեց սպայական մոզրաֆ, ստեղծված իրադրությանը արձագանքեց սպայական կորպուսը: 1962 թվականի փետրվարի 22-ին Անկարայի հետեվակային դպրոցի ունկնդիրները կայազորի սպաների հետ միասին կատարեցին հեղաշրջման անհաջող փորձ՝ «կառավարությունը և պառլամենտին նախազգուշացնելու համար», ինչպես ավելի ուշ վկայում էր հեղաշրջման ղեկավար, գնդապետ Թալաթ Ալթեմիրը: Երկրում աճող դժգոհությունն օգտագործեցին

նաև Մենդերեսի կողմնակիցները, հանդես ըալով դատապարտ-վածներին ներում շնորհելու պահանջով: Ինչպես պնդում էին օպորդիցիայի մի քանի գործիչներ, հեղաշրջման փորձը ձեռնառու էր Ինենյուին, որն ուզում էր դրանով ապացուցել, որ բանակը ակտիվորեն դիմադրում է ներմանը: Ինենյուի կառավարությանը ավելցին անլստահության քվե, և նա այդ ժամանակ հրաժարա-կան տվեց, բայց միայն այն բանի համար, որ որոշ ժամանակ անց, նորից բանակի օրհնությունը, կազմի նոր կաբինետ, բայց արդեն այլ կազմով, այս անգամ փոքր կուսակցությունները՝ գյուղացիական կուսակցության և նոր թուրքիայի կուսակցության ներկայացուցիչների հետ: Արդարության կուսակցությունը հայտն-վեց օպորդիցիայում, որը նրան հնարավորություն էր տալիս էլ ավելի սուր հարձակումներ գործել կառավարության դեմ՝ ներ-ման հարցում: Գրա պատասխանը եղավ երիտասարդ սպաների և ուսանողության ելույթների նոր ալիքը Անկարայում և Ստամ-բուլում՝ 1962 թվականի աշնանը, որը պաշտպանություն գտավ մամուլի մի զգալի մասի և մտավորականության կողմից: Յու-ցարարները ավերեցին արդարության կուսակցության և նրան պաշտպանող թերթերի խմբագրությունների շենքերը: Հետագրը-քրրական է, որ Ինենյուն սահմանադատվեց այդ ելույթներից, վախենալով դրանց ռադիկալիզմից: Բայց շուտով կաբինետը մշակեց ներման մասին որոշման նախագիծը, որի դեմ, սակայն, հանդես եկավ արդարության կուսակցությունը, այն համարելով ոչ բավարար մշակված:

1963 թվականի մարտի վերջին առողջական վտա վիճակի պատճառով ազատ արձակվեց Ջեյալ Բայարը: Կայսերիից դեպի Անկարա տանող ճանապարհին նրա սպիտակ ավառամորիլը կարմրել էր այն կենդանիների արյունից, որ թուրքական սովոր-բությունը զոհաբերում էին նրա պատվին: Մենդերեսականներին կատարված հերթական դիշումը բողոքի լայն ելույթների նոր ալիք առաջացրեց սպաների և ուսանողների շրջանում: Բայց այս անգամ այդ ալիքը շկանդինեցրեց «արդարներին»: Առավել ևս, որ բանվոր դասակարգի աճող շարժման և առաջադիմական տրա-մագրությունների ուժեղացման դեմ մղվող պայքարում ժողո-վրդահանրապետական կուսակցության աջ տարրերը և բանակը հանդես եկան միասնական ճակատով: Պրեզիդենտ Գյուրեհլը զբլ-խավորեց այսպես կոչված կոմունիզմի դեմ պայքարի պատվամեն-

տական հանձնաժողովը, որի մեջ մտան բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները:

Նման իրադրությունը, սակայն, միայն ուժեղացնում էր խմորումը սպայական կազմերի շրջանում: Նրանք էին կարող հաշտվել ներողամտության հետ այն մարդկանց նկատմամբ, որոնց դեմ կատարվել էր մայիսի 27-ի պետական հեղաշրջումը: Նրանք դժգոհությամբ էին նայում, որ ռեֆորմներ, առաջին հերթին ազրարային ռեֆորմ կիրառելու խոստումը այդպես էլ մնաց թղթի վրա: Հեղաշրջման երրորդ տարեդարձի նախօրյակին, 1963 թվականի մայիսի 22-ին, մի խումբ երիտասարդ սպաներ Անկարայի զինվորական դպրոցի աջակցությամբ, նույն զինսպետ Այդեմիրի գլխավորությամբ նորից պետական հեղաշրջման փորձ կատարեցին: Ըստ երևույթին, պատահական չէր, որ նրանք հանդես եկան ազրարային ռեֆորմ պահանջող գյուղացիների՝ Թուրքիայի հանրապետության պատմության մեջ, հավանաբար, առաջին մասսայական ցույցից գրեթե անմիջապես հետո, որը տեղի ունեցավ Ադանայում՝ երկրի ամենահարուստ գյուղատնտեսական շրջանում: Զինվորական համազգեստ հագած գյուղացիական զավակների՝ երիտասարդ սպաների բողոքը որոշ չափով համերաշխության արտահայտություն էր հայրերի ցույցի հետ: Ապատամբներին հաջողվեց երկու ժամով դրավել Անկարայի օդակայանը: Իրենց առաջին հայտարարության մեջ նրանք ազդարարեցին Ազգային ժողովը և քաղաքական կուսակցությունները ցրելու մասին և Ինենչուի կառավարությանը մեղադրեցին Աթաթյուրքի սկզբունքներին դավաճանելու և վաղուց հասունացած սրբորևմները լուծելու անընդունակության մեջ: Բայց այդ խոտվությունը ևս ճնշվեց: Դրա մասնակիցներից յոթ հոգի սպանվեցին, 31 հոգի վիրավորվեցին: Շատ սպաներ ձերբակալվեցին: Փակ դատավարությունը շարունակվեց մի քանի ամիս: Այդեմիրը և նրա վեց մերձավորագույն զինակիցները դատապարտվեցին մահապատժի, 29 հոգի՝ ցմահ բանտարկության, իսկ մի քանի տասնյակ մարդիկ՝ մինչև տասնհինգ տարվա երկարատև բանտարկության: Կես տարով երկրում հայտարարվեց արտակարգ դրություն:

Սպաների խոտվության ճնշումը, սակայն, չէր նշանակում երկրի քաղաքական ճգնաժամի վերացում: 1963 թվականի նոյեմբերի մոնիթինգի պալ ընտրությունները ցույց տվեցին, որ քաղաքական ծանրաչափը Թուրքիայում շեշտակիորեն թեքվել է

դեպի աջ: Արդարութեան կուսակցութիւնն ստացաւ ավելի շատ ձայն, քան բոլոր կառավարական ու ընդդիմադիր կուսակցութիւնները միասին վերցրած (45,8 տոկոս՝ 45,3 տոկոսի դիմաց): Իսմէթ Ինենյուն հրաժարական տվեց, որպեսզի որոշ ժամանակ անց նորից կազմի կառուցիտն կարինետ (երրորդը)՝ մի քանի «անկախներ» մասնակցությամբ միայն: Այն հանգամանքը, որը օգնեց Ինենյունին՝ կազմել փոքրամասնութեան կառավարութիւն, անկասկած, կիպրական ճգնաժամն էր, որի պայմաններում չէր կարող երկար շարունակվել կառավարական ճգնաժամը երկրում: 1965 թվականի սկզբին, քանակը՝ երկրի քաղաքական կյանքի այդ վճռական գործոնը, հասկացաւ, որ քանի դեռ չի հաշտուվել խարխիւլ արդարութեան կուսակցութեան ազդեցութիւնը և նա դեռ մնում է որպէս ամենաուժեղ կուսակցութիւնը երկրում, հարկավոր է նրան քարշ տալ կառավարութեան կազմի մեջ: 1965 թվականի մարտին անվստահութեան քվե տրվեց Ինենյունի կարիքներին և կազմվեց նոր կառուցիտն կառավարութիւն չորս ընդդիմադիր կուսակցութիւններից: Կարինետը գլխավորեց անկախ սենատոր Ուրգյուփլյուն: Կառավարութիւնը կազմելու նախօրյակին բոլոր չորս կուսակցութիւնների ղեկավարները պետք է ստորագրեին հայտարարութիւն՝ մայիսյան հեղաշրջման նկատմամբ իրենց լույս դիրքի մասին:

Ուրգյուփլյունի կառավարութիւնը ժամանակավոր էր. այն գոյութիւնը պահպանեց մինչև 1965 թվականի հոկտեմբերի նոր քննարկութիւնները, որոնցում մեծ հաղթանակ տարաւ արդարութեան կուսակցութիւնը: Իշխանութիւնը երկրում անցաւ կուսակցութեան նախագահ Սուլեյման Դեմիրելի ձեռքը: Ստեղծվեց մի պարագործային իրավիճակ. կուսակցութեան պարագլուխը, որը բոլորովին չի թաքցնում, որ իր կուսակցութիւնը դեմոկրատական կուսակցութեան անմիջական ժառանգորդն է, հավատարմութեան երդում էր տալիս այն սահմանադրութեանը, որը երևացել է մայիսյան հեղաշրջումից հետո: Ըստ երևույթին, պատահական չէ, որ երբ նա ընդունում էր իշխանութիւնը, բարձրաստիճան սպաների համար հատկացված օթյակները մեջխտու՞ դատարկ էին:

Դրութիւնը, սակայն, փոխվեց, երբ Դեմիրելը ու նրա կուսակցութիւնը պրեզիդենտի պաշտոնի համար առաջադրեցին թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ, դիներալ Սունային, քանի որ հիմանգ Գյուլսելը այլևս չէր կարող կատարել պետու-

Յայն դեկալարի պարտականությունները: Լինելով աջ հայացք-
ների տեր մարդ, Սունայը մասնակցություն շունեցավ մայիս-
յան հեղաշրջմանը, բայց առաջին իսկ րոպեից համակրանքով
վերաբերվեց դրան: «Մայիսի 27-ի շարժումը» նրան մղեց առա-
ջին շարքերը. հեղաշրջումից անմիջապես հետո նա նշանակվեց
գլխավոր շտաբի պետ: Այսպիսով, Սունայի պրեզիդենտ ընտր-
վելը նոր իշխանության ճանաչման արտահայտությունն էր ան-
դրբկուլիսյան այն ուժի կողմից, ինչպիսին է բանակը Քուրքիա-
յում և, համենայն դեպս, նրա բարձրագույն հրամանատարու-
թյունը¹: Իսկ ինչ վերաբերում է կրտսեր սպայական կազմին,
ապա այն դեռ կարող է քանի՛-քանի անակնկալներ մատուցել
այս երկրում:

ՄԵԶԼԻՍ

Պատվամենտի շենքն Անկարայում, թուրքական մասշտաբնե-
րով, թերեւ, չափից դուրս մեծ է. այն, կարծես, կառուցվել է
«ցուցադրելու համար» և անմիջապես ուշադրություն է գրավում:
Եվ, բացի դրանից, անգամ Անկարայի համար նա չափազանց
նոր տեսք ունի:

Եթե արտաքին կողմից այդ շենքը ձեռք գարմացնում է իր մե-
ծությամբ, ապա ներքուստ՝ իր հարմարավետությամբ և, ես կա-
սեի, շքեղ հարդարանքով: Նիսանքի գահլիճները և ընդունելու-
թյունների գահլիճները շարված են մարմարով և պատված փայտե
պանկներով, որոնց համար օգտագործվել են փայտի ամենաար-
ժեքավոր տեսակները: Նման գահլիճները կարող էին պարժանքի
առարկա լինել բարձր դարգացած էկոնոմիկա և պատվամենտա-
րիզմի ավանդույթների ունեցող ամեն մի այլ պետության պառլա-
մենտի համար: Բայց այդպիսի գեղեցիկ շենքում վիճարա-
նությունների մտկարգակը համապատասխանում է արդյոք նրա
պատկառազու արտաքին տեսքին: Ծիշտն ասած, ոչ, շնչյած մի
շարք դեպուտատներ ու սենատորներ ունեն իսկական հոնոր-
ների համբավ և նրանց ելույթները նշանակալից են, հաճախ
պատճառաբանված փաստաթղթերով և տողորված անկեղծ հո-
գատարությամբ հասարակության բարօրության մասին: Դրա հետ

¹ 1973 թվականի սպրիլին քվեարկության տասնհինգ տարից հետո հան-
րապետության պրեզիդենտ ընտրվեց Քուրքիայի ուղմածովային նավատորմի
նախկին հրամանատար, պաշտոնաթող ժովակալ Քորություրքը:

մեկտեղ, ես հիշում եմ, որ երկրում գտնվելու իմ բոլոր տարի-
ներին էլ մամուլում շատ հաճախ հայտնվում էին հաղորդումներ
ծիծաղաշարժ, աննշան, իսկ երբեմն նաև պարզապես միանգա-
մայն անտեղի ելույթների մասին, որոնք ընդհանուր ուլիմը չու-
նեին երկրի առջև կանգնած լուրջ պրոբլեմների հետ: Հաճախ
պատահում էր և այնպես, որ ելույթ ունեցող ժողովրդի ներկա-
յացուցիչները փաստարկների ուժը փոխարինում էին ուժի փաս-
տարկներով, և դրա հետևանքով տուժածներին, իսկ երբեմն նաև
ծանր վիրավորվածներին, հարկ էր լինում մեջլիսից ուղղակի
փոխադրել հիվանդանոց:

Ահա այդպիսի ծիծաղաշարժ ելույթների մի քանի օրինակներ:
1966 թվականի նոյեմբերին սենատոր Հիդայիթ Այդիները հար-
ցապնդում մտքերեց պատմամեծ... ազնավների հարցով: Բավա-
կան պերճախոս կերպով նա պատմեց այն մասին, թե ընդհան-
րապես ինչպիսի վնաս են հասցնում երկրին ազնավները, ապա-
ցուցելով, սակայն, որ նրանց հասցրած ամենամեծ վնասն այն
է, որ նրանք իրենց բարձրաձայն կոկոտցով առաջնությունն արթ-
նացնում են պրեզիդենտին: Սենատորը գյուղատնտեսությունից մի-
նիստորին մեղադրեց այն բանում, որ Քուրբիայում բավարար
չափով չեն պայքարում այդ շարիքի դեմ, և հավատացնում էր,
որ պրոտեկտիվ հարուստ ազնավի միսը պետք է օգտագործվի
անասուններին կերակրելու համար: Սենատորին ուղղած իր պա-
տասխանում մինիստր Գադգաշը ամենալուրջ ձևով տվյալներ
բերեց այն մասին, թե տարեկան քանի ազնավ է սպանվել երկ-
րում՝ սկսած 1961 թվականից, և առաջարկեց ստեղծել էքսպերտ
հանձնաժողով, որը որոշելու էր ազնավի միսը օգտագործելու
հնարավորությունը:

Այս անգամ սենատում իսկական փոթորիկ առաջացրեց ար-
դարության կուսակցության ներկայացուցիչ Դիրիկի Գիրիկի 1966 թվա-
կանի մայիսի ելույթը: Զայրույթից շնչահեղձ լինելով, նա հար-
ձակվեց կարճ շրջազգեստների վրա, որոնցով դպրոցի աշա-
կերտուհիները սպորտային շքերթի էին դուրս եկել մայիսի 19-ին:
Բավական բարձր ձայնով նա պնդում էր, որ «այդ շրջազգեստ-
ները հազցրել էին հատուկ նպատակով, որպեսզի, ցույց տալով
կանացի մարմնի ամենամյուրական մասերը, գրգռեն տղանե-
րին»: «... Ո՞ւմ ենք սովորեցնում մենք դպրոցում, — զգայացունց
տոնով բացականչում էր նա տրիբունայից, — ստրիպտիզի դե-
րասանուհիներին»: Դիրիկի ելույթից շատ վրդովվեցին օպորի-

ցիայի ղեկուտատները, որոնք նրա խոսքերի մեջ նկատեցին հարձակում քեմալականության սկզբունքների դեմ: Այդ ելույթի համար Գիրիկը երկու ամսով վատարվեց կուսակցությունից:

Չէի ցանկանա ընթերցողին ձանձրացնել պատմություններով, թե ինչպես մեջլիսում վիճարանությունների ժամանակ գործի էին գրչում բունցքները, որի մասին նույնպես շատ էր գրում թուրքական մամուլը: Ես ինձ թույլ եմ տալիս հիշատակել միայն 1966 թվականի մարտին տեղի ունեցած միջադեպը, երբ արդարության կուսակցության ղեկուտատ Բայրամօղլուն փունքից վիրավորեց «տասնչորսի» խմբից մեկին՝ Սուլմաղբերին, որից հետո սկսվեց բռնցքակոխվել և ժողովրդահանրապետական կուսակցության ղեկուտատ Մուստաֆա Օրք մի լավ ծեծ տվեց հարձակվողին, իսկ Օրքի ընկերը ծեծեց «տասնչորսի» խմբից մեկ ուրիշ անդամի՝ Օրխան Քարիբային: Շատ աղմուկ հանեց նաև հարձակումը խունտայի նախկին անդամ, սենատոր Ուլայի վրա, որի ականջը կծեկ էին (ինչպես հետո էին պատմում, ոչ առանց արդարության կուսակցության ղեկուտատ, նախկին պրեզիդենտ Բայարի դուտոր, տիկին Նիլյուֆեր Գյուրսոյի սաղարանքի):

Այս բոլոր փաստերը, իմ կարծիքով, երկրում տիրող քաղաքական խոր լարվածության արտահայտությունն են: Բացի դրանից, դրանք վկայում են այն մասին, որ թուրքիայում շկան պառլամենտական ավանդույթներ և կուլտուրա: Այդ մասին է վկայում այն փաստը, որ մի անգամ, 1966 թվականին, զիշերը, մեջլիսի շենքի աղմինիստրատորը, խախտելով սահմանադրությամբ երաշխավորված պառլամենտական անձեռնմխելիությունը, ինքնակամ կերպով, առանց նախապես պայմանավորվելու երկու պալատների նախագահների հետ, խուզարկություն կատարեց պառլամենտական խմբերի շենքում, հույս ունենալով գտնել անլեգալ գրականություն. նա այնտեղ գտավ գրամեքենաներ և ապակետիպ: Նրա գործողությունները վրդովմունք առաջացրին մամուլում և պառլամենտում հարցապնդման առարկա դարձան օպոզիցիայի կողմից:

Քանի՞ ղեկուտատ կա թուրքական պառլամենտում: 1961 թվականի սահմանադրության համապատասխան, ստորին պալատը ունի 450 տեղ, իսկ սենատը՝ 150, գումարած 15 տեղ պրեզիդենտի կոնստիդենտից և 22 տեղ Ազգային միասնության կո-

միտեի նախկին անդամների համար, որոնք կոմիտեն ցրվելուց հետո դարձան ցմահ սենատորներ Քուրբիայի դեմոկրատացման համար մղված պայքարում ունեցած հատուկ ծառայությունների համար: Դեպուտատներն ընտրվում են շորս տարի ժամկետով՝ համամասնական սխտեմով, որը շատ ձեռնտու է փոքր կուսակցությունների համար, հատկապես այն բանից հետո, երբ 1965 թվականի ընտրությունների նախօրյակին ժողովրդահանրապետական կուսակցությունը մտցրեց մի ուղղում, որը ընդլայնում էր համամասնականության շրջանակները: Բանն այն է, որ ձայների «ավելցուկները», որոնք չափազանց աննշտն էին, որպեսզի դրանցից կարողանար օգտվել այս կամ այն կուսակցությունը առանձին ընտրական օկրուգներում, հավաքվում էին ամբողջ երկրի մասշտաբով, և այդ ձայների ընդհանուր թվին համաձայնարար ավելացվում էին համապատասխան թվով մանդատներ: Սակայն, պրակտիկան ցույց տվեց, որ այդ ուղղումը օգտակար եղավ ոչ թե Ինենյուի կուսակցության, այլ փոքր կուսակցությունների համար, որոնց ներկայացուցչությունը մեջլիսում դրանից հետո աճեց: Անցնելով իշխանության գլուխ, արդարության կուսակցությունը կարողացավ վերացնել այդ ուղղումը, իսկ 1966 թվականի մարտին նրան հաջողվեց պառլամենտով անցկացնել փոփոխություն ընտրությունների կանոնադրության մեջ և վերացնել ձայների «ավելցուկները» բաշխելու սխտեմը:

Սենատորի մանդատը ուժի մեջ է վեց տարի. ընտրվող սենատորների մեկ երրորդը և պրեզիդենտի կոնսիդերենտի սենատորների մեկ երրորդը յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ նորացվում է: Սենատի ընտրությունները նույնպես տեղի են ունենում համամասնական սխտեմով, բայց այստեղ արդեն ձայների «ավելցուկները» հաշվի չեն առնվում: Օրինագծերը հաստատվում են նաև դեպուտատների ստորին պալատում, իսկ ապա սենատում: Հանրապետության պրեզիդենտը ընտրվում է յոթ տարով: Նա ունի վետոյի իրավունք: Քուրբիայի հանրապետության առաջին պրեզիդենտը, որն ընտրվեց նոր սահմանադրության Դիման վրա, Խունտայի ղեկավար գեներալ Գյուրսելն էր, որը սակայն չապրեց մինչև իր լիազորությունների վերջանալը: Լինելով անրոժեիի հիվանդ, 1966 թվականի ապրիլին նա անընդունակ ճանաչվեց պրեզիդենտի ֆունկցիաները հետագա-

յում կատարելու համար, և դրանից մի քանի ամիս հետո նա մահացավ: Նրա փոխարեն ընտրվեց զեներալ Սունայը:

Իսկ այժմ մի քանի խոսք այն կուսակցությունների մասին, որոնք ներկայացված են պառլամենտում:

Սկսեմ ժողովրդահանրապետական կուսակցությունից՝ Թուրքիայի հանրապետության այդ ավագագույն քաղաքական կուսակցությունից, որ հիմնել էին զեռես Աթություրբը 1923 թվականին, երբ նրա պրեզիդենտն էր, և այն ժամանակվա պրեմիեր մինիստր Իսմեթ Ինենյուն: Կուսակցության համագումարը 1935 թվականին գաղափարապես ձևակերպեց միակուսակցական սիստեմը երկրում: Պետական ապարատը այն ժամանակ միաձուլված էր կուսակցական ապարատի հետ ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում: Կուսակցության, ինչպես նաև ամբողջ քեմալական շարժման հենարանը առաջին հերթին ազգային բուրժուազիան էր, ինչպես և արդեն աճած շինովնիկությունն ու միջին խավերը: Հենց նրանք շահերից ելնելով էլ իրականացվում էր էստատիզմի քաղաքականութունը, անտառների ազգայնացումը և այլն: Գրա հետ մեկտեղ կուսակցությունն իր սամար աշակցություն գտավ հանձինս գյուղական կուզակների: Կուսակցությունն իր աշխատանքը տանում էր իր իսկ ստեղծած ժողովրդական տների միջոցով:

1938 թվականին Աթաթյուրբի մահից հետո կուսակցության գլխավոր նախագահ ընտրվեց Իսմեթ Ինենյուն, մի մարդ, որի անունը պսակված էր հույների նկատմամբ տարած ռազմական հաղթանակների և լողանում տարած դիվանագիտական հաղթանակի փառքով: 1938 թվականի նոյեմբերից, երբ Ինենյունին ընտրեցին հանրապետության պրեզիդենտ, նա այդ պոստում մնաց տասներկու տարի, այսինքն՝ մինչև 1950 թվականը, երբ իշխանության գլուխ անցավ դեմոկրատական կուսակցությունը: Ներկայումս ութսունամյա այդ պետական գործիչը, անկասկած, ամենափորձված թուրք քաղաքագետն է: Նա յոթ անգամ գլխավորել է կառավարությունը (Աթաթյուրբի կենդանության ժամանակ և նրա մահից հետո, 1961—1965 թվականներին): Իսմեթ Ինենյուն կարծես Թուրքիայի կենդանի հուշարձանն է: Որտեղ էլ որ նա երևա, նրան միշտ ողջունում են շատ ջերմորեն, և անգամ կանայք համբուրում են նրա ձեռքը: Նրա նկատմամբ վերաբերմունքը շփոթվեց անգամ այն քանից հետո, երբ նրա

կուսակցությունն անցավ օպոզիցիա: Նույնիսկ նրա քաղաքական հակառակորդները հարգանքով են վերաբերվում նրան՝ որպես Քեմալի մոտիկ զինակցի: Ինննյուն մինչև հիմա էլ պահպանել է իր տարիքի համար զարմանալի մտքի պարզությունը: Ճիշտ է, նա մի ականջով խուլ է և միշտ իր հետ կրում է լսելու ապարատ, բայց այդ հիվանդությունից Ինննյուն տառապում է երկար տարիներ: Նրա բավական պատկառելի տարիքը չի խանգարում նրան ամռանը սիստեմատիկաբար լողանալու Բոսֆորում:

Որքան ավելի շատ էր աճում թուրք բուրժուազիայի ազդեցությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, այդ արտասովոր փորձառու քաղաքագետը, որը միաժամանակ կարողանում էր նվագել մի քանի ստեղծների վրա, դառնում էր ավելի ու ավելի պահպանողական: Սակայն նա չդիմացավ մեկ փոքր կուսակցության մրցակցությունը, որը ստեղծվել էր պատերազմից հետո (ի դեպ, նրա իսկ թուլությունով) և ավելի կոնկրետ կերպով էր արտահայտում խոշոր բուրժուազիայի, կալվածատերերի ու կրոնական տարրերի շահերը դեմոկրատական կուսակցության հետ: 1950 թվականին դեմոկրատական կուսակցությունն անցավ իշխանության գլուխ, իսկ ժողովրդահանրապետական կուսակցությունը հայտնվեց օպոզիցիայում: 1960 թվականի պետական հեղաշրջումից հետո ժողովրդահանրապետական կուսակցությունը նորից դարձավ կառավարող կուսակցություն: Եվ դարձյալ անհաջողության մատնվեց: Ինննյուրի կուսակցության քաղաքականությունն, ըստ էության, ոչնչով չէր տարբերվում Մենդերեսի կուսակցության քաղաքականությունից: Որ կուսակցությանն էլ որ պատկանելիս լինի կուլակը, գյուղացու աշըում նա միևնույն է՝ մնում էր կուլակ: Ժողովրդահանրապետական կուսակցությանը պաշտպանող դասակարգերի ու խաչերի հակասական շահերը սկսել էին պառակտել այդ կուսակցությունը, որն իր էությունով անկերպարանք կուսակցություն էր: Ճիշտ է, Ինննյուրին հաջողվեց «ուռեցնել առաջատները», իր կառավարման վերջին շրջանում, երբ խոսք էր լինում Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին, հանդես գալով որպես երկրի ազգային շահերի ջատագով: Բայց դա էլ նրան չօգնեց մնալու իշխանության գլուխ... Եվ այն ժամանակ այդ դառաձյալ պետական գործիչը, հիշելով Աթաթյուրքի պատգամները, իր սեփական կուսակցության մեջ սկսեց հենվել ձախ տարրերի վրա:

1965 թվականի ընտրությունների նախօրյակին նրա հռչակած «կենտրոնից ձախ» քաղաքականությունը 1966 թվականի նոյեմբերին կուսակցական համագումարի կողմից հավանություն արժանացավ որպես կուսակցության պաշտոնական քաղաքականություն: Պա, իհարկե, մեր հասկացողություններ, ոչ մի ձախ քաղաքականություն էլ չէ, այլ լոկ բուրժուական ռեֆորմիզմի ավելի ցայտուն հաստատում: Ինչպես ասված էր 1964 թվականի հոկտեմբերին կայացած կուսակցական համագումարի զազափարսոսական ղեկավարացիայում, «անհրաժեշտ է Թուրքիան պահպանել ձախ և աջ դիկտատուրայի վտանգից, թուրք աղզը դասակարգերի բաժանելուց»: 1966 թվականին կուսակցության համագումարում զլխավոր քարտուղար ընտրվեց կուսակցության ձախ տարրերի ամենից ավելի վճռական պաշտպան, երիտասարդ, եռանդուն և շատ հանրաճանաչ մի մարդ, կոալիցիոն կառավարության աշխատանքի նախկին մինիստր Բյուլենտ էջեվիրը: Այսպիսով, կուսակցությունը երիտասարդացավ ոչ միայն ղեկավարության հաշվին: Նա միանգամայն որոշակի տեղ գրավեց երկրի քաղաքական կյանքում որպես ազգային բուրժուազիայի և բնակչության միջին խավերի շահերի արտահայտիչ:

1965 թվականի հոկտեմբերի ընտրություններում ժողովրդահանրապետական կուսակցությունն ստացավ 134 տեղ ղեկուսատաների պալատում: Սակայն կուսակցության աջ խմբավորումը պրոամերիկյան տրամադրությունների տեր պրոֆեսոր Թուրխան Ֆելիթոլլուի զլխավորությամբ շցանկացավ հաշտվել կուսակցության նման էլոլյուցիայի հետ: Աջերի հարձակումները ամբողջ կուսակցության և նրա ղառամյալ ղեկավարի դեմ հանդեցրին պառակտման, որը ձեւավորվեց կուսակցության արտակարգ համագումարում 1967 թվականի ապրիլի վերջին: Թուրխան Ֆելիթոլլուի կողմնակիցները (նրանց թլում կային 34 դեպուտատներ) կազմակերպեցին աջ ուղղության մի նոր կուսակցություն՝ այսպես կոչված վստահության կուսակցությունը, որը, հակառակ իր կազմակերպչի փառասիրական պլաններին, Թուրքիայի քաղաքական կյանքում մեծ դեր չխաղաց: 1969 թվականի հոկտեմբերին պառլամենտական ընտրություններում ժողովրդահանրապետական կուսակցությունը մեջլիսում ստացավ

143 մանդատ¹, իսկ վստահության կուսակցությունը՝ հազիվ 15 մանդատ²:

Թուրքական մեջլիսում ամենից ավելի լայն ներկայացված կուսակցությունը արդարություն կուսակցությունն է: Չեականորեն այն ստեղծվել է 1961 թվականի փետրվարին որպես դեմոկրատական կուսակցության ժառանգորդ: Արդարության կուսակցությունը, ինչպես առաջ դեմոկրատական կուսակցությունը, հայտարարում է իր հավատարմությունը իսլամին և հենվում է կրոնական տարրերի վրա: Նա ներկայացնում է նաև կուլակների և խոշոր կալվածատերերի շահերը, որոնք կանգնել են գյուղատնտեսությունը վարելու կապիտալիստական ուղու վրա, ինչպես նաև Մենդերեսի ժամանակաշրջանից էլ ավելի ամրապնդված բուրժուազիայի վրա: Արդարության կուսակցության հռչակած «ղեպի էկոնոմիկայի վերելք մասնավոր ձեռնարկատիրության բաղաչի վրա» լոզունգը ստացել էր բոլոր նախապայմանները իրականացվելու համար: Այս կուսակցությունը անմիջապես ստեղծեց նոր դինամիկ ղեկավարություն: Կուսակցության առաջին գլխավոր նախագահ, գեներալ Գյումյուշփալայի մահից հետո կուսակցության ժամանակավոր նախագահ դարձավ Մենդերեսի կողմնակից, իր աջ հայացքներով հայտնի Սադետին Ռիլգիլը: Շուտով, սակայն, կուսակցության համադրմարում 1965 թվականին նրան փոխարինեց մինչ այդ Թուրքիայի քաղաքական կյանքում անհայտ քառասունամյա ինժեներ Սուլեյման Դեմի-

¹ 1969—1973 թվականներին ժողովրդահանրապետական կուսակցությունում տեղի ունեցավ հզորածամ: 1972 թվականի մայիսին, կուսակցության արտակարգ համագումարում, Ինենյուն հրաժարական տվեց գլխավոր նախագահի պոստից, և նրա տեղը զբաղեց Բյուլենտ էջեխը: Նույն թվականի նոյեմբերին 26 ղեկավարատներ ու սենատորներ, որոնք համաձայն չէին էջեխի ձախ քաղաքականությանը, զուրս եկան կուսակցությունից և կազմեցին, այսպես կոչված, հանրապետական կուսակցություն: Կուսակցությունից զուրս եկավ և ղեկավարատի սեպարատիստներից հրաժարվեց նաև Ինենյուն, պահպանելով միայն իր տեղը անատում, որը նրան հասնում է որպես հանրապետության նախին պրեզիդենտի:

² Վստահության կուսակցությունը ամբաստանեց իր դիրքը: 1970 թվականի վերջին նա միավորվեց նոր Թուրքիայի կուսակցության և ազգային կուսակցության հետ, իսկ 1973 թվականի մայիսին նրան հարեց հանրապետական կուսակցությունը: Այդպիսի միավորման շնորհիվ քաղաքական ասպարեզում հայտնվեց վստահության հանրապետական կուսակցությունը Թուրքիան Ֆեյզի-օղլուի գլխավորությամբ:

րելը՝ Մենդելբերսի կառավարման շրջանում ջրային տնտեսության և էներգետիկայի ղեկարտամենտի նախկին գլխավոր գիրեկտորը: Մի քանի ամիս հետո նա ընտրվեց Թուրքիայի պրեմիեր մինիստր և այդ պոստում իրեն զբսեւորեց որպէս բավական եռանդուն մարդ: 1965 թվականի ընտրութիւններում արդարութեան կուսակցութիւնն ստացավ 240 տեղ, իսկ լիազորութիւնները ժամկետի ավարտին մոտ, 1968 թվականի հունիսի լրացուցիչ ընտրութիւններում, նա ստացավ ևս 20 մանդատ: 1969 թվականի հոկտեմբերին մեջլիսի ընտրութիւններում արդարութեան կուսակցութիւնն ստացավ չորս տեղ ավելի քիչ (256), չնայած այն բանին, որ ընտրութիւնների կանոնադրութեան մեջ կատարվել էին խոշոր կուսակցութիւնների համար ձեռնտու փոփոխութիւններ¹:

1961 թվականի դարձանք ղեմոկրատական կուսակցութեան կողմնակիցները հիմնեցին մի կուսակցութիւն ևս, այսպէս կոչված, նոր Թուրքիայի կուսակցութիւնը, որը գլխավորեց Թուրք տնտեսագետ էբրեմ Ալիշանը: Սա կրթութիւնն ստացել էր Լոնդոնում և վճռական կողմնակից էր տնտեսական լիբերալիզմի քաղաքականութեան: Սկզբում նոր Թուրքիայի կուսակցութեան մեջ մտան ղեմոկրատական կուսակցութեան նախկին շատ անդամներ և ամենից առաջ մտավորականութեան ներկայացուցիչներ: 1961 թվականի ընտրութիւններում ստացած ձայների քանակով նոր Թուրքիայի կուսակցութիւնը կանգնած էր երրորդ տեղում: Էբրեմ Ալիշանը զբաղեցնում էր պրեմիեր մինիստրի տեղակալի պոստը Իսմէթ Ինենչուի երկրորդ կառավարութիւնում: 1965—1966 թվականներին նոր Թուրքիայի կուսակցութիւնը մեջլիսում ուներ տասներկու մանդատ, իսկ լիազորութիւնների ժամկետի վերջին՝ տասնհինգ: Ժամանակի ընթացքում, երբ Թուրքիայում տեղի ունեցավ ուժերի բեկոսացում, այդ կուսակցութիւնը կորցրեց իր նշանակութիւնը, իսկ նրա

¹ Արդարութեան կուսակցութիւնում ղեկավարութիւնը մնում էր Դեմիրելի ձեռքում, չնայած այն բանին, որ նրա վրա ևս ընկել էր ֆինանսական մի կեղտոտ գործի սովորը, որին խառն էին նրա մերձավոր հարազատները. սրանք պետութիւնից ստացած վարկերը օգտագործել էին անձնական նպատակների համար: 1970 թվականի հունիսին Դեմիրելը կուսակցութեանից հանել է ղեկավարական կուսակցութեան նախկին անգամ 26 ղեկուսատաների, որոնք անհամաձայնութիւն էին հայտնել նրա վարած քաղաքականութեանը: Նրանք հիմնեցին նոր կուսակցութիւն՝ ղեմոկրատական կուսակցութիւն անունով:

լիդերն ընդհանրապես հեռացավ քաղաքական ասպարեզից: 1969 թվականի ընտրություններում նոր Թուրքիայի կուսակցությունն ստացավ ընդամենը երկու տեղ:

Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությունը ստեղծվել էր 1958 թվականին որպես Մենդերեսի կուսակցության նկատմամբ ընդդիմադիր կալվածատիրական-բուրժուական կուսակցություն: Իսմեթ Ինենյուի երկրորդ կռաւիցիոն կառավարությունում նա ուներ մինիստրական շորս պորտֆել: 1962 թվականին պառակտման հետևանքով կուսակցությունից դուրս եկան մի խումբ անդամներ՝ կուսակցության նախագահ Օսման Բյուլլուկբաշիի գլխավորությամբ: 1964 թվականին հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության շարքերը մտան տասը մարդ՝ «տասնչորսի» նախկին անդամներ գնդապետ Թյուրքեշի գլխավորությամբ:

Իր ղեկավարող ֆաշիստական ելույթներով հայտնի Թյուրքեշը կարողացավ իրեն ենթարկել կուսակցությունը և զավթել ղեկավարությունը: Սակայն դրանից այդ կուսակցության ազդեցությունը չաճեց, իսկ 1965 թվականի ընտրություններում հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությունը ստացավ ընդամենը 11 դեպուտատական տեղ: 1968 թվականին կուսակցական համագումարում որոշում ընդունվեց փոխել կուսակցության անունը. այն սկսեց կոչվել ազգայնական շարժում կուսակցություն:

1968 թվականից հետո ազգայնական շարժում կուսակցությունը ստեղծեց ծայրահեղ ազգայնական ֆաշիստական զորամիավորումների մի ամբողջ ցանց, որոնք գնալով այլևի ու այլևի նկատելի դեր են կատարում երկրի քաղաքական կյանքում: Նրանք նույնիսկ իրենց անվանում են նացիոնալ-սոցիալիստներ, իսկ նրանց խորհրդանշանն է երեք կիսալուսիկներ, որոնք իրենց դասավորությամբ հիշեցնում են սվաստիկա: Այդ զորամիավորումներն ուսուցում են անցնում ռազմականացված հատուկ ճամբարներում և բացահայտ կերպով հայտարարում են իրենց նպատակը՝ պայքարել երկրի ձախ տարրերի դեմ: Թուրք չիբերալ ժուռնալիստ Սամի Կոխենի հաշվումներով, 1969 թվականի սկզբին այդ միավորումներում կար մոտ հազար մարդ: Ինքը՝ Թյուրքեշը, մի անգամ նկատել է, որ, շնայած իրենց համեմատական սակավաթվունը, այդ միավորումների մեջ մտնող երիտասարդները կազմում են մի մեծ ուժ, որն էլ այլևի կաճի

առաջիկա ամիսներին: Նույն ժուռնալիստը բերում է Իսմեթ Ինենյուի խոսքերն այն մասին, որ «այն հանդուրժողականությունը, որ ցուցաբերվում է այդ ֆաշիստական կոմանդոսների նկատմամբ, զնալով ավելի ու ավելի վտանգավոր է դառնում»: 1969 թվականի պառլամենտական ընտրություններում Թյուրքեշի կուսակցությունն ստացավ ընդամենը մեկ մանդատ:

Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությունից դուրս եկած մի խումբ ղեկուսատներ 1962 թվականին հիմնեցին ազգային կուսակցությունը, որը իր անվան համապատասխան ընդգծում է իր հավատարմությունը ազգային շահերին՝ ի հակակշիռ «արդարների» ամերիկանիզմին ու կոսմոպոլիտությունը: Դրա հետ մեկտեղ ազգային կուսակցությունը կրոնի հարցերին տալիս է էլ ավելի մեծ նշանակություն, քան «արդարները»: Այդ կուսակցության պարագլուխ, կալվածատեր Օսման Բյուլյուկբաշին, որը մաթեմատիկական կրթությունն ստացել է Ֆրանսիայում, բավական հետաքրքրական դեմք է Թուրքիայի քաղաքական երկնակամարում: Լինելով ճարտար հոնտոր, անկասկած տարված մեծության մոլուցեցով, նա սիրում է, որ իր մասին գրեն և որ իր շուրջը որքան կարելի է մեծ ազմուկ բարձրանա: Մի քանի անգամ նա «նեղացել է», դուրս եկել կուսակցության ղեկավարությունից, բայց, զիջելով խնդրանքներին, նորից վերադարձել է: Պառլամենտական ընտրություններում 1965 թվականի հոկտեմբերին ազգային կուսակցությունն ստացավ 31 մանդատ ղեկուսատների պալատում: Լիազորությունների ժամկետի վերջին նրա մոտ մնացել էր միայն 12 մանդատ, իսկ 1969 թվականի ընտրություններից հետո՝ 6:

1966 թվականի վերջին մի խումբ պաշտոնաթող սպաներ ու մտավորականներ հիմնեցին սակավամարդ միասնության կուսակցությունը, որը հույս ունի ստանալ ալեկիների՝ աջակցությունը, թեև, ինչպես հայտնի է, թուրքական սահմանադրությունը արգելում է կուսակցություններ ստեղծել կրոնական հիմքի վրա: Ա.մեն մի ալեկի էլ հասկանալի է կուսակցության խորհրդանշանը, որի վրա պատկերված են առյուծ և տասներկու աստղեր: Մուսուլմանական առասպելը պատմում է, որ Մուհամմեդը, հանդիպելով առյուծին, վնասազերծել է նրան, նրա երախը նե-

1 Ալեկներ — մուսուլմանական շիա աղանդ: Այս անուք ծագում է Ալիի (Մուհամմեդի փեսայի) անունից:

նել բանկերն ու արդյունաբերութեան առաջատար ճյուղերը, ազգայնացնել արտաքին առևտուրը, անցկացնել հետևողական ազրարային ռեֆորմ և սահմանափակել գյուղական կուլակների կամայականութունները, վերացնել անգրագիտութեանն ու բարելավել առողջապահութեանը: Ինձ թվում է, որ Թուրքիայի բանվորական կուսակցութեան հայտնվելը երկրի քաղաքական կյանքի ասպարեզում 1960 թվականից հետո, ըստ էության, օրինաչափ երևույթ էր: Այն դարձել էր հենարան բանվոր դասակարգի պայքարի, իսկ մի քանի շրջաններում նաև գյուղացիական շարժման համար: Կոչ անելով պայքարել երկիրը իմպերիալիստների ու հայրենական կոմպրոմիսիտների (միջնորդ) բուրժուազիայի ճնշումից ազատագրելու համար, կուսակցութունը դրանով իսկ կոչ էր անում վերականգնել քեմալական շարժման հայրենասիրական ու ժողովրդական ավանդույթները:

«Թուրքական սոցիալիզմը դրսից բերված ապրանք չէ, — իր ելույթներից մեկում ասել է կուսակցութեան պարագլուխ Այբարը, — նա նման չէ ոչ արևմտյան սոցիալիզմին, ոչ արևելյանին, քանի որ Թուրքիան ոչ Արևմուտք է և ոչ էլ Արևելք: Մենք մի այնպիսի երկիր ենք, որը մի ժամանակ եղել է մեծ կայսրութուն, իսկ հետո դարձել է կիսագաղութ: Մենք մի այնպիսի երկիր ենք, որն Աթաթյուրքի ժամանակ հսկայական ջանքերով պայքարի ելավ իր ազատագրութեան համար, բայց չկարողացավ օգտվել դրա պտուղներից»:

Պատմությանը հաճելի էր, որ ազգային բուրժուազիայի շարժման առաջադիմական ավանդույթները շարունակողը դառնար բանվոր դասակարգի կուսակցութունը, որը հուշակել էր դասակարգային պայքարը, որ ժխտում էր Մուստաֆա Քեմալը, դրա փոխարեն առաջարկելով աստիճանական ռեֆորմներ, որոնք իբր պետք է երկիրը հասցնեին անդասակարգ հասարակության: Դասակարգային շերտավորումը Թուրքիայում բացահայտեց Քեմալի ուտոպիական հայացքների սխալականութունը երկրի ապագայի նկատմամբ: Եվ դա գնալով ավելի մեծ ակնբերութեամբ հասկանում են նրանք, որոնց համար դեռ կենդանի են «Թուրքերի հոր» իդեալները... Ահա ինչու Թուրքիայի բանվորական կուսակցութեան մեջ, որին հաջողվեց քեմալականութեան արտամ հասկացութունը լցնել նոր կոնկրետ առաջադիմական բովանդակությամբ, սկսեցին մտնել ամենից առաջ առաջադիմական մտավորականութեան ներկայացուցիչները, որոնք դրայ-

տեղով մատանին: Այնուհետև Մուհամմեդը այդ մատանին տեսնում է Ալիի ձեռքին ու բացականչում. «Դու իսկական առյուծ ես»: Իսկ ինչ վերաբերում է տասներկու աստղերին, ապա դրանք պետք է խորհրդանշեն Մուհամմեդի հետնորդ տասներկու իմամներին: Այդ խորհրդանշանը ցույց է տալիս, որ ալեխների «առյուծի» շուրջը պետք է միավորվեն Ալիի բոլոր հետևորդները, որոնք առաջ քվեարկում էին ուրիշ կուսակցությունների օգտին: Հետաքրքրական է, որ ալեխների այդ խորհրդանշանը գիտե ամեն մի թուրք, թեև ոչ բոլորն են, որ կարող են տալ երկրի պրեզիդենտի անունը: 1969 թվականի պառլամենտական ընտրություններում միասնության կուսակցությունն ստացավ ութ տեղ:

Եվ վերջապես, 1965 թվականի ընտրություններից հետո մեջլիսում տասնհինգ տեղով ներկայացված էր մի կուսակցություն, որի հայտնվելը երկրի քաղաքական ասպարեզում շատ բանով անսպասելի էր: Խոսքը Թուրքիայի բանվորական կուսակցության մասին է: Այդ կուսակցությունը հիմնել էին արհմիութենական գործիչները Ստամբուլում՝ 1961 թվականի սկզբին: Նույն թվականի մեջլիսի ընտրություններին Թուրքիայի բանվորական կուսակցությունը չէր մասնակցել, քանի որ քայքայվել էին նրա ստորին շատ կազմակերպություններ: 1962 թվականի սկզբին կուսակցությունը վերակազմվեց. նրա ղլխավոր նախագահը դարձավ կրթությամբ իրավաբան Մեհմեդ Ալի Այբարը¹, Իր գործունեության հենց սկզբից Թուրքիայի բանվորական կուսակցությունը համապատասխանում էր հասարակության մի զգալի մասի տրամադրություններին. նա կոչ էր անում «երկրորդ ազատագրական պատերազմի», այսինքն՝ պայքարելու Թուրքիայի իսկական անկախ արտաքին քաղաքականություն վարելու, «ընդհանուր շուկայից» և ՆԱՏՕ-ից դուրս գալու, ամերիկյան բազաները վերացնելու և զորքերը երկրի տերիտորիայից դուրս բերելու համար: Ներքին քաղաքականության բնագավառում կուսակցությունը առաջ էր քաշել հասարակական խոր ռեֆորմներ կիրառելու ծրագիրը, որոնք Թուրքիային հնարավորություն կտան վերջ տալու հետամնացություններ: Նա պահանջում էր ազգայնաց-

¹ Մեհմեդ Ալի Այբարը՝ որպես միջազգային իրավունքի մասնագետ, հայտնի է Թուրքիայի սահմաններից դուրս: 1966 թվականի վերջին լորդ Ռասսելը Այբարին հրավիրել էր մտնել Վիեննայում ամերիկացիների հանցագործությունները հետաքննող հանձնաժողովի կազմի մեջ:

րոցական նստարանից դաստիարակված են եղել Աթաթյուրբին երկրպագելու ոգով: Այդ բանն անդրադարձավ 1965 թվականի պառլամենտական ընտրությունների արդյունքների վրա, որոնց առաջին անգամ մասնակցեց կուսակցությունը: Չնայած ռեակցիայի գործադրած հալածանքներին, շնայած այն բանին, որ ցրում էին նրա նախընտրական միտինգները, որ, ի տարբերություն մյուս կուսակցությունների, թուրքիայի բանվորական կուսակցությունը կառավարական ոչ մի վարկ չէր ստացել նախընտրական կամայական վարկու համար, նրա օգտին սրվել էր 276 հազար ձայն, և առաջին հերթին դրանք թուրք մտավորականության ներկայացուցիչների ձայներն էին: Դժբախտաբար, կուսակցությունը չկարողացավ ակտիվ գործունեություն ծավալել ոչ գյուղացիական դանդաղների շրջանում, ոչ խոշոր քաղաքների «գեջեկոնդուներում» ապրող լյուծպենյորդետարների շարքերում, ոչ էլ բնակչության ընդամենը յոթ տոկոսը կազմող բանվորների շրջանում (և դա շնայած այն բանին, որ կուսակցությունը համագործակցում է առաջադիմական տարրերի հետ): Նույնիսկ Զոնդուլզակի հանցափորների շրջանում, որտեղ ընտրություններից մի քանի ամիս առաջ տեղի էին ունեցել գործադուլավոր հանցափորների արյունալի ընդհարումներ ոստիկանության և զորքերի հետ, ճնշող մեծամասնությունը քվեարկել էր արգարության կուսակցության օգտին: Չնայած թուրքիայի բանվորական կուսակցության նախընտրական լոզունգն էր. «Կոշտուկավոր ձեռքեր՝ դեպի մեջլիս», այնուամենայնիվ, այդ կուսակցությունից դեպուտատներ դարձան գլխավորապես բարձր զարգացած մտավորականները, ինչպես, օրինակ, կուսակցության լիդեր Մեհմեդ Ալի Ալբար, տեսաբան ու տնտեսագետ Սադուն Արենը, սոցիոլոգիայի պրոֆեսոր Թիլին Բեհիշ Բորանը և ուրիշներ: Հետագայում կուսակցությունը զգալի չափով փոխեց իր գործունեությունը, որպեսզի կուսակցական ղեկավարության մեջ ներգրավի ավելի շատ բանվորների: 1966 թվականի վերջին կուսակցության երկրորդ համագումարում ընտրված գործադիր կոմիտեի անդամների թվում (41 մարդ) 51 տոկոսը կազմեցին բանվորների ներկայացուցիչները: Թուրքական ռեակցիային առայժմ չհաջողվեց թուրքիայի բանվորական կուսակցությունը վերացնել քաղաքական ասպարեզից¹:

¹ 1971 թվականի հուլիսի վերջին թուրքիայի բանվորական կուսակցությունը ցրվեց, իսկ նրա գործիչները կուսակցության այն ժամանակվա նախա-

Անհասկած, կուսակցութեանը մեծ վնաս հասցրեց 1968 թվականին տեղի ունեցած պառակտումը երկու թևի. մեկը՝ Այբարի գլխավորությամբ, և երկրորդը՝ Արենի գլխավորությամբ: Եթե 1968 թվականի հունիսին մեջլիսի լրացուցիչ ընտրությունները ցույց տվեցին կուսակցության ազդեցության աճը, ապա 1969 թվականի ընտրություններում նա ստացավ 30 հազար ձայնով ավելի պակաս: Եվ թեպետ այդ թիվն աննշան է, ընտրությունների նոր կանոնադրության համաձայն կուսակցությունն ստացավ ընդամենը երեւո տեղ: Այդպիսով, կրճատվեց պառլամենտական տրիբունայից նրա գործունեության շառավիղը: Սակայն փաստ է, որ թուրքական մեջլիսը մի ժամանակ մուսուլմանական երկրների մեջ միակ մեջլիսն էր, որտեղ կային մարքսիստական կուսակցության ներկայացուցիչներ, որոնց հիւլյթները փրենց տեսական բարձր մակարդակով և համոզիչ փաստարկումներով ավելի ու ավելի լայն արձագանք էին գտնում, և հիմա էլ գտնում են ամբողջ երկրում:

1970 թվականի դեկտեմբերին իր մասին հայտնեց մի նոր աջ կուսակցություն ևս՝ ազգային փրկության կուսակցությունը, որը գլխավորում է պրոֆեսոր էրբաքանը: Այն սակավաթիվ է իր կազմով և ունի արևմտյան կողմնորոշում:

ԼԱՒՑԻՉՄ

Ես Թուրքիա եկա 1961 թվականի աշնան սկզբին՝ ընտրություններից քիչ առաջ: Այն ժամանակ դեռ գործում էր ազգային միասնության կոմիտեն, ավարտին էր մոտենում դեմոկրատական կուսակցության ղեկավարների Յասսըպազի դատավարությունը և արդեն բացեիբաց խոստում էին մահվան դատավճիռներ կայացնելու հնարավորության մասին: Սեպտեմբերյան օրերից մեկում տապալված ռեժիմի ինչ-որ մի կարևոր գործչի թաղումը Ստամբուլում վերածվեց Մենդերեսի կողմնակիցների ցույցի: Թաղման թափորի գրեթե բոլոր մասնակիցներին ձերբակալեցին

գա՛ տիկին Բեհիշե Բորանի գլխավորությամբ ձերբակալվեցին: 1972 թվականի հոկտեմբերին կայացած դատավարությունը Բեհիշե Բորանին և կուսակցության կենտրոնական կոմիտեի լոթ անդամներին դատապարտեց 15 տարվա բանտարկության, կուսակցության մյուս հինգ ակտիվիստները, նրանց թվում և Սադուն Արենը, դատապարտվեցին 12 տարվա բանտարկության, կուսակցության ութ անդամները՝ 6—8 տարի բանտարկության:

ու բանտ նետեցին: «Ինչի՞ համար», — կհարցնեք դուք: Գուցե նրա համար, որ նրանք հակակառավարական լողունգներ էին բղավում: Քավ լիցի: Թուրքական քրեական օրենսգիրքը նախատեսում է ուրիշ պատճառ՝ փողոցում կրոնական երգեր երգելու համար...

Առաջին հայացքից աննշան այս փաստը ամենայն աղինբնությամբ ցույց է տալիս, թե ինչպիսի խոր փոփոխություններ են տեղի ունեցել Թուրքիայում այն բանից հետո, երբ Քեմալը մտցրեց աշխարհիկ օրենսդրություն: Պահանջվեցին Աթաթյուրքի հաստատուն կամքն ու հաստատուն վճռականությունը կոտրելու համար այն «պորտալարը», որը Թուրքիային կապում էր իսլամի, այսինքն՝ Արևելքի հետ, և նրան շուտ տալու զեպի Արևմուտք:

Լաիցիզմի աստիճանական արձատրամբումը, այսինքն՝ կրոնի անջատումը պետությունից իր նտեից բերեց այն, որ արգելվեցին տաճարներից դուրս ամեն տեսակ կրոնական ցույցերը, հրապարակորեն կրոնական երգեր երգելը, ինչպես նաև հոգևոր զգեստներ կրելը: Եվ ոտից զլուխ սև հագած անատոլիացի գեղջիկուհիները ավելի շատ են նման միանձնուհիների, քան իրենք՝ միանձնուհիները, որոնք կրում են սովորական զգեստ:

Լաիցիզմը Թուրքիայում մեկնարանյում է որպես քեմալականության անկունքաբար. այդ նա էր, որ Թուրքիան բարձրացրեց ազատիկն անկման հատակից, նրա համար նշեց նոր տեղ աշխարհում. ցույց տվեց մոդեռնացման, եվրոպականացման և սոսաջադիմության ուղին: Գաստիարակված լինելով քեմալականության ոգով, երկրի կառավարող ընտրանին, պաշտոնյաները և, գլխավորը, սպայությունը, լաիցիզմը համարում են մի յուրատեսակ «տարու», որից չի կարելի նահանջել: Նրանցից ոչ ոք չի խոստովանում, որ պահպանում է կրոնական սովորույթները: Կրոնական լինելը Թուրքիայում «վատ նշան» է, կրոնական լինել՝ նշանակում է ինե, հետամնաց: Առաջադեմ Թուրքերը գրանում են, որ իսլամական դոգմատիզմը, որ պաշտում էին իրենց նախնիները, «Եվրոպայի հիվանդ մարդու» հետամնացության գլխավոր պատճառն էր, իսկ քեմալական լաիցիզմը նրանց համար արդիականություն էր հոմանիշն է: Մորուքավոր կրոնական մոդեռանդներին հաճախ դարձնում են քաղաքական ծաղրանկարների հերոսներ...

Այս իմաստով Թուրքիան արմատապես տարբերվում է արաբական երկրների մեծ մասից: Նույնիսկ այն երկրներում, որոնք կառուցում են իրենց «արաբական» սոցիալիզմը, իսլամը մնում է որպես պետական կրոն, իսկ այդպիսի պետությունների լիդերները փորձում են առաջադիմական դադափարներ քաղել իսլամից...

Սակայն այնքան էլ հասարակ բան չէ հասկանալ լաիցիզմի հիմունքները Թուրքիայում. դրա համար հարկավոր է լավ յուրացնել սահմանադրությունը և հիմնավորապես ծանոթանալ մասնագիտական գրականությանը: Զրոսաշքբիկը, որը երկրի մասին դատում է այն ամենից, ինչ տեսնում է սեփական աչքերով, կոժվարանա գլուխ հանել այս հարցից: Երբ նա դիտում է Ստամբուլը և նրա սքանչելի մզկիթները, նրա վրա, անկասկած, տպավորություն կգործեն «ուղղահավատների» բազմությունները, որոնք աղոթում են շատվաններում ծիսական լվացումը կատարելուց հետո: Կախարդված աչքերով նա կդիտի յուրատեսակ «մարմնամարզությունը», երբ աղոթողները բոլորը միապին, կարծես հրամանով, ծնկի են իջնում, ձեռքները դնում ուսերին ու սրտին, գլուխները իջեցնում և իրար միացրած փերով փակում են դեմքները (ի դեպ, պետք է նկատել, որ ուղղահավատ մուսուլմանները երբեք դեմ չեն լինում, որ կողմնակի մարզիկ, գլավուրները, ներկա գտնվեն մզկիթում լվացման և աղոթքի ժամանակ): Սահմանված ժամին մարդիկ փոսում են հատուկ փոքրիկ գորգերը և աղոթում ամենուրեք՝ խանութում, երկաթուղային վագոնում, դաշտում: Միակ վայրը, որտեղ համեմատաբար հազվադեպ կարելի է տեսնել աղոթող մուսուլմանների, դա նոր Անկարան է, քանի որ այնտեղ մզկիթներ քիչ կան և քանի որ Անկարայում ապրում են հիմնականում կառավարող քննարանին ու պաշտոնյաները՝ քեմալականության հիմունքների հավատարիմ պահապանները:

Այսպիսով, Աթաթյուրքի ունիթումները, հատկապես լաիցիզմը շոշափեցին կրթված մարդկանց մի աննշան մասին միայն և նվազագույն չափով անգամ շոշափեցին ժողովրդի հիմնական զանգվածներին, և առաջին հերթին պետական զանգվածներին:

Ես համաձայն եմ այն տեսակետին, որ մի անգամ ինձ հայտնել է երկար ժամանակ Թուրքիայում ապրած արևմտյան ժուռնալիստներից մեկը. նա այն ժամանակ ասաց, որ եթե այդ ու-

Ֆորմները, որոնք նպատակ ունեն այդքան արմատական կերպով խախտել հասարակության բարոյական նորմաները, մինչև այժմ մճռական դիմադրության շեն հանդիպել, ապու դա կարելի է բացատրել միայն մի բանով, որ բնակչության ճնշող մեծամասնությունը դրանց մասին պարզապես ոչ մի գաղափար չունի: Գյուղացին գյուղում այսօր էլ ապրում է այնպես, ինչպես հարյուրամյակներ առաջ՝ Օսմանյան կայսրության սովորույթներով ու ավանդույթներով: Հազարավոր գյուղացիներ նույնիսկ չեն էլ ենթադրում, որ թուրքական պետությունը աշխարհիկ հանրապետություն է. նրանց համար անկախության պատերազմը մնում է որպես մի կրոնական կոնֆլիկտ, որը վերջացել է «անհավատների» նկատմամբ իսլամի հաղթանակով: Եվ այսօր էլ գյուղում ամենաբարձր հեղինակությունը իմամն է կամ խոջան, այսինքն՝ մի մարդ, որը կատարել է մուսուլմանի իր սրբազան պարտքը և գեթ մի անգամ եղել է Մեքքայում:

Ահա, օրինակի համար, մի աննշան, բայց այնտեղի կյանքի համար բնորոշ շտրիխ. այսպես կոչված «խաղաղություն» ամերիկյան կորպուսի համագումարում, 1966 թվականի դեկտեմբերին, կորպուսի աշխատակիցներից մեկը գանգատվում էր, որ իր գյուղի (Նիգրեի մոտակայքում) գյուղացիներից ոչ մեկը չի ցանկանում օգտվել այնտեղ կառուցված գուգարանից միայն այն պատճառով, որ նա իր ճակատով նայում էր դեպի Մեքքայի կողմը, նշանակում է, այնտեղ ֆիզիոլոգիական կարիքների կատարումը սրբապղծություն կլինի...

Այսպիսով, թուրքիայում արդեն բազում տարիներ գոյություն ունի խզում մի կողմից աշխարհիկ հանրապետության և մյուս կողմից հավատացյալ գյուղացիական և մանրբուրժուական մասսայի միջև: Ըստ որում վերջիններս դավանում են տարբեր կրոններ, թեև բոլոր թուրքերն էլ մուսուլմաններ են... Մուսուլմանության տիրապետող ուղղահավատ ուղղությունը սուննիզմն է: Սակայն թուրք բնակչության նշանակալի մասը՝ մոտ տասը միլիոն մարդ, կազմում են շիաները, որոնք գտնում են, որ խալիֆ պետք է լինի Ալին՝ Մուհամմեդի փեսան: Ոմանք շիիզմը համարում են մուսուլմանական բողոքականություն, բայց այս համեմատությունը, ինչպես և ամեն մի այլ համեմատություն, այնքան էլ ճիշտ չէ: Բողոքականությունը հայտնվել է կաթոլիկությունից զբալիսորեն ավելի ուշ, իսկ շիիզմը՝ կղբնավորվել է սուննիզմի հետ գուգահետ, թեև եղել է, հատկապես թուրքիա-

չում, ավելի պակաս օրտոդոքսալ ուղղութիւն: Շիիզմի մի քանի
ճշուղներում զգացվում է քրիստոնեութեան և ավելի վաղ շրջանի
կրոնների ազդեցութիւնը (օրինակ, հացն ու գինին միմյանց
տալու սովորութիւնը):

Շիիզմը, որ այստեղ անվանում են ալեիզմ, որը Թուրքիա է
բերվել խորասանից (Պարսկաստան), որտեղ այն եղել ու մինչև
հիմա էլ դեռ մնում է որպէս կրոնի հիմնական ուղղութիւնը:
Պատերազմները Օսմանյան կայսրութեան և Պարսկաստանի մի-
ջև հիմնականում եղել են պատերազմներ սուննիների ու շիաների
միջև: Այդ ժամանակից սկսվեց շիաների հալածանքը սուննի
հոգևորականութեան կողմից, և հանրապետական Թուրքիայում
ևս այդ բանը կարելի է դիտել ամեն քայլափոխի:

Մինչև այսօր էլ Թուրքիայում գոյութիւն ունեն բազմաթիւ
աղանդներ, որոնք կապված են շիիզմի հետ: Ամենից ավելի
ճշուղավորվածը «բեկտաշի» աղանդն է, որին մի ժամանակ
սլաւոկանում էին շատ ենիշերիներ: Այս աղանդը, ավելի ճիշտ,
միաբանութիւնը, ճիշտն ասած, իր կյանքի փիլիսոփայութեամբ
վաղուց է հեռացել Ղուրանից. իր արմատներով նա դնում է
մինչև նախախալական հավատալիքները և որոշ չափով հա-
րում է քրիստոնեութեանը (օրինակ, նա ճանաչում է երրորդու-
թիւնը), ինչպէս նաև հավատում է հոգեփոխութեանը: Միաբա-
նութեան անդամները՝ բեկտաշիները, կնոջը համարում են իրենց
հավասար. նա տղամարդկանց հետ հավասար մասնակցում է
զրույցներին. «միաբանները» խմում են գինի և իրենց շեն զըր-
կում երկրային հաճույքներից: Իր բնույթով որոշ չափով նրանց
է հարում կրգըլբաշների զուտ շիական աղանդը: Դրա փոխարեն
Մելլանաչի միաբանութիւնը շիիզմի հետ ոչ մի ընդհանուր բան
չունի, թեև Մելլանաչի դերվիշները ևս ազատորեն գինի էին
խմում և հետո էին նեղ օրտոդոքսալութիւնից:

Ներկայումս Թուրքիայում կան մոտ վաթսուներկու կրոնական
աղանդներ:

Երբեմն տարբեր ուղղութիւնների ներկայացուցիչների միջև
ծաղում են արյունալի ընդհարումներ: Այդպէս եղավ, օրինակ,
1966 թվականի գարնանը, երբ կրոնական գործերը ղեկավարում
էր Իբրահիմ էլմալին, որը բացահայտորեն հովանավորում էր
սուննիներին ու նրանց ծայրահեղ ուղղութեանը՝ նուրջիստների
աղանդին: Այս աղանդի հիմնադիրն է մի ոմն Սաիդ-ի Նուրաի,
որը 1927 թվականին հայտնվել էր Բապարտայում: Նա բացահայ-

սորեն հանդես էր գալիս լաիցիզմի և երկրի եվրոպականացման դեմ, պայքարում էր այն բանի համար, որ վերադառնան շաքիաթի իրավունքներին, որ կանայք ծածկեն երեսները, իսկ տղամարդիկ ֆես կրեն, նա կոչ էր անում վերացնել աշխարհիկ դպրոցները, ոչնչացնել հանրապետությունը և վերականգնել թեոկրատական պետությունը: Նուրսին շրջագայում էր ամբողջ երկրում, քարոզելով իր հայացքները, և անդամ մեծ տպաքանակներով հրատարակում էր անլեզալ կրոնական գրականություն: Դեռևս Քեմալի կենդանության ժամանակ՝ 1929 թվականին, նա դատապարտվել էր բանտարկության, իսկ նրա աղանդը քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի հիման վրա ճանաչվել էր անօրինական: Սաիդ-ի Նուրսին մեռավ 1960 թվականին, մայիսյան հեղաշրջումից առաջ: Ասում էին, որ իբր նրա մարմինը քառահատել էին ու նետել լիճը, վախենալով, որ նրա գերեզմանը կդառնա մասսայական ուխտագնացության վայր, քանի որ նրա կողմնակիցների թիվը հասնում էր մինչև երկու միլիոնի:

Հետաքրքրական է, որ կրոնական աղանդների այդ խայտաբղետ պատկերի մեջ կա, օրինակ, եզիդների մի աղանդ, որն ընդունում է դուալիզմը, այսինքն՝ բարի և չար ոգու գոյությունը, և այդ պատճառով ոմանք եզիդներին համարում են սատանայի երկրպագողներ: Իսկ նրանք իրենք դատում են բավական հասարակ ձևով. քանի որ աստված բարի է, նա ոչ մի վատ բան ոչ որի չի անի, բայց չար ոգուն էլ հարկավոր է աղոթել, որպեսզի նա էլ ոչ մեկին դժբախտություն չպատճառի...

Ժողովրդի մեջ հավատը բավական ուժեղ և ամուր արմատներ է գցել: Ուստի ակամա հարց է ծագում. ի՞նչ շահով է դաստիարակչական այնպիսի մի գործոն, ինչպիսին է դպրոցը, երիտասարդ սերնդի մեջ արմատավորում լաիցիզմի հիմունքները, որոնք պաշտոնապես երաշխավորված են սահմանադրությամբ:

1934 թվականին Աթաթյուրքը վերացրեց կրոնական ուսուցումը դպրոցում: Սակայն տասնհինգ տարի անց, դեռ դեմոկրատական կուսակցության իշխանության գլուխ անցնելուց մեկ տարի առաջ, 1949 թվականին, հասարակական կարծիքի ճնշման տակ, կրոնը նորից մուտք գործեց դպրոցները: Ճիշտ է, սկզբնական շրջանում Ղուրանն ուսումնասիրում էին միայն նրանք, որոնց ստիպում էին ծնողները, և այն էլ տարրական դպրոցի վերջին դասարաններում միայն: Սակայն այդպիսի ծնողներ թե՛լ կային, քանի որ հայտնի չէին կառավարության հետագա

քաղերը այդ բնագավառում: Իսկ երբ 1950 թվականին իշխանության գլուխ անցավ Մենդերեսը, կրոնը դարձավ դպրոցական ծրագրի մի մասը: Ղուրանը ուսումնասիրում են բոլոր դպրոցականները՝ անկասի ծնողների ցանկություներից: Գործնականորեն այն ուսումնասիրում են բոլորը:

Հասարակական կարճիքի ճնշման տակ մեջլիսը 1949 թվականի ամռանը որոշում ընդունեց Անկարայի համալսարանին կից բացել աստվածաբանական ֆակուլտետ: Նույն թվականին բացվեցին իմամներ պատրաստող դպրոցներ և ավելացավ Ղուրանի ուսումնասիրման դասընթացների թիվը: Եթե 1932 թվականին ինը այդպիսի դպրոցներում սովորում էր 232 մարդ, ապա 1952 թվականին 195 դպրոցներում արդեն կար 11 836 մարդ: Մենդերեսի կառավարման ժամանակաշրջանում կառուցվեցին բազմաթիվ նոր մզկիթներ, մեծ տպաքանակներով հրատարակվեց կրոնական գրականություն, ռադիոյով զբույցներ էին անցկացվում կրոնական թեմաներով:

Մայիսյան հեղաշրջումից հետո, երբ իշխանության գլուխ անցավ բանակը, իսկ ապա՝ ժողովրդահանրապետական կուսակցությունը, որոշակի փորձեր արվեցին սահմանափակելու կրոնական մուսուլմանների գործողությունների ազատությունը: Դրանից լայնորեն օգտվեց արդարության կուսակցությունը, որն իր նախընտրական պրոպագանդայում ճարպկորեն կարողացավ օգտագործել գյուղացիների և բուրժուազիայի մուսուլմանական ավանդույթներին հավատարիմ մասի կրոնական զգացումները: Եվ այդպիսի պրոպագանդան տվեց իր պտուղները. 1965 թվականի հոկտեմբերի ընտրություններում արդարության կուսակցությունը հաղթանակ տարավ:

Դրանից հետո «ձնհալը» կրոնի բնագավառում ընթացավ ամբողջ թափով: Ակսեցին անգամ պահանջներ բռնել, որ Այա Սոֆիան թանգարանից նորից դարձնեն մզկիթ: Դրա օգտին արտահայտվեց պետական մինիստր Սեզգինը, հանդես գալով մամուլի կոնֆերանսում 1966 թվականին (ճիշտ է, նման միջոցառումը նա շփրառեց կյանքում, քանի որ հաճախակի էին դարձել բողոքները նման քաղի դեմ և՛ Թուրքիայում, և՛ արտասահմանում): Անկարայի ճարտարապետների ղեկավար Ինկայան, հանդես գալով մամուլի կոնֆերանսներից մեկում, դատապարտեց Այա Սոֆիան մզկիթի վերածելու կամայանիան. ընդամին նա հիշեցրեց, որ 1950-ից մինչև 1965 թվականը Թուրքիայում

կառուցվել են 17 հազար նոր մզկիթներ և դրանց վրա ծախսվել է շորս միլիարդ թուրքական լիրա, որոնցով, Ինկայայի խոսքերով, կարելի էր կառուցել քառասուն հազար դպրոց, այսինքն՝ մեկական դպրոց քառասուն հազար գյուղերում: 1966—1967 թվականներին մամուլում հաճախակի հաղորդումներ էին երեւում լաիցիզմի հիմունքները խախտելու մասին. գրում էին, օրինակ, այն մասին, որ որոշ միեւրոպայացիներում գոյություն ունեն փոքրիկ գաղտնի մզկիթներ, որ մայրաքաղաքի մի մեծ խանութում մզկիթ էին դարձրել... զուգարանը, որ անգամ մեջլիսում կա մի հատուկ սենյակ, որտեղ աղոթում են դեպուտատներն ու սենատորները բոլոր կուսակցություններից, բացի Թուրքիայի բանվորական կուսակցության դեպուտատներից: Բողոքի իսկական փոթորիկ առաջացրեց 1966 թվականի սկզբին ուսմազանը՝ վերջանալու կյսպակցությամբ տեղի ունեցող հանդիսություններում պրեմիերի արտասանած ճառը, որի մեջ նա հաճախակի դիմում էր ամենազոր Ալլահին: Ինչպես հետագայում գրել է հայտնի թուրք ժուռնալիստ ու սենատոր Նադիր Նադին, պրեմիեր մինիստրի ճառը «ավելի շուտ հիշեցնում էր գյուղական մոլլայի քարոզ, այլ ոչ թե քեմալականության ավանդույթներով դաստիարակված աշխարհիկ պետական գործչի ելույթ»: Այդ ճառի դեմ այն ժամանակ բողոքով հանդես եկան Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի 62 պրոֆեսորներ և գիտական աշխատողներ:

Բնական է, որ կրոնի նկատմամբ նման խրախուսական վերաբերմունքը «վերևում» անմիջապես պատասխան ունակցիա առաջացրեց «ներքևում»: Չայները բարձրացրին անգրագետ կեղծ բարեպաշտները: Արդարության կուսակցության կառավարման առաջին տարիներին կաթելի էր լսել Քաղզըլլիի մուֆտիին, որը հանդիսավորապես հայտարարում էր, որ երկիրը կլոր չէ և որ հարկավոր չէ հավատալ այն ուսուցիչներին, որոնք պնդում են այդ: Աճեց դեպի Մեքքա ուխտագնացների թիվը, շնչած բժիշկները համառորեն նախազգուշացնում էին, որ դա Թուրքիային սպառնում է խուլերայի տարածում: Նորից սկսեցին զլուխ բարձրացնել նուրջիստները, ի լուր ամենքի հայտարարելով, որ իրենք թշնամի են լաիցիզմին, և այդ ազանդի ավելի ու ավելի մեծ

¹ Թամազան — մուսուլմանական պատ

Թվում անդամներ էին դատապարտվում բանտարկության: Վճարելի դատարանի նախագահ Օբթեմը պրեմիերի ներկայությամբ 1966 թվականին հայտարարեց, որ աշխարհիկ դատավարությունը ամենայն վճռականությամբ խափանելու է լաիցիզմի դեմ կատարվող ամեն մի ոտնձգություն: Երկրում կրոնական ակտիվության աշխուժացման դեմ հանդես եկավ նաև բանակը: Անվտանգության խորհրդի նախագահ, գեներալ Ուրլգենալիբ 1966 թվականի ապրիլին շատ խստորեն հանդես եկավ կրոնական տարրերի դեմ: «Ընդհանուր առմամբ, — ասաց նա, — խնչպես միտրոպոլիտը այժմերը փշացնում են անտառը, այդպես էլ այժի միտրոպոլիտը մոլորեցնում են ղեկավարության հիմքերը»: Իհարկե, գեներալների ելույթներն ի պաշտպանություն լաիցիզմի դեմ չեն նշանակում, որ նրանք առաջադիմության կողմնակիցներ են, թեև վերաբերմունքը դեպի լաիցիզմը որոշ չափով առաջադիմության «լակմուսի թուղթն» է:

Բանակի դիրքորոշումը այդ հարցում եղավ այն գործոնը, որը Դեմիրելին համողեց փոքր-ինչ սահմանափակել կրոնական տարրերի գործողությունների ազատությունը: Մասնավորապես, դբադեցրած պաշտոնից հանվեց Իբրահիմ էլմալին, որն, ի խախտումն սահմանադրության, կոշ էր անում վերադառնալ թեոկրատական պետության. բացի դրանից նա իրեն վարկաբեկել էր նուրբիստների ազանդի հետ ունեցած կապերով և շիաների դեմ գործած հարձակումներով: Էլմալիի ազատումը սաստիկ կատաղեցրեց խլամի կողմնակիցներին. նրանք սկսել էին Դեմիրելին կշտամբել, որ նա իբր կապված է մասոնների հետ: «Մենք նրան թույլ չենք տա միջամտելու կրոնի գործերին, եթե անգամ նա նստած էլ է «սպիտակ ձիուն»», — սպառնացել էր կրոնական գործիչների ֆեդերացիայի անդամներից մեկը (այդ ֆեդերացիան հիմնվել էր 1964 թվականին և իր շարքերում ունի մոտ վաթսուհ հազար անդամ)՝ հանդես գալով ֆեդերացիայի համագումարում 1966 թվականի վերջին: Բայց Դեմիրելը չենթարկվեց սպառնալիքներին. նա հասկանում էր, որ նման հարձակումները միևնույն է չեն խանգարի իր կուսակցությանը ընտրողների շրջանում, հատկապես գյուղերում, համարվելու «մուսուլմանական կուսակցություն»: Բայց Թուրքիայում հենց այդ է ժողովրդականության գրավականը:

Որևէ փոփոխություն տեղի ունեցել է արդյոք կրոնի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մեջ: Շատ ու շատ աննշան,

եթե նկատի ունենանք գյուղը և նահանգները: Իսկ եթե խոսենք մտավորականության երիտասարդ սերնդի, պաշտոնյաների, բուրժուազիայի մի մասի, բանակի մասի՞ն: Ես կվկայակոչեմ հարցման այն տվյալները, որ Թուրքիայի մասին իրենց գրքում բերում են ամերիկացի երկու հեղինակներ. այդ հարցումը նրանք կատարել են 1959 թվականին քաղաքային լիցենզներում: Իհարկե, սովորողների պատասխանների նկատմամբ հարկավոր է վերաբերվել որոշ ուղղումով, քանի որ այն ժամանակ Մենդերեաի դեմ երիտասարդության թունդ խռովության ժամանակաշրջանն էր և այն ժամանակից հետո տրամադրությունը կարող է փոխված լինել:

Պատասխանելով այն հարցին, թե իրենք ինչ առարկաներ կսովորեցնեն իրենց երեխայներին, եթե իրենք ծնողներ լինեին, հարցում արվածներից միայն երկու տոկոսն է անվանել կրոնը դպրոցական առարկաների շարքում: Այն հարցին, թե որ մասնագիտությունն իրենց բավականություն կպատճառեր, կրոնի օգտին արտահայտվել է մոտ յոթ տոկոսը: Հարցում արվածների մեկ տոկոսից էլ պակաս մասն է ընդունում կրոնի հեղինակությունը: Սովորողների մոտ երեք տոկոսը հոգևոր անձը անվանել է մի այնպիսի ֆիզուր, որն ամենից ավելի շատ է հիացնում իրենց: Եվ անգամ այն հարցին, թե նրանք ինչ կանեին, եթե դժբախտություն գար իրենց զլխին, միայն կես տոկոսն է պատասխանել, որ օգնության համար կդիմեին Ալլահին:

Այս պատասխանները չեն կարող դարձանք առաջացնել, եթե իմանանք Քեմալի պաշտամունքի մասին, որով դաստիարակվում են աշակերտները դպրոցներում: Ես ծանոթացել եմ տարբեր դասարանների դպրոցական ծրագրերին, և բոլորի մեջ էլ «Թուրքերի հոբ» կենսագրությունը նշված է որպես գլխավոր առարկա: Ես ներկա եմ եղել երիտասարդական շքերթներին, և աճետեղ երիտասարդները կրում էին պլակատներ. «Աթաթյուրք, մենք գնում ենք քո հետքերով»: Ինձ թվում է, որ այնքան էլ հեշտ չէ ստիպել երիտասարդներին՝ ընթանալու ժամանակակից Թուրքիան կերտողի ուղիով, ընդամին ժխտելով նրա հիմնական ուժերը:

Իհարկե, տվյալ դեպքում խոսքը կրթված երիտասարդության մի նեղ միջնախավի մասին է միայն, այլ ոչ թե թուրք երիտասարդության մասսայի մասին, որի համար ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել, և նման դրությունը ժխտելը քաղաքական սխալ

կլիներ: Այս փաստերի հետ ստիպված են անգամ հաշվի նըստելու Թուրքիայի բանվորական կուսակցութեան շիզերները, որի օգտին պատահական չէր, որ քվեարկեցին մտավորականութեան ներկայացուցիչները: Հաշվի առնելով «արաբական» սոցիալիզմի փորձը, Թուրքիայի բանվորական կուսակցութեան մի քանի դործիչներ սկսել են հայտարարել, որ իսլամի մեջ կան որոշ պողիտիվ գաղափարներ և որ այդ պատճառով հարկավոր չէ հաշվից դուրս նետել նրանց, ովքեր անկեղծորեն հավատարիմ են իսլամին: Այսպես, օրինակ, հայտնի Թուրք ժուռնալիստ և դեպուտատ Չեթին Ալթանը իր հոբվածներում զարգացնում էր այն թեզը, թե, այն որ անգրագետ մասսաները դիմում են Ղուրանին, դա նրանց կողմից բողոքի տարերային ձև է ընդդեմ բուրժուազիայի կողմից իրենց պարտադրվող արևմտյան ապրելակերպի... Հետևաբար, սխալ կլիներ նրանց բուրժին համարել հետադիմականներ: Ահա թե ինչու Թուրքիայի բանվորական կուսակցութեան համադումարում՝ 1966 թվականի նոյեմբերին քննդատութեան ենթարկվեց մակերեսային մոտեցումը կրոնի հարցերին և ընդգծվեց, որ հոգևոր անձանց շրջանում ևս կան մարդիկ, որոնք ունեն առաջադիմական, հակաֆեոդալական և հակամերիկյան հայացքներ:

Լաիցիզմի հարցը Թուրքիայում չափազանց բարդ և սուր հարց է: Քեմալականութեան ավանդույթներով դատարարակված մտավորականութեան շրջանում անգամ հարկավոր է հաշվի նստել ավանդույթների ճնշման հետ: Ես, երեխ, երբեք չեմ մոռանա մի սպայի խոսքերը, որը հրաժարվել էր ռամազանի ժամանակ ծխախոտ ծխել. «Ինձ համար միևնույն է, բայց վա՛յ ինձ, եթե իմ հարադատները ծխախոտի հոտ առնեն ինձնից...»:

ԷՏՍՏԻՁՄ

Որպեսզի կարողանանք գնահատել Քեմալի ջանքերը, երբ նա ձգտում էր զարգացնել երկրի էկոնոմիկան և այն դնել ժամանակակից զարգացման ուղիների վրա, հարկավոր է հիշել, թե ինչ ժառանգություն էր ստացել երիտասարդ հանրապետությունը: Նրա այն ժամանակվա դրությունը որոշ իմաստով հիշեցնում էր Ղլխախտայական Լեհաստանի դրությունը, թեև Օսմանյան կայսրությունը երբեք չի իմացել Ղլխախտա՝ մեր հասկացողությունը: Բայց, ինչպես մի ժամանակվեհերը, Թուրքերն իրենց բազմազգ

պետութիւնում չէին զբաղվում ոչ արդյունաբերութեամբ, ոչ առևտրով: Ուղղահասակ մուսուլմանը ամենից առաջ ձգտում էր զինվորական կարիերայի և արքունիքի բարձր պաշտոններին: Նա արհամարհում էր տնտեսական զբաղմունքները և դրանցով զբաղվելու իրավունքը վերապահում էր ոչ մուսուլմաններին, այսինքն՝ քրիստոնյաներին, և առաջին հերթին, հույներին ու հայերին, ինչպես նաև հրեաներին: Թուրք բնակչության ամենաազդեատ խավերն անգամ զբաղվում էին տնայնագործութեամբ և շատ հազվադեպ՝ առևտրով:

Հայտնի է, որ բնությունը դատարկութիւն չի հանդուրժում: Ազգային փոքրամասնութիւնները՝ հույները, հայերը, հրեաները, որոնք կոչվում էին նաև լեանտացիներ, իսկ քաղաքական իմաստով՝ երկրորդ տեսակի՝ քաղաքացիներ, տնտեսապես ավելի լավ դրութեան մեջ էին, քան տիրապետող թուրքերը: Նրանց մեծ մասը հատուկ արտոնութիւնների, այսպես կոչված, կապիտուլյացիաների շնորհիվ վայելում էին արտերկրայնութեան ստատուս: Առաջին կապիտուլյացիաները սուլթան Մահմուդ I-ը Ֆրանսիային էր տվել 1740 թվականին: Մահմուդի ժառանգորդները կապիտուլյացիաների գործողութիւնը տարածեցին նաև մյուս երկրների վրա: Արևմտակենտրոնական պետութիւնները հպատակները, որոնք ապրում էին Օսմանյան կայսրութիւնում, կրոնի ազատութեան և անձի անձեռնմխելիութեան իրավունքից բացի վայելում էին հյուպատոսական իրավազորութեան իրավունք, ազատված էին հարկերից և մաքսային տուրքերից:

Կապիտուլյացիաները գնալով սկսեցին տարածվել ավելի ու ավելի մեծ թվով տերութիւններով վրա: Սկզբում դրանք վերաբերում էին միայն ուրիշ պետութիւնների հպատակներին, բայց հետո տարածվեցին նաև Բարձրագույն դռան ոչ մուսուլմանների վրա, որոնք գտնվում էին օտարերկրյա դեսպանութիւնների և հյուպատոսութիւնների ծառայութեան մեջ և, վերջապես, դիվանագիտական ծառայութեան մեջ գտնվող լայն շրջանի մարդկանց վրա: Նրանք ստանում էին սուլթանական պահպանագիր՝ բերաթի՝ ժամանակի ընթացքում բերաթը սկսեց փոխանցվել ժառանգաբար, և այդպիսով ծնվեց մի նոր իրավական ստատուս, որը տարածվում էր զգալի թվով լեանտացիների վրա: Այդ երևութի մասշտաբների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. այսպես, XVIII դարի վերջին Մուղլապիայում, որն այն ժամա-

նակ մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ, կային 200 հազար ալաբերիացի՝ ցաղաբացիներ, իսկ Վալախիայում՝ 60 հազար, իսկ երբ այդ տերիտորիաների վրա տարածվեց Ռուսաստանի ազդեցությունը, նրանք այդ պահպանագրերը փոխարինեցին ռուսականով:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ստամբուլի օտարերկրյա օկուպացման ժամանակ լանտացիները իրենց հիմնական մասաւորով համակրում էին օկուպանտներին. հուլները, օրինակ, հունական բանակի կողմն էին... Հասկանալի է գտնւում, թե ինչու նոր թուրքական հանրապետության հիմնադիրները հարգանքով չվերաբերվեցին լանտական բուրժուազիայի և միջին խավերի նկատմամբ, որոնց ձեռքում էր կենտրոնացած կապիտալը: Հանրապետության ֆինանսները այն ժամանակ գտնվում էին կրիտիկական վիճակում. Լոզանի պայմանագրով Թուրքիան պարտավոր էր վճարել Օսմանյան պարտքի՝ մոտ վաթսուներկու տոկոսը: Նոր Թուրքիայի հիմնադիրների առջև ամբողջ սրտովյաժմբ ճառացաւ մի այսպիսի հարց՝ որտեղից վերցնել կապիտալ երկիրը ժամանակակից արդյունաբերական զարգացման ուղու վրա դնելու համար:

Մասնավոր կապիտալի վրա քիչ հույս կարելի էր դնել: Այն ժամանակ երկրում եղած միակ գյուղատնտեսական բանկը (Զիրաաթ բանկաւք) երբեք առևտրական բանկ չի եղել: Ճիշտ է, գոյություն ունեին ֆինանսական ուրիշ հիմնարկներ օսմանյան բանկի գլխավորությամբ, բայց դրանք գտնվում էին օտարերկրյա վերահսկողության ներքո:

Նման անբարենպաստ պայմաններում նոր հանրապետական կառավարությունը խիղախեց իրականացնելու գլխավոր խնդիրը՝ դնելու սեփական, անկախ էկոնոմիկայի հիմքը: Այս խնդրի կատարումը համընկաւ տնտեսական ձգնաժամի տարիներին (1929—1933), որն այն ժամանակ ընդգրկել էր ամբողջ կապիտալիստական աշխարհը, և դրան հաջորդած դեպրեսիայի տարիներին: Ճգնաժամը կործանարար ազդեցություն ունեցաւ երիտասարդ թուրքական պետության էկոնոմիկայի վրա: Թուրքիան համաշխարհային շուկա էր հանում գլխավորապես գյուղատնտես-

1 Օսմանյան պարտք — Օսմանյան կայսրության արտաքին պարտքը. որը կազմվել էր եվրոպական տերությունների կողմից Թուրքիային սարտադրված արդիացուցիչ փոխտուրքությունների հետևանքով:

ասական մթերքներ, բայց այդ ժամանակաշրջանում խիստ ընկեչ էին դրանց գները: Դա իր հետ բերեց արտաքին առևտրական հաշվեկշռի պակասորդ. արդյունաբերական ապրանքների ներմուծման համար թուրքիան վճարում էր իր հումքի մի քանի տեսակներով: Հենց այդ ժամանակ էլ ընկավ թուրքական լիբայի կուրսը:

Դեպքեհիան և նրա հետևանքները երկրում ծնեցին հակաարևմտական և հակակապիտալիստական արամադրությունների աճ: Շատ թուրքերի համար կապիտալիզմը և իմպերիալիզմը դարձել էին իրենց երկրի էկոնոմիկայի վրա կործանարար ազդեցություն խորհրդանիշ, իրենց գլխավոր թշնամին, իսկ Արևմուտքը՝ թուրքիայի նման թույլ դարգացած երկրների կեղեքիչ: Լոզանի պայմանագրի սահմանափակումները, որոնք թույլ չէին տալիս պաշտպանական միջոցներ ձեռնարկել արդյունաբերական ապրանքների բարձր գների կամայականության դեմ, արտաքին առևտրական հաշվեկշռի պակասորդը, դեպքեհիայի հետ կապված երկրի տնտեսական ծանր դրությունը, այս ամենը ծնում էր բացասական վերաբերմունք դեպի լիբերալ կապիտալիստական էկոնոմիկան:

Ֆինանսական կրախից խուսափելու համար կառավարությունը խիստ կրճատեց ապրանքների ներմուծումը արտասահմանից և որոշում ընդունեց ատեղծել սեփական, ազգային արդյունաբերություն, որը կենտրոնացված լինի պետության ձեռքում: Նման որոշման վրա, անկասկած, ազդել էին հարևան ու բարեկամական երկրի՝ Սովետական Միության տնտեսական հաջողությունները, որի պլանային էկոնոմիկան հաջողությամբ դարգանում էր, այն ժամանակ, երբ կապիտալիստական աշխարհում տիրում էր ճգնաժամը:

Թուրքիայի նման հետամնաց պետության կոնկրետ պայմաններում Քեմալի էտատիզմը ամենից առաջ դարգացող հայրենական արդյունաբերությունը օտարերկրյա տերությունների կապիտալից պաշտպանելու քաղաքականություն էր: Առանց պետության օգնության հայրենական արդյունաբերությունը չէր կարողանա դարգանալ ու ամրապնդվել: Էտատիզմը համապատասխանում էր նաև ազգային բուրժուազիայի ճնշող մասի շահերին, քանի որ նրան հնարավորություն էր տալիս հաջողությամբ մրցակցելու ինչպես ներքին շուկայում, այնպես էլ օտարերկրյա կապիտալի ու նրա հետ կապված Ստամբուլի կոմպրա-

դորական բուրժուազիայի դեմ: Թեև, եթե խոսելու լինենք կոմպրադորական բուրժուազիայի ու նրա քաղաքական ցուցորդների մասին, ապա հարկավոր է նշել, որ նրանք վճռականորեն չէին ընդունում քեմալականության էտատիստական կոնցեպցիան: Սակայն, շնայած նրանց դիմադրությունը, էտատիզմը 1931 թվականին մտցվեց ժողովրդահանրապետական կոստակցության ծրագրի և Թուրքական հանրապետության սահմանադրության մեջ:

էտատիզմի քաղաքականության շնորհիվ Թուրքիան կարողացավ թևակոխել տնտեսական դարգացման և օտարերկրյա կապիտալ ներդրումների սահմանափակման ուղին: Այդ քաղաքականության շնորհիվ Թուրքիան ի վիճակի եղավ կառուցել խոշոր ձեռնարկություններ, որոնք մասնավոր ձեռնարկատիրության ուժերից վեր կլինեին: Իսկ արդյունաբերական զարգացման մի քանի բնագավառներ հանձնվեցին մասնավոր սեկտորին:

Թուրքական ազգային արդյունաբերության զարգացման գործում մեծ ու էական օգնություն ցույց տվեց Սովետական Միությանը՝ ինչպես Թուրքիայի համար շահավետ պայմաններով արդյունաբերական վարկեր տրամադրելու ձևով, այնպես էլ Կաշսերիում և Նազիլիում տեքստիլ կոմբինատներ կառուցելու համար որակյալ կադրերով օգնելու ձևով: Սովետական երկիրը Թուրքիային օգնեց այդ կոմբինատների համար տեխնիկական կադրեր պատրաստելու և ժամանակակից սարքավորումներ մատակարարելու գործում: Դա սովետա-թուրքական ամենասերտ համագործակցության և կառավարական այցերի լայն փոխանակման ժամանակաշրջան էր: 1935 թվականին համաձայնություն ձևառ բերվեց սովետա-թուրքական պայմանագրի ժամկետը ևս տասը տարով երկարաձգելու մասին¹:

Նույն 1935 թվականին թուրքական կառավարությունը մշակեց արդյունաբերության զարգացման առաջին հնգամյա պլանը՝ այն ժամանակվա կապիտալիստական աշխարհում աննախընթաց մի դեպք: Այդ պլանի իրականացման համար որպես միջոց ծառայեցին երկու խոշոր պետական բանկեր՝ էտիբանկը և Սումերբանկը, որոնք վարկեր էին տրամադրում, ֆինանսավորում ներ-

¹ Խոսքը 1925 թվականին ստորագրված շահրձակվելու և շեղորության սովետա-թուրքական պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին է:

դրումները, սահմանում էին գները, վաճառքի պայմանները, վճարումների ժամկետները և այլն: Այդ բանկերի և նրանց ենթակա ձեռնարկությունների գործունեությունը հանգեցրեց, թեկուզ ոչ լրիվ, տնտեսական անկախության: Եթե դրան ավելացնենք աղի, ծխախոտի, սպիրտի, լուցիչ պետական մենաշնորհը, պետական էլեկտրակայանների, պետական երկաթուղիների, ինչպես նաև անտառների առկայությունը, որոնք 1937 թվականից դրսևում էին Անտառների շահագործման պետական կոմիտեի իրավասության տակ, ապա պարզ կդառնա, որ բավական նշանակալի էր պետության վերահսկողությունը այն ժամանակվա էկոնոմիկայի նկատմամբ...

Իհարկե, ամեն ինչ փորձ կապված է մեծ ծախսերի հետ: Էտատիզմի հսկառակորդները այսօր էլ դեռ պնդում են, որ պետական շատ ձեռնարկություններ խրոնիկական դեֆիցիտ են ունենում շափից դուրս ուռճացած բյուրոկրատական ապարատի և պլանավորման թերությունների հետևանքով: Եվ այնուամենայնիվ, էտատիզմի քաղաքականության կիրառումը Թուրքիային հնարավորություն տվեց դեռևս հայրենական արդյունաբերության հիմքը և ամրապնդել էկոնոմիկան: Ահա ինչպես է գնահատում այդ քաղաքականությունը Վերականգնման ու զարգացման միջազգային բանկը. «Էտատիզմի շնորհիվ Թուրքիան նշանակալի հաջողությունների հասավ: Ծառ կասկածելի է, որ այն պայմաններում նույնպիսի հաջողությունների կարողանար հասնել մասնավոր ձեռնարկատիրությունը»:

Թուրքիայի տնտեսական ջանքերը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, որին նա փաստորեն չմասնակցեց, էլ ավելի ընդլայնվեցին պետության միջամտությունը երկրի տնտեսական կյանքին: Էտատիզմը դարձավ պետության արտակարգ տնտեսական իրավունքների հիմքը: 1939 թվականին հաստատված երկրորդ հնգամյա պլանը այդպես էլ մնաց թղթի վրա՝ շափազանց բարձր ռազմական հարկերի և հումքի պակասի պատճառով: Դրա փոխարեն պատերազմի տարիներին աճեց արտաքին առևտրի ծավալը: Չեղոք Թուրքիայի արտադրանքը մեծ պահանջարկ ուներ և վաճառվում էր ավելի շուտ ստրատեգիական, քան առևտրական գներով: Խոշոր առևտրականներն ու գործակալները Ստամբուլում հսկայական կարողություն դիզեցին: Այդ վապակցությունամբ 1942 թվականի նոյեմբերին պետությունը կիրառեց մի արտակարգ ֆինանսական միջոցառում. նա մտցրեց

գույքի հարկ, որի էությունն այն էր, որ ամեն ոք երկու շաբաթ-վա ընթացքում միանվազ կարգով մուծում էր մի գումար, որը կազմում էր 1941 թվականի ընթացքում արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններից ստացած զուտ շահույթի 50—70 տոկոսը: Վճարի գումարը որոշում էին տեղական հատուկ հանձնաժողովները, որոնք չէին թաքցնում, որ գումարը որոշելիս իրենց համար հիմնական չափանիշ է եղել հարկատուի կրոնական և ազգային պատկանելությունը... Դրան անմիջապես հաջորդեցին արտումները պարտքերը չվճարելու համար. շատ հույներ, հրեաներ աշխատանքի արտրվեցին Աշկալի քարի հանքերը. արտրվածների խմբերը հաջորդում էին մեկը մյուսին, մի անակացումը հաջորդում էր մյուսին: Սակայն, այդ հարկի կիրառումը խիստ քննադատության ենթարկվեց ինչպես Թուրքիայում, այնպես էլ արտասահմանում. 1943 թվականի հուլիսին այն պաշտոնապես վերացվեց, իսկ նույն թվականի դեկտեմբերին Ստամբուլ վերադարձան արտրվածները:

Պատերազմից հետո էտատիզմի քաղաքականությունը նորից ընկալլ հարվածների տակ, որին, անկասկած, մեծապես նպաստեցին գույքի հարկի կապակցությամբ թույլ տրված շարաշահումները: էտատիզմի դեմ հանդես եկալ պատերազմի տարիներին աճած ազգային բուրժուազիայի մի նշանակալի մասը. իսկ քաղաքական սլանով դա մի ելույթ էր ժողովրդահանրապետական կուսակցության դեմ՝ հանուն տնտեսական լիբերալիզմի: 1948 թվականին Ստամբուլում գումարված թուրք տընտեսագետների կոնգրեսը դատապարտեց էտատիզմը: 1950 թվականին ստեղծվեց Թուրքիայի արդյունաբերական զարգացման բանկը, որն իր համար խնդիր էր դրել՝ վարկեր տրամադրել մասնավոր արդյունաբերական ձեռնարկություններին: Պատահական չէ, որ դա զուգադիպում է ամերիկյան արտաքին քաղաքականության հետ Թուրքիայի ունեցած ավելի ու ավելի սերտ կապերին: Ամերիկացիները աներկբաչորեն ու բացահայտ կերպով հանդես եկան էտատիզմի դեմ: Այսպես, օրինակ, ամերիկյան մոնոպոլիստների ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Թուրքիայում ամերիկյան առաջին տնտեսական միսիայի ղեկավար Մաքս Թորնբերգը, առանց այլեայլության հայտարարեց, որ «էտատիզմը դժվարացնում է համագործակցությունը ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև»:

Անկատկած է, որ ամրապնդված թուրք բուրժուազիայի մի որոշակի մասի բունտը էտատիզմի դեմ նրա հաջողութունների մի յուրահատուկ վկայութունն էր: Ինքը՝ այդ բուրժուազիան, ձեվափորվել ու հարստացել էր հենց էտատիզմի քաղաքականության շնորհիվ. շատ ձեռնարկատերեր որակավորում էին ստացել պետական ձեռնարկութուններում: Այդ բուրժուազիան կարողացավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքիայի վարած շեղբության քաղաքականությունից լրացուցիչ հնարավորություններ կորզել իր հարստացման համար: Մենդերեսի կառավարման ժամանակաշրջանում կառավարությունը մի շարք որոշումներ ընդունեց այդ բուրժուազիայի և օտարերկրացի ավանդատուների օգտին. մասնավորապես, դրանք երաշխավորում էին նրանց իրենց ավանդները և դրանցից ստացված շահույթները ներդրված վալյուտայով դուրս բերելու իրավունքը: Բայց հետաքրքրական է, որ իշխանության գլուխ անցած կուսակցությունը, լողունգներով հանդես գալով էտատիզմի դեմ, չիրականացրեց իր նախընտրական խոստումները մասնավոր ձեռնարկատիրության առաջնության և պետական ձեռնարկությունների հտգնման մասին: Թուրքական բուրժուազիան, այնուամենայնիվ, այնքան փորձված ու հարուստ չէր, որպեսզի կարողանար հտգնել պետական ձեռնարկությունները, որոնք կազմում էին ամբողջ թուրքական արդյունաբերության մոտավորապես 30—40 տոկոսը:

1960 թվականի մայիսի պետական հեղաշրջումից հետո ազգային միասնության կոմիտեի առաջին միջոցառումներից մեկը եղավ պետական պլանային հանձնաժողովի ստեղծումը. այդ հանձնաժողովի մեջ մտան երիտասարդ ընդունակ տնտեսագետներ, որոնց համար երկրի բարեկեցությունն ու էկոնոմիկայի ատողչացումը առաջնահերթ գործ էր: Երկարատև նախապատրաստական աշխատանքից հետո հանձնաժողովը մշակեց էկոնոմիկայի զարգացման պլան, որը նախատեսված էր երեք հընգամյակի համար և հիմնված էր խառը էկոնոմիկայի վրա՝ արդյունաբերության առաջատար ճյուղերում պետական սեկտորի առաջնության պայմանով: Պլանը նպատակ էր դնում ամեն տարի ազգային եկամուտը ավելացնել յոթ տոկոսով: Նույնիսկ հաշվի առնելով բնակչության բնական աճը, որը հավասար էր տարեկան երեք տոկոսի, դա նշանակում էր մեծ առաջընթաց քալլ թուրքական էկոնոմիկայի զարգացման ճանապարհին:

Պլանը նախատեսում էր նաև կապիտալ ներդրումները բարձրացնել 18 տոկոսով, որից, ամենալավագույն հաշվումներով, օտարերկրյա օգնությունը բաժին էր ընկնում ամենաշատը շոքս տոկոս: Մնացածը պետք է տար ներքին ֆինանսավորումը: Բայց ինչի՞ հաշվին է այդ ամենը կատարվելու: Պլանի հեղինակները առաջարկում էին որպես առաջին քայլեր արագ թափով իրականացնել հարկային ռեֆորմ, որը հիմնված լինի պրոգրեսիվ հարկման և, առաջին հերթին, ունեցվածքի հարկի վրա, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ՝ շքեղություն առարկաների սպառման սահմանափակում, վերահսկողություն խոշոր ձեռնարկությունների հաշիվների նկատմամբ, ինֆլյացիայի դեմ միջոցների կիրառում, որոնք բացառեին բոլոր դժվարությունները և լայն դանդախների ուսերին բարգելու հնարավորությունը:

Պլանի նախագիծը, որի հիմքում դրված էին Աթաթյուրքի կառավարության կոնցեպցիաները, անմիջապես քննադատության ենթարկվեց տնտեսական լիբերալիզմի քաղաքականության կողմնակիցների կողմից. մերժվեց նաև հարկային ռեֆորմի նախագիծը, որ առաջարկել էր անդլիացի բուրժուական տնտեսագետ, պրոֆեսոր Քալդորը: Հանձնաժողովի նախասկզբնական մտահոգացումները գնալով ավելի նեղացան և վերջապես թուրքական էկոնոմիկայի զարգացման պլանը, ինչպես նկատել էր առաջադիմական «Յոն» ժուռնալը, հիշեցրեց մի արշավածի՞ կապկալված ոտքերով: Կապկալված ոտքերը դա ներքին ֆինանսավորումն էր և համապատասխան դոտացիաները պետական ձեռնարկությունների համար: Ինչպես պլանի դիրեկտիվները, այնպես էլ պետական պլանային հանձնաժողովի օրինականացված լիազորությունները, շուտով ընկան ռեակցիայի շատ ուժեղ հարվածների տակ: Գրա հետևանքով, երկու տարվա աշխատանքից հետո, հանձնաժողովի ղեկավար Թորունը և երեք դիրեկտորներ ի նշան բողոքի հրաժարական տվեցին: Նրանց հետևյալիցին հանձնաժողովի մյուս անդամները: Այդ ժամանակից սկսած առաջադիմական մամուլը պլանն անվանեց «վարագույր անպլանային էկոնոմիկայի համար»: Սկզբնական նախագծից գրեթե ոչինչ չմնաց, բացի ֆինանսական օգնության մասին արտասահմանին ուղղված կոչից:

Թուրքիան օգնություն ստացավ 1963 թվականին ստեղծված Թուրքիային օգնություն ցույց տալու միջազգային կոնսորցիումից, որի մեջ մտան Անգլիան, Բելգիան, Հոլանդիան, ԳՖՀ-ն և

Խոսաչիան: Տասնհինգ տարում, 1952-ից մինչև 1967 թվականը, Թուրքիան ԱՄՆ-ից և Կոնսոբցիումից տարեկան միջին հաշվով ստացել է 500-ական միլիոն դոլար: Պլանը ֆինանսավորելու համար Թուրքիայի ստացած վարկերը շատ ձեռնառու չէին. դրանք կարճաժամկետ էին, բարձր տոկոսներով և վերապահված բազմաթիվ պայմաններով: «Միլլիլեթ» թերթի դիտողությունում, վարկերի տրամադրումը «հիշեցնում էր ոչ աֆրան բարեկամների օգնություն, որոնք անկեղծորեն ցանկանում են օգնել մեր էկոնոմիկայի զարգացմանը, որքան անտրականների օգնություն, որոնք ամենից առաջ մտածում են իրենց շահի մասին»:

Ներքին ֆինանսավորման հիման վրա պլանավորելուց աստիճանաբար հրաժարվելու հետ զուգընթաց Թուրքիայի էկոնոմիկայի մեջ ղնալով ավելի ու ավելի ուժեղ էր թափանցում օտարերկրյա կապիտալը: 1961 թվականին ամերիկյան կապիտալի օգնությունում կառուցվեց խոշոր պողպատածուլակայան գործարան էրեզլիում, որը հիմնվել էր դեռևս Ինենյուի կառավարման ժամանակ որպես ամերիկա-թուրքական ձեռնարկություն: Ծառերեղիյա օգնությունը դարձավ նոր ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Իսկ դա հանգեցրեց Թուրքիայի պարտքի մեծացմանը: 1961—1965 թվականներին Թուրքիայի արտահանության միջին հաշվով 37 տոկոսը ծախսվում էր արտաքին պարտքերը վճարելու համար: Իսկ դրա հետ մեկտեղ բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը անշափ ցածր էր: Օրինակ, 1965 թվականին այն հավասար էր տարեկան հազիվ 250 դոլարի, որը գրեթե 100 դոլարով ավելի ցածր էր, քան Հունաստանում:

Արդարության կուսակցությունը իշխանության գլուխ անցնելուց հետո Դեմիրելը վճռականորեն զարկ ավելց մասնավոր սեկտորի զարգացմանը: Նրա կոնցեսյոնիայի համաձայն հենց մասնավոր կապիտալիստական նախաձեռնությունը պետք է դառնար երկրի ինդուստրացման գլխավոր լծակը: Նա բուրժուզին այլ դեր էր հատկացնում պիտակայան պլանային հանձնաժողովին: 1967 թվականի դարնանը մեջլիսի բննարկմանը ներկայացնելով նոր հնգամյա պլանը, նա ուղղակի հայտարարեց, որ «սխալ կլիներ այս պլանի մեջ որոնել կենտրոնացված պլանավորում»: Պլանը խիստ բննադատության ենթարկվեց օպորտյունիստների կողմից, որն

այն գնահատեց որպէս Թուրքիայի էկոնոմիկան այսուհետև ևս օտարերկրյա էկոնոմիկայից կախման մեջ պահելու միջոց: Նոր կանոնադրութեամբ, պետական պլանային հանձնաժողովը պատասխանատուութիւն է կրում օտարերկրյա կապիտալ ներդրումների մասին բանակցութիւններ վարելու համար և թույլտուութիւն է տալիս դրանց համար: Երկրորդ հնգամյա պլանում զգալիորեն բարձրացել էին մասնավոր սեկտորի դերն ու նշանակութիւնը: Ազգային բուրժուազիան այժմ իր տրամադրութեան տակ ունի մեծ կապիտալ: Պետական ձեռնարկութիւնները հետզհետեւ կուրսը համապատասխանում էր նաև արևմտյան տերութիւնների, բայց ամենից ավելի շատ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների շահերին, և այդ կուրսը հնարավոր դարձրեց օտարերկրյա կապիտալի ներթափանցումը թուրքական էկոնոմիկայի առաջատար ճյուղերը: Պատահական չէ, որ 1967 թվականին Թուրքիան ստացավ ամենամեծ (բնակչութեան թվաքանակի համեմատութեամբ) օգնութիւնը ԱՄՆ-ից՝ 150 միլիոն դոլար (համեմատութեան համար. Պակիստանը 90 միլիոն բնակչութեամբ ստացավ 150 միլիոն, Իսկ 450 միլիոնանոց Հնդկաստանը՝ 350 միլիոն դոլար):

Սակայն Գեմիքելի կառավարութեան համար այնքան էլ հեշտ ու հարթ չէր բնթանում նահանջը էտատիզմի քաղաքականութիւնից: Պետական բյուրոկրատիան սիրով չէր զիջում իր տաքուկ տեղերը հանրայնացված ձեռնարկութիւններում և, բացի դրանից, դրա դեմ հանդես էին գալիս բանակն ու երիտասարդութիւնը, որոնք հավատարիմ էին մնացել էտատիզմի քեմալական ավանդութիւններին:

Այս տեսակետից միանգամայն բնորոշ է երկրի բնական հարստութիւնների և մասնավորապէս թուրքական նավթի օգտագործման պրոբլեմի շուրջը ծավալված դիսկուսիան:

Նավթի պաշարները Թուրքիայում կազմում են մոտավորապէս 65 միլիոն տոննա, բայց քանի որ հետախուզութիւնները շարունակվում են, կարելի է ենթադրել, որ դրանք զգալի շափով ավելի բարձր են (օրինակ, երբ Կոնիայից ոչ հեռու մի գլուզում ջրհոր էին փորում, անսպասելիորեն խփեց նավթի շատրվան): Վերջին տվյալները խոսում են Թուրքիայում նավթի արդյունահանման աճի մասին, թեպետ նաև ետ է մնում Մերձավոր արևելքի մյուս «նավթային» երկրներից:

Որպեսզի դարգանա էկոնոմիկայի այնպիսի մի կարևոր ճյուղ, ինչպիսին է նավթարդյունաբերությունը, անհրաժեշտ է, որ նավթի արդյունահանումն ու գտումը գտնվեն պետության ձեռքին: Էտատիզմը նավթարդյունաբերության բնագավառում և ստրատեգիական հումքի նկատմամբ պետության գոյություն և անկախության նախադրյալներից մեկն է: «Այնպիսի մի երկրում, ինչպիսին է Թուրքիան,— 1966 թվականին հայտարարել է ժողովրդահանրապետական կուսակցության գլխավոր քարտուղար Էջևիտը,— բնական հարստությունները վաղուց իրենց վրա էին գրավում օտարերկրացիների հայացքները»: Այդ բանը հասկանում էր նաև Քեմալ Աթաթյուրքը, որի նախաձեռնություններով մշակվել էր մի օրենք, որն էականորեն սահմանափակում էր օտարերկրյա, հատկապես նավթային, մոնոպոլիաների գործունեությունը երկրում: Սակայն Մենդերեսի օրով մեջլիսը 1954 թվականին ընդունեց մեկ ուրիշ օրենք 6326 համարի տակ, որի խկական հեղինակն էր ամերիկացի էքսպերտ ու նավթային մագնատ ոմն Մաքս Բոլլը: Այդ օրենքը, որն, ինչպես պնդում է մամուլը, ընդունվել էր ոչ առանց «գոլարային փաստարկումների», վերացրեց նավթի արդյունահանման պետական մենաշնորհը և օտարերկրյա ընկերություններին տվեց այնպիսի իրավունքներ, որպիսիք մինչև այդ ունեին միայն պետական ձեռնարկությունները: Իր ժամանակին թուրքերը իրենց հաշիվ չէին տալիս, թե ինչպիսի հարստություններ ունեն իրենք. նավթի առաջին հանքաշերտերը հայտնագործվել էին 1934 թվականին, այնուհետև՝ 1945-ին: Դրա փոխարեն Միացյալ Նահանգները արդեն այն ժամանակ կոահել էին, թե իրենց համար ինչ նշանակություն ունեն այդ նավթահանքերը և՛ որպես ստրատեգիական հումք, և՛ որպես կապիտալի կիրառման ոլորտ: Ընդունված օրենքի համաձայն օտարերկրյա ընկերությունների համար առանձնապես շահավետ էր նավթի արդյունահանումը Թուրքիայում: Այն ժամանակ, երբ նավթ արդյունահանող մյուս երկրները օտարերկրյա ընկերությունների հետ շահույթները բաժանում էին հավասար (խառակական էնի ընկերությունը տալիս էր 75 տոկոսը), Թուրքիան այդ օրենքի համաձայն ստանում էր շահույթի միայն 37 և կես տոկոսը: Նույն այդ օրենքով էլ օտարերկրյա ընկերությունները ազատվում էին մաքսատուրքերից, հարկերից և այլն:

1954 թվականին Թուրքիայում ստեղծվեց առաջին և միակ Թուրքական նավթային ընկերությունը (ԹՊԱՕ)՝ 150 միլիոն

Թուրքական լիրա կապիտալով: Այս փոքրիկ կոնցենը սկսեց համարձակորեն մրցակցել նավթային այնպիսի շնածկների հետ, ինչպես «Շելլը» կամ «Մոբիլ օյլը», որոնք գաղտնի համաձայնություններ էին կնքել Թուրքիայի նավթաբեր տերիտորիաները բաժանելու մասին: Տասնինը արևմտյան ֆիրմաներ կոնցեսիաներ ստացան նավթի արդյունահանումից հետագայում ստացվելիք շահույթների հաշվին հետախուզական աշխատանքներ կատարելու համար: Սակայն արդյունահանումը այնքան էլ բարձր չեղավ, և ձախ մամուլը մեղադրեց օտարերկրյա ընկերություններին այն բանի համար, որ նրանք դիտավորյալ նոր նավթահանքեր չեն հայտնաբերում: Թուրքիան ստիպված եղավ բարձր գներով նավթ ներմուծել արտասահմանից, բանի որ սեփական արդյունահանած նավթը հազիվ էր ծածկում պահանջումներին մեկ երրորդը: Օտարերկրյա ընկերությունները՝ նման աննշան արդյունահանումը բացատրում էին անշահավետությամբ, բայց դրա հետ մեկտեղ չէին համաձայնում կոնցեսիաները վերավաճառել պետությունը: Նրանց համար ձեռնտու էր, որ Թուրքիան մենա իրենց կողմից առանց մաքսատուրքերի ներմուծվող նավթամթերքների վաճառահանման շուկա: Այսպես, 1963 թվականին օտարերկրյա նավթային ընկերությունները Թուրքիայից կորչել էին 15 միլիոն դոլարի մաքուր շահույթ:

Եվ ստացվում է, որ Թուրքիան՝ նավթով հարուստ այդ երկիրը, նավթը գնում է իր իսկ տարածքում նավթ արդյունահանող օտարերկրյա ընկերություններից՝ համաշխարհային գներին 35 տոկոսով ավելի բարձր գներով: Ըստ որում ընկերություններն ազատված են հարկեր վճարելուց և իրավունք ունեն արտահանելու նավթից ստացվող բոլոր տեսակի շահույթները կոնվերսացվող վալյուտայով (նկատենք, որ Թուրքական վալյուտան համաշխարհային շուկայում չի գնահատվում): Դա Թուրքիայի վրա ճնշում գործադրելու ուժեղագույն միջոց է: Ինչպես հաղորդում էր Թուրքական մամուլը, կիպրական ճգնաժամի օրերին նավթային ընկերությունները սպառնում էին Թուրքիային՝ դադարեցնել նավթի վաճառքը նրան...

Այն արտոնությունները, որ Թուրքիայում վայելում են օտարերկրյա նավթային ընկերությունները, իրենց բնույթով հիշեցնում են Օսմանյան կայսրության ժամանակների կապիտալիստիկաները.. Գնալով ավելի մասսայական էր դառնում «Թուրքական նավթը Թուրքերի համար» կոչը: 1965 թվականի մայիսին մեջ-

լիս ներկայացվեց 122 դեպուտատների ստորագրությամբ մի հարցում նալթային օրենքը փոփոխելու մասին: Թուրքական նալթի ազգայնացման կամպանիայի նախաձեռնողն էր Թուրքական նալթային ընկերության (ԹՊԱՕ) ղեկավար Իսսան Թոփալօղլուն: Նրա առաջարկությունների ընդունումը թուրքական պետական ձեռնարկությունների կողմից նալթը արդյունահանելու, գտելու և փոխադրելու վերաբերյալ (նալթաքիմիական արդյունաբերության զարգացման հեռանկարով) մեծ նշանակություն կունենար Թուրքիայի համար... «Ջուճուրիյեթ» թերթի հաղորդման համաձայն, մեջլիսում վիճարանություններն սկսվելուց առաջ ֆինանսների մինիստրը արևմտյան նալթային մի ընկերությունից ստացել էր մի հեռագիր, որով պահանջվում էր՝ թույլ շտալ առաջարկության քննարկումը մեջլիսում և սպառնում՝ օրենքը փոփոխելու դեպքում բարդություններ ստեղծելու համաշխարհային շուկայում Թուրքիայի համար:

Եվ, իրոք, հարցումը մերժվեց, դեպուտատները չբնարկեցին նալթային օրենքը փոխելու օգտին, շնայած այն բանին, որ դեռ Դեմիրելը իշխանության գլուխ շանցած, Թուրքական նալթային ընկերությունը որոշ արդյունքների էր հասել օտարերկրյա նալթային հսկաների դեմ մղած իր անհավասար պայքարում. ԹՊԱՕ-ին մերժեցին Մերսինում նալթազտիչ գործարան կառուցելու իրավունքը, որը կառուցվեց ամբողջապես օտարերկրյա կապիտալով, բայց դրա փոխարեն Իզմիրում նալթազտիչ գործարանի շահագործումից ընկերությունն ստացավ շահույթի 51 տոկոսը: Այդ ժամանակ էլ ԹՊԱՕ-ն ձեռք բերեց նալթ ներմուծելու իրավունք. այն գինը, որով թուրքական կառավարությունը նալթ էր վաճառվում, 10 տոկոսով իջել էր նախկինի համեմատությամբ:

Ինչպես հաղորդում էր թուրքական մամուլը, պառլամենտական ընտրությունների ժամանակ՝ 1965 թվականի հոկտեմբերին, օտարերկրյա նալթային ընկերությունները զգալի դրամական միջոցներ էին հատկացրել արդարության կուսակցությանը ընտրական կամպանիան անցկացնելու համար: Բնական է, որ, երբ այդ կուսակցությունն անցավ իշխանության գլուխ, լավատեսության համար բոլոր հիմքերն ուներ: ԹՊԱՕ-ի ղեկավարը կառավարական գեներալ Նանվեց զբաղեցրած պաշտոնից: Ծիշտ է, դա շղաղարեցրեց պայքարը նալթի համար: Լրացուցիչ պառլամենտական ընտրություններում 1967 թվականին Իսսան Թոփալ-

օղյուն ընտրվեց սենատոր ժողովրդահանրապետական կուսակցու-
թյունից, որպեսզի պառլամենտի տրիբունայից պաշտպանի
թուրքական նավթի շահերը: Ինձ թվում է, որ այդ խաղի մեջ
վերջին խոսքը դեռ չի ասված:

Բանը, սակայն, միայն նավթի մեջ չէ: Առաջադիմական «Յոն»
շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը «Հարուստ տրեստների ան-
նկատելի ներթափանցում» անվանեց նաև երկրի մյուս բնական
հարստությունների դավթումը օտարերկրյա կապիտալի կողմից:
«Նավթագտիչ գործարանի շինարարությունը Իզմիրում և պղնձի
հանքերի շահագործումը Սև ծովում,— գրել է նա,— Ինհնյու-
ժամանակ հանձնվել էին Թուրքական նավթային ընկերությանն
ու էտիրանկին: Իսկ երբ Իշխանության գլուխ անցավ արդարու-
թյան կուսակցությանը, հարպիկ մաներների հեռանքով և՛
գործարանը և՛ հանքերը հայտնվեցին օտարերկրյա տրեստների
ձեռքում»: Ի դեպ, ամբողջ թուրքական մամուլը 1966 թվականի
հոկտեմբերին քննարկում էր այդ պրոբլեմը: «Ենի Իստանբուլ»
թերթը, որին ոչ մի կերպ չի կարելի կասկածել առաջավոր գա-
ղափարների նկատմամբ համակրանքի մեջ, գրել է. «Քանի դեռ
մենք փորձում ենք փրկել մեր նավթը օտարերկրացիներից,
նրանք իրենց թաթը խոթեցին մեր հանքահորերը»:

Նույն բանը տեղի ունեցավ նաև դորշ աժիսի հանքերի հետ:
Էներգետիկայի նախկին մինիստր Խուրյա Օրալը 1966 թվականի
դեկտեմբերին Ստամբուլում կայացած մամուլի կոնֆերանսում
հայտարարեց, որ օտարերկրյա մի ընկերություն կոնցեսիա է
խնդրել թուրքական բորակի պաշարների 80 տոկոսի արդյունա-
հանման համար հարյուր տարի ժամկետով, և որ խնդրանքը
դրականորեն է ընդունվել թուրքական կառավարության կողմից:
Մինիստրը միաժամանակ ընդգծել է, որ համաձայնությունը
կոնցեսիային Թուրքիայի համար կնշանակեր վալյուտայի զգա-
լի կորուստներ և բորակը պետական ու մասնավոր սեկտորների
միջոցով մրցակցային գներով արտահանելու հնարավորություն-
ների կորուստ: Իսկ գլխավորը, նման առաջադիմության ընդու-
նումը հակասում է ազգային շահերին: Ահա ինչու երրորդ կուս-
ակցիոն կառավարությունը մերժեց այդ խնդրանքը:

Նույնիսկ աջ ժողովրդահանրապետական գյուղացիական կու-
սակցությունը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով քն-
նադատում էր կառավարության քաղաքականությունը օտար-
երկրյա կապիտալի նկատմամբ: Թուրք ձեռնարկատերերին հա-

չողվեց, ընայած «Borax Cons. Ltd» ընկերության համառ դիմադրությունը, Բանդրեմայից ոչ հեռու (այնտեղ վան բորակի հանքեր) կառուցել բորակի արտադրության առաջին պետական ֆաբրիկան, ըստ որում դա այդ տիպի առաջին ֆաբրիկան է ոչ միայն Թուրքիայում, այլև ամբողջ Մերձավոր արևելքում...

Թուրքական էկոնոմիկայի հետագա զարգացման պրոբլեմը մնում է բաց: Թուրքիան ի՞նչքն է շահույթ ստանալու իր բնական հարստություններից, թե՞ թույլ կտա օտարերկրյա մոնոպոլիաներին հարստանալու դրանց շահագործման հաշվին: Սա է հիմնական տարաձայնությունը Թուրքիայում էտատիզմի կողմնակիցների և մասնավոր՝ հայրենական կամ օտարերկրյա, նախաձեռնության կողմնակիցների միջև:

ՉԱՐՍԱՖՆԵՐ

«Նորին մեծություն սուլթանի հրամանով և շեյխուլիսլամի պահանջով կանանց արգելվում է երևալ հասարակական վայրերում: Ոստիկանության սպաները պարտավոր են հետաքննություն անել ամեն անգամ, երբ հաստատվի, որ կինը համարձակվել է երեսը ծածկել միայն թափանցիկ թղով՝ իրավունքով չնախատեսված դեպքերում: Ամուսնացած կանանց արգելվում է երեվալ կառքում կամ տարբով ման գալ Բայազետ, Շեհզադե-բաշի ու Աքսարա: Թաղամասերում¹, ինչպես նաև երևալ շոկայում կամ մտնել խանութները: Այս պահանջները խախտելու դեպքում կասապանները դատվելու են կանանց հետ հավասար՝ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածով: Եթե ոստիկանությունը տեսնի կանանց հասարակական վայրում, նա պարտավոր է անել այնպես, որ նրանք ցրվեն: Այն տղամարդը, որը կհամարձակվի դիմել կնոջը... պետք է պատիժ կրի քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածով»:

Օսմանյան կայսրությունում կանանց կյանքը կարգավորող արգելքների մասին այսպիսի հաղորդագրություն ես կարդացել եմ անգլիական «Լեանա Ղերալդ» թերթի 1881 թվականի օգոստոսի 15-ի համարում: Բայց կանայք կին չէին լինի, եթե միջոցներ չդնեին շրջանցելու այդ արգելքները: Օսմանական կնոջ իրավական դրությունը փաստորեն ստրկուհու ստատուս էր: Առա-

¹ Ստամբուլի թաղամասերի անուններ:

չին համաշխարհային պատերազմից քիչ առաջ Քուրբիայում տեղի էր ունեցել հասարակական մի մեծ սկանդալ այն բանի համար, որ այն ժամանակվա պրեմիեր մինիստր Ֆուատ փաշան համարձակվել էր հյուրանոցում երևալ իր կնոջ ընկերակցութեամբ: Տղամարդիկ ու կանայք միմյանցից անջատված էին: Դա վերաբերում էր նույնիսկ փոխադրամիջոցներին. օրինակ, Բոսֆորով երթևեկող լաստանավերում կանանց արգելվում էր թողնել նավասենյակը: Երբ ամուսնական զույգը դուրս էր գալիս փողոց, ապա տղամարդն ու տերը միշտ քայլում էր առջևից, իսկ նրանից հետո որոշ հեռավորության վրա գնում էր... կինը՝ Ծվ նույնիսկ այն վայրերում, որտեղ թրքուհուն թուլլատրվում էր հրապարակորեն երևալ, նրա երեսը միևնույն է պետք է ծածկված լիներ շարսաֆով¹: Իսկ տներում զոյություն ունեին երկու առանձին կեսեր՝ տղամարդկանց («սեւլամլիք») և կանանց («հարեմլիք»):

Ըստ Ղուրանի տղամարդը կարող էր ունենալ չորս օրինական կին և գործնականորեն անասհման թվով սիրուհիներ: Հիշում եմ, թե ինչպես ինձ հետ ունեցած մի խոսակցության ժամանակ համալսարանի մի պրոֆեսոր, կրթված ու կուլտուրական մի մարդ, մի քանի բաժակ ըմպելուց հետո որոշ տրամութեամբ էր հիշում իր հարազատ տան իղեալական ներդաշնակությունը, երբ իր մայրը և հոր մյուս երեք կանայք հավասարապես սիրում էին բոլոր երեխաներին: Բայց, երբ տեր ամուսինը երիտասարդ սիրուհի բերեց տուն, նրա դեմ դուրս եկան բոլոր կանայք միասին, և տերը ստիպված եղավ նրան կնության տալ իր պարտիզպանին...

Սակայն կանանց ցանկության հետ համաձայնելու այս օրինակը ոչ թե կանոն էր, այլ, ավելի շուտ, բացառություն: Շարիաթի, այսինքն՝ մուսուլմանական իրավունքի համաձայն, կինը ամեն բանում պետք է ենթարկվի իր ամուսնու կամքին, որին մինչև ամուսնանալը չի էլ ճանաչել: Ապագա ամուսնական դաշինքները, սովորաբար շատ երիտասարդ հասակում, կնքում էին ծնողները: Շատ տարածված երևույթ էր, երբ խնամիները աղջիկտեսի էին գնում ապագա հարսնացուին: Դրա համար նրանք

¹ Չարսաֆ — ամուր կտորից կարած բոդ: Քուրբերեն այդ բառը նշանակում է նաև «սավանն»:

պետք է գաղտնի կերպով գնային ապագա հնարավոր կնոջ տունը և գնահատելին նրա իրական արժանիքներն ու թերութիւնները: Եթե աղջիկուհեք հաջող էր անցնում և կողմերը համաձայնութեան էին գալիս, որոշ ժամանակ հետո տեղի էր ունենում ամուսնութեան արարողութիւնը, որի ժամանակ էլ սովորաբար առաջին անգամ իրար էին տեսնում ապագա ամուսինները: Իսկ ապահարզանի համար բավական էր, որ ամուսինը երկու վկաների ներկայութեամբ երեք անգամ կրկնէր, որ ինքը չի ուզում, որ այդ կինը հետագայում էլ մնա իր կիները: Իսկ կիներ ոչ միայն չէր կարող հանդես գալ որպէս ապահարզանի նախաձեռնող, այլև իրավունք չունէր տանը որեէ իրի տնօրինել՝ առանց ամուսնու համաձայնութեան: Ամուսնութեան հետո նա կարող էր հույս դնել ժառանգութեան մեկ տասնվեցերորդ, իսկ լավագույն դեպքում՝ մեկ ութերորդ մասը ստանալու վրա: Դուստրերը օրենքով ստանում էին երկու անգամ ավելի քիչ, քան տղաները:

Այս մի քանի օրինակները, ինչպես ինձ է թվում, որոշ պատկերացում են տալիս Օսմանյան կայսրութիւնում կնոջ ստորացուցիչ դրութեան մասին՝ անկախ այն բանից, թե որ դասակարգին է նա պատկանում: Եվ դրա հետ մեկտեղ այդ սակավաթիվ օրինակներից կարելի է ավելի լավ հասկանալ, թե Աթաթյուրքը ինչ է արել թուրք կնոջ համար: Նրա դրութեան մեջ շրջադարձային կետ հանդիսացավ մասնակցութիւնը ազատագրական պատերազմին: Հասարակ զեղչկուհիները ռազմաճակատում օգնում էին արկեր փոխադրել, խնամում էին վիրավորներին, զինվորներին պարենամթերք էին մատակարարում: Աղզային-ազատագրական պայքարին մասնակցում էին նաև այնպիսի կրթված կանայք, ինչպես հայտնի կին գրող Խալիդե էդիպ Աղզվարը: Հրացանը ուսին թուրք գեղջկուհի պատկերող արձանը դարդարում է Աթաթյուրքի հուշարձանի պատվանդանը Անկարայի Ուլուս հրապարակում և նրա դամբարանի մուտքը:

Այն, որ կանայք օժտվել են տղամարդկանց հետ հավասար իրավունքներով և մտցվել է քաղաքացիական նոր օրենսգիրք, նշանակում էր արդիականութեան խոր ներթափանցում ոչ միայն հասարակական կյանքում, այլև անձնական կյանքում դարերով սրբազործված կարգի մեջ:

Քաղաքացիական նոր օրենսգիրքը վերացնում էր բազմակնութիւնը և հաստատում միամուսնական քաղաքացիական ամուսնութիւն, որի դեպքում երկու կողմերն էլ ունեն հավասար

իրավունքներ, այժմ կինը, ինչպես և տղամարդը, կարող է դիմել ապահարզանի: Ամուսնության արարողությունը շատ ձևականությունների հետ կապված չէ, և պարտադիր չէ, որ այն կատարեն, այսպես կոչված, ամուսնության սալոնում: Եթե միջոցները թույլ են տալիս, վարձում են ուստորանի մի դահլիճ, հրավիրում հյուրեր և պաշտոնական ծառայության ներկայացուցչին: Արարողությունը երկար չի տևում: բավական է, որ վկանների ներկայությամբ պատանին ու աղջիկը ասեն, որ ցանկանում են ամուսիններ դառնալ և իրենց ստորագրությունները դնեն հատուկ գրքում: Եվ վերջ: Բնական է, որ ամուսնություններ կնքվում են նաև մուսուլմանական օրենքներով: Մտավորականության շրջանում, սակայն, դա շատ հազվադեպ է պատահում:

Կանանց իրավահավասարության բնագավառում Թուրքիան ավելի առաջ է անցել անգամ Եվրոպայից, որտեղ, օրինակ, այսօր էլ կինը զրկված է ընտրական իրավունքից: Թուրքիայում կինն ունի և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունք: Թրքուհին արդեն շատ տարիներ մասնակցում է պառլամենտի նիստերին: Օրինակ, 1965—1967 թվականներին մեջլիսում կային վեց կանայք, իսկ սենատում՝ մեկը (Թուրքիայի բանվորական կուսակցությունից): Այսօրվա Թուրքիայում կինը կարող է ունենալ ցանկացած պրոֆեսիան, անգամ այնպիսիք, որոնք առաջ համարվում էին տղամարդկային: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Թրքուհին թոփշ կատարեց հարեմի կյանքից դեպի հասարակական կյանք: այժմ արդեն ոչ ոքի չի զարմացնի կին բժիշկը, կին փաստաբանը, ուսուցչուհին և անգամ կին դատավորը հանրապետության Բարձրագույն դատարանում: Կան քաղաքական տարբեր հայացքների տեր բազմաթիվ տաղանդավոր կին ժուռնալիստներ: Նրանք, որպես կանոն, գիտեն մի քանի օտար լեզուներ և գրում են դիպլոմ, մեծ գործիմացությամբ: Կրթված թուրք կնոջ ազատագրության ցուցանիշ է այն փաստը, որ նրանցից ոմանք, ամուսնանալուց հետո էլ, հանդես են գալիս իրենց ազգանուններով: Լայնորեն հայտնի են պրոֆեսիոնալ կին ժուռնալիստներ Մուշերրեֆ Հաքիմօղլուի, Իֆֆեթ Ասլանի, Լեյլի Չամբելի, Նիմեթ Արզիկի, Նիլյուֆեր Ցալչինի և ուրիշ շատերի անունները:

Դա առավել ևս արժանի է հիշատակության, քանի որ կանանց առաջընթացը մտավոր կյանքում սկսվել է համեմատաբար վեր-

չերս: Առաջին ուսանողուհիները համալսարան են ընդունվել 1914 թվականին: Բայց 1921 թվականին միայն թույլատրվեցին համա-տեղ դասախոսությունները հումանիտար ֆակուլտետում: Ներկայումս բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների ու գիտական աշխատողների շրջանում կանանց տոկոսը ցածր չէ (իսկ գուցեև բարձր է), քան եվրոպական երկր-ներում, և 1960/61 ուսումնական տարում կանայք կազմում էին 18,7 տոկոս: Նրանցից մի քանիսը զբաղեցնում էին դեկանների պաշտոններ: Կանանց նման բացառիկ առաջընթացը համալսարաններում որոշ չափով բացատրվում է այն բանով, որ համալսարանների մեծ մասը բացվել է վերջերս (գործնականորեն մինչև 1933 թվականը գոյություն ունեւր միայն Ստամբուլի համալսարանը), ինչպես նաև որակյալ կադրերի հսկայական պահանջով ու տղամարդկանց կողմից ամբիոնները մենաշնորհ դարձնելու ավանդույթների բացակայությամբ: Այդ պատճառով էլ Թուրքիայում, մի երկրում, որտեղ կինը առանձնապես ճշգրտված է եղել, ստեղծվել է միանգամայն պարագոքսային դրու-թյուն. նրա մտավոր աճի հնարավորությունները ավելի բարձր են, քան ուրիշ երկրներում, որտեղ կանանց ազատագրությունը վաղուց արդեն դարձել է նորմա:

Իհարկե, այս ամենը ճիշտ է մտավորական կանանց մի շատ նեղ միջնախավի նկատմամբ միայն: Բայց պատահում է, որ Թրքուհին, բարձր դիրք զբաղելով ծառայության մեջ, ընտանեկան կյանքում առաջվա նման մնում է բարոյական ավանդույթների ցտրուկ: Սեղանի շուրջը գլխավոր դեմքը տղամարդն է, թեև նա կարող է լինել հասարակ պաշտոնյա, իսկ կինը դասախոսու-թյուններ վարող համալսարանում: Իսկ եթե խոսենք բուրժուա-կան ընտանիքի Թրքուհու մասին, ապա նրանց մեծ մասի նկատմամբ լիովին կարելի է կիրառել XVIII դարի սկզբին Ստամ-բուլում անգլիական դեսպանի կնոջ՝ լեդի Մոնտեգյուի խոսքերը: Նա գրել է. «Բարձր հասարակության Թրքուհիների գլխավոր զբաղմունքն է այցելությունները ծանոթներին, փողերի շոռյլ ծախսումը և շորերի նորաձևությունների հորինումը»:

Իսկ ի՞նչ դրություն մեջ է գտնվում այն Թրքուհին, որն ապ-րում է ոչ թե մեծ քաղաքում, այլ նահանգում կամ գյուղում: Սովորական զրոսաշրջիկը, որը շատ քիչ բան է լսել Քեմալի ու-Ֆորմների մասին, գիտե միայն մի բան. ամենուրեք, բացի մեծ քաղաքներից, և այն էլ դրանց կենտրոնական մասում, կանայք

ման են գալիս ծածկված դեմքերով և երեսները շուռ են տալիս, եթե ցանկանում են նրանց լուսանկարել, քանի որ նրանց պատկերացմամբ, այդ ժամանակ ցանկանում են խլել իրենց հոգին... Բայց գյուղում այնքան էլ հաճախ չես տեսնի գեղջկուհուն ծածկված երեսով. հարմար չէ ծեփից ծեփ առանց ուղղվելու աշխատել դաշտում ծածկված երեսով: Թուրքիայում դաշտում աշխատում են կանայք, իսկ տղամարդիկ ամբողջ օրերով նստած են լինում սրճարանում, որ կա գրեթե ամեն մի գյուղում: Այսպես է այսօր, բայց այդպես է եղել նաև այն ժամանակ, երբ կինը պաշտոնապես և իրավակապ տեսակետից ճանաչված էր որպես ստորին արարած: Միայն մի բանում էր նա իրավահավասար տղամարդու հետ և անգամ գտնվում էր «արտոնյալ» վիճակում, երբ հարկավոր էր աշխատել:

Այստեղ ևս նորից իրեն ղգացնել է տալիս մեկ այլ պարագոթս, որը վերաբերում է գյուղական կնոջը: Իրեն հարգող մուսուլմանը ցանկանում է ունենալ որքան կարելի է շատ որդիներ: Աղջկա ծնունդը հոր համար ոչ միայն անախտօժ է, այլև ամոթալի: Սովորաբար, այն հարցին, թե «ով է ծնվել», եթե աղջիկ է, պատասխանում են՝ «ոչ ոք չի ծնվել», քանի որ աղջիկը մարդ չէ: Իսկ եթե հորը հարցնում են զավակների թվի մասին, ապա նա թվարկում է միայն տղաներին: Իսկ եթե կինը միայն աղջիկներ է ծնում, ապա թվով վերջինը ստանում է «եթեր» («բավական») կամ «Դյոնյուշ» («փոփոխակ») անունը: Այս անունները բավական տարածված են գյուղում: Բայց հենց այստեղ էլ մուսուլմանի պատիվը ընդհարվում է տնտեսական շահի հետ: Եթե գործին մոտենանք տիրոջ աչքով, ապա հոր համար ձեռնտու է ունենալ միայն աղջիկ զավակներ: Երբ նա ամուսնացնում է իր աղջկան, ապա ապագա փեսայից ստանում է պատկառելի «բաշլըք», որի գումարը կախված է աղջկա կարողությունից, ինչպես նաև գեղեցկությունից ու շաղութունից՝ տասնյակից մինչև մի քանի հազար լիրա: Բանն այն է, որ թուրքերը հնուց ի վեր գերադասում են շող կանանց: Մի ժամանակ գոյություն է ունեցել մի սովորույթ, որի համաձայն ապագա կնոջ համար վճարում էին «բատ կիլոգրամի». որքան աղջիկը շատ էր կշռում, այնքան ավելի թանկ արժեր նա: Այդ սովորույթը, սակայն, դեռ չի մոռացվել: Թուրքիայում գտնվելուս ժամանակ թերթում ես կարդացի հարուստ վաճառականի ու աղքատ գյուղացու գործարքի մասին. գործարքի առարկան էր... գյուղացու աղջիկը,

որը, թերթի խոսքերով, բավական լավիկ, բարձրահասակ ու շաղ էր՝ շնայած իր տասնհինգ տարեկան հասակին: Կողմերը շատ շուտ պայմանավորվեցին. աղջկան դրեցին կշեռքին, վաճառականը յուրաքանչյուր կիլոգրամի համար վճարեց 500-ական լիրա աղջկա հորը և վերցրեց իր «սպրանքը»: Բացառված չէ, որ նման սովորույթը, դուրեք ոչ այդքան բացահայտ ձևով, կիրառվում է ամենուրեք... Արդարացի լինելու համար պետք է ասել, որ աղջիկը հորից ստանում է օժիտ, բայց սովորաբար դրա արժեքը հոր ստացած «բաշլըբից» ղզալիտրեն ավելի ցածր է:

Նվ, քանի դեռ ես ապրում էի Թուրքիայում, շատ քիչ բան էր փոխվել այս իմաստով: «Թերջյուման» թերթը, օրինակ, գրել էր Կայսերիի շրջակա գյուղերից մեկի մի քառասունամյա աղայի մասին, որն իր բարեկամից գնել էր նրա տասնչորսամյա աղջկան՝ կիլոգրամի համար հազարական լիրայով և վճարել էր 57 հազար լիրա. ահա մի օրինակ ես, որն ապացուցում է, թե ինչպես են դներն աճում Թուրքիայում: Այդ ժամանակ էլ «Ջումհուրիյեթ» թերթը գետնդել էր իրավունքի պրոֆեսոր Հ. Վ. Վելիդե-օղլուի հոդվածը կնոջ ունեցած փաստացի իրավունքների ու նրա իրական դրուժյան անհամապատասխանության մասին և որպես օրինակ բերել էր մի գյուղացու աղջկանը... 10 կիլոգրամ ցորենով վաճառելու փաստը:

Կնոջ համար տրվող վճարը հիմնավորվում է տնտեսապես: «Բաշլըբը» դա կարծես մի միանվագ հատուցում է ապագա երկար տարիների անվճար ու հյուժիչ աշխատանքի համար ամուսնու տանը և միաժամանակ փոխհատուցում հորը, որը, վաճառելով աղջկանը, իր տնտեսության մեջ գրկվում է աշխատող ուժից: Նույնպիսի տնտեսական նկատառումներով էլ հարկավոր է բացատրել և այն փաստը, որ բազմակնությունը իսպառ չի վերացել ո՛չ գյուղում, ո՛չ նահանգում: Ով կարող է իրեն թույլ տալ մի քանի անգամ վճարել «բաշլըբ», նա կարող է ունենալ շատ կանայք: Վերջին հաշիվով բազմակնությունը ոչ միայն վճարվում է, այլև ամեն կերպ խրախուսվում առաջին՝ ավագ կնոջ կողմից, քանի որ նոր կինը ձրի աշխատող ուժ է տանը: Այնքան էլ հեշտ չէ կտարել ավանդույթի ուժը, և իշխանություններին ուրիշ ոչինչ չի մնում, քան մատները արանքով նայել դրան: Ժամանակ առ ժամանակ տեղեկություններ են թափանցում մամուլ՝ ոչ պաշտոնական հարեմների մասին: Օրինակ, Ստամբուլում լույս տեսնող ֆրանսերեն «Փուլնալ դ'Օրեան» թերթը գրել

է, որ ութսուններէք տարեկան մի աղա արեւելյան գյուղերից մեկում ուներ 24 կին, 13 դուստր, 11 որդի և 43 թու: Նրա ամենաերիտասարդ կինը 16 տարեկան է և նա էլ նրան պարզէնց մի զավակ: Բոլթակցի այն հարցին, թե ինչպիսի հարաբերություններ են տիրում այդպիսի մեծ ընտանիքում, Էրիտասարդ կինը շատ գովեց մնացած բոլոր կանանց, իսկ ավագ կնոջը անվանեց «կանանց մայր»: Այդ աղան շրջանում շատ հարգված մարդ է, ամեն տարի նա բանակ է ուղարկում իր երեք թոռներին:

Առանձնապէս արեւելյան վիլայեթներում հաճախ մի քանի գյուղեր ունեցող կալվածատերերի համար ոչինչ չարժե ունենալ նման հարեմներ: Գյուղացիները, նույնիսկ ունեւորները, պետք է բավարարվեն ավելի քշով: «Ջումհուրիյեթ» թերթը 1967 թվականի փետրվարին հրատարակել էր մի ռեպորտաժ Ստամբուլից ոչ հեռու Ադափազարը գյուղաքաղաքի շրջակայքի մի յոթանասունամյա հարուստ գյուղացի Սարի Ալի Էշքըլարի հարեմի մասին: Նրա շատ համեստ հարեմում կար ընդամենը 8 կին: Նա ուներ 34 զավակ, և թոռների հետ միասին ամբողջ ընտանիքն ուներ 130 անդամ: Ամենակրտսեր կինը 25 տարեկան է: Այստեղ ևս տիրում է լիակատար ներդաշնակութուն: Երջանիկ ամուսնու այն խոսքերը, որ. «Մենք սպրում ենք վարդի պէս», — ռեպորտաժի հեղինակ Ցըլմազ Չեթինը դարձրել է վերնագիր: Նա վկայակոչում է հենց Սարի Ալիի ու նրա հարեւանների հետ ունեցած զրուցը տեղի սրճարանում, որտեղ, ինչպէս գրում է նա, «ձմեռը կարելի է հանդիպել գյուղի երիտասարդ ու ծեր բոլոր տղամարդկանց, որոնք առավոտից մինչև երեկո քարտ են խաղում»:

Իհարկե, տվյալ ռեպորտաժում նկարագրված ընտանիքը տիպական չէ, այն, ավելի շուտ, բացառութիւն է: Ինչպէս պատմում է Սարի Ալին, ինքը շատ հող ունի (մրգատու այգիներ և ընկուզի պլանտացիաներ), իսկ հողը այդ վայրերում բերքառատ է և հարուստ բերք է տալիս: Ռեպորտաժի հեղինակը առանձնապէս ընդգծում է այն փաստը, որ Սարի Ալիի ձգտումը բազմակնության տնտեսական հիմք ունի: Հաշիվը շատ պարզ է. Ընկուզի մեկ ծառը տարեկան նրան բերում է 80—90 հազար թուրքական լիրայի եկամուտ: Բոլոր կանանց ու երեխաներին պահելու համար Սարի Ալին ծախսում է, իսկ նա առատաձեռն ամուսին է և առատաձեռն հայր, ընդամենը 40—50 հազար թուրքական լիրա: Եվ որքան էլ բարձր լինի «բաշլըթի» գումարը,

որ նա լճարում է կնոջ համար, վաղուց լիուլի հատուցլած է լինում:

Իմ կարծիքով, հետաքրքրական է այդ բաղամասունական ընտանիքի կացութիւնը. ամեն մի կին ապրում է առանձին՝ սեփական շենքում, իսկ երեխաներով ու թոռներով նրանք միասին հավաքվում են միայն տրն օրերին և ընկուլջի բերքը հավաքելու ժամանակ, երբ աշխատում են բոլորը՝ մեծից մինչև փոքրը: Սարի Ալին իր կանանց այցելում է հերթով: Թղթակցի այն հարցին, թե նա անհարմարութիւն չի դգում արդոք, յուրաքանչյուր գիշեր մտնելով ուրիշ անկողին, Սարին դարմացած բացականչել է. «Իսկ ինչո՞ւ: Չէ՞ որ կանայք բոլորն էլ իմն են»: Թվում է, կանայք իրոք չեն խանդում միմյանց... Միակ բանը, որով նրանք կարող են պարծենալ մեկը մյուսի առջև, երեխաների թիվն է: Ամուսինը բոլորին վերաբերվում է հավասարապես, բոլորին պարգևում միատեսակ նվերներ, և ոչ մեկին չի առանձնացնում:

Առաջին կնոջ՝ Ֆաթմայի հետ Սարի Ալին ամուսնացել էր, երբ 18 տարեկան էր: Սա նորմալ է համարվում նաև այսօր. գյուղերում տղաներն ամուսնանում են 16—22 տարեկան, իսկ աղջիկները ամուսնանում են 14—18 տարեկան հասակում: Երբ ուժի մեջ էր մտնում նոր քաղաքացիական օրենսգիրքը, Սարի Ալին ուներ երեք կին: Նոր օրենսգիրքը չվերացրեց նրա բաղամասնութիւնը, քանի որ օրենքը հետադարձ ուժ չունի: Հետագա բոլոր ամուսնութիւնները նա կնքել է կրոնական կանոններով, և արել է այնպես, որ բոլոր նրա երեխաները ճանաչվել են օրինական...

Առանձնապես գյուղերում այդպիսի չայն տարածված բաղամասնութիւն պայմաններում ծագում են մի շարք իրավական պրոբլեմներ: Հանրապետական Թուրքիան ճանաչում է միայն քաղաքացիական ամուսնութիւնները: Հետևաբար, ամբողջ սրութիւնը դրվում է արտամուսնական երեխաներին ամուսնութիւնից ծնված երեխաների հետ հավասար օրինական ճանաչելու պրոբլեմը, քանի որ Թուրքիայում բալական զգալի է օրինական և արտամուսնական երեխաների իրավական ստատուսի տարբերութիւնը: Պատահում էր, որ հայրը իր բոլոր երեխաներին գրանցելու համար նրանց վերագրում էր առաջին կնոջը, քայց դա կուրյոզների էր հանգեցնում երեխայի և մոր տարիքի պատճառով... Ուրիշ հայրեր առհասարակ չեն գրանցում իրենց երե-

խաներին... Բայց, որպեսզի բնական բարձր աճ ունեցող Թուրքիայի բնակչության մասին վիճակագրական տվյալները համընկնեն իրերի փաստացի վիճակի հետ, թուրքական մեջլիսը մի քանի տարին մեկ որոշումներ է ընդունում այդ ժամանակամիջոցում կրոնական ամուսնություններից ծնված բոլոր երեխաներին օրինական ճանաչելու և նրանց նորմալ ծննդյան վկայականներ տալու մասին:

Այդպիսով, կյանքի օրենքները պաշտոնական օրենքներից ավելի ուժեղ դուրս նկան: Եվ դա հասկանալի է: Անհնար է ընդամենը մի քանի տասնամյակում կտարել ավանդույթների ուժը և մտցնել կենցաղի նոր նորմեր, եթե դրանց չեն ուղեկցում սոցիալական սեփորմաները:

Անատոլիացի գեղջկուհին այնքան էլ ծանոթ չէ այն իրավունքներին, որոնցով նրան օժտել է նոր քաղաքացիական օրենսգիրքը, քանի որ նա ամենից հաճախ անգրագետ է: Նրա համար կա միայն մեկ իշխանություն՝ տղամարդու իշխանությունը, որն իրեն շահագործում է որպես ձրի աշխատող ուժ: Սկզբում դա հայրն է, ապա ամուսինը, իսկ ամուսնու մահվան դեպքում՝ նրա եղբայրը, որին ըստ սովորության կնություն են տալիս իրեն: Այդ պատճառով Թուրքիայում բավական հաճախակի են այն դեպքերը, երբ անբեղ պատանիներն ամուսնանում են իրենցից շատ ավելի տարիքով այրիների հետ:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, 1927 թվականին թրքուհիների մեջ կային 92,2 տոկոս անգրագետներ, 1935 թվականին՝ 89,9 տոկոս, 1955 թվականին՝ 74 տոկոս: Գյուղացիներն առհասարակ այնքան էլ մեծ սիրով աղջիկներին դպրոց չեն ուղարկում նույնիսկ այնտեղ, ուր կա դպրոց: Կոտջ իրավունքներ՝ պաշտպանության ընկերության կոնգրեսում 1966 թվականի դեկտեմբերին պրոֆեսոր Վելիդե-օղլուն պատմեց իր զրույցի մասին Անկարայից ոչ հեռու ապրող մի գյուղացու հետ, որը երկու տարի սովորելուց հետո աղջկանը հանել էր դպրոցից: «Եթե դրանից ավելի սովորեր, — ասել է նա, — ապա թույլ չէր տա իրեն ծեծել, և որպես կին էլ այլևս ոչինչ չէր արժենա: Եթե կինը չի վախենում բռունցքից, ապա աշխատանքի էլ չի վարժվի»: Պրոֆեսորն ընդգծեց նաև, որ թուրք կանայք աստիճանաբար կորցնում են այն իրավունքները, որ նրանց տվել էր Աթաթյուրքը: «Մենք ուզում ենք, որ կանանց իրավունքները ոչ թե

պարզապես գրված լինեն թղթի վրա, ալ ուր նրանք դրանցից օգտվեն կյանքումս:

Թրքուհու ծանր դրությունն է՛լ ավելի է ծանրանում ծննդաբերության անշափ բարձր տոկոսի պատճառով: Ութ-տասը մարդուց բազկացած ընտանիքը ամենատղորական երևույթ է: Տարի չի անցնում, որ կինը երեխա չբերի... Եվ այդ պատճառով երեսունամյա կինը, անվերջ ծննդաբերություններից ու ծանր աշխատանքից տանջված, հաճախ թվում է վաթսունամյա պառաջ կին:

Ուստի թրքուհիների համար մեծ նշանակութուն ունի ծնընդյան նկատմամբ վերահսկողության պրոբլեմը: Հենց որ մեջը իսը ընդունեց օրենք, որը թույլատրում էր օգտագործել հակահղիության միջոցներ, կանանց շատ կազմակերպություններ սկսեցին մոտիկից զբաղվել այդ հարցով: Այդպիսի կազմակերպություններից մեկն է համալսարանական կրթութուն ունեցող կանանց միությունը: Ես անձամբ ներկա եմ եղել և՛ գլուղբերում, և՛ քաղաքներում այդ միության կազմակերպած մի քանի ժողովների: Եվ ահա ինչն է հետաքրքիր. հասարակ թրքուհիները ոչ միայն չէին խուսափում բացատրական դասախոսություններից, ալ ակնհայտորեն ձգտում էին դրանց, առավել ևս, որ կրոնը խոչընդոտ չի հանդիսանում դրան: Ղուբանը ասում է, որ հարկավոր է ունենալ այնքան երեխա, որքան կարող ես կերակրել: Ե՛վ իմամները նույնպես առայժմ չեն միջամտում կանանց կազմակերպությունների աշխատանքին, դուցե պարզապես այն պատճառով, որ այդ աշխատանքը նոր-նոր է ծավալվում...:

Ես հիշում եմ մի այդպիսի հանդիպում հին Անկարայի տարրական դպրոցներից մեկում, որը գտնվում էր միանգամայն ժամանակակից շենքում՝ ետնախորշերի շրջանում: Ինձ այնտեղ տարավ այդ հանդիպման կազմակերպիչը՝ շատ կուլտուրական և կրթված մի ափ կին: Իր դասախոսության մեջ նա շատ մատչելի ձևով բացատրում էր, թե ինչ նշանակութուն ունի ծնունդների սահմանափակումը իրենց՝ կանանց համար, և նրանց ընտանիքների բարեկեցության համար: Ես նայում էի մերթ այդ տիկնոջը, մերթ նրան շրջապատած ունկնդիրներին: Նրանցից շատերը հազնված են այնպես, ինչպես հազնվում են անատոլիացի կանայք՝ խայտարղետ շալվարներ, գուլնգուլն կոֆտա և գլխաշոր. նրանցից մի քանիսի գրկին կային երիտասներ: Նայելով նրանց, ես չէի կարողանում կտրվել այն մտքից, որ իմ առջև ես

տեսնում եմ երկու տարրեր աշխարհների ներկայացուցիչներին, որոնք ապրում են կողք կողքի, ինչպես կողք կողքի ապրում են հին և նոր Անկարան... Միության այդ գործիչները աշխատում են մեծ հոանդով և ջանք չեն խնայում: Մի անգամ հիշյալ տիկինը, Անկարայի մոտ մի փոքրիկ քաղաքում շամաչեց և բարձրանալով մզկիթի մինարեի վրա, այն միկրոֆոնով, որով մուսուլմաններին աղոթքի են հավաքում, դիմեց տեղացի կանանց, հրավիրելով մայրության մասին դասախոսություն լսելու...

Նույնպիսի նվիրվածությամբ ու եռանդով էլ աշխատում են բուժաշխատողները: Դպրոցում կայացած այն հանդիպման ժամանակ, որի մասին ես խոսեցի, գինեկոլոգ բժիշկը կարողացավ շատ մատչելի ձևով բացատրել նախազգուշական միջոցների նշանակությունն ու դրանց կիրառման եղանակները: Կանայք հետաքրքրությամբ լսում էին նրա պատմածն այն մասին, թե հաճախակի հղիությունը ինչպես է ազդում կնոջ առողջության վրա, և այն մասին, որ առանց բժշկական օգնության ծննդաբերություններից ամեն տարի մահանում է 10 հազար կին... Բժշկին մեծ ուշադրությամբ լսում էր նաև պառաված դեմքով հղի մի կին և մի երիտասարդ կին՝ փոքրիկ երեխան ձեռքին, որն իր հետ բերել էր իր տասնվեցամյա, արդեն նշանված աղջկան... Ուլքեր գրել դիտեին, գրեցին անվճար կոնսուլտացիայի հասցեն, որ շուտով բացվելու էր հին Անկարայում:

Ես քոլորովին չեմ կասկածում, որ նման կոնսուլտացիան այցելուների պակաս էր բեր չի ունենա:

Ո՞ՐԻ ԿԳՆԱ ԹՈՒՐՔԻԱՆ

Պետական հեղաշրջումը մայիսին ոչ միայն կառավարության փոփոխում էր: Այն կտրեց գոյություն ունեցած կարգը և շյուզներ բացեց ազգիկալիզմի ու հեղափոխությունների նոր հզոր հոսանքների համար: («Ելու-ճարժ Էնալդ Տրիբյուն», 1961 թվականի դեկտեմբերի 23)

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջումը, որի կազմակերպիչները սիրով այն անվանում են հեղափոխություն, իհարկե, ոչ մի հեղափոխություն էլ չի եղել: Այդ հեղաշրջումը կատարողների մեծ մասի կամքին հակառակ կանաչ փողոց բացեց Թուրքիայի հասարակական և քաղաքական կյանքի էական փոփոխությունների համար: Այն հնարավորություններ բա-

ցեց երկրի հասարակական նոր պրոցեսների համար, նոր ուժերի և, առաջին հերթին, թուրքական բանվոր դասակարգի և հաճախ զինվորական համազգեստով հանդես եկող և արմատականորեն տրամադրված մտավորականության ուժերի բյուրեղացման համար:

Ճիշտ է, առաջավոր ու առաջադիմական լոզունգների մեծագույն մասը, հանուն որոնց կատարվեց այդ հեղաշրջումը, մնաց թղթի վրա, բայց երբեմն թուղթն էլ նշանակություն ունի, հատկապես, եթե այդ թուղթը սահմանադրություն է: Մայիսի 27-ից հետո ընդունված սահմանադրությունը դարձավ առաջադիմական պրոցեսների օրինական հիմքը:

Որո՞նք են այդ նոր սահմանադրության բնորոշ գծերը: Ինչո՞վ է այն տարբերվում նախորդից, որն այնքան անխնա կերպով ոտնահարում էր Մենդերեսի ուժիմը: Ամենից առաջ նրանով, որ իբրև նրա հիմք հռչակված է հասարակական արդարության, քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները հարգելու սկզբունքը: Նոր սահմանադրությամբ, և դա պետք է ընդգծել, պետությունը իր վրա պարտավորություն է վերցնում խթանել պլանային տնտեսական զարգացումը՝ հանուն հասարակական բարեկեցության: Այդ բանը կենսագործելու համար սահմանադրությունը ենթադրում է ստեղծել պետական պլանային կազմակերպություն: Հենց սկզբում հատկապես ընդգծվում է քաղաքացիների հիմնական իրավունքների ու պարտականությունների անձեռնմխելիությունը: «Թուրքական հանրապետությունը,— ասված է 2-րդ հոդվածում,— ժողովրդական, դեմոկրատական, աշխարհիկ ու սոցիալական պետություն է, որը կառավարվում է մարդու իրավունքների հիման վրա»: Սահմանադրությունը արդարադատության, հասարակական ազմինիստրացիայի և համալսարանների անկախությունը պաշտպանելու նպատակով ենթադրում է նաև ստեղծել սահմանադրական դատարան: Սահմանադրության հատուկ բաժնում խոսվում է մամուլի անկախության մասին, որը քանիցս խախտվել է նախորդ տարիներին: Նոր սահմանադրությամբ պաշտամենտական ընտրություններում նախկին մեծամասնության սիստեմի փոխարեն համամասնական ներկայացուցչության սիստեմի կիրառումը երաշխիք էր ոչնէ կուսակցության կողմից ճնշում գործադրելու դեմ: Սահմանադրությունը երաշխավորում է նաև, որ իշխանությունները չմիջամտեն արճմիություններին՝ զործու-

նեությանը, և առաջին հերթին բանվորական արհմիությունների գործունեությունը, ճանաչում է գործադուլի և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունք բանվորների համար:

1961 թվականի սահմանադրությունը հզոր զենք դարձավ այն մարդկանց ձեռքին, որոնք պայքարում են նրա առաջադիմական հիմունքների կենսագործման համար: Այդ օրինական հիմքի վրա սկսեցին վերածնվել Մենդերեսի ժամանակ արգելված արհմիությունները, որոնց տեսակարար կշիռը աճում էր բանվոր դասակարգի թվաքանակի ավելացման հետ զուգընթաց: Եթե 1937 թվականին զբաղված բանվորների թիվը հավասար էր մոտավորապես 180 հազար մարդու, ապա 1962 թվականին՝ 860 հազարի, որոնցից ավելի քան 200 հազարը միավորված էին միությունների մեջ:

Թուրքական արհմիությունների մեծ մասը մտնում է «Թյուրք-Իշ» ֆեդերացիայի մեջ, որը մի ռեֆորմիստական կազմակերպություն է, կապված ամերիկյան «AFL—GIO»^{*} արհմիությունների հետ, որոնցից նա ստանում է դրամական բավական մեծ դոտացիաներ: Թուրքական արհմիութենական գործիչները հաճախ կատարելագործվելու համար մեկնում են Ամերիկայի Միացյալ Նահանգներ, իսկ Թուրքիա են հրավիրվում ամերիկյան խորհրդականներ, որոնք հաճախ գործողությունների ավելի մեծ ազատություն են վայելում, քան «Թյուրք-Իշի» ղեկավար ապարտը: Այսպես, 1962 թվականին տեղի ունեցավ մի պարզորոշացին ղեկը: Ազատ արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի պաշտոնական խորհրդական, ամերիկացի Թեյմայերը վտարվեց Թուրքիայից որպես «պերսոնա նոն գրատա» այն բանի համար, որ հանդես էր եկել ամերիկյան «Մորրիսոն-Նադսոն» ֆիրմայի կողմից Թուրք բանվորների շահագործման դեմ: Նա ավելի ձախ դուրս եկավ, քան «Թյուրք-Իշի» ղեկավարները, որոնք չէին համարձակվում նման պահանջներ առաջ քաշել:

Սակայն՝ կապիտալիստական կամ կառավարական շրջանների հետ ունեցած այս կամ այն կապերից անկախ շատ ղեկավարում հենց «Թյուրք-Իշն» է հանդիսանում բանվորների պահանջների արտահայտիչը: Այլ կերպ էլ լինել չէր կարող: Չէ որ մինչև

* Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիա— Արտադրական արհմիությունների կոնգրես:

վերջերս նա Թուրքիայում միակ արհմիութենական ֆեդերացիան էր: Միայն 1967 թվականին մի խումբ գործիչներ Թուրքիայի բանվորական կուսակցության հովանու ներքո ստեղծեցին ձախ արհմիութենական ԴԻՍԿ կազմակերպությունը, որի մեջ մտան մի քանի մանր արհմիություններ:

«Յուրք-Իշը» նշանակալի դեր կատարեց որպես պառլամենտի վրա ճնշում գործադրելու գործիք, որպեսզի ստիպի նրան սահմանադրության հոդվածներին համապատասխան օրենք ընդունել գործադուլների և կոլեկտիվ պայմանագրերի մասին, քանի որ նոր սահմանադրությունը ավտոմատ կերպով չէր վերացնում դեռ պատերազմից առաջ ընդունված հակաբանվորական օրենսդրությունը, որով խիստ պատժվում էր մասնակցությունը գործադուլներին:

Սակայն նոր սահմանադրությունը ևս չկարողացավ կանգնեցնել դասակարգային պայքարի ալիքը 1960 թվականի մայիսի 27-ից հետո: Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ տարբեր քաղաքներից եկած 150 հազար բանվորներ 1961 թվականի գեկտեմբերի 31-ին ցույցի դուրս եկան Ստամբուլում, պահանջելով իրենց տալ օրինական իրավունքներ: Շուտով մասսայական ցույցերի ասպարեզ դարձավ Անկարան: Մի քանի հազար շինարար բանվորներ կովի բռնվեցին ոստիկանության և ժանդարմերիայի հետ Աթաթյուրքի հուշարձանի մոտ, հենց այնտեղ, որտեղ երկու տարի առաջ մենդերեսականները դաժան հաշվեհարդար տեսան ազատություն պահանջողների հետ: Չնայած ոստիկանական մահակներին, ցուցարարները հասան մինչև մեջլիս և բանակցություններ սկսեցին գեպուտատներին հետ նույն թվականին գործադուլ արեցին էրեզլիի մետաղագործները, հանդես գալով ամերիկյան «Մորրիսոն» ընկերության շարաշահումների դեմ, որն իր ձեռքում էր պահում մետալուրգիական այդ գործարանի բաժնեթղթերի վերահսկիչ ծրարը: Արժանի կայունություն և տոկոսություն ցուցաբերեցին ամերիկաթուրքական կապիտալի սեփականություն հանդիսացող Ստամբուլի «Կաբել Կաբլո» ֆաբրիկայի բանվորները:

Այդ ելույթների ճնշման տակ, վախենալով բանվորների մարտական տրամադրության հետագա աճից, մեջլիսը 1963 թվականի ապրիլին ընդունեց օրենք կոլեկտիվ պայմանագրերի, գործադուլների և լոկաուտների մասին, որը, չնայած բազմաթիվ վերապահումներին, որոշ զիջում էր բանվորների պահանջնե-

րին: Ճիշտ է, մեջլիսը չվերացրեց արբիտրաժային հանձնաժողովների սիստեմը, որոնք պարտավոր են քննության առնել քանվորների պահանջները, որպեսզի որոշեն, թե կարող է արդյոք գործադուլը օրինական համարվել: Հակառակ դեպքում, այսպես կոչված, անօրինական գործադուլի կազմակերպիչներին սպառնում է երկարամյա բանտարկություն: Օրինակ, Անկարայի փողոցները մաքրողների գործադուլը 1967 թվականի դարնանը օրինական չճանաչվեց այն հիման վրա, որ նրանք համարվում են քաղաքային վարչության ծառայողներ, այլ ոչ թե բանվորներ: Սակայն ընդունված օրենքը խթան հանդիսացավ հետագա գործադուլային պայքարի զարգացման համար: «Փնդակները շեն կասեցնի պատմական դարձոնքը», — գրված էր այն տրանսպարանտներից մեկի վրա, որ կրում էին ցուցացարները Անկարայում՝ գործադուլավորների հետ համերաշխության ցույցի ժամանակ:

Սլ իրոք, հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ոչինչ չի կարող կասեցնել Թուրքիայի բանվոր դասակարգի զարթոնքը, մի երկրի, որը եվրոպական բոլոր երկրներից ամենացածր եկամուտն ունի բնակչության մեկ շնչի հաշվով:

Բանվորների պայքարի զարգացման հետ միաժամանակ աճում են առաջադիմական տրամադրությունները մայիսյան հեղաշրջման գլխավոր շարժիչ ուժի՝ մտավորականության շրջանում: Սպաների՝ «համազգեստ հագած մտավորականների» շարժման մասին մենք արդեն խոսեցինք: Քանիցս ուսանող իրատասարդության հետ միասին նրանք դուրս էին եկել փողոց՝ պաշտպանելու այն լուղունգները, որոնցով կատարվեց հեղաշրջումը:

Մտավորականության առաջադիմական շարժման մեջ կան բազմաթիվ հոսանքներ: Այդպիսի հոսանքներից մեկի օրգանը դարձավ «Յոն» ժուռնալը, որի առաջին համարը լույս տեսավ 1961 թվականի դեկտեմբերին: Այնտեղ հրատարակվել էր «150-ի պլատֆորմը», որ ստորագրել էին թուրք հայտնի առաջադիմական գործիչները. շուտով գաղափարախոսական այդ պլատֆորմին միացան ևս 250 մարդ, որոնցից շատերը ժողովրդահանրապետական կուսակցության անդամներն էին: Դեկլարացիան հռչակում է պլանային էկոնոմիկայի և «նոր էտատիզմի» անհրաժեշտությունը և պնդում է, որ «թուրքական նացիոնալիզմի լավագույն ձևը սոցիալիզմն է»: Այդ խմբի դեկլարացիան Թուր-

քիայի համար նոր կոնցեպցիաների որոնումների մի բնորոշ օրինակ է, կոնցեպցիաներ, որոնք դեռևս կայունացած չեն և հաճախ էլ վիճելի են:

Սոտավորապես նույն այդ ժամանակ էլ Ստամբուլում կազմակերպվեց սոցիալիստական կուլտուրայի ընկերությունը, և շուտով «Յոն» ժուռնալը դարձավ նրա օրգանը: Ընկերությունը իր բաժանմունքները բացեց երկրի շատ քաղաքներում և անմիջապես ակտիվ գործունեություն ծավալեց. նա սիստեմատիկորեն դասասխոսություններ և լաշն դիսկուսիաներ էր կազմակերպում սոցիալիզմի հետ կապված թեմաներով... Քննարկվում էին անգլիական ֆարիանականությունը, «արաբական» սոցիալիզմի պրոբլեմները, ինչպես նաև թուրքական արտաքին քաղաքականությունն սուր պրոբլեմները: Հետաքրքրությունից զուրկ չէ նշել, որ ընկերության պաշտոնական նպատակն էր սոցիալիզմի գաղափարների տարածումը մի երկրում, որտեղ դեռ մինչև վերջերս էլ չէր կարելի բարձրաձայն արտասանել հենց «սոցիալիզմ» բառը: «Սոցիալիզմի գաղափարները պետք է վաղ թե ուշ հասնեն մինչև մեր երկիրը, — ափսոսանքով ասել է իր աջ հայացքներով հայտնի թուրք ավագագույն ժուռնալիստ Յալմանը, — այդ գաղափարները, որոնք վաղուց հնացել են Արևմուտքում, կարող են մեզ կուրացնել հենց այն ժամանակ, երբ մենք այնքան կարիք ունենք դարգացման: Դրանք կխլեն մեր մասնավոր նախաճեղնությունն ոտքի տակի հողը, իսկ ժողովրդին կթունավորեն դասակարգային շերտավորման թույնով»:

Բնական է, որ շատ շուտով սոցիալիզմը «մոդայական» դարձավ թուրքիայում, հատկապես մտավորականության շրջանում: Երկրում հանկարծ սկսեցին հայտնագործել Եվրոպայում վաղուց հայտնի գիտական և ուտոպիական սոցիալիզմի կլասիկների երկերը: Դրանք սկսեցին շտապ կարգով թարգմանել թուրքերեն ու հրատարակել, շնչած հալածանքներին: Չէ որ մինչև հիմա էլ թուրքական քրեական օրենսգրքում գործում են 141-րդ և 142-րդ պարագրաֆները, որոնք դեռևս ֆաշիզմի ժամանակ ընդունված իտալական քրեական օրենսգրքի 270-րդ և 272-րդ պարագրաֆների ճիշտ պատճեններն են: 141-րդ պարագրաֆը, որն արգելում է ստեղծել կամ փորձել ստեղծել այնպիսի միություններ, որոնք նպատակ ունեն «հաստատել մեկ դասակարգի իշխանությունը մեկ ուրիշի նկատմամբ, ինչպես նաև փոխել երեքի հասարակական-տնտեսական կառուցվածքը»,

նախատեսում է պատիժ հինգ տարի բանտարկությունից մինչև մահապատիժ: Իսկ 142-րդ պարագրաֆը նախատեսում է մինչև տասը տարի բանտարկություն այն «պրոպագանդայի համար, որը կոչ է անում փոխել հասարակական մի դասակարգի իշխանությունը մյուսի նկատմամբ»: Ծիշտ է, թե մեկ, և թե մյուս պարագրաֆը հակասում են սահմանադրությանը, հատկապես նրա 40-րդ և 41-րդ հոդվածներին, որոնք երաշխավորում են մամուլի ազատությունը, բայց այն ուժերը, որոնք շահագրգռված են այդ տխրահռչակ պարագրաֆները պահպանելու մեջ, առայժմ թույլ չեն տալիս դրանք փոխել նույնիսկ սահմանադրական դատարանի միջոցով: Թուրքիայի բանվորական կուսակցության ղեկավարատարի կողմից համապատասխան հարցապնդում մտցվել էր պառլամենտ, և սահմանադրական դատարանը մերժեց այն: Այդ պարագրաֆները մնում են որպես արդյունավետ գործիք ազատ մտքի բերանը փակելու համար:

Ահա մի քանի ապշեցուցիչ օրինակներ 60-ական թվականների դատական պրակտիկայից, երբ կիրառվում էին այդ պարագրաֆները: Ինձ թվում է, մի յուրատեսակ ուղեորդ սահմանեց Բարեֆի գրքից մի հատված տպագրած թերթի թարգմանչի ու հրատարակչի դատավարությունը: Դատը կայացաւ 1965 թվականի վերջին և թերթի տնօրենին «կոմունիստական պրոպագանդայի համար» դատապարտեց յոթ և կես տարվա բանտարկության, բայց քանի որ գործը լայնորեն հայտնի էր դարձել (և ոչ միայն Թուրքիայում), գերագույն դատարանը հաջորդ տարվա նոյեմբերին չեղյալ հայտարարեց այդ դատավճիռը:

1963 թվականին դատի էին տրվել «Աթալ» ժուռնալի պատասխանատու խմբագիրը և Ստամբուլի համալսարանի դոցենտ Բենկը: Առաջինը մեղադրվում էր ֆրանսիական փոխմինիստր Գահտան Պիկոնի «ժամանակակից գաղափարների համայնագրակեր» հոդվածից հատվածներ հրատարակելու, իսկ երկրորդը՝ թարգմանելու մեջ. այդ հոդվածում մեջբերումներ էին արված այնպիսի գրողներից, ինչպես Անդրե ժիդը, Մալրոն, Սենտ էկզյուպերին, ինչպես նաև բերված էր Լուկաշի հոդվածը մարքսիզմի և էկզիստենցիալիզմի մասին: Գրական այդ բոլոր մեջբերումները ճանաչվեցին որպես թուրքական պետութան հիմքերը խարխուղ նյութեր: Բայց այս գործը ևս լայն արձագանք գտավ, և մեղադրյալները արդարացվեցին:

Բայց դրան հակառակ բանտարկության դատապարտվեց Ստամբուլի քաղաքային վարչության մի հին ծառայող, ոմն Ալթըլըը, որը լավագույն մշտամենբրով պատասխանել էր «Լիբե-րալիզմ և սոցիալիզմ» թեմայով «Ջումհուրիյեթ» թերթի առաջարկած հարցաթերթին: Դա 1965 թվականին էր: Նրան պատիվ արեցին. նրա պատասխանը գտան ուշադրության արժանի և հրապարակեցին թերթում: Ալթըլըը դատապարտում էր այն ու-ժիմը, որը «ճնշում է մարդկանց, ծաղրում է նրանց ազնվությունն ու ազատությունը», և պնդում էր, որ «սքանչելի երկիրը, որը մի դարխտ էր, դարձել է դժոխք», որ երկիրը «տառապում է այն-պիսի դժբախտություններից, որոնք կոչվում են հասարակական անարդարություն, գործազրկություն, սով և տղիտություն»: Վերջում Ալթըլըը գրել էր, որ «այդ բոլոր դժբախտություններից ազատվելու միակ միջոցը կարող է լինել սոցիալիզմը»: Նման խոստովանությունը նրան շատ թանկ նստեց. նրան դատապարտեցին վեց տարվա բանտարկության: Բայց դատական բարձրագույն ատյանները տվյալ դեպքում ևս ցույց տվեցին, որ իրենց խորթ չէ արդարության զգացումը և 1967 թվականի մայիսին շեղյալ հայտարարեցին դատավճիռը այն հիման վրա, որ հրապարակված պատասխանի մեջ չի կարելի գտնել հանցակազմ:

Ահա մի դեպք ևս, որ տեղի է ունեցել Տրապիզոնում: Այնտեղ դատի էր տրվել մի ոմն Ջիհան այն բանի համար, որ հրապարակել էր մի գրքույկ «Սոցիալիստական թուրքիա» վերնագրով: Նրան դատապարտեցին յոթ և կես տարի բանտարկության: Ինչպես պնդում էր հայտնի իրավագետ պրոֆեսոր թուրան Գյունեշը, նրան բանտ նետեցին «միայն այն բանի համար, որ նա իր գրքույկում մեջբերումներ էր արել Մարքսից...», որի երկերը ազատ վաճառվում են... Այն, ինչ կարելի է մատչելի ձևով գրել կրթված մարդկանց համար, հանցագործություն է դառնում, եթե այդ կարգում են հասարակ մարդիկ»: Ճիշտ է, Ջիհանը բանտում նստեց միայն երկու տարի...

Բայց, թերևս, ամենածիծաղելի գործը 1966 թվականի առաջին կեսին Անկարայի դպրոցներից մեկի տասնհինգամյա աշակերտ Միմշեկի մեղադրումն էր:

Ո՞րն է եղել նրա մեղքը: Իր դպրոցական շարադրության մեջ Միմշեկը պետք է Աթաթյուրքին համեմատեր օտարերկրյա որևէ պետական գործչի հետ: Աշակերտը, որին իր հասակակիցների

մեծ մասի նման, մինչ այդ սպորտից բացի ոչ մի բան չէր հետաքրքրում, օրիգինալության համար «Թուրքերի հորը» համեմատել էր Լենինի հետ, ըստ որում գրել էր, որ Աթաթյուրքը մնում է բոլորից բարձր։ Սիմօնյանի համարեցին «վտանգավոր կոմունիստ» և բանտ նետեցին։ Մամուլում եղած խիստ ելույթներից հետո նրան ազատեցին, բայց իր դպրոցը վերադառնալ նա այլևս չկարողացավ՝ նրան տվել էին անբարեհուսույթյան տոմս։

Այս ամենը վկայում է արդյոք, որ Թուրքիայում խոսքի ազատության նկատմամբ ոչինչ չի փոխվել մայիսյան հեղաշրջումից հետո։ Ամենևին ոչ։ Եվ դրա լավագույն ապացույցը տպագիր լիտսւքն է։ Հրատարակությունները գրքի շուկա են հանում ինչպես հայրենական, այնպես էլ թարգմանական ավելի ու ավելի շատ առաջադիմական, սոցիալիստական գրականություն։ Առաջավոր տենդենցներ է հանդես բերում նաև թուրքական մամուլը։ Մի շարք բովանդակալից, աշխույժ ու խելացի գրված հոդվածներում ձախ ժուռնալիստները վերլուծում են երկրում և արտասահմանում տեղի ունեցող պրոցեսները, բացահայտում են կուլակների կամայականությունները գյուղում, դիմակազերծում օտարերկրյա կապիտալի բռնությունը թուրքական էկոնոմիկայում, ավելի ու ավելի բարձրաձայն ու համառորեն են պահանջում վարել անկախ արտաքին քաղաքականություն։ Այդ մասին հաճախ էին գրում «Յոն» ժուռնալը (1961-ից մինչև 1967 թվականները այն լույս էր տեսնում մի քանի հազար օրինակ տպաքանակով), «Անտ» շաբաթաթերթը (սկսել է լույս տեսնել 1966 թվականի վերջին և կարճ ժամանակում նվաճել ժողովրդականությունը, նրա տպաքանակն է մոտ քսան հազար օրինակ)։ Կապված է Թուրքիայի բանվորական կուսակցության հետ)։ Հայտնի Թուրք ժուռնալիստների հոդվածները լույս էին տեսնում «Աքջամ» (արտացոլում է ժողովրդահանրապետական կուսակցության քաղաքականությունը), «Միլլիյեթ», «Ջումհուրիյեթ» թերթերի էջերում։ Մամուլը Թուրքիայում ընդհանրապես հարգանք է վայելում։ այն բարձրացնում է հարցերի մեծ շրջան և ունի համեմատաբար բարձր տպաքանակ։ Էժանագին սենսացիաների և կիսամերկ կանանց նկարների հաշվին գոյություն ունեցող թերթիկների, աջ կամ կրոնական ուղղությունների ժուռնալների կողքին կան նաև հասարակության առաջավոր խավերի համար հատկացված թերթեր ու ժուռնալներ։

Բոլոր թերթերի տպագրանակը Թուրքիայում 1967 թվականին հասնում էր գրեթե երկու միլիոն օրինակի: Ես ցանկանում եմ այդ բանի վրա հատուկ ուշադրություն դարձնել այն պատճառով, որ 1919—1920 թվականների ազատագրական պատերազմի ժամանակ ամենաբարձր տպագրանակը Թուրքիայում հավասար էր 25—30 հազարի: Ճիշտ է, այն ժամանակ երկրի բնակչությունը կազմում էր ներկայիս բնակչության հազիվ մեկ երրորդը, իսկ դրանցից գրագետ էր միայն 14 տոկոսը: Բայց հիմա էլ Թուրքիայում բնակչության կեսից ավելին անգրագետ է, անգրագետներն առանձնապես բարձր տոկոս են կազմում գյուղում: Ի դեպ, դուք չեք կարող անցնել որևէ գյուղով, ուր ձեզ չըջրջապատեն երեխաները և թերթ շխնդրեն ձեզանից. ամեն մի գյուղ էլ ունի մի գրագետ մարդ, որը կկարողանա այն կարգալիակ հեթեոս ոչ կարգալի, ապա նայել ծաղրանկարները...

Ռեակցիան հասկանում է, թե Թուրքիայում ինչ դեր է կատարում տպագիր խոսքը, և բոլոր միջոցներով աշխատում է ազդել մամուլի վրա՝ կաշառքով, անկախ ժուռնալիստներին հալածելով, սեկլամների բաժինները ղեկավարելով, որոնք ժուռնալիստների ֆինանսավորման հիմքն են, իսկ երբեմն նաև ամբողջ տպագրանակները՝ դնելով: Հաճախ էր պատահում, որ երբեմնի առաջադիմական թերթերի վերնագրերը մնում էին, բայց նրանց քաղաքական բովանդակությունը լրիվ փոխվում էր: Երբեմն էլ նախկինն են մնում և՛ թերթի անունը, և՛ բովանդակությունը, բայց փոխվում է այն կուսակցության անունը, որի հետ նա կապված է: Այդպես եղավ, օրինակ, Անկարայի «Ձաֆեր» թերթի հետ. ժամանակին նա դեմոկրատական կուսակցության օրգանն էր, ապա ինչ-որ ժամանակ առհասարակ լույս չէր տեսնում, իսկ հիմա հրատարակվում է որպես արդարություն կուսակցության օրգան...

Իսկ ահա այն բանի օրինակներ, թե ինչպես են հալածանքների ենթարկվում առաջադիմական ժուռնալիստները: Այսպես, «Յոն» ժուռնալի տնօրեն և զլխավոր խմբագիր Դոդան Ավջիօղլուն վատրվել էր Անկարայի ոսդիոցից, որը եղել է և հիմա էլ գտնվում է ռեակցիոն ուժերի հարվածների տակ, «չափից դուրս ձախ տենդենցների համար»: Ամբողջ Թուրքիայում լայն արձագանք գտավ օրը ցերեկով զանգստերական հարձակումը առաջադեմ ժուռնալիստ Իլհամի Սոյսալի վրա. մայրաքաղաքի կենտ-

բոնում նրան խցկեցին ավտոմոբիլի մեջ և տարան քաղաքից դուրս, որտեղ նրան ծեծեցին, մինչև որ նա կորցրեց դիտակցութիւնը: Դա 1966 թվականի հոկտեմբերին էր: Առանձնապես ուժեղ հարձակումների ենթարկվեց «Աքշամ» թերթից շատ հանրածանոթ ձախ հրատարակիչու Չեթին Ալթանը, որը ժամանակին վտարվել էր «Միլլիթեթից»: Երբ 1965 թվականին նա Թուրքիայի բանվորական կուսակցութունից ընտրվեց դեպուտատ, հետադիմական տարրերը հասան այն բանին, որ 1967 թվականի ամռանը մեջլիսը ընդունեց որոշում նրան պառլամենտական անձեռնմխելիութունից զրկելու մասին: Բայց սեպտեմբերի հաղթանակը երկարատև չեղավ. նույն թվականի աշնանը սահմանադրական դատարանը չեղյալ հայտարարեց մեջլիսի որոշումը:

Այս փաստը, ինչպես և ուրիշ շատ փաստեր, ցույց տվեց, որ օրինականության պաշտպանների համար Թուրքիայում սահմանադրութունը ամուր հենարան է: Այսօրվա Թուրքիայում գոյութուն ունի այն, ինչի մասին մինչև 1960 թվականը հասկացողութուն անգամ չունեին՝ հասարակական կարծիք: Եվ այս փաստի հետ կառավարող շրջանները, ցանկանում են թե ոչ, պետք է հաշվի նստեն: Հասարակական կարծիքն իրեն ցույց տվեց 1967 թվականի մարտին, երբ քննարկվում էր «հիմնական քաղաքացիական իրավունքների ու ազատութունների» մասին կառավարության առաջ քաշած օրինագիծը: Հասարակական կարծիքն այդ օրինագիծը գտավ էլ ավելի հակադեմոկրատական, քան քրեական օրենսգրքի տխրահռչակ 141-րդ և 142-րդ պարագրաֆները: Ինչպես գրել է «Միլլիթեթ» թերթի գլխավոր խմբագիր Աբդի Իփեկչին, իր բնույթով «այդ օրինագիծը դերադանցեց Մենդերեսի հրատարակած բոլոր օրենքները»: Բավական է ասել, որ այն նախատեսում էր ոչ միայն երկարամյա բանտարկութուն «ամեն մի կարծիքի կամ մտքի համար, որոնք կճանաչվեն իբրև կոմունիստական», այլև պատիժ բոլոր նրանց համար, ովքեր ֆրենսդատեն դատարանների վճիռները և պաշտպան կկանգնեն մեղադրյալներին: Այս օրինագծի դեմ բողոքներն այնքան լայն բնույթ ստացան, որ այն վերջ ի վերջո հանվեց:

Ուժերի հարաճուռ բեռնացման լույսի տակ դժվար է կանխագուշակել, թե ինչ ուղղությամբ կընթանա Թուրքիան մոտ ապագայում: Պարզ է միայն մի բան. այն բոլոր իրադարձութուններից հետո, որ Թուրքիան ապրեց հեղաշրջման պահից, հեշտ չի փնի պայքառել առաջադիմական ուժերի դեմ, հեշտ չի լինի տե-

որը իրականացնել երկրում կամ ֆաշիստական օրենսդրություն անցկացնել մեջլիսով:

Բարձրագույն դատարանի նախագահ Իմրան Օբթեմը, այսպես կոչված, «դատական տարին» սկսվելու (արձակուրդներից հետո դատարանի աշխատանքները սկսվելու) կապակցությամբ 1967 թվականի աշնանը արտասանած իր ճառում նախազգուշացնում էր բոլոր նրանց, ովքեր, ինչպես արտահայտվեց նա, «կփորձեն թուրքիան՝ քաշել դեպի ետ, դեպի անցյալը, դեպի խավարամոլությունը... Ոչ մեկին չի հաջողվի ոչ փոխել այն ուղղությունը, որով կրնթանա երկիրը, ոչ էլ դանդաղեցնել քաղաքակրթության քարավանի քայլերը»:

Նրա այդ գնահատականի յուրատեսակ հաստատումը հանդիսացան 1969 թվականի մայիսին Օբթեմի թաղման հետ կապված իրադարձությունները: Կրոնական մոլեռանդների բազմությունը փակեց թաղման թափորի ճանապարհը մայրաքաղաքի ամենաբազմամարդ տեղում (Քեմալը, շնայած մտցրել էր աշխարհիկ օրենսդրություն, բայց չէր վերացրել երկրի հանդեպ ծառայություններ ունեցող մարդկանց, այդ թվում և ոչ թուրքերի համար մղկիթներում աղոթելու սովորույթը): Բարձրաձայն բղավելով «Զհամարձակվե՛ք աղոթել անհավատի համար», — մոլեռանդները փորձեցին անգամ հարձակվել դառամյալ Ինենյուլի վրա... Անմիջապես գտնվեց մի ինչ-որ գեներալ, որը ղեկըր ձեռքին կարողացավ պաշտպանել Ինենյուլին: Ի պատասխան այդ պրոֆոկացիայի, թուրքական դատավորները երկու օր հետո Աթաթյուրքի հուշարձանի մոտ ցույց կազմակերպեցին առաջադիմություն գաղափարներին հավատարմության լողունգներով: Քեմալականության կողմնակիցները ցուցարարներին ողջունեցին՝ «Ղադին մեզ հետ է» բացականչություններով և ծաղիկներ նետեցին դատավորներին: Դա ուժերի ևս մի փորձ էր նրանց համար, ովքեր կցանկանային փակել «քաղաքակրթության քարավանի» ճանապարհը երկրում¹:

¹ Վերջին տարիներին ուսկցիայի սանձարձակությունները, մասսայական-ձերբակալությունները, երկարամյա բանտարկությունները և քաղաքական բանտարկյալների նկատմամբ կիրառվող տանջանքները վկայում են, որ, զժբխտաբար, ժամանակավորապես առավելության են հասնում այն ուժերը, ովքեր փորձում են փակել «քաղաքակրթության քարավանի» ճանապարհը:

Չի կարելի խոսել ժամանակակից Թուրքիայի մասին, առանց շոշափելու Թուրքական գյուղի պրոբլեմը, քանի որ քաղաքներն այդ երկրում քաղաքակրթության փոքրիկ ցայտուն կղզյակներ են Անատոլիայի նահապետական կյանքում...

Ամբողջ բնակչության 75 տոկոսն ապրում է գյուղերում: Որոշ գյուղեր, իսկ նրանց թիվը Թուրքիայում հասնում է մոտ քառասուն հազարի, ավելի շուտ հիշեցնում են երեք-չորս տասնյակ տներից բաղկացած փոքրիկ ավաններ, որոնք կորել են ժայռերի ու խոպանի մեջ: Մշակվող հողերի ընդհանուր տարածությունը կազմում է 23 միլիոն հեկտարից մի քիչ ավելի: 1963 թվականի տվյալներով, հողատարածությունների 70 տոկոսը ենթակա է էռոզիայի, և երկրում գրեթե ոչինչ չի արվում այդ տարերային աղետի դեմ պայքարելու համար: Ճիշտ է, տեղ-տեղ, օրինակ, Անկարայի շրջակայքում, տնկում են անտառներ: Սակայն անտառատնկումները բավականին թանկ նստող գործ են, որպեսզի դրանք կիրառեն լայն մասշտաբներով: Անտառների մեծ մասը պատկանում է պետությունը, բայց 1976 թվականի մայիսին պառլամենտ մտցվեց մի օրինագիծ անտառները նրանց նախկին տերերին վերադարձնելու մասին: Օպոզիցիայի դեպուտատները հանդես եկան այդ օրինագծի դեմ այն հիման վրա, որ դա հակասում է սահմանադրության 131-րդ հոդվածին: «Եթե մենք կանգնենք այդպիսի ուղու վրա,— հայտարարում էին նրանք,— մենք առհասարակ կկորցնենք մեր անտառները և Թուրքիան էռոզիայի հետևանքով ընդհանրապես կվերածվի անապատի»: Հողի էռոզիայի կանխումը շտեմնված դժվարին ու թանկ նստող գործ է: Գյուղի գործերի միևնույն Յուրդոլուի գնահատմամբ, նման միջոցառման իրականացումը կարժեհար գրեթե 100 միլիարդ Թուրքական լիրա՝ գումարած նաև 50 միլիոն լիրա՝ անատոլիական սարահատվթը ոռոգելու համար:

Թուրքական գյուղը այսօր էլ մնում է այնպես, ինչպես եղել է շատ դարեր առաջ: Նույն Յուրդոլուի խոսքերով, «ինչպես հին ժամանակներում, այնպես էլ հիմա Թուրք գյուղացին ապրում է կավաշեն տնակում: Մեր գյուղացիները, ըստ էության, ներկայումս էլ ապրում են ինչպես հազար տարի առաջ»: Գյուղի գործերի հերթական միևնույն Ավջին 1966 թվականին հայտարարեց, որ 22 միլիոն գյուղացիներից 19 միլիոնը բուրրովին գուրկ

է ճանապարհներէրց, 15 միլիոնը՝ խմելու ջրից, իսկ 21,5 միլիոնը՝ էլեկտրականութիւննից. կես միլիոն գյուղացիներ միայն գիտեն, թե ինչ է էլեկտրական լույսը:

Որպեսզի համոզվենք, թե ինչպիսի անելանելի շքավոր գոյութիւն է քարշ տալիս այդ հիանալի երկրի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, հարկ չկա հատկապէս ու խոր ուսումնասիրել ժամանակակից Քուրքիայի պրորբլեմները: Դրա համար հարկավոր է պարզապէս նստել ավտոմեքենա և շրջել Անատոլիայի ընդարձակ տարածութիւնները: Ամենուրեք դուք կտեսնեք իրար բլխի կիտված կամաշեն խրճիթներ թղթով փակված փոքրիկ լուսամուտներով. դրանցում միասին պատասխարվում են մարդիկ և անասունները: Լուսամուտների տակ շորացնում են գոմարըրը, որով այստեղ ոչ այնքան պարարացնում են դաշտերը, որքան վառում վառարանները... Դուք կտեսնեք, թե ինչպէս թուրք գյուղացին այսօր էլ վար է անում փայտե արորով: «Միլիոնիթ» թերթի տեղեկութիւններով, արորների թիվը գյուղատնտեսութեան մեջ ոչ միայն չի պակասում, այլ, ընդհակառակն, աճում է: Եթե 1960 թվականին կար 1 999 259 արոր, ապա 1962 թվականին դրանց թիվը հասավ 2 087 725-ի: Կարելի է արդյոք դրանից հետո զարմանալ, որ մեկ հեկտարի միջին բերքատվութիւնը Քուրքիայում ավելի ցածր է, քան բերքատվութիւնը եվրոպական ամեն մի այլ երկրում, որ երկրագործութիւնը չի բավարարում Քուրքիայի պահանջմունքները հացահատիկի նկատմամբ և նաստիպված է ամեն տարի ներմուծել մոտ երեք հարյուր հազար տոննա ցորեն:

Բոլորովին այլ տեսք ունեն գյուղերը ծովափին, որտեղ հողը բերրի է և ջուրը շատ: Բայց այստեղ էլ գյուղացին չի վայելում իր աշխատանքի պտուղները, թեպետ այստեղի գյուղացիներն ապրում են ավելի հարուստ, քան Կենտրոնական Անատոլիայում: Ինչպէս հաղորդում է «Ջումհուրիլիթ» թերթը, Չուբուրովայի անչափ բերրի շրջանում (Ադանայի վիլայեթ) գյուղատնտեսութիւնից տացվող տարեկան եկամուտը հավասար է 2450 միլիոն թուրքական լիրայի, որից 1200 միլիոնը բաժին է ընկնում 2800 կալվածատիրական ընտանիքների և 1250 միլիոնը՝ 153 200 գյուղացիական ընտանիքների: Այս շրջանի կալվածատիրական լայնածավալ դաշտերում զբաղված են բազմաթիվ գյուղատնտեսական բանվորներ, որոնք իրավազուրկ են: 1966 թվականի աշնանը Աբանջայում հանդես գալով հասարակական գիտութիւնների

վերաբերյալ սեմինարում, Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր, տիկին Քըրայը հայտնեց, որ 1966 թվականի ամռանը կառավարությունը գյուղատնտեսական բանվորների համար նվազագույն օրավարձ է սահմանել՝ 9 լիրա, բայց կարվածատերերի միությունը սահմանել է իր օրավարձը՝ 6 լիրա, և երբ վճարում է աշխատանքի համար, ստորագրություն է պահանջում 9 լիրա ստանալու համար: «Կարվածատերերի կազմակերպված իշխանությունը, — ասում էր տիկին Քըրայը, — նոր գործոն է մեր գյուղի շերտավորման մեջ»:

Ագրարային ռեֆորմի մասին շատ էր խոսվում դեռ Աթաթյուրքի կենդանության ժամանակ: Սակայն, ըստ էության, ոչ մի ռեֆորմ էլ չի իրականացվել: Ագրարային հարաբերությունները հիմա էլ կրում են անախրոնիկ բնույթ: Իսկ այն նախագծերը, որոնք առաջ էին քաշվել 1960—1965 թվականներին, էլ ավելի պակաս առաջադիմական էին, քան 1945 թվականի ագրարային ռեֆորմի առաջին նախագիծը: Այն ժամանակ այդ նախագծի հաստատումը ձախողեցին գյուղական աղաների շահերի պաշտպանները ժողովրդահանրապետական կուսակցությունից, իսկ երբ 1950 թվականին մտցվեց բաղմակուսակցական սիստեմ, այդ նախագիծը առհասարակ թաղեցին: Անկախ այն բանից, թե որ կուսակցությունն է կանգնած իշխանության գլուխ, գյուղական աղաները ինչպես իշխել են, այդպես էլ շարունակում են իշխել: Ճիշտ է, մայիսյան հեղաշրջումից անմիջապես հետո ընդունվել էր, այսպես կոչված, 105-րդ օրենքը, որի համաձայն 56 նախահարուստ աղաներ թուրքիայի հարավային շրջաններից, որոնք անամոթաբար ահաբեկում և շահագործում էին գյուղացիներին, բռնի կերպով արտաքսվել էին: Սակայն երկու տարի էլ չանցավ, երբ նրանք նորից վերադարձան իրենց հողերը... Ինննյուրի կուլիցիոն կառավարության կողմից ընդունված օրենքը ագրարային ռեֆորմի մասին, որը մեծ դժվարությամբ հաստատեց մեջլիսը (դեպուտատների մեծ մասը ներկայացնում էր արդարության կուսակցությունը), լուկ մի բանավոր զիջում էր գյուղացիների պահանջներին: Չկային բյուջետային վարկեր, որոնք անհրաժեշտ են ռեֆորմը կիրառելու համար, և հնգամյա պլանն էլ ոչ մի ֆոնդ չէր նախատեսել այդ նպատակի համար: Այսպիսով, ժողովրդահանրապետական կուսակցությունը մի անգամ ևս հուսախաբ արեց գյուղացիներին:

Անգլիացի տնտեսագետ Ջեկորթի տվյալներով, որը Քուրքիայում է եղել 1962 թվականի վերջին, գյուղացիական ընտանիքների 72 տոկոսն ուներ հազիվ միայն 2,3 հեկտարական հող: Ռեֆորմի մասին վերոհիշյալ օրինագիծը նախատեսում էր մշակվող հողատարածությունների ավելացում 5 միլիոն դոնյումով¹ և հողի բաշխում սակավահող և հողագուրկ գյուղացիներին: Բայց այդ միջոցառումների իրականացումն էլ կախված էր կադաստրային ցուցակների կազմումից, որոնք գյուղերում փաստորեն չկան, իսկ դա գործնականում, անկախ մյուս պատճառներից, ի շիր էր դարձնում օրինագծի իրականացումը: Ջեկորթին առաջարկել է մի շարք միջոցներ, որոնք, նրա կարծիքով, կարող էին շտկել գրուբյունը գյուղատնտեսություն մեջ, բայց դրանք ևս մնացին թղթի վրա, որովհետև շոշափում էին աղանների շահերը: Այսպես, նա առաջարկում էր հողի սեփականության նվազագույն չափ և ավելցուկը օտարել որոշակի վճարով: Չընդունվեց նաև անգլիացի մեկ ուրիշ էքսպերտի, պրոֆեսոր Կալդորի առաջարկությունը՝ երկրագործության մեջ բարձր եկամուտներից հարկեր գանձելու մասին:

Ահա ուրիշ տվյալներ. «Ենի Իստամբուլ» թերթը հրապարակել էր մի հարցաթերթիկ, որից երևում էր, որ, այն ժամանակ, երբ տնտեսական աճի պաշտոնական ինդեքսը հավասար էր համարյա 7 տոկոսի, աճի ինդեքսը գյուղատնտեսության մեջ 1968 թվականի 1,9 տոկոսից 1969 թվականին ընկավ մինչև 0,8 տոկոս: Նույն հարցաթերթիկը հաղորդում է, որ կես միլիոն թուրք գյուղացիներ բոլորովին հող չունեն, բայց դրա փոխարեն 38 հազար կալվածատերերի ձեռքում է գտնվում բոլոր մշակվող հողերի մեկ քառորդը:

Այսպիսով, ամեն ինչ մնացել է անփոփոխ: Ամերիկացի պրոֆեսոր Էնոսի հաշվումներով, 84 հազար թուրք կալվածատերեր ստանում են 10,3 միլիոն աղքատ գյուղացիների ստացածի մեկ հերոդդը: Աղանների տարեկան միջին եկամուտը քառասունյոթ անգամ դերազանցում է աղքատ գյուղացու եկամուտը:

«Աղլըբի», այսինքն՝ կուլակների ու շելյաների կիսաֆեոդալական տիրապետության ու բռնության սխտեմը գյուղում, առանձնապես տարածված է Արևելյան Անատոլիայում: «Այստեղ

¹ Դոնյում — տարածության չափ, որ հավասար է 915,3 քառ. մետրի:

կան կալվածատերեր, որոնց պատկանում է քառասունական գյուղ, — գրեւէ է հայտնի թուրք գրող Ադիզ Նեսինը, — իսկ կալվածատերերի համար աշխատող գյուղացիները շունեն ոչ իրենց գգալը, ոչ անկողինը...»: «Անտ» ժուռնալը 1967 թվականի մարտ-ապրիլին հրատարակել էր գրող Մահմուդ Մաքալի ցնցող հոդվածների մի շարք արևելյան շրջաններից՝ «Արևելյան ճակատում ոչինչ նոր բան չկա» վերնագրով, որոնցում նա նկարագրում է աղքատության ու լիակատար մոռացության մեջ գոյությունները քարշ տվող գյուղացիների կյանքը: Նա պատմում է մի պառավ գեղջկուհու հետ ունեցած իր զրույցի մասին: Քանի որ կինը թուրքերեն չի խոսում, քանի որ գյուղում ապրում են հիմնականում քրդեր, բացատրվելու համար նրանց օգնել է նրա թոռը, որը թուրքերենը սովորել է գպրոցում (թուրքիայում քրդական դպրոցներ չկան): Ամենատարրական հարցերին նրա տված պատասխանները կարող են, ինչպես Մահմուդ Մաքալին է պնդում, մի յուրատեսակ չափանիշ ծառայել ամեն մի թուրք գեղջկուհու տգիտության համար, երկրի որ մասում էլ որ նա ապրի: Կինը երբեք չի լսել ոչ Իսմեթ փաշայի, ոչ Դեմիրելի մասին (վերջինս այն ժամանակ պրեմիեր մինիստր էր), նա գաղափար անգամ չունի, թե ովքեր են «ձախերը» և «աջերը»: Այն հարցին, թե ով է կանգնած իշխանության գլուխ, կինը պատասխանել է. «Սուլթանը, որն ապրում է Ստամբուլում կամ Անկարայում»: Իսկ երբ Մահմուդ Մաքալը հարցրել է նրան, թե նա ում օգտին է քվեարկել վերջին բնտրություններում, կինը պատասխանել է. «Ես ինչ գիտեմ, ինձ մի թուղթ տվեցին, և ես զցեցի արկղը»:

Այդ փոքրիկ գյուղում տիրում են նահապետական դաժան սովորույթները, և այդ իմաստով այն ոչնչով չի տարբերվում թուրքական ցանկացած գյուղից: Ամենուրեք ընդունված է, որ երիտասարդ տղամարդը, նույնիսկ եթե ամուսնացած էլ լինի, իրավունք չունի ձայն հանել կամ ծխախոտ վառել իրենց մեծերի ներկայությամբ: Չնայած այն բանին, որ կինը պաշտոնապես իրավունքներով հավասարեցված է տղամարդկանց, անատուլիական գյուղում միևնույն է, նա համարվում է ստորին էակ: Եթե նա չի աշխատում դաշտում, երբեք իր դեմքը բաց չի անի, որպեսզի օտար տղամարդը դեմքին չնայի: Կինը պարտավոր է տեղը զիջել ամուսնուն և անառարկելիորեն կատարել նրա ամեն մի հրաման: Ավագ բույրը պետք է ենթարկվի իր կրտսեր եղբոր մահահանույթներին: Եթե ամուսինը, ինչպես թույլատրում է շա-

րիաթը, երեք անգամ ասի իր կնոջը, որ այլև չի ուզում, որ նա իր կինը լինի, կինը պետք է հեռանա տնից, և բուլբուլը նրանց կհամարեն բաժանված: Ինչպես հին ժամանակներում, գեղջկուհին այն ժամանակ է միայն իրավունք ունենում տանը, երբ ամուսնացնում է իր որդիներին և սկսում է աշխատեցնել իր հարսներին... Բայց, աստված շանի, որ նա դավաճանի ամուսնուն: Կնոջ ու նրա սիրելիանի սպանությունը համարվում է ամուսնու բարոյական պարտքը, և ոչ մի ուժ, նույնիսկ բանտարկությունը, չի կարող փոխել այդ սովորույթը: Մարդուն վիրավորելը կամ պղանելը, ըստ էության, չի դատապարտվում, իսկ նման հանցագործության, ինչպես և բռնության համար բանտարկությունը թուրքական գյուղում սովորական բան է: Գյուղացու թարոյական կողեքսը այլ բան է, իսկ պաշտոնական քրեական կողեքսը՝ միանգամայն այլ: «Գյուղում օրենքը ուժ չունի», — ասում է ժողովրդական իմաստությունը: Այստեղ գործում է տեղական բարոյական-կենցաղային օրենսգիրքը:

Այսպիսին է թուրքական գյուղը: Գյուղը նահապետական է ու չի փոխվում դարերով: 50-ական թվականներին, ճիշտ է, որոշ փոփոխություններ նկատվեցին: Այդ փոփոխությունները կատարվեցին գյուղատնտեսության անկանոն մոդեռնացման ու միջինադարյան շնորհիվ: Եթե 1947 թվականին 7 հազար հեկտարին հասնում էր մեկ տրակտոր, ապա 1955 թվականին միայն 351 հեկտարին: Գյուղում ավելորդ դարձած հեկտարական թվով բանվորական ձեռքեր լցվեցին քաղաք:

1955 թվականից հետո տրակտորների թիվը դաշտում չավելացավ, տեխնոլոգիան գյուղում չփոխվեց, բայց բնակչության ինտենսիվ աճը հանգեցրեց այն բանին, որը սովը գյուղը մղեց դեպի քաղաք՝ հացի վատտակի: Գյուղի մասսայական արշավանքը դեպի քաղաք շարունակվում է և այսօր: Այդ պրոցեսը կրում է ողբերգական բնույթ, քանի որ զարգացած արդյունաբերության բացակայությունը քաղաքում բանվորական ձեռքերը թողնում է առանց աշխատանքի: Տեղի է ունենում կեղծ ուրբանիզացիայի երևույթ... Թուրքական բուլբուլ խոշոր քաղաքներում աճում են «գեջեկոնդուների» ամբողջ թաղեր: «Գեջեկոնդուների» բնակչության արագ ավելացումը գերազանցում է իսկական քաղաքային բնակչության թվաքանակը: Պաշտոնական տվյալներով, 1967 թվականին գետնախորշերում ապրում էր Անկարայի բնակիչների 59 տոկոսը, Ստամբուլի բնակիչների 49 տոկոսը և Իզ-

Ճիրտի բնակիչների 33 տոկոսը: «Գեջեկոնդոնները» յուրատեսակ կնիք են թողնում թուրքական քաղաքների տեսքի վրա... Դրանց բնակիչները գյուղացիներից շեն տարբերվում ոչ իրենց արտաքին տեսքով, ոչ էլ ապրելակերպով: Նրանք իրենց կապերը շեն խզում գյուղից և ապրում են գյուղական բարոյականության օրենքներով:

Օտարերկրացիները, որոնք կարեկցությամբ են նայում «գեջեկոնդոնների» ընդարձակ թաղերին (թուրքերն առհասարակ աշխատում են դրանք թաքցնել կողմնակի աշքից), հազիվ թե մտածեն, որ կյանքը այդ գետնախորշերում դրանց բնակիչների համար այնուամենայնիվ մի առաջընթաց քայլ է գյուղի շարքաշ կյանքի համեմատությամբ: Սարսափելի է նայել այդ գետնախորշերին, դա ճիշտ է, բայց այստեղ գոնե կա ջուր, իսկ երբեմն նաև էլեկտրականություն, և մարդիկ էլ այդտեղ պատասպարվում են ոչ թե անասունների հետ, մի խոսքով, դրանցում ապրելը այնուամենայնիվ ավելի հեշտ է, քան գյուղական կավաշեն հյուղակներում: Եվ բացի դրանից, այդ մարդկանց դալը քաղաք նրանց հնարավորություն է տալիս առաջ գնալու. չնայած գործադրկությանը, քաղաքում ավելի հեշտ է ճարիլ որևէ, թեկուզ ժամանակավոր, աշխատանք, քան գյուղում... Որպես կանոն, վաղվա օրվա նկատմամբ անվստահ այդ մարդիկ գյուղում պահպանում են իրենց հողակտորը՝ որպես մի յուրատեսակ ապահովագրում աշխատանքը կորցնելու դեպքում: Երբեմն սկզբում քաղաք է գալիս բնտանիքի մեծը, տեղավորվում է աշխատանքի, իսկ երբ նա նորից վերադառնում է գյուղ, վաստակի է մեկնում նրա որդին:

Տեղի է ունենում ոչ այնքան ուրբանիզացիայի պրոցես. որքան գյուղական բնակչության ներխուժում քաղաք:

Վերջում որպես գյուղական աղաների ամենազորության իլյուստրացիա կցանկանայի պատմել մի դեպք, որը տեղի է ունեցել 1961 թվականին Թուրքիայի հարավ-արևելքում՝ Քաղբլլի վայրում (Ադանայի մոտ) և լայն արձագանք գտել ամբողջ երկրում:

Այդ ժամանակ Քաղբլլիում քայմաքամ էր մի ոմն Մեհմեդ Ջան (ի դեպ, այս պատմությունից հետո նրա անունը հայտնի դարձավ ամբողջ Թուրքիայում): Նա այնքան լուրջ էր վերաբեր-

վում իր պարտականություններին, որ մի գեղեցիկ օր տեղական ազաներին արգելեց բրինձ ցանել այն հողերում, որոնք կադաստրային մատչաններում նշված էին որպես պետական հողեր (այդ վայրերում բրինձը գյուղատնտեսական գլխավոր կուլտուրան է): Ինչպես հայտնի է, բրնձի դաշտերը պետք է ծածկված լինեն ջրով: Բայց այն առումները, որոնցով ջուրը հասնում է դաշտերը, գտնվում էին ազաների ձեռքում, և գյուղացիները մեծ փողեր էին վճարում ջրի համար:

Այդ վիճակը պահպանվել էր տասնամյակներով: Ոչ մեկի մտքովն էլ չէր անցնում գոնե մի անգամ նայել կադաստրային մատչանները՝ խմանալու համար, թե այնուամենայնիվ ում է պատկանում հողը: Իսկ ազանները հողը համարում էին իրենցը... Այդպես էր սուլթանների ժամանակ, այդպես էր նաև հանրապետությունից օրով: Ոչինչ չէր փոխվել նաև 1960 թվականի մայիսի 27-ից հետո: Փոխվում էին կառավարությունները Անկարայում, բայց Քաղբրջիում, ինչպես և հարավարևելյան Անատոլիայի հարյուրավոր այլ գյուղերում, ազաններ անամոթաբար իշխանություն էին բանեցնում գյուղացիների գլխին:

Տեղական կուլակ Չոշկունը՝ բոլոր «կուլակների կուլակը», որին ամենուրեք անվանում են «ջրերի արքա», ապօրինի կերպով յուրացրել էր առուն: Նա նույնիսկ հատուկ մարդիկ էր պահում, որոնք հակում էին նրա դաշտերին: Ինչպես պատմում են, իր ժամանակ, դեռ Աթաթյուրքի կենդանության ժամանակ, գտնվեց տեղական ժանդարմերիայի մի համարձակ պետ, որը գյուղացիներին ծաղր ու ծանակի էնթարկելու և կամայականությունների համար մի քանի կուլակների, այդ թվում և Չոշկունին, արտոնց Դիարբեքիր: Սակայն արտոնը երկար շտեկեց: Շուտով նրանք բուրն էլ վերադարձան, իսկ Չոշկունին սկզբում ընտրեցին անգամ ժողովրդահանրապետական կուսակցության տեղական բաժանմունքի ղեկավար, իսկ այնուհետև՝ նաև ղեկուսատու: Բացի դրանից, նա գլխավորեց բրնձի ցանքի հանձնաժողովը Քաղբրջիում: Որպես ազդեցիկ մարդ, նա մի անգամ իր մոտ է կանչում տեղական իշխանության ներկայացուցիչներին և նրանցից ստանում է հողին տիրելու «օրինական» իրավունք: Իսկ երբ հարմար առիթ եղավ, նա յուրացրեց նաև առուն և ամբարտակ կառուցեց նրա վրա: Գալով Քաղբրջի, Մեհմեդ Զանը Չոշկունից խլեց առուն և շափավոր վճարով վարձով տվեց գյուղացիներին: Ավելին. նա առհասարակ վերացրեց ազայի մենաշնորհը ջրի նկատ-

մամբ, տեղական վարչութիւն հաշիւին երեք ամբարտակ կառուցելով գետակի վրա: Սա է նրա կատարած ամբողջ գործը: Միայն այդ է Մեհմեդ Զանի «Տեղափոխական» գործունեութիւնը, որի համար նրան հետագայում անվանեցին ծայրահեղական: Նա չի կատարել ոչ մի այնպիսի բան, որ նախատեսված շիններ թուրքական բուրժուական հանրապետութիւն իրավունքով: Նա նույնիսկ շթուլատրեց գյուղացիներին ձրի օգտվել ջրից:

Նոր տանուտերի նկատմամբ ատելութիւնամբ լցվեցին հարուստները: Սկզբում նրանք որոշեցին, որ նա, երկի, աշխատում է իրեն թանկ ծախել: Եվ նրանք որոշեցին հաշիւի շտնել ծախսերը: Նրանց համար դժվար չէր այդ բանն անել, քանի որ նրանց չուրացրած հողի յուրաքանչյուր դոնյումը նրանց տալիս էր 600-ական թուրքական լիրա մաքուր եկամուտ, իսկ Չոշկունը, որը յուրացրել էր տասը հազար դոնյում հող, ընդհանրապես ստանում էր վեց միլիոն լիրա: Նշանակում է, քայմաքամին հարկավոր է գնել, ինչքան էլ դա արժենա: Բայց, օ՛ հրաշք, Մեհմեդ Զանր անկաշառ գտնվեց: Չօգնեցին ո՛չ հրավերները Ադանայի ամենաթանկ գիշերային ռեստորանները, ո՛չ սպառնալիքները, ո՛չ վարձական բանդիտները: Մեհմեդ Զանր մոբիլիզացրեց տեղական ժանդարմերիային, որպեսզի սա պահպանի իր կյանքը՝ որպես կենտրոնական իշխանութիւն ներկայացուցչի:

Չոշկունը և նրա ընկերները վախեցան անձամբ հաշիւհարդար տեսնել քայմաքամի հետ. դրանից բանտի հոտ էր գալիս: Նրանք գտան ավելի անվտանգ, և գլխավորը՝ ավելի արդյունավետ միջոց. Չոշկունը իզուր չէր, որ ֆինանսավորում էր իր փեսայի՝ տեղական հարուստ Թոփալօղլուի որդու նախընտրական կամպանիան: Նրա փեսան նախ դարձավ դեպուտատ արդարութիւն կուսակցութիւնից, իսկ ապա նաև մինիստր՝ Ինենյուի կուլիցիոն կառավարութիւնում: Աները՝ ժողովրդահանրապետական կուսակցութիւն գործիչ, իսկ փեսան՝ դեպուտատ արդարութիւն կուսակցութիւնից: Ինչ կա որ, դա միայն ապացուցում է, որ նահանգներում խոր տարածայնութիւններ չեն եղել այդ երկու հակամարտ կուսակցութիւնների ներկայացուցիչների միջև: Չոշկունի փեսան Քաղբլիի կուլակների միակ ներկայացուցիչը չէր մեջլիսում: Ինչպես գրում էր «Յոն» ժուռնալը, կուլակներն այնտեղ ունեին հինգ ներկայացուցիչ. երեքը ներկայացնում էին ար-

դարութեան կուսակցութիւնը, իսկ երկուսը՝ ժողովրդահանրապետականը:

Ինչպէս ցույց տվեց Մեհմեդ Զանի գործը, աղաների քաղաքական կապերը հատուցվեցին հարյուրապատիկ: Այդ բանը պարզ դարձավ, երբ Չոշկունը և մինիստր Քոփալօղլուի երեք եղբայրները սկսեցին ստորագրութիւններ հավաքել խնդրագրի համար, պահանջելով Մեհմեդ Զանին հանել այն հիման վրա, որ նա իբր շարաշահել է իր պաշտոնական դիրքը (շապացուցված մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ Մեհմեդ Զանը իբր յուրացրել է 500 լիբա... կոստյում կարելու համար): Երբ հավաքվել էին անհրաժեշտ քանակութամբ ստորագրութիւններ, նույն Չոշկունի գլխավորած պատվիրակութիւնը մեկնեց Անկարա: Իսկ մայրաքաղաքում ամեն ինչ ընթացավ յուզի նման: Շուտով Քաղըրլի եկավ հատուկ հանձնաժողով, որը խոսակցութիւն ունեցավ ոչ թե տանուտերի, այլ նրա հակառակորդների հետ: Եվ ինչ որոշեց հանձնաժողովը: Անմիջապէս ետ կանչել Մեհմեդ Զանին: Ի դեպ, նա այդ բանի մասին իմացավ ոչ թե պաշտոնական ճանապարհով, այլ կուլակներից, որոնք Անկարայից վերադառնալուց հետո բարձրաձայն պարծնեում էին, որ այդ իրենք են հաջողացրել նրան հեռացնել: «Քանի որ նա մեղնից խլել է հողը և տվել ուրիշներին,— ասացին այդ պատվիրակները «Միլլիթեթ» թերթի թղթակցին,— նա պետք է հեռանար մեղանից»: Մի անգամ կեսգիշերին դալիս է նոր քայմաքամ և պահանջում, որ Մեհմեդ Զանը անմիջապէս հեռանա: Վերջինիս այնուամենայնիվ հաջողվում է մի բանի ծամ խնդրել հավաքվելու համար, և նա գուղը թողնում է առավոտյան ժամը յոթին՝ Չոշկունի ու նրա ընկերների ծաղրական հայացքների ուղեկցութամբ:

Սրանով կարելի կլինէր վերջակետ դնել: Մեհմեդ Զանի պատմութիւնը, ինչպէս ջրի մի կաթիլի մեջ, արտացոլում է աղաների իշխանութեան մեխանիզմը Անատոլիայի հարավում և հարավ-արևելքում: Մնում է միայն ավելացնել, որ նրա հեռանալուց հետո էլ Չոշկունը նորից գլխավորեց բրնձի ցանքի հանձնաժողովը Քաղըրլիում: Եվ ամեն ինչ շարունակվեց առաջվա նման:

Միայն մի բան էր նորը՝ Մեհմեդ Զանի գործը հայտնի դարձավ ամբողջ Քուրբիային: Մամուլը վրդովված էր: Անվերջ բողոքներ էին ստացվում: Նրա գործը հարցապնդման առարկա դարձավ մեջլիսում: Այս ամենը տեղի ունեցավ հեղաշրջումից

ընդամենը երկու տարի հետո, և մարդիկ դեռ հույս ունեին...
Բայց, այնուամենայնիվ, Մեհմեդ Զանը այլևս Քաղըրլի չվերա-
դարձավ:

Ինչը կարող է ավելի լավ իլյուստրացիա լինել, քան այս
պատմությունը, հավանաբար, փոքր-ինչ շափաղանցրած, բայց
միանգամայն համոզիչ այն բնորոշման համար, որ տվել է թուր-
քական դեմոկրատիային «Օնչու» ժուռնալը. «Թուրքական դեմո-
կրատիան եվրոպական տերմին է, որը նշանակում է աղա-
ների իշխանություն»:

ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԸ ԵՎ ՌԻՐԻՇՆԵՐ

Մեհմեդ Զանի հետ տեղի ունեցած սկանդալից հետո մի
տարի էլ չէր անցել, երբ աչքովս ընկավ (գերմաներեն թարգ-
մանություն) թուրք ամենահայտնի երիտասարդ գրողներից մե-
կի՝ Յաշար Քեմալի «Թիթեղատուփը» գրքույկը: Ես կարդացի
այդ գրքույկը և ապշեցի: Աշխույժ ու խելացի գրված վիպակը
կարծես նույն քայմաքամի պատմությունն է Քաղըրլիից: Ծիշտ
է, գյուղը Յաշարի մոտ այլ կերպ է կոչվում, բայց նույնպես
գտնվում է Ադանայից ոչ հեռու: Ուրիշ անուններ են կրում նաև
վիպակի հերոսները, բայց որքան նման են իրենք՝ դեպքերը:
Յաշարի վիպակը մի պատմություն է երիտասարդ քայմաքամի
ճակատագրի մասին, որն արդարության համար պայքարի մեջ
է մտնում գյուղական աղաների դեմ. նա արգելում է նրանց
ջուրը շուռ տալ Սալբուն գետից՝ իրենց բրնձի դաշտերը ջրելու
համար: Գետն էլ է նույնը... Քայմաքամին կաշառելու տեսա-
րանն էլ... Ինչպես և Այանքում, Յաշարի քայմաքամի պայքարն
էլ ոչ մի արդյունք չտվեց. նա տանուլ տվեց և ստիպված էր հե-
ռանալ գյուղից: Գյուղից հեռանալիս նա լսում է, թե ինչպես իր
հտեից խլացուցիչ կերպով թմբկահարում են թիթեղատուփերը:
Դա նշանակում է, որ ավելի լավ կլինի, որ նա այդ գյուղում
այլևս չերևա...

Երբ ես կարդացի այդ գիրքը, զարմացա, թե թուրք գրակա-
նությունը որքան արագ է արձագանքում այն իրադարձություն-
ներին, որոնք խոտովել են երկրի հասարակական կարծիքը: Չէ ոչ
դեռ մի տարի էլ չի անցել, և արդեն գրվել է գրքույկ և անգամ
թարգմանվել ուրիշ լեզվով: Ինձ համար դա երկրի հրատապ, կեն-

սական պրոբլեմների արտացոլման օրինակ է գրականության մեջ:

Իսկ երբ ես ավելի լավ ծանոթացա թուրք գրականությանը և մի քանի թուրք գրողների հետ, ավելի ևս ամրապնդվեց իմ այդ կարծիքը: Երբ 1965 թվականին Ստամբուլի ավանգարդիստական թատրոններից մեկը բեմադրեց «Թիթեղատուփ» պիեսը ըստ Յաշար Քեմալի վիսպակի, ես էլ ավելի ապշեցուցիչ բաներ իմացա: Մեհմեդ Զանի պատմությունը տեղի է ունեցել 1962 թվականին, իսկ Յաշար Քեմալը վիպակը գրել է 1954 թվականին: Կա՞ արդյոք մեկ ուրիշ երկիր ևս, որտեղ գրականությունը ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև կանխագուշակում իրադարձությունները:

Իհարկե, Յաշար Քեմալը պայծառատես չէր: Նշված փաստը միայն վկայում է Թուրքիայում նման դեպքերի տիպականություն մասին: Ինքը՝ գրողը իր պիեսի բեմադրության կապակցությամբ «Յոն» ժուռնալին տված հարցազրույցում ասել է. «Մինչև իմ գիրքը գրելը, ես առնվազն չորս անգամ ականատես եմ եղել նման դեպքերի Ադանայի մոտ՝ իմ հարազատ վայրերում: Եվ այն բանից հետո, երբ գրքույկը արդեն լույս էր տեսել, տեղի ունեցավ բուլոբին հայտնի պատմությունը Մեհմեդ Զանի հետ»:

Յաշար Քեմալը ծնվել է Ադանայի շրջակայքում 1922 թվականին: Ազգությամբ քուրդ է, բայց գրում է միայն թուրքերեն: Նա պարծենում էր ժամանակին Թուրքիայի արևելքից դեպի հարավ փոխադրված իր տոհմի «ավազակային» ավանդույթներով: Նրա հայրը սպանվել էր գյուղացիական խռովություններից մեկի ժամանակ: Երեխա ժամանակ Յաշարը տանը խոսում էր քրդերեն և գպրոցում միայն սովորեց թուրքերեն և հիմա նա բառիս բուն իմաստով թուրք գրող է: Յաշար Քեմալի կյանքի ուղին տիպական է ժողովրդի ժոցից ելած գրողների համար: Օրվա հացի համար նա պատահած ամեն տեսակ գործ էլ արել է: Եղել է գյուղատնտեսական բանվոր, բրնձի դաշտերում ջրի բաշխման գործակալ: Եղել է հասարակական գրագիր և որոշ վճարով գրամեքենայով բողոքներ, դիմումներ ու խնդրանքներ էր մեքենագրում: Վերջապես, 1951 թվականին նա «Ջումհուրիյեթ» թերթում հրատարակեց ռեպորտաժների մի շարք, որի համար ստացավ առաջին մրցանակ: Դա գրողի նրա կենսագրության սկիզբն էր: Նրա վաղ շրջանի վեպը խռովարար ու լեռների ավազակ գյուղացիական տղա Մեմեդի մասին տարածվեց 40

հաղար օրինակ տպաքանակով, իսկ 1956 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն այն ճանաչեց տարվա լավագույն վեպը, որն անմիջապես թարգմանվեց բազմաթիվ լեզուներով¹։

Ավելի ուշ իր այդ առաջին վեպի մասին Յաշար Քեմալը խոսում էր որպես ոչ կատարյալ գրքի մասին. նա տեսնում էր դրա թերությունները։ Նրա հետագա ստեղծագործությունները գլուղական թեմայով արդեն ավելի հասուն են։ Նրա գրքերը հրատարակվում են մեծ տպաքանակներով, իսկ վերջին երկու վեպերը վերածվել են պիեսների և բեմադրվում են թատրոնում։ Այդ պիեսներից մեկի կատարման համար թուրքական թատերախումբը մրցանակ ստացավ Նանսիի միջազգային թատերական Ֆեստիվալում։

Յաշար Քեմալը դափնիների վրա շահնգեց. նա ակտիվորեն զբաղվում է քաղաքական գործունեությամբ, հանդիսանում է Թուրքիայի բանվորական կուսակցության գործիչներից մեկը և կուսակցության հետ կապված հանրաճանաչ «Անտ» շաբաթաթերթի աշխատակիցը։

Սկզբում ես կարդացի Յաշար Քեմալի գրքերը, իսկ հետո միայն անձամբ ծանոթացա նրա հետ՝ աշխույժ, արագաշարժ մեմարդու, որից հորդում է կյանքի բերկրանքը։ Նա ունի սև ու անհնազանդ մազեր և սև աչքեր՝ թուխ դեմքին։ Նա անմիջապես արձագանքում է երկրի ամենից ավելի հրատապ քաղաքական պրոբլեմներին։ Այդպիսին է նա մնացել իմ հիշողության մեջ²։

Բնական է, որ Յաշար Քեմալը միակ գրողը չէ Թուրքիայում, որն իր ստեղծագործությամբ ծառայում է ժողովրդին։ Բայց նա համարվում է երիտասարդ սերնդի գրողների առավել տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը և մյուսներից ավելի շատ է հայտնի երկրի սահմաններից դուրս։ Միևնույն ժամանակ նա (որոշ իմաստով) իր շրջապատի տիպիկ ներկայացուցիչն է։ Ներկայումս գրեթե այն ամենը, ինչ կա արժեքավոր ժամանակակից թուրք գրականության մեջ, այսպես թե այնպես հարում է առաջադիմական լագերին, արտացոլում է հասարակության կեն-

¹ Ուսերեն թարգմանությամբ «Тошнй Мемед» վեպը հրատարակվել է 1959 թվականին (հայերեն թարգմանությամբ այն լույս է տեսել 1975 թվականին «Յաի Մեմեդ» վերնագրով։— Մանոթ. հայ. թարգմ.)։

² Երբ հալածանքներ սկսվեցին առաջադիմական գրողների դեմ, Յաշար Քեմալը ևս բանտ նեավեց։

սական պրոբլեմները, և առաջին հերթին թուրք գյուղացու պրոբլեմները: Հանրապետական շրջանի երիտասարդ թուրք գրողներին գրավում է ժողովրդական ստեղծագործությունը՝ ֆոլկլորը: Տուլկլորի ուսումնասիրության կենտրոններ են դարձել դեռ 30-ական թվականներին ստեղծված ժողովրդական տները, որոնք փակվեցին, երբ իշխանության գլուխ անցավ դեմոկրատական կուսակցությանը: Ժողովրդական տներից մի քանիսը հրատարակում էին իրենց հանդեսները, գրանց էջերը տրամադրելով սկանյակ հեղինակներին:

Երիտասարդ գրողների առջև այն ժամանակ ծառայում էին խնդիր՝ ստեղծել այնպիսի մի գրականություն, որը հասկանալի լինի ժողովրդին, սնվի հասարակական կյանքի հյուսիսային և իր ստեղծագործություններում արտացոլի անատոլիական գյուղի կյանքը: Այդ ուղղության ամենից ավելի հետևողական ներկայացուցիչներն էին Նազրեմ Հիքմեթը և Սարահատդին Ալին՝ թուրքական գյուղի մասին ռեալիստական պատմվածքների հեղինակը: Բանասիր դուրս գալուց հետո Սարահատդին Ալին փորձեց թաքնվել ոստիկանության հալածանքներից և սպանվեց 1948 թվականին թուրք-բուլղարական սահմանն անցնելիս:

Նրա ցանած սերմերը ծիլեր ավելեցին: Այժմ կարելի է խոսել գրողների մի ամբողջ դարոցի մասին, որոնք գրում են թուրք գյուղացու կարիքների ու շահագործման մասին, հողի ու ջրի համար նրա մղած պայքարի մասին, գյուղացիների քաղաք գնալու մասին: Այդ դարոցի վառ ներկայացուցիչներից մեկը Օրխան Քեմալն է՝, որին, զժբախտաբար, ինձ չվիճակվեց անձամբ ճանաչել: Հիշում եմ, թե ինչպես ինձ հուզեց նրա «Գաշտում ծընված երեխան» վիպակը: Միայնակ կինը, առանց որևէ մեկի օգնության, ծննդաբերում է դաշտում, և ծնելուց անմիջապես հետո նորից գնում աշխատելու Խոստովանում եմ, ես այն ժամանակ մտածեցի, որ նման սյուժեն պարզապես գրողի գրական հորինվածքն է: Սակայն ինձ պատմեցին, որ այդպիսի դեպքերը կյանքում հազվագյուտ չեն:

Բայց դրա փոխարեն ես բախտ ունեցա ծանոթանալու մի այլ գրողի՝ Քեմալ Քախիրի հետ: Նա ծնվել է 1910 թվականին, պատկանում է ավազ սերնդին և համարվում է ժամանակակից ամենահայտնի արձակագիրը: Իր ստեղծագործության մեջ Քա-

¹ Օրխան Քեմալը մահացավ 1970 թվականին:

խիրը և անալիստորեն մերկացնում է աշխատավոր ժողովրդի շահագործման մեխանիզմը: Նրա շատ ստեղծագործություններ թարգմանվել են օտար լեզուներով: 1967 թվականին լույս տեսավ նրա բազմահատոր պատմական էպոպեան¹: 1968 թվականին դրա համար նա ստացավ Թուրքական լեզվաբանական ընկերություն մրցանակը, որը շնորհվում է լեզվին վարպետորեն տիրապետելու համար: Նրա վեպերը Յաշար Քեմալի հեքիաթային ֆուլկլորով տոգորված չեն. իրենց ոճով դրանք ավելի շուտ հիշեցնում են XIX դարի եվրոպական վեպերը: Նա անատոլիական դյուղի կյանքը տեսնում է «իմաստունի աչքով»: Նա այդ կյանքը ուսումնասիրում է որպես մի մտավորական, որին հայտնի են մարդկային հասարակության դարգացման օրենքները: Տաղանդավոր գրողը ստեղծում է անալիստական կենդանի կերպարներ իրական ամենօրյա կյանքում: Նրա հետ ունեցած զրույցներում ինձ զարմացրել էին նրա խոր գիտելիքները Թուրքիայի էկոնոմիկայի, նրա պատմության և ժամանակակից դրություն մասին: Դրա հետ մեկտեղ, և սա բնորոշ է բոլոր առաջադիմական գրողների համար, նա ունի հումորի ու լավատեսություն մեծ զգացում²:

Քանի որ սկսեցի խոսել հումորի մասին, չեմ կարող թեկուզ համառոտակի չպատմել հայտնի երգիծաբան զրոյի մասին, որի ստեղծագործությունները գիտեն ոչ միայն Թուրքիայում, այլև արտասահմանում³: Հումորիստների միջազգային մրցույթներում Հոսմում 1956 և 1957 թվականներին նա ստացել է առաջին մրցանակ՝ «Ոսկի արմավենու ճյուղ», իսկ 1964 թվականին Թուրքարիայում՝ «Ոսկի ուղի» մրցանակը⁴: Այժմ, երբ ես գրում եմ նրա մասին, կարծես իմ առջև տեսնում եմ ցածրահասակ, ամբակազմ Ազիզին՝ փոքր-ինչ շիլ, բարի աչքերով... Իր դավելշտներից մեկում նա գրել է, որ իրեն հաճախ ճապոնացու տեղ են ընդունում: Իր գրողի դժվարին ուղու ընթացքում, երբ, վախենալով հալածանքներից, Ազիզը ստիպված էր լինում դի-

¹ 1971 թվականին ուսերեն թարգմանությունը լույս տեսավ էպոպեայի վեպերից մեկը՝ «Նոր կիրճը»:

² Քեմալ Թախիրը մահացել է 1973 թվականին:

³ Սովետական Միությունում ուսերեն լեզվով լույս են տեսել նրա պատմվածքների ինը ժողովածուներ, վեպեր, պիեսներ, հեքիաթներ:

⁴ 1969 թվականին Ազիզ Նեսինը հումորիստ գրողների շրջույթում ստացավ «Կրոնոզոլ» ժուռնալի մրցանակը:

մեկու բազմաթիվ կեղծանունների, նա ստորագրում էր նաև շի-
նական անունով և որպես շին հեղինակ նույնիսկ մեծ էր բերված
գրականության պատմության մի ֆրանսիական դասագրքում:

Նրա սուր, խորապես ժողովրդական սատիրան անխնա խա-
բազանում է աղանների ու պոլիտիկանների, գործարանատերերի
ու վաճառականների կաշառակերությունն ու բթամտությունը,
բոլոր նրանց, ովքեր, հենվելով կրոնական մոլեռանդության վրա,
հարստություն են գիշում թուրք ժողովրդի խաղաղամտության ու
տգիտության հաշվին: Ազիզ Նեսինը զարմանալի բեղմնավոր
գրող է: Նա հրատարակել է պատմվածքների ավելի քան երեսուն
ժողովածու, մի քանի պիես և վեց վիպակ: Նրա ստեղծագոր-
ծությունները թարգմանվել են շատ լեզուներով, իսկ պիեսները
բեմադրվում են ԳԴՇ-ում և ԱՄՆ-ում:

Այդ ամենը Ազիզ Նեսինը հեշտությամբ ձեռք չի բերել: Նա
ծնվել է 1915 թվականին: Աղքատ քնտանիքների բազմաթիվ զա-
վակների նման, Ազիզի կյանքի ուղու առաջին աստիճանը եղել
է զինվորական դպրոցը Ստամբուլում: Սակայն զինվորական
ցածր աստիճանավորն այդ դպրոցից դուրս բերեց ոչ թե գեներ-
րալի ուսադիրների հասնելու ցանկություն, այլ խոր առելություն
դեպի միլիտարիզմը, զինվորական խառավարժությունը, որի
մասին նա հետագայում բազմիցս գրել է իր պատմվածքներում:
Հենց այն թվականին, երբ նա ավարտեց դպրոցը, հրապարակ-
վեց Քեմալի հրամանագիրը ազգանունների մասին: Ազիզը որ-
պես ազգանուն ընտրեց երկու բառ՝ «նե սին», այսինքն՝ «ինչ ես»,
«ով ես»... «Այդ ժամանակից սկսած ամեն անգամ, երբ ես լսում
եմ իմ սեփական ազգանունը, ինձ հարց եմ տալիս, թե ես իրոք
ա՞յն մարդն եմ, որպիսին պարտավոր եմ լինել», — մի անգամ
ասել է Ազիզ Նեսինը ռադիոյով ունեցած իր ելույթում:

Պատասխանը միշտ կարող է լինել միևնույնը: Ազիզ Նեսինը
երբեք չընդվեց իր ընտրած ուղուց և հավատարիմ կերպով ծա-
ռայում է իր ժողովրդին: Դա հեշտ բան չէր: Նախքան գրող
դառնալը նա փորձել է բազմապիսի պրոֆեսիաներ և ամենօրյա
վաստակի ետևից ընկած շփվել է բանվորների, գյուղացիների,
արհեստավորների հետ, որոնց կյանքն ու իղձերը նա հետագայում
այնքան վարպետորեն է նկարագրել իր պատմվածքներում: Նրան
չընկճեցին ո՛չ հալածանքները, ո՛չ սուտիկանության հետապըն-
դումները: Իսկ նրան հալածել են միշտ, անկախ կառավարու-
թյունների ու ռեժիմների փոփոխումից՝ և՛ պատերազմը վերջա-

Նախուց անմիջապես հետո, և՛ Մենդերեսի օրով, և՛ 1960 թվա-
կանի մայիսի 27-ի հեղաշրջումից հետո: Մի քանի անգամ հե-
տադիմական տարրերը ավերել են երգիծական այն ժուռնալնե-
րի խմբագրությունները, որոնց աշխատակցում էր նա: Բայց նա
անձնատուր չեղավ: Իր կծու սատիրայով նա հարվածներ է
հասցնում բոլոր նրանց, ովքեր փորձում են ընկճել իրեն, իսկ իր
հետ միասին նաև իր բազմամիլիոն հայրենակիցներին...

1961 թվականին ուսերեն լեզվով լույս տեսած «Եթե ես կին
լինեի» պատմվածքների ժողովածուի առաջարանում Ազիզ Նե-
սինը հետևյալ կերպ է բնութագրում թուրքական սատիրան.

«Թուրքական սատիրայի առանձնահատկությունն այն է, որ
նա ժողովրդի կողմն է և ծառայում է ժողովրդին... Նասրետդին
և Նոջայի և Բեկտաշիի բոլոր անեկդոտները... բարոյականի պայ-
քարն է ընդդեմ անբարոյականության, ճշմարտության պայքարը
կեղծիքի դեմ, անկեղծության հաղթանակը երկերեսանիության
նկատմամբ, լայնախոհության հաղթանակը նեղմտության նկատ-
մամբ, նորի հարձակումը հնի դեմ, առաջադիմության հարձա-
կումը հետամնացության դեմ... Եվ այդ պատճառով էլ թուրքա-
կան սատիրայի էությունը առողջ է: Հենց այդ պատճառով էլ այն
անցնում է սերնդից սերունդ, շենթարկվելով ժամանակի փայթա-
լիչ ներգործությանը»:

Ինձ բախտ է վիճակվել 1967 թվականին ներկա գտնվելու
Ազիզ Նեսինի հրապարակային դասախոսությանը թուրք գրա-
կանագետների միությունում՝ Ստամբուլում, նվիրված իր հոգևոր
նախորդ Նասրետդին և Նոջայի ստեղծագործությանը: Այդ թեմայի
շուրջը դասախոսի դերում անհնարին կլինեն պատկերացնել մեկ
այլ մարդու: Նեսինը թուրքական սատիրայի ժողովրդական
ավանդույթի ուղղակի շարունակողն է, սատիրա, որի սկիզբն է
գրել XIII դարի առասպելական իմաստունը:

Կցանկանայի այստեղ պատմել արվեստի բոլորովին մի այլ
տիպի գործչի մասին: Երբ նրան տեսա առաջին անգամ, ինձ
զարմացրեց նրա էկզոտիկ արտաքինը: Նրա երկար, խիտ, գան-
գուր մազերը, փարթամ մորուքն ու բեղերը, թուխ դեմքը սև,
խոսուն աչքերով, ոչ բարձրահասակ մարմինը Թուրքիայի արև-
վելքում ժողովրդի կրած հագուստով. մի խոսքով նրա ամբողջ
տոնավաճառային տեսքը սենսացիա էր առաջացնում Անկարայի
փողոցներում, շնայած դժվար է մայրաքաղաքը դարմացնել արև-

վելյան էկզոտիկայով: Միշտ անբաժան կերպով նրա հետ է կիներ՝ Գյուլլյուշահը («վարդերի թագուհին»), նուրբ դեմքով, սսկով ասեղնագործված վաղեմի զգեստով:

Ավելի ուշ միայն ես իմացա, որ աշուղ Իհսանին (այդպես է նրա անունը) ոչ թե կրկեսի դերասան է, այլ բանաստեղծ: Ավելի ճիշտ՝ թափառաշրջիկ գուսան, որը կարծես միջնադարից փոխադրվել է XX դարի կեսերը... Միայն, եթե միջնադարյան գուսանները գովերգում էին երևելի տիկնանց գեղեցկությունը, աշուղ Իհսանին փառաբանում է իր երգերում իր հայրենիքի գեղեցկությունը և իր ժողովրդի ազբատությունը, երգում է նրա ուրախություններն ու վշտերը...

Պոեզիան նրա տարերքն է, նրա աստվածը: Նրա անունը, ավելի ճիշտ այն, ինչ նա վերցրել է իրրև անուն՝ աշուղ բառը, նշանակում է «սիրով վառված», «սիրահարված»... պոեզիային: Իրականում նրա անունը Իհսանի է: Ինչ վերաբերում է ազգանվանը, ոչ ոք այն չգիտե, թեև նրա ինքնությունը վկայականում անպայման ինչ-որ մի ազգանուն գրված կլինի: Իհսանին լուկ մեկն է բազմաթիվ աշուղներից՝ ժամանակակից թուրք գուսաններից, բանաստեղծներից ու միաժամանակ կատարողներից, որոնք ժողովրդական երգերի կենդանի աղբյուրը հարստացնում են հարազատության անկրկնելի ոճ ունեցող ստեղծագործություններով, կողմնակի ազդեցություններից անաղբատ մնացած արտահայտման խոր արտիստիզմով: Ասենք կարելի է ընդհանրապես խոսել ինչ-որ ազդեցությունների մասին մի մարդու վրա, որը ոչինչ չի կարդում այն պարզ պատճառով, որ վերջերս է միայն կարդալ սովորել: Իր առաջին ստեղծագործությունները նա թելադրում էր Գյուլլյուշահին, որը, թեև ծուռտիկ-մուռտիկ ձեռագրով, բայց կարողանում էր դրանք արտահայտել թղթի վրա: Հենց նա էլ ամուսնուն գրագիտություն է սովորեցրել: Հիմա Իհսանին էլ մի կերպ կարող է գրել և կարդալ օրվա թերթերը: Դրանով էլ վերջանում է նրա ծանոթությունը տպագիր խոսքի հետ...

Իհսանին ծնվել է Թուրքիայի արևելքում՝ Գիարբեքիից ոչ հեռու: Նրա հայրը եղել է քուրդ ցեղապետ և զբաղվում էր մաքսանենգությամբ: Իհսանին դպրոց երբեք չի հաճախել. նրանց ընտանիքը միշտ ապրել է կարիքի մեջ և թափառումներով, բայց դրա փոխարեն նա ամենափոքր տարիքից հորինել է երգեր ու երգել է դրանք: Ո՞վ գիտե, գուցե նա երեխա ժամանակ

լսել է աշուղներին ու բանաստեղծներին երգերը և դրանց ազդեցութեան տակ ինքն էլ է սկսել հորինել: Նա 13 տարեկան էր, երբ սկսեց թափառաշրջիկի կյանք վարել Արևելյան Անատոլիայում, որտեղ ապրում են քրդեր ու թուրքեր, և Իրանին սահմանակից շրջաններում: Այնուհետև նա գնում է Թուրքիայի արևելյան մասը, որտեղ հանդիպում է իր «վարդերի թագուհուն», որն ավարտել էր գյուղական տարրական դպրոցը և որը հետագայում դարձավ նրա կինը: Կինը նրան գրագիտութուն սովորեցրեց, իսկ ինքը նրան՝ երգել ու նվագել սազ, կիթաո հիշեցնող այդ ժողովրդական երաժշտական գործիքը: Եվ հիմա նրանք բոլորը միասին՝ ինքը, կինը և տխուր սև աչքերով փոքրիկ Ղարիբը ամիսներով շրջում են Թուրքիայում սազը ձեռքներին (որդին ևս սազ ունի, նա էլ է երգում) և Իհսանիի ստեղծագործությունների բարակ գրքույկների կապոցներն ուսերին: Նրանք կանգ են առնում գյուղերում և փոքրիկ քաղաքներում, երգում են ժողովրդի ճակատագրի ու դառը բախտի մասին, և դա կերակրում է նրանց: Չմեռը նրանք ապրում են Անկարայում:

Ես նրանց մոտ հյուր եմ եղել. նրանց տունը գտնվում է Քեչիօբեն թաղում, որտեղ ապրում է հասարակ ժողովուրդը: Նրանք ինձ հյուրասիրեցին իսկական թուրքական կերակրով՝ հասարակ ու շատ համեղ ճաշատեսակներով, և ես զարմացել էի, թե ինչպիսի բնատուր, հիրավի արքայական արժանապատվությամբ էր Գյուլլյուզահը հրավիրում համեստ սեղանին: Իսկ հետո հյուրասենյակում պատի մոտ դրված և բարձերով ու գունավոր գորգով ծածկված թախտին նստած ես լսում էի մարգարի ոգեշունչ դեմքով այդ մարդու նվագը:

Նրա աչքերի մեջ հայտնվում է կրոնական մտասուզություն, երբ նա վերցնում է իր սազը: Նրա մատների տակից հոսում է արևելյան միապաղաղ մեղեդին: Նրա շրթունքներից թռչում են բառեր՝ ոչ այն է ռեչիտատիվ, ոչ այն է երգ: Իհսանին ունի ուժեղ, կրճեային, ցածր ձայն: Չեղ անշեցնում է այդ բնածին արտիստի բառը: Ու հնչյունի ներդաշնակությունը, երգացանկի հարստությունը, և նրան չի էլ կարելի ինքնուս անվանել, քանի որ նա երբեք չի սովորել ո՛չ ոտանավորներ գրել, ո՛չ երաժշտություն հորինել: Նա սովորել է բառեր գրել, բայց երաժշտությունը նոտագրել չի կարող: Նա անգիր հիշում է եղանակով ու թեմատիկայով բազմապիսի իր բոլոր ոտանավոր-երգերը: Առանձնապես նրբին են քրդական սիրային եղանակները: Այդ երգերում պատմ-

վում է գյուղական պատանու սիրո մասին, աղայի որդու կողմից առևանգված գյուղացի աղջկա դժբախտ ճակատագրի մասին: Դրանք արտահայտում են բանվորի տրտուռը, որը չի կարողացել աշխատանք ձարել և խոստովանվել է բանաստեղծին: Փոփոխվում են երգերի ութմերը, բայց Իհսանիի դեմքը պահպանում է անփոփոխ ոգեշունչ արտահայտությունը: Յուրաքանչյուր երգից հետո նա ծիսական շարժումով, ինչպես դարեր շարունակ արել են անասողիական գուսանները, նա համբուրում է իր սաղը: Եվ նույնիսկ այնպիսի երգից հետո, որը ոչ միայն ոչ մի ընդհանուր բան չունի կրոնի հետ, այլ կարծես մարդու վեճն է աստծո դեմ: «Ինչու ես պետք է մեռնեմ, իսկ դու շես մեռնում», — դիմում է նա Ալլահին, իսկ երգի վերջում ասում է. «Ես հիմա հասկացել եմ. քանի որ իմ գլխին աստված կա, իսկ քո գլխին աստված չկա, ուստի դու անմահ ես»:

Նրա երգերի սյուժեների բազմազանությունը Իհսանիի ստեղծագործական ուղու մի յուրատեսակ չափանիշ են: Մինչև 1960 թվականը նա, ինչպես մի ժամանակ արքունական երգիչները, գովերգում էր աշխարհիս ուժեղներին: Նա այն ժամանակ մոզայիկ աշուղ էր, և նրա մոտ շնորհ էր արել պրեզիդենտ Բայարը: Այն ժամանակվա կառավարող վերնախավը նրան օգտագործում էր իր քաղաքական նպատակների համար: Բայց դա երկար շտեմբից: Ոչ առանց մտալորականների ընտրանիի՝ աղղեցություն, որը նրան վերցրեց իր հովանավորության տակ, Իհսանին վերագարծավ իր սեփական թեմատիկային՝ ժողովրդի մասին և ժողովրդի համար ստեղծած ոտանավորներին: Նա դարձավ ընչազուրկ բանվորների, բայց գլխավորը՝ ընչազուրկ գյուղացիների երգիչը: Նրա ոտանավորների վերջին գրքույկը կոչվում է «Աղալը դյունյա»՝ «Աղաների աշխարհը»:

Միայն այժմ նրա տաղանդը վերստին փայլեց իր ամբողջ ուժով. նա գործիք է դառնում երկրի հետադիմական և առաջադիմական ուժերի միջև մղվող քաղաքական պայքարում: Նրա երկերը լայն ժողովրդականություն ձեռք բերեցին առանձնապես ուսանող երիտասարդության շրջանում: Նա հաճախ ելույթներ է տնենում հրապարակորեն և բեմի վրա էլ իրեն պահում է այնպես, ինչպես տանը: Նա ինքն է հայտարարում իր երգերի մասին և շատ շուտ կոնտակտ ստեղծում դահլիճի հետ: Բեմից դեպի դահլիճ են թռչում նրա «Յաքընդըր» («Մոտ է») պոեմի կեր-

քոտ բառերը: Ձորեղ սիթմով, որ կարծես դոփում են հազարա-
վոր ոտքեր, կատարվում է մի երգ այն մասին, որ արդեն մոտ
է այն պահը, երբ ճնշվածներն ու ընչազուրկները հաշիվ կներ-
կայացնեն իրենց տառապանքների համար և կընտրեն իրենց
սեփական մեջլիսը՝ աշխատանքից կոշտացած ձեռքեր ունեցող
մարդկանց մեջլիսը: Նա այդ երգը կատարում է անընդմեջ ծա-
փահարությունների ուղեկցությամբ, ինչպես նաև «Բալթա»
(«Կացին») երգը, որը կարծես խոսակցություն է մի գյուղացու
հետ, որը կացինն է սրում՝ իր իրավունքների համար պայքարի
ուղի հարթելու նպատակով:

Այդ երգերի համար հաշիվ ներկայացրին իշխանությունները:
1966 թվականի սկզբին բանաստեղծին դատի տվեցին տխրա-
հուշակ կոմունիստական գործունեության համար: Մորուքավոր
գուսանը դատարան ներկայացավ իր սազով, որից երբեք չի
բաժանվում. նրա հետ դատարան եկան նաև նրա կինն ու երկու
որդիները, որոնք նույնպես ձեռքներին սազ էին բռնել: «Ես ըն-
դամենը միայն ժողովրդական բանաստեղծ եմ,— պատասխա-
նում էր նա դատարանում իր նոր բանաստեղծության խոսքե-
րով,— իմ մեղքը միայն այն է, որ ես երգեր եմ երգում»: Չնա-
յած դրան, Իհսանին դատարարտեցին բանտարկության: Սակայն
մի երկու ամիս հետո բարձրագույն ինստանցիայի դատարանը
նրան ազատ արձակեց, նրա ստեղծագործության մեջ չգտնելով
հանցակազմ: Դժբախտաբար, բանտում խուզել էին նրա փար-
թամ մազերն ու մորուքը:

Բայց մորուքը սկսեց աստիճանաբար աճել, իսկ Իհսանին
շարունակում է իր ինքնօրինակ տաղանդով ծառայել թուրք ժո-
ղովրդին:

ՆԱԶԸՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԱՀԻՅ ՀԵՏՈ

Ես մտադիր չեմ խոսելու նազըմի ստեղծագործության մա-
սին. այդ բանը կարող է համարձակվել անել միայն գրաքննա-
դատը: Բայց ինչպե՞ս Թուրքիայի վերաբերյալ աշխատության մեջ
հատուկ գլուխ չնվիրեմ այդ թուրք մեծ բանաստեղծին, որը
պատկանում է մեր դարաշրջանի համաաշխարհային պոեզիայի
ավանգարդին:

Նրա պոեզիան, որը սնվում էր ժողովրդական ստեղծագոր-
ծությունից, առանձնապես հարազատ է մեզ՝ լեհերիս համար:

Նա լեհական ապստամբություն մասնակից Կոնստանտին Բո-
ժենցկու ծոռն էր. Բոժենցկին իր ժամանակ ապստան էր գտել
Օսմանյան կայսրությունում և Մուստաֆա Զեյալիտոզին փաշա
անվան տակ հռչակ էր ձեռք բերել որպես խիզախ զորապետ և
թուրքերի պատմության վերաբերյալ հետազոտության հեղի-
նակ...

Նազըմի կյանքի սկզբնական ուղին տիպական էր ազնվական
ընտանիքի զավակի համար: Բանաստեղծի համար առաջին
ցնցումը եղավ Թուրքիայի պարտությունը 1914 թվականի առա-
ջին համաշխարհային պատերազմում և քեմալական ազատա-
գրական շարժման սկզբնավորումը: Ստամբուլի ռազմածովային
դպրոցի երիտասարդ ունկնդիրը ոտքով անցել է իր ամբողջ
Անատոլիայով, որպեսզի միանա Քեմալի ժողովրդական ջրկատ-
ներին, որոնք պետք է ազատություն բերեին Անատոլիային:

Նրանց պայքարից ծնված Թուրքական հանրապետությունը
անատոլիացի չքավոր մասսաների ազատագրության նախա-
նշանը չեղավ: Այդ ժամանակից սկսած Նազըմի թե քաղաքական
և թե գրական ամբողջ գործունեությունը հակված է դեպի ձախ
շարժումը: Երկրում ուժեղանում են ճնշումները: 1938 թվակա-
նին, երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին,
Նազըմը ռազմական դպրոցի մի ունկնդրի հետ ունեցած խո-
սակցության ժամանակ արտահայտվել էր ֆաշիզմի վտանգի մա-
տին, և դա բավական եղավ, որպեսզի նրան դատապարտեն
տասնհինգ տարվա բանտարկության՝ իբր «բանակում խռովու-
թյուն սաղորդու համար»: Գլխավոր ապացույցն էին դպրոցում
խուզարկության ժամանակ գտնված նրա բանաստեղծություննե-
րի ժողովածուները... Այդ թվականից սկսվում է բանաստեղծի
«Գողգոթան»: Նա ճաշակում է բանտի հացի համը թուրքական
տարբեր քաղաքների բազում բանտերում: Նրա հետ տեղի է
ունենում մի աննախադեպ պատմություն. բանտում նստած բա-
նաստեղծի դեմ սկսված առաջին դատավարությունը վերջանա-
լուց մի քանի ամիս հետո սկսվում է մի նոր դատ այն հիման
վրա, որ նրա բանաստեղծությունները կարդացել են նաև նա-
վատորմի կրտսեր սպաները: Նրան դատապարտում են ևս
տասնհինգ տարվա բանտարկության: Հիբմեթի նկատմամբ դա-
տավարությունը դատական հաշվհարգարի մի կլասիկ օրինակ
էր: «Դա մի ցուցադրական դատավարություն էր ահաբեկչու-
համար».— իր հուշերում հետագայում գրում է Նազըմի բան-

տալին ընկեր Այզեմիրը: Իսկ բանաստեղծի փաստաբան Նազիհին իր հարցազրույցներից մեկում Նազըմին անվանեց «քավության նոխադ»:

Իր բանտարկության մեծագույն մասը Նազըմը անցկացրել է Բուրսայի բանտում: Այստեղ նա գրել է գեղեցիկ բանաստեղծություններ, որոնք տողորված են ջերմ սիրով գեպի Անատոլիան, գեպի հասարակ թուրքը, համերաշխությամբ՝ նրա պայքարի հետ: Բանտում նա ավարտել է «Մարդկային համայնապատկեր» էպոպեան և աշխարհին պարզել սիրային քնարերգության գեղեցկագույն մի օրինակ՝ «Նամակ կոշուս»: Ողջ-ողջ թաղված բանաստեղծի ոտանավորները, որոնք, շնայած հալածանքներին, տողորված են վյանքի անսքող բերկրանքով, ոգեշնչում են դժբախտության նրա ընկերներին:

Պատերազմը մոտենում էր ավարտին, իսկ Նազըմը դեռևս մնում էր բանտախցում: Սակայն բերնից-բերան հաղորդվող նրա բանաստեղծությունները հայտնի դարձան ոչ միայն Թուրքիայում, այլև ուրիշ երկրներում: Ամենուրեք բողոքի ձայն էր լսվում դատավճիռը վերանայելու օգտին: Հիքմեթի գործը համեմատում էին Գրեյֆուսի գործի հետ: Այդ պահանջները հատկապես ուժեղացան հիտլերիզմի դեմ տարված հաղթանակից հետո: Ֆրանսիայում ստեղծվում է Նազըմի ազատագրության կոմիտե բանաստեղծ Տրիստան Տյարայի գլխավորությամբ: Բայց թուրքական իշխանությունները մնում են խուլ բողոքների հանդեպ: 1950 թվականին Նազըմը ի նշան բողոքի հացագուլ է հայտարարում, որի ժամանակ նիհարում է 18 կիլոգրամով: Հենց այդ ժամանակ էլ, 1950 թվականին, Նազըմը պարզատրվում է հաղադության միջազգային մրցանակով և ընտրվում հաղադության համաշխարհային խորհրդի բյուրոյի անդամ:

Հասարակայնության ճնշման տակ թուրքական իշխանությունները վերջ ի վերջո վերանայեցին իրենց վճիռը: Հիվանդ ու հացպուրից թուլացած Նազըմը 1950 թվականին ազատ է արձակվում: Սակայն հալածանքները շարունակվում են: Նրան շրջապատում են լրտեսներով, որոնք ոչ մի վայրկյան նրան աչքից բաց չեն թողնում: Հիվանդ Նազըմը բանակ մեկնելու ծանուցագիր է ստանում: Եվ շնայած նա ուներ սպայի կոշում, նրան ցանկանում են դորակոչել որպես հասարակ զինվորի, որպեսզի քշեն մի հեռավոր վայր երկրի արևելքում և այնտեղ ցանկացած պատրվակով անպատիժ կերպով հաշվհարդար տեսնեն նրա

Հետ: Նման նախադեպեր արդեն եղել են, և նազըմը հատկա-
նում էր, թե դա ինչ է սպառնում իրեն: Գաղտնի կերպով թող-
նելով Թուրքիան, նա 1951 թվականին գալիս է Սովետական
Միություն: Նա հաճախ է լինում Վարշավայում: Ընդհանրապես
շատ է ճանապարհորդում: Գրում է բանաստեղծություններ,
որոնք լի են կարտոսով, լի են սիրով դեպի իր ժողովուրդը, դեպի
իր հարազատ երկիրը:

Ահա գրանցից մեկը.

«Յոթ» հյուսանոցը

Ոչ, այս Վառնայում անհնար է ֆենի,
անհնար է փակել աշֆեր, հենչի,
եկեմի ասողերի առատությունից,
հրանց մտիկությունից, պայծառությունից,
ձովափի ազգունեում մարդ ախֆների
խոսք խշխշոցից,
խեցիների հետ,
խին ֆաբերի հետ,
ադի շրիմոտների հետ խողախ
ախֆների հանած անվերջ խշխոցից,
մարզու սրտի լման
ձովը հետած շարժիչի
միայն քիսիքիսիցից,
մարզու սիրտը լցած այրող հուշերից,
որսնք Սաամրուպից գալով,
Բասֆորեն անցնելով
եկել լցվել են
սենյակս իմ այս:
մեկը՝ աշֆերով կանաչ,
մեկը՝ ձեռքերին կապանք,
մեկը՝ ձեռքին քաշկիեակ
օձանեիք բուրդ:
Այս Վառնայում անհնար է ֆենի, սիրելիս,
Ե՛հեղ Վառնայում, «Յոթ» հյուսանոցում:
1958

1963 թվականի հունիսի 3-ին նազըմը մահացավ Մոսկվա-
յում՝ սրտի նոսպայից:

Ես այն ժամանակ Թուրքիայում էի և պետք է ասեմ, որ
բանաստեղծի մահից հետո, երբ նրա ստեղծագործությունը
«ամփոփվեց», երկրում կարծես ամբարտակը ճեղքվեց և սկսվեց

դրանով իսկ անգնահատելի ծառայություն մատուցեց թուրք գրականությանը: Այս իմաստով ուշագրավ էր թուրք գրականագետ, պրոֆեսոր Թանյուլի հոդվածը «Յոն» շաբաթաթերթում: Մերժելով դրպարտչական պնդումը նազըմի մասին, որպես «ժողովրդի դավաճանի», Թանյուն ընդգծեց բանաստեղծի հայրենասիրական դիրքորոշումը, որովհետև նա իր բանաստեղծություններով համբավ բերեց Թուրքիային ամբողջ աշխարհում և ապացուցեց իր սերը դեպի հարազատ երկիրը և այս ամենը իր արտացոլումն է գտել այն անեղծագործություններում, որ նա ստեղծել է օտարության մեջ: Թանյուլը Հիքմեթի դիրքորոշումը համեմատում է այնպիսի հարգված երիտթուրքական ունկորմատորների դիրքորոշման հետ, ինչպիսիք են Ջիյա փաշան և նամըր Քեմալը, որոնք նույնպես ստիպված են եղել թողնել իրենց հայրենիքը սուլթանական տեղակալի ճնշումների պատճառով: Թանյուլը Հիքմեթին համեմատում է նույնիսկ... Աթաթյուրքի հետ: «Մուստաֆա Քեմալը, — գրում է Թանյուլը, — որը փրկեց ժողովրդին ու հայրենիքը, հանդես գալով Թուրքիան անդամատելու ձգտող դադութարար տերությունների դեմ և դիմելով Ռուսաստանի օգնությանը, այդ դեպքում նույնպես կարող է ճանաչվել որպես «ժողովրդի դավաճան»»: Թե ինչ են նշանակում այս բառերը, կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր գիտեն, թե ինչպիսի լուսապսակով է պատած «թուրքերի հոր» անունը այս երկրում:

Նս ալստեղ շեմ խոսի ամբողջ «հիքմեթագիտություն» մասին: Բանաստեղծի ոտանավորների հետ միասին վերջին տարիներին թուրքական գրքի շուկան սկսել է ողողել բանաստեղծի մասին գրքերի ու հոդվածների մի հեղեղ: Որոշ հեղինակներ խոսք գիտանալով գրականությունը, մյուսները պահանջում են, որ Հիքմեթի գործը վերանայվի...

Վույս տեսան նաև Հիքմեթին անձամբ ճանաչող մարդկանց բաղձաթիվ հիշողություններ, որոնք թուրք հասարակայնությունը ծանոթացրին բանաստեղծի նկատմամբ դատական հաշվահարդարի մանրամասնություններին: Այսպես, 1966 թվականի վերջին լույս տեսավ նազըմի հետ միասին դատված, բանաստեղծ Ա. Քազրի բրոշյուրը: Գիրքը անմիջապես վաճառվեց և պահանջվեց երկրորդ հրատարակությունը: Հատուկ կերպով Հիքմեթին էր նվիրել իր համարը «Ենի դերգի» գրական շաբաթաթերթը: Թերթը ապացուցում էր բանաստեղծի անմեղապարտությունը:

Ա պահանջում էր վերանայել նրա դործը, որպեսզի նրանից հանվի դավաճանի խարանը: Թերթը հրապարակեց նազըմի ժամանակակիցների մի շարք վկայություններ, այդ թվում և Թուրքական ժուռնալիստիկայի ավագագույն ներկայացուցիչ, իր աջ հայացքներով հայտնի Ահմեդ էմին Յալմանի դեռևս 1949 թվականին գրված հոդվածը: Յալմանը այն ժամանակ հիշում էր, թե փնչպես մի անգամ ինքը Բուրսայի բանտում այցելել է հիվանդ, բժշկական օգնությունից զուրկ նազըմին ու հարցրել նրան. «Ձեր մասին ասում են, թե դուք հայրենասեր չեք: Ձեր բանաստեղծությունները բազմաթիվ լեզուներով են թարգմանում կոմունիստները: Ի՞նչ կասեք դուք գրան»: Նազըմը պատասխանել է. «Իմ ուժերից վեր է արգելել, որ իմ բանաստեղծությունները շթարգմանեն: Իսկ ինչ վերաբերում է հայրենասիրությունը, ապա, հավանաբար, կան մարդիկ, որոնց հայրենիքի հետ կապում է զգացմունքը կամ այն, որ նրանք կալվածք կամ սեփական տուն ունեն Թուրքիայում: Ի՞մ կապը Թուրքիայի հետ այլ է, ավելի խորն է, ևս նրա հետ կապված եմ մայրենի լեզվով: Ինձ թվում է, դժվար է պատկերացնել ավելի խոր կապ»:

Բանաստեղծի այս պատասխանը, որը հայտնի դարձավ այդքան տարիներ հետո, մի ուժեղ փաստարկ էր, որը հերքում է հետադիմական զրպարտիչների կեղծիքը: Թուրքիայի համար առանձնահատուկ նշանակություն ունեցավ «Յոն» հանդեսում հրապարակված մինչ այդ անհայտ մի փաստաթուղթ՝ նազըմ Հիքմեթի նամակը Աթաթյուրքին, որ նա գրել էր 1938 թվականին: Այդ նամակը, որը վերջերս է միայն գտնվել պետական արխիվում, իր ժամանակ չէր ընկել մահացու հիվանդ Քեմալի ձեռքը:

Ահա քաղվածքներ այդ կարևոր փաստաթղթից.

«Ինձ մեղադրելով բանակում խռովություն սաղորելու մեջ, դատապարտել են տասնհինգ տարի խիստ բանտարկության: Այժմ ինձ վերագրում են խռովության տարածում թուրքական նավատորմում:

Ես երգվում եմ թուրքական հեղափոխությանը և քո անունով, որ ևս մեղավոր չեմ:

Ես գինյորներին խռովության չեմ հրահրել:

Ես կույր չեմ: Ես ընդունակ եմ գնահատելու Քո բոլոր վիթխարի ջանքերը առաջադիմության ճանապարհին, իմ սիրտը լի է սիրով դեպի հայրենիքը:

Ես գինվորներին խոսվության շեմ հրահրել...

Քեզանից և քեմալականությունից ես պահանջում եմ արդարություն»:

Այսօր, երբ արդեն անցել է ավելի քան երեսուն տարի, բանաստեղծի ողբերունչ ձայնը գնալով ավելի լայն արձագանք է գտնում ամբողջ Քուրքիայում: Գնալով ավելի բարձրաձայն են հնչում պահանջները՝ հրապարակել Հիբմեթի գործը, լսել ողջ մնացած վկաներին, հասնել դատավարության վերանայման և լրիվ վերականգնել բանաստեղծի անունը: 1967 թվականին Քուրք հասարակայնության անունից այդպիսի պահանջով հանդես եկավ հայտնի Քուրք ժուռնալիստ, Քուրքիայի բանվորական կուսակցությունից դեպուտատ Չեթին Ալթանը:

Հիբմեթի գործը առայժմ դեռ բաց է մնում: Սակայն Քուրք հասարակության լուսավորված մասի աչքում բանաստեղծը արդեն վերականգնվել է և ճանաչվել որպես ժամանակակից Քուրքիայի խոշորագույն բանաստեղծ: Մեծ արձագանք գտավ Ադիլ Նեսինի կոչը՝ Քուրքիայում ստեղծել Հիբմեթի թանգարան և հիմնել գրական մրցանակ նրա անունով:

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

«Այս տարի Անատոլիան առաջին անգամ իսկական թատրոն տեսավ» — գրել է «Ջումհուրիյեթ» թերթը 1966 թվականի վերջին: Խոսքը Քուրքիայի համար բոլորովին նոր երևույթի մասին էր՝ ուսուցիչների արհմիության շրջիկ թատրոնի հյուրախաղերի մասին. այդ թատրոնը ստեղծել էր տաղանդավոր ռեժիսոր, դերասան և թատերագիր Սերմետ Չագանը² (մեկ մարդու մեջ թատերական մի քանի պրոֆեսիաների համատեղում բավական հաճախ է հանդիպում Քուրքիայում): Առանց պետական դոտացիաների, ունենալով լոկ չնչին միջոցներ արհմիության անդամ ուսուցիչների և ուսուցիչների արհմիության վիլայեթային կազմակերպությունների երկու հարյուր յոթանասուն բաժանմունքների անդամավճարներից, Սերմետ Չագանը որոշեց թատրոնին ծանոթացնել անատոլիացի գյուղացիներին և նահանգական քա-

¹ Երբ երկրում սկսվեց սեպտեմբերյան, նազըմ Հիբմեթի ստեղծագործությունները նորից արգելվեցին:

² Սերմետ Չագանը մահացավ 1970 թվականին:

դաքնների բնակիչներին, որոնք մինչ այդ կյանքում ոչ էլ լսել էին «Թատրոն» բառը: Նա այնտեղ կազմակերպում է ոչ միայն ներկայացումներ, այլև դասախոսություններ է կարդում պիեսի մասին. նա հաղթահարում է ֆինանսական կարգի վիթխարի դժվարություններ. նա բեմադրում է գեղարվեստական և դաստիարակչական արժանիքներ ունեցող նշանակալի պիեսներ միայն: Առաջին պիեսը, որով նա շրջեց բոլոր գավառները, իր իսկ՝ Սերմետ Չագանի «Ոտքերի ֆարրիկան» քաղաքական փաշտուն սատիրան էր: Գեղարվեստական մարմնավորման ձևով ու մեթոդով (օրինակ, պիեսի տեսարանների ընդմիջարկումը երգչախմբով) այն հիշեցնում է Բերթոլդ Բրեխտի պիեսները: Ինչպես գրել է «Հարեր» թերթը, Չագանի պիեսը՝ «Թուրքիան է, լուսավորված ունեցեցության ճառագայթներով»: Այն մինչև ուղն ու ծուծը թուրքական պիես է և անհասկանալի է մնում նրանց համար, որոնք չգիտեն այդ երկրի իրական կյանքը:

Պիեսի հիմքում դրված է իրական փաստ. Արևելյան Անատոլիայի շրջաններից մեկում հարուստ հողատերերը հացահատիկի գինը բարձրացնելու նպատակով թունավորում էին ցորենը, որպեսզի հնարավոր չլինի օգտագործել սննդի մեջ, այլ կարելի լինի կիրառել որպես սերմացու: Սոված գյուղացիները հավաքում և ուտում էին մի բույս (դրա անունը «կարա թոխում» է), որից հետո սկսվում է մի սարսափելի հիվանդություն՝ ոտքերի կաթված: Այս փաստն էլ Սերմետ Չագանի համար իրրև ֆոն ծառայեց մի թունդ սատիրայի համար՝ Թուրքիայի քաղաքական կյանքի մասին նրա բոլոր զրսևորումներով:

Ահա պիեսի համառոտ բովանդակությունը. ցորենի գինը բարձրացնելու համար երեք կալվածատերեր հողտերականի հետ միասին (վերջինս հագած է տերտերի պեխտ՝ մուսուլմանների կրոնական ղզացումները չվիրավորելու համար) համոզում են Շեֆին՝ հրապարակել մի հրաման՝ ցորենը պարտադիր կարգով պետությունը հանձնելու մասին, նրանց խոստանալով, որ ամեն մի պարկ ցորենի դիմաց նրանք կստանան չորս անգամ ավելի՝ «կարա թոխում»: Իսկ ցորենը, իբր, պետք է ծախսվի սրբազան ձկներին կերակրելու համար, քանի որ, օ՛ սարսափ, լճի ափին գտել էին կրծոտված ձկան մի ողնաշար: Չուկը, իբր, սատկել է սովից, հավատացնում են կալվածատերերը Շեֆին. չի կարելի

ենթադրել, որ տեղի է ունեցել ինչ-որ սրբապղծութուն և այն պարզապես կերել են: Նման նախապաշարմունք մինչև հիմա էլ գեռ գոյութիւն ունի Քուրքիայում: Քուրքիայի արևելքում, Ուրֆայում, ես ինքս եմ տեսել այդպիսի «սրբազան» լիճ, որը լիքն է գետածածանով, որոնց կերակրում են հացահատիկով և ոչ ոք դրանք չի որսում, քանի որ դա դժբախտութիւն է բերում... Մինչ այդ բեմում տեղի է ունենում աղջկա վաճառք՝ նույնպես մի սովորական բան գլուղում: Աղջկա համար մյուսներինց ավելի շատ ցորեն տվող պատանուն ձերբակալում են և խաշում: Ես այի վրա խաշված թուրքի այդ ցնցող սիմվոլը ֆոն է դառնում պիեսի հետագա զարգացման համար, որն ընթանում է նույն դեկորացիաներով, միևնույն գործող անձանցով: Միայն երեք կալվածատերերն են, որ մերթ հանդես են գալիս դատաւորների դերում, որոնք անպատկառին դատապարտում են... Իննսուն տարվա բանտարկութեան, մերթ ոստիկանների դերում, որոնք նախադրուշացնում են, որ նույն ճակատագիրն է սպասում ամեն մեկին, ով կհամարձակվի հանդես գալ Շեֆի դեմ: Հաջորդ տեսարանում հանդիսատեսը նկատում է, որ բոլորն էլ, այդ թվում և Շեֆն ու Նոզերս անձը, կաթված են ստացել: Օգնութեան են գալիս օտարերկրացի մասնագետները, և ահա հենց այստեղ սատիրան հասնում է իր զագաթնակետին. վերևից գլխներին է տեղում ամերիկյան օգնութիւնը՝ պարկեր, որոնցից դուրս են թափվում հին կոշիկներ, ատամի խոզանակներ և այլն: Լսվում են ձայներ. «Հեյ, որևէ մեկը ողջ մնացե՞լ է այս օգնութիւնից»: Միաժամանակ էկրանի վրա լուսավոր տառերով երևում է «Համաձայնութիւն օգնութեան մասին» տեքստը, որի առաջին կետում ասված է. «Օգնութիւն ստացող երկիրը պարտավորվում է օգնութիւն տվող երկրին հումք վաճառել շնչին գներով»:

Հաջորդ տեսարանը նույնպես սկսվում է էկրանի ցուցադրումով. «Երբ մարդ հանդիստ նայի իրերին, նա ընդունակ կլինի ամեն բանի»: «Կա՛յ Շեֆի գլխին»: Դրանից հետո, բնականաբար, թուշում է Շեֆի գլուխը, իսկ նրան սպանողը՝ մի խեղճ մարդ, որը կերել էր ձուկը, գրաւում է Շեֆի տեղը: Էկրանի վրա նորից երևում է մակագրութիւն. «Սա հեղափոխութիւն է», իսկ հանդիսատեսը մտովի ավելացնում է. «Սա 1960 թվականի մայիսն է»: Նոր Շեֆին անմիջապես սկսում են շողորրթել նույն երեք կալվածատերերը, որոնք և նրան աշխատում են համոզել, սիրաշահել կաթվածահար եղածներին, նրանք որոշում են կա-

ուցել «ոտքերի ֆաբրիկա», որից հետո... պարկերից հանում են արդեն պատրաստի պրոթեզներ՝ այն օգնություն մի մասը, որ նրանք չուրացրել էին իրենց համար: Այնուհետև սկսվում է ընտրությունների տեսարանը: Նույն կալվածատերերն են, բայց արդեն քաղաքական կուսակցությունների լիգերների դերում: Մեկը խոստանում է, որ «ոտքերի ֆաբրիկան» կլինի արդյունաբերական զարգացման սկիզբը, մյուսը խոստանում է զարգացնել «մասնավոր նախաձեռնությունը խեղանդամների համար պրոթեզներ արտադրելու գործում»: Բայց երբ լիգերներից ոչ մեկը ձայների մեծամասնություն չի ստանում, ապա նրանք կազմում են կոալիցիոն կառավարություն և քաղաքացիներին երջանկացնում արհեստական ոտքերով: Բոլորին համակում է ուրախությունն ու... սարսափը, երբ պարզվում է, որ այդ պրոթեզներով կարելի է միայն դռնի տեղում կամ ետ-ետ զնայ: Թուրքական իրականություն մասին այդ անողոր սատիրան ավարտվում է երգչախմբի արտասանած բառերով. «Սրանով ավարտվում է մեր ներկայացումը, բայց կյանքը շարունակվում է»:

Ես այս պիեսը դիտել եմ ընտրություններից բառացիորեն մի քանի օր առաջ, երբ իշխանության գլուխ անցավ Գեմիթիլը...

Անատոլիայի գյուղացիներին հասած արդյոք ընկալման համար դժվար այս պիեսի իմաստը, որի մեջ այլաբանական ձևով պատմվում է թուրքական կյանքի գծախտությունների մասին:

Երբ ես այդ մասին հարցրեցի իրեն՝ Չագանին, նա ասաց, որ այն շրջաններում, որտեղ մարդիկ «կարա թոխում» էին ուտում և խեղված էին կաթվածից, հարկացել են: Մյուս վայրերում՝ ոչ բոլորը: Բայց երբ ներկայացումից հետո խոսակցություն սկսվեց պիեսի մասին, ապա դա հանդիսատեսներին օգնեց հասկանալու նրա բովանդակությունը, իսկ դերասաններին՝ իրենց ավելի մոտ զգալու ժողովրդին: Ինչպես արտահայտվել է Չագանը «Օչուն» հանդեսին տված իր հարցազրույցներից մեկում, ինքը ուզում է «ոչ միայն ժողովրդին կուլտուրա սովորեցնել, այլ ինքն էլ է ուզում սովորել ժողովրդից»:

Բնական է, որ էնտելիաստների այս շրջիկ թատրոնը Թուրքիայում միակ թատրոնը չէ: Երկրում կան պրոֆեսիոնալ թատրոններ հիանալի դերասաններով: Դա առավել ևս հարկավոր է նշել, որ Թուրքական թատրոնը այնքան էլ շատ տարիների պատմություն չունի: Չէ որ մինչև XIX դարի կեսերը գոյություն են

ունեցել միայն թատերական հատուկ ձևեր, որոնք իրենց արմատներով գնում են Միջին Ասիայի տափաստանները, որտեղից թուրքերը եկան Անատոլիա: Գոյություն ունեւր այդպիսի երեք տեսակ թատրոն. մեկ դերասանի՝ ժողովրդական պատմողի **Քատրոն** կամ «մեղդահի» թատրոնը, «Օրթա Օյունու» թատրոնը, որը հիշեցնում է իտալական «կոմեդիա դել արտեն», և «Կարագյոզը»՝ ստվերների թատրոնը, որը սկիզբ է առել շինական թատրոնից: «Կարագյոզի» ներկայացումները, ճիշտ է, ոչ լրիվ ձևով, հիմա էլ կարելի է տեսնել ուսմադանի ժամանակ: Եվ ես ներկա եղել եմ այդպիսի ներկայացմանը ու տեսել եմ երկու նշանավոր տիկնիկներ՝ ժողովրդական իմաստության ներկայացուցիչ **Կարագյոզին** և պճնամուշ **Հաջիվաթին**, որոնց լուսավորված էկրանի ետևից ճարպիկ ձեռքերով վարպետորեն խաղացնում էր Հայալի Քյուչյուկ Ալին, որին այստեղ անվանում են վերջին «կարագյոզականը»: Նա նույնպես ռեպրիկներ էր տալիս Կարագյոզի, Հաջիվաթի և մյուս բոլոր տիկնիկների փոխարեն (կլասիկ «Կարագյոզում» կա մոտ չորս հարյուր տիկնիկ): Նման «հեռուստատեսութունը», որն արդեն ունի բազում հազարամյակների պատմություն, միշտ էլ եղել է մեկ վարպետի գործ. նա մենակ կառավարում էր դրանց և մենակ խոսում բոլորի փոխարեն:

Թատրոնը մեր ըմբռնմամբ թուրքիայում ծնվել է XIX դարի կեսին: Այն ժամանակ գոյություն ունեին միայն հայկական խմբեր, որոնք խաղում էին եվրոպական հեղինակների պիեսները: Թատերական արվեստը սկսեց զարգանալ հայրենական գրականության հետ միաժամանակ՝ հանրապետության հաստատումից հետո միայն, բայց իսկական թափ ձեռք բերեց հուպատերազմյան տարիներին: Այդ գործում մեծ ծառայություն ունի հայտնի դերասան և ռեժիսոր Մուխամեդ էրթուգրուլը, որը դաստիարակել է դերասանների մի քանի սերունդ և որի մասին այստեղ բոլորն էլ մեծ հարգանքով են խոսում... Թատերական կյանքի կենտրոնը մինչև հիմա էլ մնում է Ստամբուլը, որտեղ գործում են յոթ քաղաքային թատրոններ և մեկ տասնյակից ավելի մասնավոր թատերախմբեր: Իսկ պետական թատրոնների մեծ մասը գտնվում է Անկարայում, այնուհետև Իզմիրում, Ադանայում և Բուրսայում: Մայիսյան հեղաշրջումից հետո որոշ աշխուժացում նկատվեց թատերական կյանքում: Այդ ժամանակ էլ թուրքական թատրոնի պատմության մեջ առաջին անգամ ստեղծ-

վեց կոորդինացիոն հանձնաժողով, որի տնօրինութեան տակ են գտնվում պետական, մոնիցիցիպալ և մասնավոր թատրոնները:

Այսօր թուրքական թատրոնն ունի մի շարք տաղանդավոր դերասաններ... Դերասանների մի մասը կրթութունն ստացել է կոնսերվատորիայում (Թուրքիայում կոնսերվատորիան ավարտում են ոչ միայն երաժիշտներ, այլ նաև բալետմեյստերներ և դրամատիկական դերասաններ), մի մասը դուրս է եկել դերասանների բնտանիքներից, որը մանկութունից կրթութունն ստացել է թատերական բեմահարթակներում... Այդպիսի դերասանների թվին է պատկանում նշանավոր դերասաններից մեկը՝ Մուամմեր Կարաջան, որի թատրոնը իր խաղառճով հիշեցնում է «Օրթա Օյունուրը»: ամեն երեկո նա նորովի հանպատրաստից ներկայացումներով արձագանքում է օրվա հրատուպ թեմաներին: Դրանց թվին է պատկանում նաև մեկ ուրիշ հայտնի դերասանուհի՝ Գյուլբիզ Սուրուրին: Ես նրան տեսել եմ երկու անգամ, և երկու անգամ էլ նա ինձ զարմացրեց դերասանական բարձր վարպետությամբ անատոլիացի հասարակ գեղջկուհիների դերում, անկախ այն բանից, թե նա խաղում է Յաշար Քեմալի «Թիթեղատուփը» պիեսում (որի մասին այն ժամանակ շատ էր խոսվում), թե «Զոհը» պիեսում (որի մեջ նա, հունական Մեդեայի նման, սպանում է հրիսուսներին ու իրեն, երբ ամուսինը երիտասարդ կին է բերում տուն): «Մեր թատրոնում՝ մենք խաղում ենք և խաղալու ենք պիեսներ ժողովրդի կյանքից, — հայտարարել է դերասանուհին «Քիմ» հանդեսին սված իր հարցազրույցներից մեկում: — Հենց դրա մեջ ենք մենք տեսնում մեր նպատակը»: Ի դեպ ասած, երիտասարդ հեղինակ Կալյոնջուի «Զոհը» պիեսը մեծ վեճեր առաջացրեց: Ոմանք այն գովում էին, գլխավորապես դերասանական խաղի համար, մյուսները քրննադատում՝ ռեալիզմի բացակայութեան համար. նրանց կարծիքով, թուրք գեղջկուհին ավելի շուտ ուրախ է լինում, երբ ամուսինը երիտասարդ կին է բերում տուն... Հեղինակին քննադատում էին հունական Մեդեայի հետ եղած նմանողութեան համար, այն բանի համար, որ նա հունական երգչախմբի օրինակով անատոլիական գեղջկուհիների երգչախումբ է մտցրել պիեսի մեջ:

¹ Իր ամուսնու՝ դերասան Էնգին Ջեզգարի հետ նրանք Ստամբուլում խաղում են սեփական թատրոնում:

Թերևս, ամենահայտնի դերասանական զույգը Թուրքիայում եղբայր և քույր Քենտերններն են, որոնք ակփական թատրոն ունեն մտամբուլում: Ես նրանց տեսել եմ միայն մեկ անգամ՝ խելահեղ սուլթան Իբրահիմի մասին երիտասարդ թուրք թատերագիր Ա. Օֆլազողլուի պատմական դրամայում: Բավականին լավ այս պիեսում կարելի է գտնել շեքսպիրյան ողբերգությունների ազդեցությունը: Ինձ այն ժամանակ զարմացրեց ու հիացրեց Մյուշ-Փիթի խաղը խելահեղ սուլթանի դերում և Յըզբզի խաղը նրա մոր դերում: Նրանք երկուսն էլ այդ ներկայացման մեջ հասել էին դերասանական վարպետության բարձունքին:

Կցանկանալի հիշատակել նաև Անկարայի դերասաններին, ինչպես, օրինակ, Գյոքչերին, որը միաժամանակ և թատերագիր է, և ռեժիսոր, և դերասան (նա մեծ հաջողություն ունեցավ քնուի վանյայի դերում՝ Չելսուլի պիեսում), կամ բոլորովին երիտասարդ դերասան Գենչո էրքալին, որը փայլուն կերպով հանդես եկավ «եսելագարի հիշատակարանը» պիեսում՝ ըստ Գոզլի Այս պիեսում, կամ, ավելի ճիշտ, մենախոսությունում, փայլեցին նրա տաղանդի բոլոր կողմերը, որը ժամանակի ընթացքում էլ ավելի կատարյալ կդառնա: Այդ դերի կատարման համար նա 1967 թվականին ճանաչվեց որպես «սեզոնի դերասան»: Բերթոլդ Բրեխտի «Արթուր Ուիի կարիերան» պիեսի անվանադերում Գենչո էրքալը ինձ պակաս դուր եկավ: Նրա Հիտլերը այնքան սարսափելի չէ, որքան ծիծաղելի է. նրա կերպարի մեջ շապլինյան ինչ-որ բան կար, և պիեսի վերջում միայն հերոսի մոտ երևան են գալիս դաժան բռնակալի գծերը: Ինչ կա որ, երիտասարդ թուրք դերասանից հազիվ թե կարելի լինի պահանջել, որ մտնի Հիտլերի դերի մեջ... Նշանակալից էր այդ ներկայացման բեմադրության քաղաքական նշանակությունը Թուրքիայում, մի երկրում, որտեղ ուժեղ են պրոգերմանական տրամադրությունները: Ներկայացման գործողությունը մեկնաբանվում էր մակագրություններով, որոնք պարզաբանում էին պիեսի պայմանական կերպարները և իրական դեպքերը, որոնց մասին խոսվում էր ներկայացման մեջ (օրինակ, ռալխատագի հրկիզումը):

Թուրքական թատրոնների, հատկապես երիտասարդ խիղախ կրկնկտիվների կողմից խաղացանկի ընտրությունը վկայում է թուրքական հասարակության և բնակչության այն խավերի տրամադրությունների մասին, որոնք հաճախում են «Քրենց թատրոնը»: Ամենից ավելի մեծ հաջողություն են վայելում այն

պիեսները, որոնցում շոշափվում են երկրի հրատապ պրորբւմները: Այդպիսին էր, օրինակ, «Սառցահոսանքից առաջ» պիեսը, որ 1965 թվականին բեմադրեց Անկարայի թատրոններից մեկը. բեմական արվեստի օրենքների մեծ իմացութեամբ գրված այդ պիեսը պարունակում է բազմաթիվ կոնֆլիկտային իրավիճակներ և աչքի է ընկնում քաղաքական շիկացածութեամբ: Պիեսի դեպքերը տեղի են ունենում մայիսյան հեղաշրջումից հետո լեռնային մի կորած գյուղում՝ երկրի հարավ-արևելքում: Ձմռանը գյուղ է գալիս մի նոր քայմաքամ և մեծ եռանդով սկսում է ունիորմներ կատարել՝ կանանց արգելում է շարսաֆներ կրել նրանց ամուսիններին բանտարկելու սարսափի տակ, օգտագործել արաբական գիրը, բանտարկում է տեղի սպեկուլյանտներին, պահանջում, որ աղաները վերադարձնեն ապօրինաբար զավթած հողերը: Ամեն բանում նրան օգնում է ոստիկանը: Աղաներն ու տեղի հարուստները ապարդյուն կերպով փորձում են վարկաբեկել նրան և նույնիսկ մոտը մարդ են ուղարկում, որ սպանի նրան: Բայց վարձկանի զոհ է դառնում «խելագար սերժանտը»՝ ազատագրական սպաներազմի մասնակիցը, որը շատ գեղեցիկ պատկերված է և նույնքան էլ գեղեցիկ խաղացված:

Քայմաքամը կառավարում է որպես տեղական իշխան և սեփական ձեռքով արգարադատութուն կատարում: Բայց ահա սկսվում է սառցահոսքը և վերականգնվում խղված կապը վրայեթի հետ: Եվ այդ ժամանակ հեռացնում են և՛ քայմաքամին, և՛ նրա հետ գործած ոստիկանին, որոնք մեծ ժողովրդականութուն էին վայելում գյուղի բնակիչների մոտ որպես նրանց շահերի պաշտպաններ. բայց պարզվում է, որ նրանք երկուսն էլ գժանոցից փախած խելագարներ են: Ժամանում է իսկական քայմաքամը, որն անշափ շատ ջանք է գործադրում մարդկանց համոզելու, որ իր նախորդը եղել է... խելագար: «Որքան են եղել խելացի մարդիկ, բայց ոչ ոք և ոչ մի բարի գործ չի կատարել, դրա համար հարկավոր է լինել խելագար», — ասում է հերոսուհիներից մեկը՝ գեղջուհի Հաթիջեն, որին նա փրկել էր բանտից: Պիեսի վերջում աղաներն ու հարուստները ձեռքներն են շփում. «բարի» քայմաքամին հազցնում են զսպաշապիկ: «Հե՛յ, մարդիկ: Գուցե ձյունը նորից կծածկի ճանապարհները, և ես այդ ժամանակ էլի կվերադառնամ», — բացականչում է նա, և այդ խոսքերը դահլիճը դիմավորում է ծափահարութուններով:

Եւ վերջում մի պիեսի մասին ևս, որը նույն թվականին մի քանի ամիս շարունակ չէր իջնում Անկարայի առաջադիմական թատրոններից մեկի բեմից, «Նախալված կարգ» պիեսի մասին: Պիեսի հեղինակ, երիտասարդ թատերագիր Գյուներ Սյումերը և՛ ունեւորն էր, և՛ գլխավոր դերակատարը: Այդ պիեսը ոչ հարուստ մանրրոտուական նահանգական մի ընտանիքի մասին է, որը փոքրիկ քաղաքում տեղի ունեցած երկրաշարժից հետո փոխադրվում է Ստամբուլ (երկրաշարժը Թուրքիայում բավական հաճախակի երեւոյթ է, և այստեղ, պիեսում, այն ունի սիմվոլիկ նշանակութիւն): Ընտանիքի անդամները, որոնք չեն կարողանում հարմարվել մեծ քաղաքի կյանքին, մեկը մյուսի ետեից կործանվում են: Պիեսը տողորված է հուսահատութիւն ու տագնապի զգացումով: Այս պիեսը ոչ միայն առանձին մարդկանց անհաջողութիւնների մասին է, այլև ամերիկյան սեփական ինքնաթիռների մասին, որոնք սպառնում են Թուրքիայի խաղաղ կյանքին: Ի զարմանս իմ, ես ծրագրից իմացա, որ առաջին խթանը, որը հեղինակի մեջ կասկածներ է ծնել գոյութիւն ունեցող կարգի վերաբերյալ, հղել է... Լեհաստանի օկուպացումը հիտլերականների կողմից: «Մանկութիւն ժամանակ մենք լսել էինք անհասկանալի բառեր. «Գերմանական բանակը մտավ Վարշավա», «համակենտրոնացման ճամբարներ»... Այդ ժամանակներից սկսած մեր մեջ գնալով ավելի ուժեղ աճեց հուսահատութիւն զգացումը»:

Այս խոսքերը շատ նշանակալից են Թուրքիայի երիտասարդ առաջադիմական մտավորականութիւնի համար, մի երկրի, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի դաշնակիցն էր, իսկ երկրորդում՝ պահպանում գերմանացիների համար բարչացակամ շեղորութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ 1960 թվականին ևս եկա Թուրքիա, քեմալականութիւնի յոգունգների տակ կատարված հեղաշրջման հետևանքով իշխանութիւն գլուխ անցած զինվորական խոնտան հանդիսավոր կերպով հայտարարեց իր հավատարմութիւնը ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ռազմական դաշինքներին: Սոցիալիստական երկրների հետ որեւէ մերձեցման մասին այն ժամանակ խոսք անգամ չէր կարող լինել: Երբ ևս յոթ տարի հետո մեկնում էի այնտեղից, ար-

դին արդարության կուսակցության կառավարման շրջանում, բարձր մակարդակի դիվանագիտական կոնտակտները սոցիալիստական երկրների հետ սովորական երևույթ էին դարձել: Այս փաստերը վկայում են այն փոփոխությունների մասին, որոնք այդ ժամանակաշրջանում տեղի էին ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Ո՞րն է այդ փոփոխությունների աղբյուրը:

Պատերազմից հետո, երբ հռչակվեց Տրումենի դոկտրինան, Թուրքիան ստորագրեց Ատլանտյան պակտը և Բաղդադի պակտը, որը հետագայում վերածվեց ՍԵՆՏՕ-ի և դարձավ այդ միլիտարիստական խմբավորումների ջերմեռանդ անդամը: Այդ ժամանակից սկսած Թուրքիան ամենասերտ կերպով իրեն կապեց ԱՄՆ-ի քաղաքականության հետ: Թուրքիան մերձավորարևելյան միակ երկիրն էր, որը մասնակցություն ունեցավ կորեական պատերազմին, այնտեղ ուղարկելով իր հինգ հազար զինվորներին, այսինքն՝ ավելի շատ, քան Անգլիան և Ֆրանսիան միասին վերցրած: Թուրքիան մասնակցեց իմպերիալիստների բոլոր պահեսիվ միջոցառումներին Մերձավոր արևելքում և իր տերիտորիան տրամադրեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին և ՆԱՏՕ-ին ռազմական բազաներ կառուցելու համար: Միավորված ազգերի կազմակերպության և միջազգային այլ կազմակերպությունների նստաշրջաններում ամերիկյան «քվեարկության մեքենայի» թուրքական կոճակը միշտ գործում էր անխափան կերպով: Իրեն համարելով եվրոպական երկիր, Թուրքիան մտավ Եվրոպական խորհրդի կազմի մեջ, իսկ 1960 թվականից հետո դարձավ «ընդհանուր շուկայի» միացած անդամը:

1960 թվականի պետական հեղաշրջումից հետո կազմված նոր կառավարությունը շարունակում էր վարել նույն արտաքին քաղաքականությունը: Ընդլայնվում էր ռազմականացման պրոցեսը: Մեծանում էր ռազմական բյուջեն: Թուրքական զորքերը մասնակցում էին ՆԱՏՕ-ի բոլոր զորավարժություններին: Հեղաշրջումից հետո սկսված ընդհանուր լիբերալացումը, սակայն, հանգեցրեց այն բանին, որ հասարակական շրջաններում սկսեցին բողոքի ձայներ լսվել ամերիկացիներին զիջումներ անելու թուրքական քաղաքականության դեմ: Այդպիսի տրամադրությունների համար մի մեծ ազդեցություն գործեցին նաև միջազգային իրադարձությունները: Թուրքական հասարակական կարծիքի համար առաջին լուրջ ցնցումը եղավ 1962 թվականի

կուրաչական ճգնաժամքը: Այդ ժամանակ ամբողջ ձայնով սկսեցին խոսել այն մասին, որ Ամերիկան, բողոքելով կուրաչում եղած սովետական հրթիռների դեմ, Թուրքիան վերածել է իր սեփական հրթիռային պոլիգոնի և որ մեծ տերությունների միջև նվազագույն կոնֆլիկտի դեպքում դա Թուրքիային լիակատար ոչնչացում կսպառնա: Ընդամին հիշեցին նաև այն, որ հենց Ինդիլիթի բազայից (Ադանայից ոչ հեռու) իր թռիչքն սկսեց, առանց թուրքական կառավարության դիտության, ամերիկյան տիրահույզակ «Ու—2» ինքնաթիռը, որ նույն այդ բազայից, և դարձալ առանց թուրքական կառավարության համաձայնության, ամերիկացիներն իշեցրին իրենց դեսանտը Լիբանանում՝ 1958 թվականին: Հասարակական կարծիքը իշխանություններին մեղադրում էր այն բանում, որ, համագործակցելով իմպերիալիստական տերությունների հետ, Թուրքիան գնալով իրեն ավելի շատ է մեկուսացնում «երրորդ աշխարհից»:

Այդպիսի տրամադրություններ առաջին անգամ մեջլիսում արտահայտվեցին 1963 թվականի սեղրին՝ երկրորդ կուլիցիոն կառավարության արտաքին քաղաքականության քննարկման ժամանակ: Պառլամենտական տրիբունայից բավական շատ կշտամբանքներ հայտնվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ եղած դաշինքի նկատմամբ ոչ քննադատական մոտեցման համար: «Միջազգային կոնֆերանսներում, — ասաց դեպուտատներից մեկը, — հաճախ քննարկվում են երիտասարդ աֆրիկյան տերությունների առաջարկությունները, բայց ոչ որ երբեք դեռ չի լսել, որ քննարկվեն թուրքական առաջարկությունները»:

Հակամերիկյան տրամադրությունները իրենց զազաթնակետին հասան կիպրական ճգնաժամի օրերին: Հիշեցնեմ, որ այդ կողմն շորս հինգերորդով քնակեցված է հուլյներով, և միայն մեկ հինգերորդով թուրքերով: 1954 թվականին ազգային երկու համայնքների միջև ընդհարումները, որ զրգռում էին իմպերիալիստական շրջանները, հանգեցրին արյունահեղության: Փորձելով Կիպրոսին զրկել անկախությունից և նրան ներդրավել ՆԱՏՕ-ի շրջանակի մեջ, ամերիկացիներն այն ժամանակ արագացրին այդպես կոչված Աշեսոնի պլանը և պաշտպանեցին հունական թեզիսը «էնոսիսի» մասին, այսինքն՝ կողմն Հունաստանին միացնելու և կղզում Թուրքիային բազա տրամադրելու մասին՝ նրան դրամական հատուցում վճարելու պայմանով... էլ՝ ավելի

մեծ վտոյվմունքով ընդունվեց մամուլում մերկացված պրեզիդենտ Զոնստոնի նամակը այն ժամանակվա պրեմիեր Ինենյուլին, որով Զոնստոնը Թուրքիային նախազգուշացնում էր Կիպրոսում դեասանտ հանելու դեմ: Նա գրում էր, որ ԱՄՆ-ը թույլ չի տա ամերիկյան զենքը օգտագործել Պենտագոնի հետ չհամաձայնեցված նպատակների համար: Զոնստոնի նախազգուշացումները հաստատվեցին այն բանով, որ ամերիկյան VI նախատորմը գրտնրվում էր Միջերկրական ծովում:

Այդ ժամանակաշրջանում Թուրքիայում, որը սերտորեն կապված էր Վաշինգտոնի հետ, տեղի էին ունենում առաջին հայացքից անհասկանալի բաներ. ամերիկյան դեսպանութունը Անկարայում շրջապատված էր զինված ոստիկանությամբ, որպեսզի ամերիկացիներին պաշտպանեն ցուցարարներից, որոնք հանդես էին գալիս «իրենց խաբած» դաշնակցի դեմ: Ոստիկանութունը բոլոր մեծ քաղաքներում պահպանում էր այն թաղամասերը, որտեղ ապրում էին ամերիկացիներ: Պարզվեց, որ հակամերիկյան տրամադրութուններ այն ժամանակ նկատվում էին ամենուրեք, ոչ միայն ձախ տարրերի շրջանում, որոնք պահանջում էին երկիրն ազատագրել իմպերիալիզմից, այլև աջ նացիոնալիստական շրջաններում, որոնց ազգային հպարտության զգացումը վիրավորված էր:

Կիպրական ճգնաժամը ամենայն ակներևությամբ երկրի հասարակական կարծիքին ցույց տվեց թուրքական արտաքին քաղաքականության անմտութունը... Օվկիանոսի այն կողմից խոստացված աջակցութունն էլ խաբուսիկ դուրս եկավ...

Այդ ժամանակից ալելի բարձրաձայն ու ալելի համառորեն սկսեցին լսվել պահանջներ՝ վերանայել թուրքական արտաքին քաղաքական կուրսը: Հրապարակային քննադատության ենթարկվեցին ամերիկյան մի շարք արտոնութունները Թուրքիայում, բայց ամենից առաջ այն, որ Թուրքիայում է գտնվում գրեթե քանհինգհարանոց ամերիկյան գաղութ (զինվորականներ, «էքսպերտներ» ու նրանց ընտանիքներ): «Յոն» հանդեսը այն ժամանակ գրել է. «Բոլոր բարձրագույն պաշտոնները պետական ապարատում զբաղեցրել են օտարերկրացիները: Տասնութ միլիոնիստրութուններից միայն շորսում է, որ շկան ամերիկյան խորհրդակցանները»: Ամերիկացիները ընդհանրապես Թուրքիայում իրենց զգում էին ինչպես իրենց տանը: Նրանք ունեին սեփական խանութներ, տասնմեկ դադիոկայան, որոնց վրա չէր տարած-

վում Թուրքական ռազիովարչության վերահսկողութիւնը, սեփական փոստային կապը... «Ա» նշանը կրող մեքենաներով լցվել էին բոլոր խճուղիներն ու փողոցները: Թուրքական օդային տարածութիւնը ևս լցված էր այդ նույն տարբերանիշը կրող ինքնաթիռներով: Ամերիկացի զինավորականների արտոնութիւնները Թուրքիայում խախտում էին երկրի սովետերնութիւնը և արտասովոր շափով հիշեցնում Օսմանյան կայսրութեան կապիտուլյացիաները: Ամերիկացի զինվորների ու սպաների հանցանքները Թուրքական դատարանների իրավասութեանը ենթակա չէին, եթե բարձրաստիճան զինավորականը հայտարարում էր, որ հանցանքը կատարվել է «ժառանգութեան ժամանակ»: Իհարկե, միայն դրա շնորհիվ ամերիկացի շատ զինվորներ խուսափում էին պատժից: 50-ական թվականների վերջին Թուրքիայում լայնորեն հայտնի դարձավ գնդապետ Մորրիսոնի հետ կատարված դեպքը, որը հարբած վիճակում մեքենայով ճգմել էր մի քանի Թուրք զինվորների, և մի սերժանտի գործը, որը վրաներթի էր ենթարկել խաղացող երեխաներին: Երկու դեպքում էլ մեղավորները ենթարկվել էին միայն դրամական տուգանքի: «Պատշգամբից Թուրք երեխաների վրա կրակ բաց արած ամերիկացի զինվորներին,— 1965 թվականին գրում էր «Յոն» հանդեսը,— նույնիսկ չտուգանեցին»:

Միջնորդ բուրժուազիան սկսել էր աստիճանաբար ընդօրինակել ամերիկյան ապրելակերպը. բանը հասել էր այնտեղ, որ Անկարայի ու Ստամբուլի գիշերային ռեստորաններում ծրագրերը վարում էին անգլերեն:

1961 թվականի ապրիլին «Թանին» աչ թերթը զետեղել էր մի հոդված, որտեղ ահա թե ինչ էր ասված. «Փանի-քանի անգամ ես ինձ հարց եմ տվել՝ գաղութ չե՞նք դարձել արդյոք մենք,— գրել է մի անանուն հեղինակ:— Անկարայում զանգահարում եմ չլուրանոց և լսափողում լսում՝ «Hello», իսկ հետո՝ «Good morning»: Որտեղ եմ գտնվում ես: Երազում Ամերիկա չե՞մ փոխադրվել արդյոք... Անցեք Անկարայի փողոցներով և դուք շատ տների լուսամուտներին կտեսնեք «House to sell» («տունը վաճառվում է») կամ «House to rent» («տունը վարձով է տրվում») հայտարարութիւնները: Ինչպես դուք կարողացաք կուսահել, սա Թուրքերեն չի գրված... Նայեցեք ձեր շորս կողմը և ասացեք, կարո՞ղ եք դուք արդյոք Թուրքիա գտնել Թուրքիայում»:

1961 թվականին նման ձայնը, թերես, բացառութիւն կլինէր:

Սակայն ժամանակի ընթացքում թուրքերը ավելի ու ավելի սուր կերպով սկսեցին արձագանքել ամերիկացիների բռնությանը: Գնալով ավելի բարձրաձայն էին լսվում պահանջներ ամերիկացիների հետ իրավահավասար հարաբերություններ հաստատելու մասին, որին նպաստում էր նաև Ասլանտյան պակտի աստիճանական ապահիտեզրացումը և հատկապես ղեգոլլյան Ֆրանսիայի օրինակը: Իհարկե, հակամերիկյան տրամադրությունների աստիճանը տարբեր էր: Չախ տարբերը պահանջում էին բուլղոլի կապերը խզել ԱՄՆ-ից: Բուրժուազիայի շահավոր շրջանները պահանջում էին իրավահավասարություն Ատլանտյան դաշինքի շրջանակներում՝ Թուրքիայի սովերեն իրավունքները հարգելու պայմանով: Այդ շրջանների համար բնորոշ էր Իսմեթ Ինենյուի հաշտարարությունը «Թայմ» հանդեսի թղթակցին. «Ես հավատում էի Ամերիկայի ղեկավար դերին: Դրա համար ես պատժվեցի»:

Այսպիսի հանգամանքներում սկսվեց հարաբերությունների աստիճանական ջերմացում Թուրքիայի և Սովետական Միության, իսկ ապա նաև սոցիալիստական մյուս երկրների միջև. Այս ուղղությամբ առաջին քայլը եղավ Թուրքական պառլամենտական պատվիրակության այցը Սովետական Միություն 1964 թվականի ամռանը: Մի քանի ամիս հետո ՍՍՀՄ այցելեց Թուրքիայի արտաքին գործերի մինիստր էրքինը: Սկսեց ամրապնդվել տնտեսական համագործակցությունը, իսկ դրանից հետո, ճիշտ է, ավելի քիչ չափով, կուլտուրական և գիտական կապերը: Շատ շուտով հաջորդեց ՍՍՀ Միության Գերագույն սովետի պատվիրակության պատասխան այցը Թուրքիա: Այս այցին նախորդել էր Թուրքական կառավարության որոշումը ՆԱՏՕ-ի, այսպես կոչված, բազմակողմանի միջուկային ուժերին մասնակցելուց հրաժարվելու մասին (նա մնում էր որպես ՆԱՏՕ-ի միջուկային կոմիտեի անդամ): Նույն թվականի օգոստոսին, այն ժամանակվա պրեմիեր մինիստր Ուրգյուլիյուն այցելեց Սովետական Միություն: Այդ այցի ժամանակ սովետական կողմը մեկ անգամ ևս հաստատեց, որ ինքը հրաժարվում է Թուրքիայի նկատմամբ որևէ տերիտորիալ պահանջից: Համատեղ սովետա-թուրքական կոմյունիկեն ընդգծում էր երկու երկրների վճռականությունը՝ հետագայում ևս ջանքերն ուղղել միջազգային լարվածությունից թուլացմանը: Այս ամենը թուրքական հասարակական կարծիքին համոզեց, որ Սովետական Միության կողմից Թուր-

քիային ոչինչ չի սպառնում և որ նրա համար վտանգը թաքնված է մյուս կողմում:

Երբ 1965 թվականի հոկտեմբերին երկրի կառավարման ղեկի մոտ կանգնեց արդարութայան կուսակցությունը, նրա հաղթանակը ամենուրեք գնահատվեց որպես «Ամերիկյան հաղթանակ»: Այդ կապակցությամբ նույնիսկ առաջարկություններ էին արվում Թուրքիայում ամերիկյան բաղանների հնարավոր ավելացման և վիետնամական պատերազմում թուրքական զորքերի մասնակցության մասին: Սակայն իրականությունը գերազանցեց բոլոր ենթադրությունները: Արտաքին քաղաքականության մեջ էլ ավելի շատ, քան ներքին քաղաքականության մեջ, անհնարին դարձավ վերադարձը զեպի հին կուրսը, զեպի մինչև 1960 թվականը հղած քաղաքականությունը: Այդ բանը թույլ չէր տալիս աշխարհում փոփոխված իրադրությունը և ըսն Թուրքիայում փոփոխված իրավիճակը: Թուրքական բուրժուազիան որքան ավելի շատ էր ամրապնդում իր տնտեսական պոտենցիալը, այնքան ավելի վտահ էր իրեն զգում միջազգային ասպարեզում, իր համար պահանջելով մաներիլու ավելի լայն ոլորտ: Նրա համար պարզ դարձավ, որ ամերիկացիները իրեն զրկում են շահույթի մի մասից, իրեն պարտագրելով Թուրքիա ներմուծվող արդյունաբերական ապրանքների բարձր գներ և ցածր գներով գնելով թուրքական հումքը: Նա հասկացավ, որ առևտրական փոխանակությունը և վարկերը, առաջին հերթին ինվեստիցիոն վարկերը, որոնք անհրաժեշտ են իրեն երկրի ինդուստրացման համար, ինքը կարող է ավելի շահավետ պայմաններով ստանալ միայն ՄՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում: Սովետական պառլամենտական պատվիրակության Թուրքիա կատարած այցի արդյունքը հղնվ Սովետական Միության կողմից այնտեղ արդյունաբերական յոթ խոշոր օբյեկտ կառուցելու մասին համաձայնագիրը: Թուրքիան ՄՍՀՄ-ից ստացավ նաև 200 միլիոն դոլարի վարկ:

Այս ամենը հաշվի առավ Դեմիրելի կառավարությունը: Իզուր չէր, որ կարիները կազմվելուց մի քանի ամիս հետո արտաքին գործերի մինիստր Չաղլըլյանգիլը հայտարարեց. «Թուրքիան Ամերիկայի արբանյակը չէ և ՄՍՀՄ-ի թշնամին չէ: Մենք առարկում ենք, որ մեզ վրա նային որպես ՆԱՏՕ-ի պահակի»: Այս գիրքորոշումը հաստատվեց սոցիալիստական երկրների հետ դիվանագիտական կոնտակտներով, որոնցից ամենանշանակալիցը

կարելի է համարել պրեմիեր Ալեքսեյ Կոսիգինի այցը Թուրքիա 1966 թվականի դեկտեմբերին և շուտով դրան հաջորդած Դեմիրելի պատասխան այցը Սովետական Միության: 1967—1969 թվականներին տեղի ունեցավ Թուրքիայի մերձեցում կենսատանի հետ, ինչպես նաև բալկանյան երկրների՝ Բուլղարիայի, Հարավսլավիայի և մոնթենեգրոյի հետ: Թուրքիայի արտաքին գործերի ետպատերազմյան միջխտրներին ոչ մեկը այնքան ակտիվ չի եղել արտաքին աշխարհի հետ ունեցած իր կոնտակտներում, որքան Չաղլըջանգիլը, որին դրա համար անվանեցին «Թուրք հուլանդացի»: Առաջնորդում էրքեք Անկարայի փողոցներում այդքան հաճախ չէին ծածանվում օտարերկրյա պետությունների դրոշակները, որքան 1966—1967 թվականներին՝ կառավարությունների ղեկավարների այցերի ժամանակ:

Հենց այդ ժամանակ էլ Թուրքիան հակասցնել տվեց, որ ինքը պաշտպանում է հակազաղութատիրության գաղափարը: Միավորված ազգերի կազմակերպության ասամբլեաներում նա քվեարկում էր Հարավաֆրիկյան հանրապետությունում ապարտեյդը դատապարտելու օգտին: Բայց գլխավորը, Թուրքիան բարելավեց իր հարաբերությունները արաբական պետությունների հետ. նոր քաղաքականության սկիզբը եղավ Չաղլըջանգիլի ուղևորությունը Կահիրե 1968 թվականի գարնանը, իսկ հետևիվանքը՝ հարաբերությունների վատացումը Իսրայելի հետ: Մերձալորարևելյան կոնֆլիկտում Թուրքիան գրավեց շեղոք դիրք, բայց նրա համակրանքը արաբական երկրների կողմն էր: Թուրքիայի կառավարությունը պաշտոնական հայտարարություն արեց այն մասին, որ ինքը թույլ չի տալիս իր տերիտորիայում գտնվող ամերիկյան բազաներն օգտագործել արաբական երկրների դեմ: Հետագայում նա արտահայտվեց նաև իսրայելյանը գործերը արաբական տերիտորիաներից դուրս՝ բերելու օգտին: Չնայած այն բանին, որ Թուրքիան աշխարհիկ հանրապետություն է, նա մասնակցել է (1969 թվականի ընտրությունների նախօրյակին) մուսուլմանական երկրների Ռաբատի կոնֆերանսի աշխատանքներին, այնտեղ գրավելով, ճիշտ է, շատ զգույշ դիրք:

Թուրքիայի արտաքին քաղաքականության անկախության նշանակալից հաստատումն է այն փաստը, որ նա նույնիսկ սիմվոլիկ ձևով շղարշտպանեց ամերիկյան ազրեսիան Վիետնամում: Այդ կապակցությամբ Թուրքական թերթերը հիշեցրին մի անգամ

Աթաթյուրքի ասած խոսքերն այն մասին, որ Թուրքիան սեփական մաշկի վրա ղգում է նվազագույն զրգիւր երկրագնդի ամեն մի կետում:

Իսկ եթէ խոսենք ՍենՏՕ-ին Թուրքիայի ցուցաբերած մասնակցութեան մասին, ապա ձևականորեն այդ դիրքը չի փոխվել, բայց դա նշանակութուն էլ չունի, քանի որ դրա մյուս երկու անդամների՝ Իրանի և Պակիստանի քաղաքականութեան մեջ կատարված էվոլյուցիայի հետևանքով այդ դաշինքը դարձել է զուտ ցուցադրական: Բայց դրա փոխարեն Թուրքիան Իրանի և Պակիստանի հետ/բաժանական ակտիվորեն մասնակցում է այսպես կոչված Զարգացման ռեզիոնալ կոմիտեին, որը զբաղվում է տընտեսական հարցերով:

Թուրքական արտաքին քաղաքականության նման ակտիվացումն, անկասկած, ամբապնդեց Թուրքիայի դիրքերը Ամերիկայի Միացյալ Նահանգների նկատմամբ և նրան թույլ տվեց որպես նախածնող հանդես գալ Ատլանտյան պակտի III հոդվածին համապատասխան կնքված թուրք-ամերիկյան «երկկողմանի համաձայնագրերը» վերանայելու գործում: Այդ համաձայնագրերը, իսկ դրանց թիվը 55 է, կարգավորում էին Թուրքիայում ամերիկյան բազաների, ռադարային կայանքների և ռազմական այլ օբյեկտների իրավական դրությունը, ինչպես նաև ամերիկացի զինվորների ստատուսը Թուրքիայում: Այդ համաձայնագրերի մեծ մասը թվագրված է հիանական թվականներով, բայց դրանք երբեք չեն ստացել թուրքական մեջլիսի հավանությունը: Քսանչորս համաձայնագրերի տեքստերը ընդհանրապես չի հաջողվել հայտնաբերել Թուրքիայի արտաքին գործերի մինիստրութունում, և դրանց համար հարկ է եղել դիմել վաշինգտոն:

Այս հարցի ձևական ասպեկտը շատ խճճված էր. անհամեմատ ավելի բարդ էր գործի էությունը: Ամերիկյան ռազմական բազաները Թուրքիայում եղել են յուրատեսակ «պետություն՝ պետության մեջ»: Թուրքիայի ամենաբարձրաստիճան զինվորականներն անգամ իրավունք ունեին մտնելու այդ բազաների տերիտորիան միայն... հաճախ իր կոչումով ավելի ցածր՝ տվյալ օբյեկտի ամերիկացի հրամանատարի թույլտվությամբ: Այդ բազաները, որոնք ձևականորեն պատկանում էին ՆԱՏՕ-ին, փաստորեն անմիջականորեն ենթարկվում էին Պենտագոնին: «Երկկողմ համաձայնագրերի շրջանակներում բազաները գտնվում են

ամերիկացիների լիակատար տրամադրության տակ. «Թուրքական ներկայացուցիչները կարող են այցելել միայն զորանոցներն ու թատրոն, այլ ոչ թե ռազարային կայանքներն ու այլ օբյեկտներ, — 1965 թվականի վերջին հրապարակով խոստովանել է թուրքական ռազմաօդային ուժերի շտաբի նախկին պետ, գեներալ Հյուանյու Օղբանը: — Բազանների գործունեությունը զբաղվում է անմիջականորեն ամերիկյան հրամանատարության իրավասության տակ, որը կախված է միայն Պենտագոնից և ընդհանուր ոչինչ չունի ո՛չ ՆԱՏՕ-ի, և ո՛չ էլ Թուրքիայի հետ»: Պարզվել է, որ բազաները զբաղեցնում են 35 միլիոն քառակուսի մետր տերիտորիա, որի օգտագործման համար ԱՄՆ-ը Թուրքիայի կառավարությանը վճարում է այնքան, ինչքան նախատեսված է համաձայնագրերով:

«Այդ բազաններից առանց Թուրքիայի կառավարության գիտության թուշում էին լրտես ինքնաթիռները, — գրել է Թուրքիայի բանվորական կուսակցության առաջնորդ Մեհմեդ Ալի Այբարը «Զուլհուրիյեթ» թերթում: — Վաղը նույն այդ բազաններից և դարձյալ առանց մեր գիտության կարող է բարձրանալ հրթիռային մարտագլխիկ ունեցող ինքնաթիռ: Ուրիշ խոսքով սասած, օտարի աչքերը, օտարի ականջներն ու օտարի ձեռքերը հրկնքի նման տարածվել են մեր ամեն մի հողակտորի վրա»: Ուշագրավ է, որ Այբարի զիրբորոշման նման գիրք էր գրավել նաև ծայրահեղ աջ ազգային կուսակցությունը, որը 1967 թվականի սկզբին վտանգի էր, որ «ամերիկյան բազաները իրենց ներկայիս ձևով վտանգի մի այնպիսի օջախ են, որն ընդունակ է մեր երկիրը գերեզմանի վերածելու երեսուներկու միլիոն մարդու համար»:

Ամերիկյան բազաների ստատուսը փոխելու վերաբերյալ բանակցությունները երկար շարունակվեցին և անցնում էին դժվար: Ամերիկայի Միացյալ Նահանգները չէին կարող մոռանալ Թուրքիայի կարևոր ստրատեգիական դիրքը: Նկատի էին առնվում ոչ միայն և ոչ այնքան Սև ծովի դարպասները, այսինքն՝ Բոսֆորի և Գարդանեկի նեղուցները, որոնց ստրատեգիական նշանակությունը հրթիռային զենքի ու բալիստիկ հրթիռների դարում խիստ նվազել է: Պենտագոնի համար անհամեմատ ավելի կարևոր է Թուրքիայի աշխարհագրական դիրքը... Չէ որ Բաքվի սովետական նավթի հարստությունները ընկած են թուրք-սովետական սահմանից ընդամենը չորս հարյուր կիլոմետրի վրա: Չխոսելով արդեն այնպիսի գործոնի մասին, ինչպիսին է թուրքական բա-

նակի՝ Մերձավոր արևելքի ամենահզոր բանակի փորձված մարտունակության մասին:

Սակայն հակաամերիկյան հարաճուն տրամադրությունների լույսի տակ Պենտագոնը պետք է զիջումների դիմեր: Թուրքական հասարակական կարծիքին հասնում էին նորանոր փաստեր, որոնք միայն ամրապնդում էին այդպիսի տրամադրությունները: Այսպես, օրինակ, զինվորական խումտայի նախկին անդամ, սենատոր Հայդար Թունջբանատը 1966 թվականին հրապարակեց ամերիկյան հետախուզության գործակալի զեկուցումը Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին զինվորական կցորդ Դիբսոնին: Չեկուցումը պարունակում էր այն գործիչների ազգանունները, որոնց հարկավոր էր ազատել գրաված պաշտոններից հակաամերիկյան տրամադրությունների համար: Թուրքական շատ ժուռնալիստներ հրապարակեցին այդ զեկուցման ֆոտոպատճենը: Ահա թե այդ կապակցությամբ ինչ է գրել «Արիս» ժուռնալը. «Մեր հետախուզությունը ամերիկացիներից օգնություն է ստանում փողով և սարքավորումներով: Զարմանալի ոչինչ չկա, որ նրանց ամեն ինչ հայտնի է մեր մասին... Հակակրությունը ամերիկացիների նկատմամբ աճում է: Թունջբանատի հայտարարությունը, անկասկած, էլ ավելի վերաճրացնի հակաամերիկյան տրամադրությունները»:

Այդպես էլ եղավ: Այդ տրամադրությունները բազմիցս արտահայտվեցին հակաամերիկյան աղմկոտ ցույցերի ժամանակ: Այսպես, օրինակ, 1966 թվականի վերջին Ադանայում ցուցարարները ամբողջ զիջեց ջախջախում էին ամերիկյան տեղական հիմնարկությունները՝ ի պատասխան այն բանի, որ Ինջիրլիք բազայի ամերիկացի զինվորները հարձակվել էին թուրք կանանց վրա: 1967—1968 թվականներին բազմամարդ ելույթներ տեղի ունեցան Ստամբուլում և Իզմիրում՝ իբրև բողոք այն բանի դեմ, որ ԱՄՆ-ի VI նավատորմի նավերը մտել են Միջերկրական ծովը: 1969 թվականն առանձնապես նշանակալից էր երկրի հակաամերիկյան տրամադրությունների ուժով: Ամերիկյան բազաներում զբաղված թուրք բանվորների գործադուլի ժամանակ բանը հասավ սուր ընդհարումների ամերիկացիների հետ. թուրքերն ավերեցին ամերիկյան շատ օբյեկտներ, խափանեցին ամերիկյան խանութների մատակարարումը պարենամթերքով: Մի քանի ամիս շարունակ երկրում ծավալված կամպանիան ընդգեմ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Կոմերի (սա իր ժամանակ շատ

բարձր պաշտոն էր զբաղեցնում Կենտրոնական Հետախուզական վարչությունում, իսկ այնուհետև զբաղվում էր Վիեննամում ամերիկյան ագրեսիայի պլանավորմամբ) այնքան լայնորեն հայտնի դարձավ երկրում, որ պրեզիդենտ Նիքսոնը ստիպված եղավ նրան ետ կանչել, իսկ նրա փոխարեն նշանակված նոր զեսպան Հենզլին Անկարա ժամանեց 1969 թվականի հուլիսին՝ զիշերը:

Նման արամագրություններն ինչ-որ կերպ մեղմացնելու համար Վաշինգտոնը զիջումների դիմեց: 1969 թվականի հուլիսի սկզբին Անկարայում ստորագրվեց մի փաստաթուղթ, որը հաստատում էր, որ բազաները հանդիսանում են Թուրքիայի սեփականությունը, որ Թուրքիայի կառավարությանը վերապահվում է բազաների նկատմամբ վերահսկողության իրավունք և որ այդ բազաների ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական անձնակազմը այսուհետև պետք է ննթարկվի թուրքական օրենքներին:

Այսպիսով, Թուրքիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների անիրավահավասար հարաբերությունների ամենասուր անկյունները հարթված են: Բայց մնացել են բազաները, որոնք կարևոր օղակ են Պենտագոնի ռազմական սխտեմում, մնացել է ամերիկյան անձնակազմը Թուրքիայում, որը նշանակում է հետագայում ևս երկրի սովբերնությունն սահմանափակում¹:

¹ Հարկավոր է նշել, որ հետագա տարիներին Թուրքիան որոշ առաջընթաց քայլ կատարեց միջազգային լարվածության թուլացման ուղղությամբ: Ըստ էության նա պաշտպանեց Եվրոպական անվտանգության կոնֆերանս հրավիճելու գաղափարը: 1972 թվականի դարնանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի Թուրքիա կատարած այցի ժամանակ Սովետական Միության կողմից առաջ քաշված Ասիայի կուլեկտիվ անվտանգության սխտեմի նախագիծը լայն արձագանք զտավ թուրքական մամուլում:

ՎԵՐՁԱԲԱՆ

Լեհ կին ժուռնալիստ Քրիստինա Պողնանական իր գիրքը ան-
վանել է «Հին և նոր Թուրքիան»: Պատմաբանի համար, ասենք,
պարզապես Թուրքիայի մասին մեր դարում հրատարակված գրա-
կանությունը ծանոթ ընթերցողի համար, այս վերնագիրը, գու-
ցե, կթվա ոչ օրիգինալ... Անմիջապես մտաբերում ես Թուրքիայի
մասին այն գրքերն ու հոդվածները, որոնք լույս տեսան այդ
երկրի պատմության մեջ առաջին՝ 1908 թվականի բուրժուական
հեղափոխությունից հետո: Այն ժամանակ առաջին անգամ հրա-
պարակախոսության և գիտական գրականության մեջ երևացին
այնպիսի վերնագրեր, որոնք այս կամ այն կերպ տարափոխում
էին «Հին և նոր Թուրքիա» թեման: Պատմաբանների և ժուռնա-
լիստների շրջանում այդ թեմայի նկատմամբ հետաքրքրությունն
էլ ավելի ուժեղացավ թուրք ժողովրդի ազգային-ազատագրական
պայքարի հաղթանակից (1918—1923 թթ.) և Թուրքիայի հան-
րապետության կազմավորումից (1923 թվական) հետո: Վերլու-
ծելով սոցիալական, քաղաքական և կուլտուրական տեղաշարժե-
րը, այդ տարիների հետազոտողները հաճախ ձգտում էին իրենց
աշխատություններում ոչ միայն ցույց տալ նոր Թուրքիան, այլև
հասկանալ, թե անցյալի ինչպիսի պատմական-կուլտուրական
առվանդույթներ և սոցիալական ինստիտուտներ են շարունակում
այս կամ այն կերպ ազդել հանրապետական Թուրքիայի դար-
գացման վրա:

Ինձ թվում է, որ ինչ-որ շարժում նույնպիսի մի խնդրի էլ իր
առջև դրել է նաև Քրիստինա Պողնանական: Սա ականարկներ մի
շարք է, որոնք ամենևին չեն հավակնում սպառել կերպով լու-
սաբանելու հեղինակի շոշափած բոլոր թեմաներն ու պրոբլեմ-

ները: Հեղինակը Թուրքիայի պատմաբան չէ. նա գրում է այն մասին, ինչ կարողացել է տեսնել ու նկարագրել տրպես հրապարակախոս: Բայց, գնահատելով փաստերն ու իրադարձությունները, Քրիստինա Պողնանսկան ձգտում է հասկանալ և ընթերցողին հաղորդել իր ըմբռնումը այն բանի, թե որքան բարդ է հնի ու նորի միահյուսումը մեր դարի 60-ական թվականների Թուրքիայի կյանքում: Այստեղից էլ գրքի վերնագիրը:

Գրքի այդ վերնագրի օրինաչափությունը տրոշվում է, մեր կարծիքով, ոչ միայն հեղինակի մտեցմամբ: Ինքը՝ ժամանակաշրջանը, որի մասին իր գրքում պատմում է Քրիստինա Պողնանսկան, դա հնի ու նորի ամենասուր հակամարտության տարիներ էին Թուրքիայի սոցիալական, քաղաքական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում:

Քրիստինա Պողնանսկան փորձված ժուռնալիստ է: Երկար տարիներ նա աշխատակցել է «Տրիբունա լյուդու» թերթին, լեհական մամուլի գործակալությանը: Նա հանդես է գալիս գերադանցապես որպես արտաքին քաղաքական մեկնաբան, քանիցս հոդվածներ է հրապարակել Թուրքիայի իրադարձությունների մասին: Անձնական կյանքի հանգամանքները նրան դարձրել են Թուրքիայի կյանքի ակնաստե՝ 1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջմանը հաջորդած մի շարք տարիներին: Այդ տարիներին Թուրքիայի քաղաքական ու հասարակական կյանքը աչքի էր ընկնում մինչ այդ շտեմնված ակտիվությանը: Հետաքրքրասեր ու զննող հրապարակախոսը տեսնելու և խորհրդածելու շատ բան ուներ: Ժուռնալիստի սուր հոտառությունը Քրիստինա Պողնանսկային հնարավորություն է տվել ընդհանուր առմամբ ճիշտ կողմնորոշվելու այն տարիների քաղաքական բարդ իրավիճակի մեջ: Նա ձգտել է իր ամբողջ տեսածը գնահատել Թուրքիայի պատմության և մշակույթի վերաբերյալ իր ձեռք բերած գիտելիքների պրիզմայի միջով:

Կարգալուծ Քրիստինա Պողնանսկայի գիրքը, չի կարելի չզգալ բարձր շիկացած քաղաքական պայքարի այն մթնոլորտը, որով աչքի էր ընկնում Թուրքիայի կյանքը այդ տարիներին և որը, անցողակի նշենք, չի թուլացել նաև մեր օրերին: Այլ և ձախ ուժերի պայքարը, նրանց խիստ բեկոացումը, ահա ինչն է եղել, թերևս, երկրի քաղաքական ու հասարակական կյանքի որոշիչ գիծը այդ ժամանակաշրջանում: Պատահական չէ, որ այդ տարիներին Թուրքիայի քաղաքական ասպարեկում սկսեց գործել մի

լեզու կազմակերպություն, որն արտացոլում էր աշխատավորական ղանգվածների շահերը՝ Թուրքիայի բանվորական կուսակցությունը: Խիստ բարձրացել էր արհմիութենական, երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների դերը: Թուրքիայում հրատարակվում էին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերը, իսկ առաջադիմական թերթերի և ժուռնալների էջերում նույնիսկ դիսկուսիաներ սկսվեցին սոցիալիզմի մասին և Թուրքիայի զարգացման սոցիալիստական ուղիով ընթանալու հնարավորությունների մասին: Զախ ուժերի ակտիվացումը տեղի էր ունենում Թուրքիայի սնտեսական և քաղաքական դրուձյան ամենասուր հարցերի շուրջը երկրի բուրժուական տարրեր կուսակցությունների միջև մղվող անընդմեջ պայքարի պայմաններում: Այդ տարիների քաղաքական ու հասարակական դիսկուսիաների կենտրոնում էին սնտեսական զարգացման և այդ պրոցեսում պետության կատարած դերի պրոբլեմները, երկրի արտաքին քաղաքական դրուձյան, անկախ արտաքին քաղաքական կուրսի մշակման, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ երկրի հարաբերությունների հարցերը: Քաղաքական ամենասուր պայքարը բորբոքվեց նաև հասարակության կյանքում կրոնի դերի պրոբլեմի շուրջը. աջ ուժերը փորձում էին այսպես կամ այնպես հարձակվել եկեղեցին պետությունից անջատելու սկզբունքի վրա, ձգտում էին ամբողջացնել իսլամի կրոնի ազդեցությունը երկրի կյանքի բոլոր բնագավառներում:

Այդ պրոբլեմների սրությունն ու բարդությունը մասսայական ընթերցողը վարող է զգալ և հասկանալ, կարդալով Քրիստինա Պոզնանսկայի գիրքը: Հեղինակին հաջողվել է իր ակնարկներում ընդհանուր առմամբ տալ 60-ական թվականների Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի ճշմարիտ պատկերը:

Դրա հետ մեկտեղ այս հետաքրքիր ու մասսայական ընթերցողի համար օգտակար գրքի հեղինակին չի հաջողվել խուսափել առանձին մակերեսային, իսկ երբեմն նաև սխալ փնհատականներից: Չլինելով պատմաբան, առավել ևս Թուրքիայի պատմաբան, հեղինակը երբեմն ելնում է փաստերի կամ իրադարձությունների իր զգայական ընկալումից:

Այսպես, հազիվ թե ճիշտ կլիներ 1965 թվականի հոկտեմբերին արդարության կուսակցության իշխանության գլուխ անցնելը փնհատել որպես ցուցանիշ այն բանի, որ «նորից հաղթանակեցին» դեմոկրատական կուսակցության՝ մահապատժի ենթարկ-

«լած լիդեր Մենդերեսի գաղափարները: Կարելի է խոսել արդարության կուսակցության և դեմոկրատական կուսակցության սոցիալական քաղաքի որոշ ժառանգորդության մասին, բայց չի կարելի անուղղակիորեն նույնացնել այդ երկու կուսակցությունների քաղաքական նպատակներն ու ծրագիրը: Քրիստինա Պոզնանսկան, իմ կարծիքով, ընդհանրապես հակված է չափազանցնելու Մենդերեսի ժողովրդականությունը նրա մահապատժից հետո: Տողբրիս հեղինակը ևս առիթներ է ունեցել Թուրքիայում պատմություններ լսել Մենդերեսի համահու ժողովրդականության մասին գյուղում, բայց այդ խոսակցություններն, այնուամենայնիվ, ակնհայտորեն բավական չեն հետևություն անելու համար, որ «անգրագետ Թուրք գյուղացիների համար նա մնաց ոչ թե որպես բռնակալ, այլ որպես բարերար...»: Այլի շուտ կարելի է խոսել արդարության կուսակցության քաղաքական որոշ լիդերների ձգտման մասին՝ Մենդերեսի համար ստեղծելու նահատակի լուսապսակ և նրա անունը օգտագործելու գյուղական ընտրողների մի մասի ձայների համար մղվող պայքարի նպատակներով:

Այնքան էլ ճշգրիտ չեն նաև Թուրքիայի բանվորական կուսակցության գործունեության գնահատականները: Այն չի կարելի դիտել, ինչպես դա անում է Քրիստինա Պոզնանսկան, որպես «բանվոր դասակարգի կուսակցություն»: Թուրքիայի բանվորական կուսակցությունն իր ծրագրով և իր գործունեությամբ արտահայտում էր բանվոր դասակարգի ու գյուղացիության, աշխատավոր մտավորականության, ինչպես նաև մանրրործական կան շրջանների շահերը: Թուրքիայի բանվորական կուսակցությունը հանդես էր գալիս Թուրքիայի դարգացման ոչ կապիտալիստական ուղու օգտին: Այն տարիներին, որոնց մասին գրում է Քրիստինա Պոզնանսկան, Թուրքիայի բանվորական կուսակցության ներսում գաղափարական սուր պայքար էր մղվում «Թուրքական սոցիալիզմի» մանրրործական գաղափարախոսների և գիտական սոցիալիզմի գաղափարների կողմնակիցների միջև: Այսօր դժվար է, իհարկե, վերջնական հետևություն անել 60-ական թվականների Թուրքիայի հասարակական-քաղաքական դարգացման պրոցեսում այժմ արգելված Թուրքիայի բանվորական կուսակցության ունեցած դերի մասին, բայց ակնհայտ է, որ անօրինաչափ կլինի Թուրքիայի բանվորական

Յյուներ զնահատել որպես «մարքսիստական կուսակցութիւն»,
ինչպես այդ անուամ է Քրիստինա Պողնանսկան:

Մեզ որոշ շափաղանցութիւն է թվում նաև զրքի հեղինակի
այն միտքը, որ լաիցիզմի գաղափարները «նվազագույն շափով
անգամ շշուշափեցին ժողովրդի հիմնական զանգվածներին, առա-
ջին հերթին գյուղացիական զանգվածներին»: Իհարկև, իսլամի
ավանդույթները ու նորմաների ազդեցութիւնը շարունակում է
մնալ որպես թուրք գյուղացու մտածելակերպի և թուրքական
գյուղի կենցաղի տիրապետող գիծ, բայց քաղաքային բնակչու-
թյան լայն զանգվածները, որոնք, ի դեպ ասած, ամեն տարի
համալրվում են անատոլիական գյուղերից եկած տասնյակ հա-
զարավոր մարդկանցով, բավական պարզ գիտակցում են այն
փաստը, որ Թուրքիայի հանրապետութիւնը աշխարհիկ պետու-
թիւն է: Ասենք գյուղերում էլ այսօր քիչ չկան այնպիսի մար-
դիկ, որոնք հասկանում են, որ կրոնի դերը պետութիւն կյան-
քում վերջին տասնամյակներին էական փոփոխութիւններ է
կրել: Այլ բան է, որ այդ փոփոխութիւնները դուր են գալիս ոչ
բոլորին: Հենց այդ դժգոհութիւնից էլ օգտվում են մի քանի
քաղաքական կուսակցութիւնների, մասնավորապես արգարու-
թյան կուսակցութիւն լիզերները, որոնք վարպետորեն օգտագոր-
ծում են կրոնական զգացումները՝ պրոպագանդում իրենց առանձ-
նահատուկ նվիրվածութիւնը կրոնական ավանդույթներին՝ նպա-
տակ ունենալով նվաճել ընտրողների ձայները:

Քրիստինա Պողնանսկայի գիրքը ընթերցելիս անհրաժեշտու-
թիւն է առաջանում ճշտել որոշ փաստեր: Առաջին կապիտու-
լյացիաները Ֆրանսիային տրամադրել էր ոչ թե սուլթան Մահմուդ
I-ը 1740 թվականին, այլ սուլթան Սուլեյման I-ը 1535 թվա-
կանին: «Բարձրագույն դուռ» տերմինով արտահայտվում էր ոչ
սուլթանական իշխանութիւնը: Եվրոպացիները սովորաբար այդ-
պես էին անվանում Օսմանյան կայսրութիւն կառավարութիւնը,
որի գլուխ կանգնած էր լինում սուլթանի կողմից նշանակված մեծ
վեզիրը: Երբ հեղինակը գրում է, որ Դուլմարահչեի պալատում
կա մի սենյակ, որտեղ ժամացույցը կանգ է առել 9. 05 րոպեին,
նա պարզապէս արձանագրում է, որ այդ ժամանակ, 1938 թվա-
կանի նոյեմբերի 10-ին, մահացավ Ա. Յաթուրքը: Մինչդեռ, ըն-
թերցողի համար, հավանաբար, հետաքրքիր կլինէր իմանալ, ու-
խտաբը ննջասենյակի մասին և Դուլմարահչե պալատի այն մա-

սում, որտեղ սովորաբար ապրում էր Աթաթյուրբը, երբ Ստամբուլ էր գալիս, որտեղ և նա մահացել է:

Երբ Քրիստինա Պողնանսկան ավարտեց իր դիրքը, Թուրքիայում իշխանության գլուխ էր կանգնած արդարության կուսակցությունը: Իր ակնարկներում պատմելով այդ կուսակցության մասին, հեղինակը գրում էր, որ այնքան էլ հեշտ չի լինի պատասխանել այն հարցին, թե որքան տևական կլինի նրա հաղթանակը: Ինչպես միշտ, այդ հարցի պատասխանը տվեց պատմությունը: 1971 թվականի մարտին արդարության կուսակցության պարագլուխ Սուլեյման Դեմիրելը թուրքական զինված ուժերի հրամանատարության ճնշման տակ ստիպված եղավ հրաժարական տալ երկրի պրեմիեր մինիստրի պոստից:

Դրանից հետո երկու և կես տարուց ավելի երկրի քաղաքական կյանքը վերահսկում էին զինվորականները արտակարգ դրության պայմաններում: «Անարխիայի», «ձախ» և «աջ» ուժերի դեմ պայքարելու պատրվակով ճնշումներ էին կիրառվում բոլոր առաջադիմական քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ու հոսանքների դեմ: Արդելվեց Թուրքիայի բանվորական կուսակցությունը, նրա ղեկավարները դատի սերվեցին և դատապարտվեցին տարբեր ժամկետների բանտարկության, արգելվեց մարքսիստական գրականության տարածումը, փակի տակ դրվեցին սոցիալիզմի գաղափարները:

Այսպիսով, պատմությունն ինքը մեկնաբանեց Քրիստինա Պողնանսկայի այն պնդումը, թե 1960 թվականի հեղաշրջումից հետո «հեշտ չի լինի պայքարել առաջադիմական ուժերի դեմ...»: Դա իրոք հեշտ չէր: Ձախ ուժերի դեմ կիրառված ճնշումները բողոքի ալիք առաջացրին հատկապես սովորող երիտասարդության շրջանում: Ընդհատակում գործող երիտասարդության որոշ օպոզիցիոն խմբերի ձախ էքստրեմիստական գործողությունները, իրենց հերթին ուժեղացրին իշխանությունների ճնշումները առաջադիմական քաղաքական, արհմիութենական և երիտասարդական կազմակերպությունների դեմ: Թեև 1973 թվականի հոկտեմբերի 14-ի պառլամենտական ընտրություններից հետո զինվորականները վերջ ի վերջո ստիպված եղան ամբողջ իշխանության վերադարձնել քաղաքացիական գործիչներին, երկրի առաջադիմական ուժերին ուժեղ հարված հասցվեց:

Եվ, այնուամենայնիվ, այն ուժերը, որոնք ձգտում էին Թուրքիայում վերացնել բուրժուազեմոկրատական սղատությունները,

ստիպված եղան նահանջել: Այդ նահանջի առաջին նշանը եղավ բանակի ղեկավարների թեկնածու, ղեկնրալ Գյուրլերի պարտու-
թյունը պրեզիդենտական ընտրութուններում՝ 1973 թվականի
գարնանը: Քվեարկության տասնհինգ տուրից հետո, որը ինքնին
ծայրահեղ սուր պայքարի ցուցանիշ էր, պառլամենտը երկրի նոր
պրեզիդենտ ընտրեց պաշտոնաթող ծովակալ, հայտնի դիվանա-
ցետ Ֆահրի Քորուլթուրքին, որի թեկնածությունը պաշտպանե-
ցին երկրի առաջատար քաղաքական կուսակցությունները:

Ուշագրավ է նաև այն, որ 1973 թվականի հոկտեմբերի
ընտրութուններում երկրի պառլամենտում ամենից ավելի շատ
տեղեկը նվաճեց (450-ից 185) ժողովրդահանրապետական կու-
սակցությունը: Այդ կուսակցության ներկայիս պարագլուխ Բյու-
լենտ էշեհտը երկրի այն սակավաթիվ խոշոր քաղաքական զոր-
ծիշներից մեկն էր, որոնք եռանդուն կերպով հանդես էին գալիս
այն բանի դեմ, որ զինվորականները միջամտեն երկրի ղեկա-
վարմանը: Ժողովրդահանրապետական կուսակցությունը 1973
թվականի ամռանը հանդես եկավ պետական անվտանգության
իտարանների մասին օրենքի դեմ, որը պառլամենտը ընդունել
էր բանակի ղեկավարության և քաղաքական այն խմբերի ճնշման
տակ, որոնք ձգտում էին «անարխիան» վերացնելու պատրվակով
երկրում ապահովել գործադիր իշխանության դաժան կուրսը:
Ժողովրդահանրապետական կուսակցությունը այսօր հռչակում
է օտարերկրյա կապիտալ ներդրումների սահմանափակում Թուր-
քիայում, պետական սեկտորի ուժեղացում էկոնոմիկայում և
հողային ռեֆորմի կիրառում:

Ուժերի տեղաբաշխումը պառլամենտում այնպիսին է, որ ժո-
ղովրդահանրապետական կուսակցությունը ստիպված եղավ
ստեղծել կառավարական կոալիցիա ազգային փրկության կուսակ-
ցության հետ, որի նախընտրական կամպանիայում շատ նկա-
տելի դեր կատարեցին կրոնական լոզունգները: Իր հակակզերա-
կան ելույթներով հայտնի ժողովրդահանրապետական կուսակ-
ցության և ազգային փրկության կուսակցության դաշինքը մեր
օրերի Թուրքիայի քաղաքական իրադրության բարդության և
հակասականության բազմաթիվ դրսևորումներից մեկն է:

Քրիստինա Պոզնանսկայի գրքի ակնարկներից մեկի վերնա-
գրի այն հարցը, թե «Ո՛ւր կգնա Թուրքիան», այսօր էլ սպասում
է պատասխանի:

Սովետական մարդիկ բնականաբար ցանկանում են, որ Թուրքիան ընթանա սոցիալական առաջադիմության, տնտեսական բարգաւաճման, ազգային անկախության և խաղաղության ուղիով: Բարձրաստիճան պետական դործիչների փոխադարձ այցերի շնորհիվ սովետա-թուրքական հարաբերություններում վերջին տարիներին կատարված կարևոր դրական տեղաշարժն ամրապնդվեց 1972 թվականի դարնանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի Թուրքիայում եղած ժամանակ-1972 թվականի ապրիլի 17-ին Անկարայում ստորագրված դեկլարացիան ՍՍՀՄ-ի և Թուրքիայի բարիդրացիական հարաբերությունների սկզբունքների մասին կարևոր ուղենիշ է սովետա-թուրքական հարաբերություններում: Սովետական մարդիկ դո-հունակությունը նշում են առևտրում մեր երկրների միջև կատարվող նշանակալի առաջընթացը: Թուրքիայի հասարակայնու-թյունը պաշտպանում է գնալով ընդլայնվող տնտեսական ու գի-տատեխնիկական համագործակցությունը Թուրքիայի և ՍՍՀՄ-ի միջև:

Մեր ելրում միշտ բարձր է հետաքրքրությունը ժամանա-կակից Թուրքիայի կյանքի նկատմամբ: Կարծում եմ, որ լեհ հրա-պարակարս Քրիստինա Պոզնանսկայի գիրքը, որը պատմում է 60-ական թվականների Թուրքիայի կյանքի մասին, նույնպիսի հետաքրքրությամբ կընդունվի նաև սովետական ընթերցողների կողմից:

Լեհիգրա

1974 թվանի մաւս

Յու. Պետրոսյան



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Азиз Несин. Если бы я был женщиной... М., 1961. Илья Эренбург. Люди, годы, жизнь. М., 1966. «Արիս», 1965—1967, «Անտ», 1966, 1967: «Ձուսմ'ուրիշէթ», 1964—1967, «Գի վէլլա», 1969, «Ննի Իստամբուլ», 1966, 1970: «Ցոն», 1961—1967: «Միլիթէթ», 1963, 1965, «Նյու-Յորք Հերալդ Տրիբյուն», 1961: «Օնջլու», 1962, «Թանիկ», 1961: «Թերջյուման», 1967: «Հյուր վաթան», 1961: «Ուլուս», 1966:

„Annuaire statistique“, Ankara, 1959. Gasztowt T. La Pologne et l'islam, Paris, 1957. Jablonowski Wladislaw. Pamietniki z lat 1851—1893, Warszawa, 1967. „The Economy of Turkey; an Analysis and Recommendation for a Development Program“, Baltimore, 1951. Thornburg M. Turkey, New York, 1949 Tully Andrew. Central Intelligence Agency—the Inside Story, London, 1962. Ward R. F., Rustow D. A. Political Modernization in Japan and Turkey.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	3	Լաիցիզմ	109
Սելչուկների մայրաքաղաք		էտատիզմ	119
Կոնիան	5	Զարսաֆներ	134
Օսմանների առաջին մայրաքաղաք		Ո՞ւր կգնա Թուրքիան	145
Բուրսան	11	Անատոլիական գյուղը	157
Ստամբուլը «գուռ»-ով է խոսում պատմության հետ	18	Յաշար. Քեմալը և ուրիշներ	167
Անկարան Աթաթյուրքի քաղաքն է	43	Նաչըմի հաղթանակը մահից հետո	177
Հափերժ կենդանի		Թատրոնի մասին	184
Աթաթյուրքը	51	Արտաքին քաղաքականություն	192
«Դեմիր բըր աթ»	64	Վերջարան	204
Օրդու	78	Գրականություն	212
Մելչիս	95		

Պոզնանսկա Քրիստինա
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՈՒՐԿԻԱՆ

Познаньска Кристина
СТАРАЯ И НОВАЯ ТУРЦИЯ
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1985

Հրատ. խմբագիր՝ Վ. Մ. Սանախյան
Կրտսեր խմբագիր՝ Ն. Հ. Գրիգորյան
Նկարիչ՝ Լ. Հ. Մանասերյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Բլրուլյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Տոնոյան

ИБ 5173

Հանձնված է շարվածքի 22.04.1985 թ.:

Ստորագրված է տպագրության 22.07.1985 թ.:

Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագրական Ն 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 11,13 պալմ. տպագր. մամ.: 11,82 պալմ. ներկ. թերթ, հրատ.՝ 10,61 մամուլ: Պատվեր՝ 328: Տպաքանակ՝ 10000, Գինը՝ 85 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան-91:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՄՄՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Ն 6 տպարան, Երևան, Թումանյան փող. Ն 23/1:

Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Туманяна, 23/1.


ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0180936

85 4114.

28
2



« ԿԱՅԱԿԱՆՆԵՐ »